**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**2012 թ. գործունեության միջոցառումների ծրագրի և**
**գերակա խնդիրների մասին**

ՀՀ կառավարության 2012թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները ներառում է 139 միջոցառում և 88 գերակա խնդիր:

Փաստաթղթում հստակ նշված են յուրաքանչյուր միջոցառման անվանումը, նպատակը, կատարման պատասխանատու մարմինը, ժամկետը և ֆինանսավորման աղբյուրը:

Կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը համադրվել է Հայաստանի Հանրապետության նախագահի նախընտրական ծրագրի հետ, յուրաքանչյուր միջոցառում և գերակա խնդիր ներկայացված է համապատասխան հիմնավորումով, դրանք ամփոփված են առանձին հավելվածներում:

Հասարակական վերահսկողություն և հրապարակայնություն ապահովելու նպատակով փաստաթուղթը տեղադրված է նաև ՀՀ կառավարության պաշտոնական կայքում (www.gov.am):

ՀՀ կառավարության աշխատակազմի
տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի վարչություն

Տնտեսական բարեփոխումների
վերլուծական-տեղեկատվական կենտրոն

---

Ոչ պաշտոնական հրատարակություն

12 հունվարի 2012 թվականի N 77 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----------------------------------------------------------------------------------------------

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174 հրամանագրի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել`

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը` համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գերակա խնդիրները` համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների հիմնավորումները` համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գերակա խնդիրների հիմնավորումները` համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. փետրվարի 7
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունվարի 12-ի N 77 - Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը | Հղում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն** | | | | | | |
| 1. | «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգից բխող տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հստակ կսահմանվեն տարածքային զարգացման հայեցակարգից բխող տարածքային զարգացման իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները, դրանց կատարման ժամկետները և պատասխանատու կատարողները | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 30-ի N 38 արձանագրային որոշում |
| 2. | «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Օրինագծի ընդունման արդյունքում ինչպես 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքները, այնպես էլ այն համայնքները, որոնք, գործող օրենսդրությանը համապատասխան, 300-ից քիչ ավելի բնակչություն ունենալու պատճառով ստանում են առաջիններից պակաս գումար, կստանան հավասարաչափ | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը կսահմանվի յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով: | | | | | |
| 3. | «Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տեղական ինքնակառավարման մարմիններին իրավունք վերապահել՝ օգտվելու համար օպերատիվ տեղեկատու քարտադարանից | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «բ» և «թ» ենթակետեր |
| 4. | «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցումը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին, ավելի բարձր դասային աստիճանների շնորհման գործընթացում առկա խնդիրների վերացում, կարգապահական տույժերի հաջորդական կիրառմամբ համայնքային ծառայող-ներին պաշտոնից ազատ-ման հիմքի հստակեցում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «բ» և «թ» ենթակետեր |
| 5. | Ջրահավաքային նախապատրաստության միջոցառումներում տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցության հստակեցում և գործընթացի կանոնակարգում | տեղական ինքնակառա-վարման մարմինների զաղտնի փաստաթղթերին առնչվելու շրջանակի նկարագրություն, ինչպես նաև դրանց առնչվելու գործընթացի կանոնակարգում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «բ» ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Օրենսդրորեն ամրապնդել քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը: Տեղական ինքնակառա-վարման եվրոպական խարտիայում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Ուտրեխտում ընդունված արձանագրությունների պահանջներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցում: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի 72-րդ կետ |
| 7. | «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով) իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի իրականացում՝ աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելվածի 4.2.2-րդ բաժին, 8-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «դ» ենթակետ |
| 8. | «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (պարտադիր, պետության պատվիրակած, կամավոր՝ տարանջատման տեսանկյունից, հաշվի առնելով միջազգային փորձը) շրջանակի ընդհանուր բնութագրին առնչվող օրենսդրական դաշտի գնահատման և ուսումնասիրության արդյունքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջոցառման իրականացման արդյունքում կկարգավորվեն համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելվածի 4.2.2-րդ բաժին, 8-րդ կետ |
| 9. | Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատակարգի մշակում | Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով աշխատակարգի սահմանում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետով նախատեսված է, որ մարզպետների գնահատման լրացուցիչ չափորոշիչները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի` հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության գերակայությունները և իրականացվելիք ծրագրերը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվում են ծրագրեր, որոնք հնարավոր չէր նախատեսել որոշման ընդունման պահին, ուստի, անհրաժեշտ է գնահատման կարգում կատարել փոփոխություններ: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետ |
| 11. | Հայ-ռուսական երկրորդ միջտարածաշրջանային ֆորումի նախապատրաստում և անցկացում | Ֆորումը հնարավորություն է ընձեռելու վեր հանելու երկու երկրների միջտարածաշրջաններում զարգացմանն ուղղված ներուժն ու առկա հնարավորությունները, աջակցելու է փոքր և միջին | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «իա» ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | բիզնեսի զարգացման կոնկրետ ծրագրերի, ուղղությունների հստակեցման, համագործակցության ուղղությունների ընտրության, երկու երկրների միջև նորարարական, գիտատեխնիկական, կրթական և հումանիտար համագործակցության զարգացմանը: | | | | | |
| 12. | 2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով միջոցառումների ծրագրի նախապատրաստում | Ապահովել ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով 2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված միջոցառումների իրականացումը: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «իա» ենթակետ |
| 13. | «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կընդլայնվեն համայնքների ֆինանսական կարողությունները, ինչը կհանգեցնի համայնքների կողմից մատուցվող ծառայությունների ծավալի և որակի բարձրացմանը: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելվածի 5.3-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1003-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծառայողական քննության նշանակման համար, որպես հիմք, կոնկրետ կարգապահական տույժերի հաջորդական կիրառման դեպքերի նկարագրություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «բ» և «թ» ենթակետեր |
| 15. | «Գյուղական համայնքների 2-րդ համաժողովի նախապատրաստման և անցկացման, համաժողովի օրակարգին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գյուղական համայնքների կայուն զարգացմանն աջակցություն՝ ոլորտում գործող բոլոր դերակատարների երկխոսության, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների մասին տեղեկատվության փոխանակման միջոցով | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | 2012 թ. 4-րդ եռամսյակ | Այլ աղբյուրներ | ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշման 4.3.1-ին բաժնի «Տարածքային անհամաչափ զարգացման համահարթեցումը» կետի վեցերորդ գերակայություն |
| 16. | «Հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նոր պահանջներին համապատասխան՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների գործընթացի կազմակերպմանն աջակցություն և անցկացման ապահովում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետա-րաններ | | 2012 թ. յուրաքանչյուր եռամսյակ | ՀՀ պետական բյուջե | Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, 145-րդ հոդված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | | | | | | |
| 17. | «Ընդերքօգտագործման թույլտվությունների և երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնությունների ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կհաստատվեն և կդրվեն կիրառության մեջ «Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդերքօգտագործողներին տրվող թույլտվությունների և երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնությունների օրինակելի ձևերը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | Ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ |
| 18. | «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կհաստատվեն և կիրառության մեջ կդրվեն «Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդերքօգտագործողների հետ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | Ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ |
| 19. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1458-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն կենցաղային գազի սարքերի էլեկտրաանվտանգության նորմերը և կկատարվեն համապատասխան ոփոխություններ՝ Հայաստանի Հանրապետությունում նոր ընդունված ստանդարտներին համապատասխան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված |
| 20. | «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի | Կսահմանվեն պահանջներ, որոնք կնախատեսեն փոքր հիդրոկայանների համար «Էներգետիկայի մասին» | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետ, |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարու-թյան արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի ավարտից հետո նոր արտոնությունների տրամադրման մեխանիզմները | | | | | ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 35 արձանագրային որոշում |
| 21. | «ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծով նախատեսված էներգետիկայի բնագավառի իրավական ակտերի և ազգային ստանդարտների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կստեղծվի ՀՀ-ԵՄ ասոցացման գործընթացում էներգետիկայի բնագավառի իրավական ակտերի և ազգային ստանդարտների միասնական համալիր ցանկ | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի էներգետիկայի բաժին |
| 22. | «Հայաստանում կենսազանգվածի և կենսաէներգիայի օգտագործման գործարար ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կհաստատվի տեղական վերականգնվող էներգետիկ պաշարների օգտագործման խթանման գործարար ծրագիրը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | միջազգային դոնոր կազմա-կերպություն-ների կողմից հատկացվող ֆինանսական միջոցներ | «Էներգախնայողությա ն և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետ |
| 23. | «Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգ» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետության ոչ մետաղական հանքային ռեսուրսների օգտագործման և վերամշակման ոլորտի առկա վիճակի վերլուծու-թյուն, որի հիման վրա կներկայացվեն առաջարկություններ ոլորտի վերականգնման հեռանկարների վերաբերյալ: | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | 2012 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ բնապահպանության նախարարություն | | | | | | | |
| 24. | «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2013 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների կատարման ապահովում, այդ թվում՝ Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության, հիդրոկենսաբանական, հիդրոօդերևութաբանական, ինժեներաերկրաբանական մոնիթորինգի իրականաց-ման, ջրածածկման ենթակա տարածքներում անտառամաքրման, ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման, աղբավայրերի բարեկարգման և անխափան աղբաթափման, արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության, «Սևան» ԱՊ-ի գիտական ուսումնասիրությունների և անտառատնտեսական աշխատանքների, ինչպես նաև այլ միջոցառումների կատարման ապահովում | ՀՀ բնապահպա-նության նախարարություն | | 2012 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 25. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 21- ի N 953-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման աշխատանքների բարելավում և արտանետման նորմավորման իրավական հիմքերի կատարելագործում | ՀՀ բնապահպա-նության նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներ |
| 26. | «Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Շրջակա միջավայրի վրա կոնսերվացված հանքավայրերի, արտադրական լցակույտերի ազդեցության ուսումնասիրության մշտադիտարկումների իրականացման ընթացակարգի սահմանում, որը թույլ կտա բացահայտել և ժամանակին ուսումնասիրել բնության ու շրջակա միջավայրի վրա ներգործությունները, հավաքագրել և մշակել դրանց հետևանքների վերաբերյալ տվյալները: | ՀՀ բնապահպա-նության նախարարություն | ՀՀ առողջապա-հության նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 27. | «Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծում» ծրագրի կատարման մասին տեղեկատվություն ներկայացնելը | «Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծում» ծրագրի իրականացումը նախատեսված է Գերմանական վերակառուցման և զարգացման բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստորագրված «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր – Հայաստան (էկոտարածաշրջանային ծրագիր – Հայաստան, փուլ 3-րդ)» ֆինանսավորման համաձայնագրով:<br><br>Ծրագրի տեխնիկական առաջադրանքը պետք է կազմվի միջազգային խորհրդատուի կողմից ներկայումս մշակվող «Շիկահողի կենսոլորտային արգելոցի ստեղծման ծրագրի իրագործելիության հետազոտության Կովկասի էկոռեգիոնալ III ծրագիր, Հայաստան» ծրագրի մասին վերջնական հաշվետվության վերաբերյալ առաջարկների հիման վրա | ՀՀ բնապահպա-նության նախարարություն | | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | | | | | | | |
| 28. | «Մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի հաշվարկային մեծության որոշման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողներին վճարվելիք աշխատավարձի վերահաշվարկման իրավական հիմքի ձևավորում | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշմամբ հաստատված՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի (N 4 հավելված) 1-ին կետ |
| 29. | «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Շահութահարկի նվազագույն գումարների համակարգի վերացում և կանխավճարների համակարգի կատարելագործում | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 29-ի «Հարկային օրենսդրության վերանայման 2012-2014 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1865-Ն որոշման 3-րդ կետ |
| 30. | «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության | Շահութահարկով հարկման նպատակով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգի վերանայում | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 29-ի «Հարկային օրենսդրության վերանայման 2012-2014 թվականների միջոցառումների |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | | | | | | ծրագիրը հաստա-տելու մասին» N 1865-Ն որոշման 4-րդ կետ |
| 31. | «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի տնօրինման և կառավարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սահմանել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի տնօրինման և կառավարման կարգը | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնու-թյամբ) | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատ-ված միջոցառումների ծրագրի «4.4.2. Սոցիա-լական պաշտպանու-թյունը» բաժին, ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշմամբ հաստատված ցանկի 8-րդ կետ |
| 32. | «Հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սահմանել հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպությունների ցանկը | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնու-թյամբ)<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշ-մամբ հաստատված միջոցառումների ծրագրի «4.4.2. Սոցիալական պաշտ-պանությունը» բաժին, ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշ-մամբ հաստատված ցանկի 9-րդ կետ |
| 33. | «Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները ֆինանսական գործիքներում ներդնելու քանակական և | Սահմանել պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները ֆինանսական | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնու-թյամբ) | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | արժութային սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գործիքներում ներդնելու քանակական և արժութային սահմանափակումները | | | | | հաստատված միջոցառումների ծրագրի «4.4.2. Սոցիալական պաշտպանությունը» բաժին, ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշմամբ հաստատված ցանկի 10-րդ կետ |
| **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** | | | | | | | |
| 34. | «Քաղաքացիական պաշտպանության քողարկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Զենքի տեսակներից քաղաքացիական պաշտպանության քողարկման համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ պաշտպա-նության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր ՀՀ ոստիկա-նություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 2012 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետ, ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 13-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 35. | «Քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության նպատակով՝ քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման հարաբերությունների կարգավորում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ բնապահպա-նության նախարարություն<br><br>ՀՀ առողջապա-հության նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն<br><br>ՀՀ պաշտպա-նության նախարարություն<br><br>ՀՀ քաղաքաշի-նության նախարարություն | 2012 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի «թ» կետ, ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 15-րդ կետ |
| **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | | | | | | | |
| 36. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի N 462 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հաշմանդամային սպորտում պարալիմպիկ և սուրդլիմպիկ խաղերի ծրագրով նախատեսված մարզաձևերում մրցանակային տեղեր գրաված մարզիկների՝ դրամական պարգևներով խրախուսում | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | | 2012 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի N 462 որոշմամբ հաստատված ծրագիր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37. | «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետության մարզադպրոցների, մարզական քոլեջների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, ժամանակակից մարզա-գույքով և մարզասարքերով ապահովում | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4.4.5-րդ բաժնի 1.15-րդ կետ |
| 38. | Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում | Հայրենիքի պաշտպանու-թյանը պատրաստ և ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի վերաբերյալ քարոզչություն, հաղթող դպրոցներին մրցանակների բաշխում | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | ՀՀ պաշտպանու-թյան նախարա-րություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ մարզպետա-րաններ | 2012 թ. սեպտեմբեր-նոյեմբեր | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «գ» կետ |
| 39. | Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարա-բաղի Հանրապետությունում հանրապետական մարզական փառատոնի անցկացում | ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում Հայաստանի Հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | ՀՀ մարզպետա-րաններ | 2012 թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «ա» կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառա-վարման մարմինների դերի բարձրացում, համայնքներում ֆիզկուլտուրայի օրերի անցկացման ավանդույթի վերականգնում | | | | | |
| 40. | «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հաշմանդամային սպորտի զարգացմանն ուղղված նպատակների և խնդիրների հստակեցում, իրավական հիմքերի ստեղծում, պետական աջակցության ապահովում | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ առողջապա-հության նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշման 4.4.5-րդ կետ |
| 41. | «Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի շարունակական զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում: Ծրագրի ընդունմամբ 2013-2017 թվականների համար կսահմանվեն ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառի գերակայությունները, առկա հիմնախնդիրներն ու գործողությունների ուղիները | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | | 2012 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի կատարման հիմքերի ապահովում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 42. | «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | 2013-2017 թթ. կրթության, կենցաղի, առողջության պահպանման, սոցիալական պաշտպանվածության, ստեղծագործական ներուժի բազմակողմանի զարգացման, հասարակության քաղաքական, տնտեսական, մշակութային մասնակցության հիմնական ուղենիշների սահմանում և ծրագրային միջոցառումների միջոցով իրականացում | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | ՀՀ առողջապահության նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշման 4.4.6-րդ կետ |
| 43. | Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցառումների կազմակերպում | Հանրապետության երիտասարդների շրջանում մարդկանց շահագործման կանխարգելում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում, քարոզչության ապահովում | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | | 2012 թ. 3-րդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1140-Ն որոշում |
| **ՀՀ սփյուռքի նախարարություն** | | | | | | | |
| 44. | «Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան պարբերական այցելությունների՝ «Արի տուն» 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սփյուռքահայ երիտասարդության՝ հայրենիքի հետ ծանոթացման, նրանց մեջ ազգային արժեքային համակարգի սերմանման, ազգային ինքնագիտակցության ձևավորման, հայաստանցի հասակակիցների հետ ծանոթությունների հաստատման նպատակով սփյուռքահայ 800 երիտասարդի՝ Հայաստան ացելության ծրագրի կազմակերպում | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2012 թ. մարտի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ առողջապա-հության նախարարություն<br><br>ՀՀ պաշտպա-նության նախարարություն<br><br>ՀՀ սպորտի և երիտասարդությա ն հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր ՀՀ ոստիկա-նություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետա-րաններ<br><br>Երևանի քաղա-քապետարան (համաձայնու-թյամբ) | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 45. | «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստան-սփյուռք, սփյուռք-սփյուռք մշակութային կապերի և համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը նպաստելու նպատակով դուդուկի համահայկական փառատոնի, պարային համույթների, թատերախմբերի, երգչախմբերի, անհատ կատարողների համերգային ծրագրերի կազմակերպում | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միություն<br><br>Հայաստանի պարարվեստի միություն<br><br>Հայաստանի երգչախմբային ընկերություն<br><br>Հայաստանի թատերական գործիչների միություն<br><br>Հայաստանի գրողների միություն<br><br>Հայաստանի ժուռնալիստների միություն<br><br>Երևանի պետական համալսարան | 2012 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում<br><br>«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք |
| 46. | «Օտարերկրյա պետություն-ներում գործող հայագիտական կենտրոնների ներկայացու-ցիչների համաժողովի մասին» | Օտարերկրյա պետություններում գործող հայագիտական առկա ներուժի բացահայտում, | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2012 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված այլ ֆինանսական | ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրու- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հայագիտական կենտրոնների, ամբիոնների հետ ռազմավարության և ծրագրերի մշակում | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br><br>Երևանի պետական համալսարան | | աղբյուրներ | թյան 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում |
| 47. | ԱՊՀ տարածաշրջանային հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության ծրագրի իրականացում | 1) մինչև 50 ուսուցչի վերապատրաստում համայնքներում<br>2) մինչև 5 նոր մեկօրյա դպրոցի գործունեությանն աջակցություն՝ մինչև 10 ուսուցչի 10 ամսով վարձատրություն<br>3) մինչև 20 սփյուռքահայ ուսանողի պրակտիկայի կազմակերպում<br>4) տարածաշրջանի հայագիտական կենտրոնների հետազոտությունների խրախուսում, մեկ համաժողովի կազմակերպում, նյութերի հրատարակում,<br>5) տեղերում ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթի թղթակցական 2 կետի ստեղծում | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>Երևանի պետական համալսարան | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի «ԱՊՀ տարածաշրջա-նային հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության ծրագրի մասին» N 37 արձանագրային որոշում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 48. | «Մեր մեծերը» ծրագրի իրականացում | 5 հայազգի հայտնի դեմքերի՝ Հովհաննես Բաղրամյանի, Հովսեփ Օրբելու, Գառզուի (Գառնիկ Զուլումյան), Սայաթ-Նովայի, Գարեգին Հովսեփյանի կյանքի և գործունեության ուսումնասիրում և ներկայացում ՀՀ-ում և սփյուռքում ու միջոցառումների կազմակերպում | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>Երևանի քաղա-քապետարան<br><br>ՀՀ մարզպետա-րաններ<br><br>ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ<br><br>Սփյուռքի կազմա-կերպություններ<br><br>ՀՀ սփյուռքի նախարարություն<br><br>«Հայրենիք-սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք |
| 49. | «Հայաստան-սփյուռք» թեմատիկ տեսաժողովների կազմակերպում | Սփյուռքի հայկական կազմակերպությունների, համայնքային կառույցների հետ գործակցության զարգացում, 10 հեռավար տեսաժողովների կազմակերպում | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրա-յին որոշման հավելվածի 49-րդ կետի «զ» ենթակետ |
| 50. | Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի համախմբում և նրա ներգրավում Հայաստանի զարգացման գործընթացում | Մասնագիտական համաժողովների կազմակերպում՝<br>1) հայ գրականության օրեր<br>2) լրատվամիջոցների և լրագրողների համահայկական VI համաժողով<br>3) բանկիրների և ֆինանսիստների համահայկական 2-րդ համաժողով | ՀՀ սփյուռքի նախարարություն | Հայաստանի գրողների միություն<br><br>Հայաստանի ժուռնալիստների միություն համահայկական ընկերակցու-թյուններ | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան- սփյուռք գործակցության զարգացման հայեցա-կարգին հավանու-թյուն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածի 45-րդ կետ, 48-րդ կետի «բ» ենթակետ |
| 51. | Ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպում | Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար կառույցների ու անհատների ունեցած ներդրման գնահատման և խրախուսման նպատակով 3 մրցույթի անցկացում՝ հետևյալ անվանակարգերում՝<br>1) «Լավագույն լրատվամիջոց»<br>2) «Լավագույն հայագիտական կենտրոն»<br>3) «Մայրենիի պաշտպան» | ՀՀ սփյուռքի նախարարություն | Համաշխարհային հայկական կոնգրես<br><br>Ռուսաստանի հայերի միություն | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ առողջապահության նախարարություն** | | | | | | | |
| 52. | «Քաղաքային պոլիկլինիկական ոլորտի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Քաղաքային պոլիկլինիկաների նոր կառուցվածքային մոդելը (մոդելները) ներկայացնելը, ծառայությունների, քաղաքային բնակավայրերում ընտանեկան բժշկության համակարգի ընդլայնում | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2012 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4.2.1-ին բաժնի 1-ին կետ |
| 53. | «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | առողջապահության բնագավառում իրականացվող և իրականացվելիք բարեփոխումների հիման վրա բնագավառի ֆինանսավորման նոր մոտեցումների, բուժծառայությունների գների, բուժհաստատությունների բյուջեների հաշվարկման սկզբունքների հաստատում ՀՀ կառավարության կողմից | ՀՀ առողջապա-հության նախարարություն | | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 54. | «Երեխաների հիվանդանոցային բուժօգնության բարելավման 2013-2015 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երեխաների մինչև շուրջօրյա մահաբերության ցուցանիշների կրճատում՝ մինչև 20 տոկոս: 3.0-1 և մինչև 5 տարեկան երեխաների մահացության իջեցում՝ նվազագույնը 30 տոկոսով՝ 2015 թ. այն չպետք է գերազանցի համապատասխանաբար 8 - 10 տոկոսը | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թ. սեպտեմբերի 10-ի N 37 արձանագրային որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրի գերակայություն 2-ի նպատակ 1-ի 1-ին կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 55. | «Բնակչության սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն երկայացնելը | Արտոնյալ խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցում և բարելավում | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ վարչապետի 2011 թ. հոկտեմբերի 7-ի N 935-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 5-րդ կետ |
| 56. | «Բժշկական էթիկայի օրինակելի կանոնները և բժշկական էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության օրինակելի կարգը և գործառույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բուժաշխատողների մասնագիտական գործունեության էթիկայի օրինակելի կանոնների, ինչպես նաև բժշկական էթիկայի հանձնաժողովների, դրանց գործունեության օրինակելի կարգի և պայմանների սահմանում | ՀՀ առողջապա-հության նախարարություն | | 2012 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 57. | «ՀՀ Վայոց ձորի մարզի առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բժշկական օգնությունը դարձնել առավել մատչելի և արդյունավետ, բարձրացնել բժշկական սպասարկման որակը | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 10 հավելված |
| 58. | «ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության | ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի, այդ թվում՝ բժշկական էլեկտրոնային քարտերի համակարգի | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 50 արձանագրային որոշում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ներդրման ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի հաստատում ՀՀ կառավարության կողմից | | | | | |
| 59. | «Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հսկողության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հսկողության, կանխարգելման միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի սահմանում | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 44 արձանագրային որոշման N 2 հավելվածի (ռազմավարական ուղղություն 3) նպատակ 1-ի 1-ին կետի 2-րդ ենթակետ |
| 60. | «Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակները և բժշկական գործելակերպը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման պայմանների, թույլատրելի մեթոդների և այս ոլորտում բժշկական գործելակերպին ներկայացվող պահանջների սահմանում | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 61. | «Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երկրում կենսաանվտանգության ապահովման նպատակով առողջապահական լաբորատորիաների ռեսուրսների ինտեգրման միջոցով հանրապետական լաբորատոր ցանցի ստեղծում | ՀՀ առողջապա-հության նախարարություն | ՀՀ պաշտպա-նության նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպա-նության նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 44 արձանագրային որոշման N 2 հավելվածի (ռազմավարական ուղղություն 2) նպատակ 1-ի 2-րդ կետի 1-ին ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ կառավա-րությանն առընթեր ՀՀ ոստիկա-նություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե | | | |
| **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն** | | | | | | | |
| 62. | «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն | Կոնցեսիոն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման, կոնցեսիոն ակտիվների վերադարձման գործընթացի սահմանում, համաձայնությունների հստակեցում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | | | | | | |
| 63. | «Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների իրականացման ընթացքում ծագած հարաբերությունների սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մաս |
| 64. | «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային ճանապարհով իրականացվող առևտրային ծառայությունների և գործարքների բնագավառում պատվիրատուի և մատակարարի միջև հարաբերությունների սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 65. | «Տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցառումների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ցանցերի հուսալիության բարձրացման, հակավիրուսային միջոցառումների նույնականացման, անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացման միջոցա-ռումների սահմանում, ցանցային գրոհների դեմ միջոցառումների ցանկի մշակում և հաստատում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 66. | «Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում տեխնիկական վերահսկողության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության տարածքում գործող էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի և ենթակառուցվածքների, ինչպես նաև հեռուստատեսային և ռադիոհեռարձակման համակարգերի շահագործման, պահպանության և անվտանգության նորմերի կիրառման ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 67. | «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտի համապատասխանեցում եվրոպական երկրներում գործող փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտին, մասնավորապես, փոստային կապի ունիվերսալ ծառայությունների ցանկի սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 68. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տրանսպորտի օբյեկտների, մասնավորապես, երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում շինարարության թույլտվության տրամադրման գործընթացի սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | ՀՀ քաղաքա-շինության նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ քաղաքաշինության նախարարություն** | | | | | | | |
| 69. | «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կառուցապատման ընթացակարգերի պարզեցում և ժամկետների կրճատում՝ որոշակի օբյեկտների շինարարության որակը կապալառուի կողմից երաշխավորելու միջոցով | ՀՀ քաղաքա-շինության նախարարություն | | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված |
| 70. | «Կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման հայեցակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում առկա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման ենթակա կառույցների ամփոփ բազայի կազմման կարգի և ժամանակացույցի իրավական հիմքի ստեղծում | ՀՀ քաղաքա-շինության նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր |
| 71. | «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների կառուցապատման կանոնակարգման գործառույթների հստակեցում՝ միասնական մոտեցումների սահմանման միջոցով | ՀՀ քաղաքա-շինության նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-ին և 19-րդ հոդվածներ |
| 72. | Ղազախստանի Հանրապետության քաղաքաշինության ոլորտի փորձի ուսումնասիրություն և ըստ այդմ Հայաստանի Հանրապետությունում այդ | Ղազախստանի Հանրապետության քաղաքաշինության ոլորտի փորձի ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետությունում այդ | ՀՀ քաղաքա-շինության նախարարություն | | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փորձը կիրառելու վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում | փորձը կիրառելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը | | | | | |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարություն** | | | | | | | |
| 73. | «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գիտական և գիտատեխնիկական գործունեությունը կարգավորող օրենքի համապատասխանեցում գիտության ոլորտի բարեփոխումների ռազմավարությանը | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե | | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի 1.1-ին կետ |
| 74. | «Ուսանողի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ուսանողների ֆինանսական խրախուսման և օժանդակության համակարգերը կգործեն ավելի արդյունավետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 25-Ա արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի 5-րդ կետ |
| 75. | «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունը և փորձնական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին դպրոցական սննդով ապահովելու արդյունավետ մեխանիզմների ներդրում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | Միավորված ազգերի կազմակերպության Պարենի համաշխարհային ծրագրի («Նո 200 128 ծրագիր») շրջանակներում պարտավորությունների կատարում |
| 76. | «Օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բոլոնիայի գործընթացում ընդգրկված երկրների կրթության և տնտեսության փոխադարձ կապերի ամրապնդում, միջազգային մրցունակության բարձրացում և ուսանողների շարժունության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 4-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 77. | «Կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Որակավորումների համապատասխանեցում որակավորումների ազգային շրջանակին | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 2-րդ կետ |
| 78. | «Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցում գործող որակավորումների համակարգին | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 3-րդ կետ |
| 79. | «Մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների հայեցակարգը և 2012-2016 թվականների գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում սահմանված են բարեփոխումների ուղղությունները | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետ |
| 80. | «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան վերանայված մասնագիտությունների ցանկ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետեր, ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 6-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 81. | «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բարձրագույն կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 5-րդ կետ |
| 82. | «Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրին և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման մեխանիզմների ներդրում, գիտության ոլորտից կադրերի արտահոսքի նվազեցում | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե | | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի 2.2-րդ կետ |
| 83. | «Հասարակական գիտությունների հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հասարակական գիտությունների ոլորտում իրականացվող հետազոտությունների արդյունավետության բարձրացում | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե | | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 18-ի N 10 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի 2.1-ին կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | | | | |
| 84. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում՝ անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման դյուրինացում և գրանցման գործընթացների հստակեցում Մասնավորապես, կվերանայվեն փորձաքննություն իրականացնող մարմնի, փորձաքննության առավելագույն տևողության, հայտում ներառվող փաստաթղթերի կազմի, փորձաքննության վճարի հետ կապված պահանջները | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 85. | «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայեցակարգի իրականացումը հնարավորություն կընձեռի՝<br>1) բարձրացնելու խոր սառեցված սերմնահե-ղուկով արհեստական սերմնավորման եղանակով ստացված կովերի կաթնային մթերատվությունը՝ 10-15 տոկոսով. | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | | 2012 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476 որոշման N 1 հավելվածի V բաժին, 83-րդ կետ, «բ» ենթակետ, «Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, «ա» ենթակետ, ՀՀ կառավարության |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2) կրճատելու խոր սառեցված սերմնահեղուկով արհեստական սերմնավորված կովերի մոտ բնական զուգավորման ժամանակ փոխանցվող վարակիչ հիվանդությունները` 50-60 տոկոսով.<br>3) նվազեցնելու կովերի ստերջությունը` 10-15 տոկոսով: | | | | | 2007 թ. մարտի 22-ի N 336-Ա որոշում, 2-րդ գլուխ |
| 86. | «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կիստակեցվի գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանման պետական քաղաքականությունը, իրավական հիմքեր կստեղծվեն կոոպերացիայի մասին օրենսդրության կատարելագործման համար Հայեցակարգի ընդունմանը հաջորդող տարում գյուղատնտեսական ուղղվածության տարբեր տեսակի կոոպերատիվների թվի ավելացում` 15-17 տոկոսով | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476 որոշման N 1 հավելվածի V բաժին, 21-րդ ենթակետ |
| 87. | «Կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու | Եվրամիության պահանջներին համապատասխան արտադրության և շրջանառության բոլոր | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | ՀՀ առողջապա-հության նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ Նախագահի 2009 թ. մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փուլերում կսահմանվեն կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջներ՝ ըստ կենդանական ծագում ունեցող մթերքի տեսակների, որոնք կլրացնեն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշմամբ հաստատված սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջները՝ ապահովելով սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացումը, սպառողների շահերի պաշտպանությունը, արտահանման խոչընդոտ-ների հաղթահարումն ու միջազգային շուկային ինտեգրումը | | | | | եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկի 139.Ե.22-րդ և 141.Ե.24-րդ կետեր |
| 88. | «Հայաստանի Հանրապետությունում թռչնաբուծության զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայեցակարգի իրականացումը հնարավորություն կընձեռի խթանելու արդյունաբերա-կան թռչնաբուծության զարգացումը, ավելացնելու թռչնամսի տեղական արտադրության ծավալները, առավել արդյունավետ օգտագործելու առկա | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476 որոշման N 1 հավելվածի V բաժին, 75-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | արտադրական կարողությունները, խթանելու տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ստեղծելու նոր աշխատատեղեր Հայեցակարգի դրույթների կիրառումը հնարավորու-թյուն կտա թռչնամսի արտադրության ծավալը (սպանդային քաշով) ավելացնելու 2015 թ.՝ 2.0, իսկ 2020 թ.՝ 4.5 հազ. տոննայով Արդյունքում թռչնամսի ինքնաբավության մակարդակը կբարձրանա համապատասխանաբար՝ 4.5 և 10.2 տոկոսային կետով՝ հասնելով 16.8 և 22.5 տոկոսի՝ ներկայիս (2010 թ.) 12.3 տոկոսի դիմաց | | | | | |
| 89. | «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կառավարման համակարգի, նպատակների և | ՀՀ գյուղատնտե-սության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | խնդիրների, ինչպես նաև իրավասությունների սահմանների, վերապահված գործառույթների և լիազորությունների հստակեցում | | | | | |
| **ՀՀ մշակույթի նախարարություն** | | | | | | | |
| 90. | «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2012-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում անհատի բազմակողմանի և մտավոր ներուժի ձևավորման զարգացմանը նպաստող նպատակային պետական միասնական քաղաքականության իրականացում | ՀՀ մշակույթի նախարարություն | | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի «Գեղարվեստական կրթության հայեցակարգը հաստատելու մասին» N 47 արձանագրային որոշում |
| 91. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին ամբողջական տեղեկատվության ստեղծում, դասակարգում և համակարգի կառավարման տեղեկատվական ապահովում, տեղեկույթի տրամադրում և կիրառում | ՀՀ մշակույթի նախարարություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 5-ի N 02/24.2/3748-09 հանձնարարականի կատարման անհրաժեշտություն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | | | | | | |
| 92. | «Հայաստանի Հանրապետությունում անօթևան միայնակ տարեցների և բնակարանի կարիք ունեցող՝ սոցիալական այլ խմբերին պատկանող անձանց սոցիալական բնակարան տրամադրելու համար քաղաքացիների հաշվառման և ընդունելության կարգը, ինչպես նաև ընտրության չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալական տուն քաղաքացիների ընդունելության կազմակերպման կանոնակարգում՝ հաշվառման և ընդունելության կարգի, ինչպես նաև քաղաքացիների ու սատարող ընտանիքների ընտրության չափորոշիչների հաստատում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | 2012 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թ. հուլիսի 1-ի N 25 արձանագրային որոշում |
| 93. | «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ձևավորելու և վարելու, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ձևավորելու և վարելու, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կարգի առկայություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 2.4-րդ կետ և ՀՀ վարչապետի 2011 թ. փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 1 հավելվածի 4-րդ կետ |
| 94. | «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն | «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերի առկայություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 2012 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 1.5-րդ կետ և ՀՀ վարչապետի 2011 թ. փետրվարի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | | | | | | 16-ի N 113-Ա որոշման N 5 հավելվածի 1-ին կետ |
| 95. | «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման իրավական-նորմատիվ ակտերի նախագծերը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումն ապահովող իրավական ակտերի մշակման հստակ ժամանակացույցի առկայություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | 2012 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 96. | «Անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազայում ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազայում ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու կարգի առկայություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 2.4-րդ կետ և ՀՀ վարչապետի 2011 թ. փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 1 հավելվածի 5-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | | | | | | |
| 97. | «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծրագրի իրականացման արդյունքում կտրամադրվի մինչև 5 դրամաշնորհ, տարեկան մինչև 5 անգամ կկազմակերպվեն ՏՏ ոլորտի մասնավոր հատվածի հետ արտագնա հանդիպում-քննարկումներ, կկազմակերպվի մեկ ցուցահանդես, որի շրջանակներում կապահովվի մինչև 15000 այցելուի մասնակցություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | |
| 98. | «Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացներ | Ծրագրով նախատեսվում են Գյումրու տեխնոպարկի ենթակառույցների ձևավորման միջոցառումների սահմանում, նախկին տարիների ծրագրերի շրջանակում ստեղծված լաբորատորիաների բնականոն գործունեության ապահովում, բիզնես գաղափարների հիման վրա մինչև 4 կազմակերպության ստեղծում, 10 նոր աշխատատեղերի հիմնում | ՀՀ էկոնոմիկայի նախաարություն | | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | |
| 99. | «Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջազգային զբոսաշրջային շուկայում տարբերակված զբոսաշրջային արդյունքի (բացի դասական պատմամշակութայինից, նաև ձմեռային, առողջարանային, գյուղական, արկածային և | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե<br><br>մասնավոր համաֆինան-սավորում | «Զբոսաշրջության և զբոսաշըրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետեր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | այլ) ներկայացում, զբոսաշրջային սեզոնի երկարաձգում, Հայաստանում (հատկապես մարզերում) փառատոների և այլ միջոցառումների կազմակերպում, մասնակցություն 3 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների, ինչի արդյունքում 2013 թվականին կապահովվի միջազգային զբոսաշրջային այցելությունների թվի 15 տոկոսով աճ՝ 2012 թվականի համեմատ | | | | | |
| 100. | «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Աջակցություն առնվազն 200 սկսնակ գործարարի, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտների ֆինանսավորման ընդլայնման ապահովում՝ շուրջ 6,5 մլրդ դրամի, վարկային երաշխավորությունների տրամադրում ՀՀ մարզերում գործող փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտներին, | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամ | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | | թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղմանն աջակցության ցուցաբերում 30-40 փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտի, տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերում 3500-4000 ՓՄՁ-ի սուբյեկտի, ուսուցողական (տեղեկատվական) աջակցության ցուցաբերում 150-200 փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտի, նորարարական և միջազգայնացման աջակցության ցուցաբերում շուրջ 70 փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտի, ձեռնարկությունների եվրոպական ցանցի գործարար համագործակցության հիմնապաշարի համալրում հայ գործարարների կողմից ներկայացվող շուրջ 300 գործարար համագործակցության վերաբերյալ առաջարկներով | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 101. | «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման համակարգի կատարելագործում, որի արդյունքում պարտադիր կդառնան խնդրի լուծման այլընտրանքների քննարկումը և ազդեցության գնահատման իրականացումը նախագծի հեղինակի կողմից | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| **ՀՀ արդարադատության նախարարություն** | | | | | | | |
| 102. | «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հստակեցնել պետական գրանցման և պետական հաշվառման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանել պետական գրանցման և պետական հաշվառման վարչական վարույթների առանձնահատ-կությունները, պետական գրանցումը և պետական հաշվառումն իրականացնող մարմնի իրավասությունը, սահմանել պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկատվության ծավալը և տեղեկատվության տրամադրման պայմաններն ու կարգը | ՀՀ արդարադա-տության նախարարություն | | 2012 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 103. | «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Նոտարին իր կողմից վավերացված գործարքների կապակցությամբ կատարողական մակագրությունների կատարման հնարավորության տրամադրում, որի ուժով պահանջատերը կարող է դիմել դատարան՝ կատարողական թերթ վերցնելու համար | ՀՀ արդարադա-տության նախարարություն | | 2012 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդված |
| 104. | «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հստակեցնել, թե հավասար իրավական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի մեջ հակասությունների առկայության դեպքում որ իրավական ակտի դրույթներն են գործում, իրավական ակտերին ներկայացվող իրավական և օրենսդրական տեխնիկայի նոր պահանջների սահմանում, հրատապ իրավական ակտերի ընդունման առանձնահատկու-թյունների սահմանում | ՀՀ արդարադա-տության նախարարություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ և 42-րդ հոդվածներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | | | | | | | |
| 105. | «Կրթության մասին» ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի սահմանում՝ պետական պաշտպանական հիմնարկի կամ ՊՈԱԿ-ի տեսքով, ռազմական կրթական չափորոշիչների ստեղծում | ՀՀ պաշտպանու-թյան նախարարություն | | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ Նախագահի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման պլան |
| 106. | «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետության տնտեսական հնարավորությունների շրջանակում ՀՀ զինված ուժերը և այլ զորքերն ապահովել անհրաժեշտ քանակով ներհանրապետական արտադրության սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, ինչպես նաև միջազգային շուկայի համեմատ ստեղծել սպառազինության և ռազմական տեխնիկայի մրցունակ արտադրանք | ՀՀ պաշտպանու-թյան նախարարություն | | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ Նախագահի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման պլանով, ինչպես նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** | | | | | | | |
| 107. | «Ռիո+20» կայուն զարգացման հարցերին նվիրված համաշխարհային գագաթաժողովի շրջանակներում ազգային գնահատման զեկույցը ներկայացնելը | ՀՀ պատշաճ մասնակցության ապահովում արդի միջազգային գործընթացներում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | ՀՀ բնապահպա-նության նախարարություն<br><br>ՀՀ կայուն զարգացման ազգային խորհուրդ (համաձայնու-թյամբ) | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ վարչապետի 2011 թ. հուլիսի 19-ի N 685-Ա որոշում |
| 108. | Համաձայն ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի շրջանակներում ստանձնած պարտավորությունների՝ ՀՀ կառավարության կողմից ՄԱԿ-ի թմրանյութերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակ ներկայացնել կոնվենցիայի իրականացման ինքնագնահատման զեկույց | Միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորության (պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ զեկույցի պատրաստում և ներկայացում) կատարում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | ՀՀ կառավա-րությանն առընթեր ՀՀ ոստիկա-նություն<br><br>ՀՀ դատախա-զություն<br><br>ՀՀ արդարադա-տության նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա (2005 թ., ՀՀ կողմից վավերացվել է 2007 թ.) |
| **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** | | | | | | | |
| 109. | «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2012 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը հաստատելու մասին» | Հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2012 թվականի կադաստրային գների (արժեքների) և կադաստրային զուտ եկամտի չափերի | ՀՀ կառավա-րությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սահմանում՝ հաշվի առնելով հողերի շուկայի գնային իրավիճակը, և համայնքային բյուջեների համալրում | | | | | |
| 110. | «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2012 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2012 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) հաստատում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ անօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2000 թ. հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետ |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | | | | | | | |
| 111. | «Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման արդյունավետ նախապատրաստման արդյունքում դրանց մասնավորեցման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | | 2012 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 112. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական անշարժ գույքին ամրացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 113. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական սեփականու-թյուն հանդիսացող գույքը վարձակալության հանձնելիս հաշվարկված վարձակալության վճար-ները՝ որպես պետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար, հիմնադրամների տնօրինությանը թողնելու դեպքում սահմանել հիմնադրամ-ների վերահսկման, ինչպես նաև գույքային վճարների հաշվառման կարգը | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | | 2012 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 114. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունքների դիտարկման ցուցանիշների պարզեցում, ինչպես նաև սահմանել մոնիթորինգի արդյունքում կազմակերպությունների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելու մասին դրույթներ | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | | | | | | | |
| 115. | «Զենքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, «Զենքի մասին» ՀՀ գործող օրենքում առկա դրույթների համապատասխանեցում արդի հասարակական հարաբերություններին | ՀՀ կառավա-րությանն առընթեր ՀՀ ոստիկա-նություն | | 2012 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 1-ի N 354-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստի-կանության գործու-նեության ոլորտում 2010-2011 թվականնե-րի բարեփոխումների ծրագրի 29.1-ին կետ |
| ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե | | | | | | | |
| 116. | «Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում տեսչական ստուգումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում տեսչական ստուգումների պլանավորման, կազմակերպման և անցկացման կանոնակարգում, դրանց անցկացման պարբերականությունը, ստուգումների տեսակները, փոխ-հարաբերություններն ստուգվող օբյեկտի հետ, ստուգման արդյունքների ամփոփում և տվյալների բազայի վարում | ՀՀ կառավա-րությանն առընթեր միջուկային անվտանգու-թյան կարգա-վորման պետա-կան կոմիտե | | 2012 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (հոդվ. 2.1-8), «Խաղաղ նպատակ-ներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենք (հոդվ. 17, 17.1)<br><br>ԱԷՄԳ-ի անվտանգու-թյան ստանդարտներ -GS-G-1.3. Regulatory inspection of nuclear facilities and enforcement by the regulatory body |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | (Միջուկային տեղակայանքների կարգավորող տեսչա-կան ստուգումների անցկացում և կարգավորող մարմնի կողմից պատաս-խանատվության միջոցների կիրառում) -GS-G--1.5 Regulatory control of radiation sources (Իոնացնող ճառագայթման աղբյուրների կարգա-վորող վերահսկո-ղություն) -1526_Inspection of radiation sources and regulatory enforcement (Իոնացնող ճառա-գայթման աղբյուրների տեսչական ստուգում-ների անցկացում և պատասխանատվու-թյան միջոցների կիրառում) |
| 117. | «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից իրականացվող ռիսկի հիման վրա ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող | Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ռիսկի որոշում, դրա հիման վրա տեսչական ստուգումների պլանավորում ու անցկացում | ՀՀ կառավա-րությանն առընթեր միջուկային անվտանգու-թյան կարգա-վորման պետա-կան կոմիտե | | 2012 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտներ. GS-G-1.3. Regulatory inspection of nuclear facilities and enforcement by the regulatory body (Միջուկային տեղակայանքների |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | | | | | | կարգավորող տեսչա-կան ստուգումների անցկացում և կարգա-վորող մարմնի կողմից պատասխանա-տվության միջոցների կիրառում) GS-G--1.5 Regulatory control of radiation sources (Իոնացնող ճառագայթման աղբյուրների կար-գավորող վերահսկողություն) 1526_Inspection of radiation sources and regulatory enforcement (Իոնացնող ճառագայթման աղբյուրների տեսչա-կան ստուգումների անցկացում և պա-տասխանատվության միջոցների կիրառում ) |
| 118. | «Հայաստանի Հանրապետու-թյան կառավարությանն առընթեր միջուկային անվտան-գության կարգավորման պետական կոմիտեի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտնե-րում տեսչական ստուգում-ների անցկացման համա-պատասխանեցում «Հայաս-տանի Հանրապետությու-նում ստուգումների կազ-մակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների պահանջներին | ՀՀ կառավա-րությանն առընթեր միջուկային անվտանգու-թյան կարգա-վորման պետա-կան կոմիտե | | 2012 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ԱԷՄԳ-ի անվտանգու-թյան ստանդարտներ. -GS-G-1.3._Regulatory inspection of nuclear facilities and enforce-ment by the regulatory body (Կարգավորող մարմնի կողմից միջուկային տեղակայանքների տեսչական ստուգում-ների անցկացում և պատասխանա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | | | | | | | տվության միջոցների կիրառում)<br>-GS-G-1.5._ Regulatory control of radiation sources (Իոնացնող ճառագայթման աղբյուրների կարգավորող վերահսկողություն)<br>-1526_Inspection of radiation sources and regulatory enforcement (Իոնացնող ճառագայթման աղբյուրների տեսչական ստուգումների անցկացում և պատասխանատվության միջոցների կիրառում) |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 119. | «Միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) նախագծային անվտանգության պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջուկային նոր էներգաբլոկի անվտանգության պահանջների սահմանում՝ ԱԷՄԳ-ի նոր ստանդարտներին, միջազգային մոտեցումներին և փորձին համապատասխան | ՀՀ կառավա-րությանն առընթեր միջուկային անվտանգու-թյան կարգա-վորման պետա-կան կոմիտե | | 2012 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման մասին» ՀՀ օրենք (27.10.2009 թ. ՀՕ-192)<br><br>ԱԷՄԳ.<br>-SF «Fundamental Safety Principles» (Անվտանգության հիմնարար սկզբունքներ)<br>- NS-R-1 «SAFETY OF NUCLEAR POWER PLANTS: DESIGN (Ատոմակայանների անվտանգություն. նախագիծ) |
| 120. | «Միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջուկային նոր էներգաբլոկի կառուցմանն ուղղված՝ հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման իրավա-հարաբերությունների կարգավորում, միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդիկան, խնդիրների ցանկին ու բովանդակու-թյանը և փորձաքննությանն առնչվող դրույթների սահմանում | ՀՀ կառավա-րությանն առընթեր միջուկային անվտանգու-թյան կարգա-վորման պետա-կան կոմիտե | | 2012 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման մասին» ՀՀ օրենք (27.10.2009 թ. ՀՕ-192)<br><br>ԱԷՄԳ<br>- NS-G-3.3 «EVALUATION OF SEISMIC HAZARDS FOR NUCLEAR POWER PLANTS» (Ատոմակայանների |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | համար սեյսմիկ վտանգի գնահատում)<br>- SSG-9 «Seismic Hazards in Site Evaluation for Nuclear Installations» (Միջուկային տեղակայանքների հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատում) |
| **ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | | | | | | | |
| 121. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համապատասխանություն Եվրամիության պահանջներին | ՀՀ կառավա-րությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | | 2012 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2008 թ. հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4.3.11.3-րդ բաժնի 3-րդ կետ |
| 122. | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համապատասխանություն Եվրամիության պահանջներին | ՀՀ կառավա-րությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ԵԿԱԿ-ի «Անվտանգության կանոնակարգեր» Dok 30 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 123. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ռազմական նշանակության բեռների օդային փոխադրումների պարզեցում | ՀՀ կառավա-րությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշում |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | | | | | | | |
| 124. | «Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարության որոշումների համապատասխանեցում «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներին | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. մարտի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 125. | «Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարության որոշման և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի միջև անհամապատասխա-նության վերացում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 126. | «Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության 2002 թվականի հունիսի 3-ի N 674 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության | Տարեկան պետական տուրքի հաշվառման համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման մեխանիզմների սահմանում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. ապրիլ 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | | | | | | |
| 127. | «Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության 2001 թվականի մարտի 27-ի N 239 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Որոշման դրույթների համապատասխանեցում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառմանը վերաբերող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահ-մանված դրույթների հետ | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 128. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային (տարածքային) տեսչությունների օպտիմալ թվի սահմանում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 129. | «Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 1420-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Եկամտային հարկի և կուտակային վճարի հաշվարկման նպատակով ֆիզիկական անձանց համախառն եկամտում բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտը հաշվի առնելու մեխանիզմների սահմանում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 130. | «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակի ներդրում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հոկտեմբեր 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 131. | «Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2009» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու և այդ դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ակցիզային  հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների կիրառում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| 132. | «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2013» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ակցիզային  հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների կիրառում | ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | | | | | | | |
| 133. | «Սևանա լճից ոռոգման նպատակով ջրառի իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ջրօգտագործողներին անհրաժեշտ քանակությամբ ոռոգման ջրով ապահովում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | ՀՀ բնապահպա-նության նախարարություն | 2012 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | «Սևանա լճի էկոհա-մակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 6.1-ին հոդված |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | | | | | | | |
| 134. | «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխու-թյուն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բավարար հիմքերի առկայության դեպքում կկիրառվի ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | | 2012 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |
| ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | | | | | | |
| 135. | «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պետական օժանդակությանը վերաբերող դրույթների համապատասխանեցում ԵՄ-ի օրենսդրությանը | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | 2012 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Թվինինգ «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության հզորացումը Հայաստանում» ծրագիր | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 136. | «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներում ստուգումներին վերաբերող դրույթների համապատասխանեցում ԵՄ-ի օրենսդրությանը | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Թվինինգ «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության հզորացումը Հայաստանում» ծրագիր | |
| **ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն** | | | | | | | |
| 137. | «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծրագրով կսահմանվեն պետական վիճակագրական գործունեության ուղղությունները, և կմշակվեն դրանից բխող տարեկան ծրագրեր | ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն | | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված |
| **ՀՀ կենտրոնական բանկ** | | | | | | | |
| 138. | «Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային հավաստագրերի ներդրման և գրանցման գործընթացի էլեկտրոնայնացման միջոցով հիփոթեքային վարկերի | ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացման նպատակով հիփոթեքային վարկերի վաճառքի ժամանակ ծագող իրավունքների գրանցման նոր՝ արդյունավետ գործընթացի՝ | ՀՀ կենտրոնական բանկ | ՀՀ կառավա-րությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2012 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փոխանցման գործընթացի բարեփոխման մասին հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հիփոթեքային հավաստագրերի էլեկտրոնային հիփոթեքային գրանցման համակարգի ներդրում | | | | | |
| 139. | «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» և այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հիփոթեքային կրեդիտավորման ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներդրում, ինչպես նաև հիփոթեքային վարկավորման ոլորտում առկա օրենսդրական խնդիրների լուծում | ՀՀ կենտրոնական բանկ | | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունվարի 12 -ի N 77-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

| Պատասխանատու մարմինը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձևավորում | - տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի, օբյեկտիվ կարիքների ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, ծախսային կառուցվածքների տիպաբանության մշակում<br>-ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաների սահմանված չափորոշիչների վերանայում՝ նվազագույն չափի մասով |
| | 2. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունների պարզեցում, հստակեցում և գործող ընթացակարգերի բարելավում | - օրենսդրության այն դրույթների վերհանում, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունները և շփումները<br>- առաջարկությունների ներկայացում՝ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարկային վարչարարության ոլորտի բարելավման վերաբերյալ (տեղական հարկերի մասով)<br>- առաջարկությունների ներկայացում՝ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնն էականորեն նվազեցնելու կամ պարզեցնելու ուղղությամբ (տարատեսակ թույլտվություններ և համաձայնեցումներ) |
| | 3. Տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորում | -մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում տեղեկատվական բազայի համալրման մասով<br>-տարածքներում ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում<br>-մարզային զարգացման ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում<br>-տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 4. Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի անվտանգության ապահովում | - Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի «ստրեսս-տեստի» անցկացում |
| | 5. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հին հզորությունների վերազինում | - «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի էներգաբլոկների վերազինման մեկնարկ՝ ջրածխային վառելիքի հենքի վրա էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով (կառավարության որոշումների ընդունում) |
| | 6. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակում | - օրենսգրքից բխող նոր իրավական ակտերի, գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծերի մշակում ( առնվազն 50 իրավական ակտ) |
| | 7. Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների երևակումների երկրաբանական ուսումնասիրություններին ներկայացվող՝ միջազգային չափորոշիչներին համահունչ համապատասխան պահանջներով տեխնիկական կանոնակարգերի մշակման անհրաժեշտության և օրենսդրական առկա անհամապատաս-խանությունների բացահայտման ու վերացման, ինչպես նաև ընդերքի պետական տեսչության կողմից ստուգումների իրականացման առավել արդիական մեթոդների և ձևերի վերաբերյալ առաջարկությունների մշակում | - միջազգային չափորոշիչների ուսումնասիրություն<br>- ընդերքի պետական տեսչության կողմից ստուգումների իրականացման համար արդիական մեթոդների և ձևերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն<br>- ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում և համապատասխան առաջարկությունների մշակում |
| | 8. Ընդերքի ոլորտում հողօգտագործման գործընթացի կարգավորում | - հանքարդյունաբերության նպատակով նախկինում տրված հողերի կատեգորիաների համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին |
| | 9. Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռի մշակման մեթոդիկայի ներդնում | - էներգետիկ միջազգային գործակալության ստանդարտներին համապատասխան ազգային էներգետիկ հաշվեկշռի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքման և հաշվետվությունների ներկայացման համակարգերի, կանոնների և ընթացակարգերի սահմանում |
| ՀՀ բնապահպանության նախարարություն | 10. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում՝ 300.0 հազ. հատ մանրաձկան բացթողում Սևանա լիճ | - Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների՝ գեղարքունի և ամառային իշխանի պոպուլյացիայի համալրման նպատակով 300.0 հազ.հատ մանրաձկան աճեցում և բացթողում Սևանա լիճ |
| | 11. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով 200 հա ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացում | - Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրի տակ մնացող շուրջ 200 հա անտառածածկ տարածքների ծառաթփային բույսերի մաքրում և հեռացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 12. «Արփի լիճ» ազգային պարկի կարողությունների զարգացում | - «Արփի լիճ» ազգային պարկի հիմնադրման ավարտն ապահովող միջոցառումների իրականացում, այդ թվում՝<br>ա. ավարտված շինարարության շահագործման փաստագրում, դրանց կահավորում և տեխզննում, տեղեկատվական նյութերի, ցուցատախտակների և պաստառների պատրաստում և տեղադրում<br>բ. ազգային պարկի քարտեզի և սեփականության իրավունքների գրանցում պետական կադաստրում<br>գ. ազգային պարկի անձնակազմի համար դասընթացների անցկացում<br>դ. պահպանության գոտու զարգացմանն ուղղված ներդրումների ծրագրով նախատեսված միջոցառումների (տնտեսությունների ստեղծում՝ մեղվաբուծական և այլն) իրականացում<br>ե. ազգային պարկի պաշտոնական բացման արարողության անցկացում |
| | 13. Արարատյան դաշտավայրում ստորերկրյա ջրերի արդյունավետ օգտագործման ապահովում | - Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի օգտագործման գծով բնապահպանական օրենսդրության (այդ թվում՝ ձկնաբուծական տնտեսություններին ներկայացված) պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում<br>- անօրինական խորքային հորերի փակմանն ուղղված միջոցառումների իրականացում |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | 14. Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում, այդ թվում՝ մեթոդական ցուցումներին համապատասխան, փորձարարական 10 գերատեսչությունների կողմից ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾԾ հայտի հետ մեկտեղ յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ներկայացում | - բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման մեթոդական ցուցումների լրամշակում և համապատասխան գերատեսչություններին կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 15. ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող բյուջետային ֆինանսավորման հայտերի, նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով կազմման մշակույթի ներդնում | - 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով հատկացումների տարածքային (ըստ մարզերի) բացվածքի ձևաչափի և կազմման մեթոդական ցուցումների տրամադրում ՀՀ պետական կառավարման մարմիններին<br><br>- ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից իրենց 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով առաջարկվող ծախսային ծրագրերի գծով բյուջետային հատկացումների տարածքային (ըստ մարզերի) բացվածքի և իրականացվելիք ծրագրերի վերլուծության ներկայացում |
| | 16. Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հաստատում | - հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների մշակում<br>- հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցի մշակում<br>- «Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցը և սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկում այլ շահագրգիռ մարմինների հետ<br>- «Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցը և սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը |
| | 17. ՀՀ հանրային հատվածի պետական կառավարչական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ու 50 տոկոս և ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման գործարկում | - ներքին աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրության ամբողջականացում, ներքին աուդիտի ստորաբաժանումներին ներկայացվող չափորոշիչների սահմանում: Միաժամանակ, ներքին աուդիտի ստորաբաժանումների ղեկավարների համար համապատասխան վերապատրաստման դասընթացների կազմակերպում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 18. Պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակումը կանոնակարգելու նպատակով իրավական ակտերի նախագծերի ներկայացում | - պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակման նոր կարգի օրենքով սահմանում<br>- պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակումների օրենսդրական պահանջների խախտման դեպքերում համապատասխան պետական մարմինների կողմից նշված դեպքերի մասին հսկողություն իրականացնող մարմնին տեղեկացնելու կարգի սահմանում<br>- անհրաժեշտության դեպքում հսկողությունն ապահովող մեխանիզմների կարգավորմանն առնչվող այլ իրավական ակտերի սահմանում |
| ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 19. Մթնոլորտային երևույթների կառավարման և ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացման նպատակով մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծրագրի մշակում և հաստատում | - մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծրագրի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն |
| | 20. Ճգնաժամային կառավարման կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության գործարկում | - «911» հեռախոսահամարին իրականացվող զանգերի տեղայնացում<br>- հանրապետությունում գործող գերատեսչական շուրջօրյա ծառայությունների և «911» դիսպետչերական ծառայության միջև փոխհամագործակցությունն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում՝ տեղեկատվության փոխանակման գործընթացը կարգավորելու նպատակով<br>- արտակարգ իրավիճակների հարցերով միասնական տեղեկատվական դաշտի ստեղծում (տեղեկատվական բազաներ) |
| ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 21. 2012 թվականին Լոնդոնի 30-րդ օլիմպիական խաղերին և 14-րդ պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցություն | - կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներին աջակցում և իրականացում<br>- մեթոդական և գործնական օգնության տրամադրում՝ նախապատրաստական և անցկացման կազմակերպչական աշխատանքների ու նախատեսված կանոնակարգի համաձայն<br>- Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովում, մրցանակային տեղերի գրավմանը նպաստում, օլիմպիական գաղափարների տարածում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 22. Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կայացում և զարգացում | - գիտակրթական կազմակերպություններում երիտասարդական ուսումնասիրություններով զբաղվող անձանց համար համապատասխան բարենպաստ միջավայրի ձևավորում (տարեկան համաժողովի կազմակերպում, աշխատանքների ժողովածուի հրատարակում և այլն), աջակցություն մասնագիտական աճի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ու մեխանիզմների զարգացմանը<br>- երիտասարդության հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների ներուժի զարգացման և ուսումնասիրություններով զբաղվող մասնագետների ներգրավման մեխանիզմների մշակում և կիրառում<br>- ուսումնասիրությունների իրականացման նպատակով առցանց դրամաշնորհային մրցույթների անցկացում (առնվազն 2 մրցույթ), իրականացված ուսումնասիրությունների զեկույցների հրապարակում և տպագրում (առնվազն 2 զեկույց)<br>- երիտասարդական ուսումնասիրությունների ոլորտում միջազգային համագործակցության խթանում, համատեղ ուսումնասիրությունների ծրագրերի մշակում և իրականացում<br>- 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության մշակման համար առաջարկությունների փաթեթի ներկայացում |
| ՀՀ սփյուռքի նախարարություն | 23. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի անցկացում | - շուրջ 600 մասնակցի ապահովում<br>- 20 պարային համույթների և երգչախմբերի, առնվազն 20 անհատ կատարողների ելույթների կազմակերպում Հայաստանում և Արցախում<br>- դուդուկահարների համահայկական փառատոնի անցկացում |
| | 24. «Սփյուռք» ամառային դպրոցի հիմնում | - ԵՊՀ բազայի հիման վրա «Սփյուռք» ամառային համալսարանի հիմնում՝ 5 բաժիններով (ըստ ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների)<br>- սփյուռքի տարբեր համայնքներից մինչև 70 մասնակցի ապահովում երիտասարդ լրագրողի, երիտասարդ առաջնորդի, հայոց լեզվի, հայոց պատմության, ազգային երգի, պարի ուսուցչի վերապատրաստման ծրագրերին<br>- հայաստանցի և օտարերկրյա (այդ թվում՝ սփյուռքահայ) դասախոսների համացանցի ստեղծում, դասախոսական թեմատիկ շարքերի տպագրում և գիտելիքի տարածում սփյուռքյան համայնքներում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն | 25. Մարզային առողջապահական համակարգերի զարգացման ծրագրի իրականացում | - գյուղական բնակավայրերում առողջության առաջնային պահպանման հաստատությունների զարգացում՝<br>ա. նոր ամբուլատորիաների կառուցում՝ 13 գյուղական համայնքներում<br>բ. ամբուլատորիաների վերանորոգում՝ 4 գյուղական համայնքներում<br>- մարզային բժշկական կենտրոնների զարգացում, մարզային առողջապահական համակարգի օպտիմալացում և արդիականացում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման<br>- ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ<br>- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության դիահերձարանի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ<br>- ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության դիահերձարանի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ<br>- ՀՀ Սյունիքի մարզի «Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ<br>- ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքերի, ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքերի, ՀՀ Տավուշի մարզի «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկայի մասնաշենքերի վերանորոգման շինարարական աշխատանքների մեկնարկ<br>- մարզային բժշկական կենտրոնների բժշկական սարքավորումներով և կահույքով հագեցման աշխատանքների մեկնարկ<br>- ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնի օպտիմալացման և արդիականացման աշխատանքների մեկնարկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 26. Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների կիրառման ընդլայնում, նոր ծրագրերի ընտրություն և ներդրում | - համավճարային մեխանիզմների ներդրման ընդլայնման նպատակով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի վերլուծության և ընտրության արդյունքում առնվազն 2 ծրագրերի ուղղությամբ առաջարկության ներկայացում ՀՀ կառավարություն<br>-ընտրված ծրագրերի քննարկում և ներդրման ժամանակացույցի հաստատում<br>- ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների իրականացում<br>- ընտրված ծրագրերի շրջանակներում համավճարի չափի սահմանում՝ դիֆերենցված ըստ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարի հետ<br>- բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր իրականացնող հիվանդանոցային բուժօգնության բնագավառում բուժանձնակազմի վարձատրության կարգի հստակեցում<br>- 2012 թվականի երկրորդ կիսամյակում ընտրված նոր ծրագրերում բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմի ներդրում |
| | 27. Մանկական վերակենդանացման մարզային ծառայությունների հզորացում | - առնվազն 3 մարզում մանկական վերակենդանացման ծառայությունների ստեղծում և սարքավորումներով հագեցում<br>- մարզային նշանակության մանկական/նորածնային վերակենդանացման ծառայությունների ստեղծում Ղափանում և Վանաձորում<br>- մանկական/նորածնային առկա ծառայության՝ սարքավորումներով համալրում Գյումրու մանկական ավստրիական հիվանդանոցում<br>- Երևան քաղաքի արտագնա անհետաձգելի մանկական/նորածնային վերակենդանացման ծառայությունների՝ նույնատեսակ մարզային ծառայությունների հետ գործառնական կապի ստեղծում, մասնագիտական խորհրդատվական ու կազմակերպամեթոդական աշխատանքների ընդլայնում |
| | 28. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժհաստատությունների ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացում | -պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների եկամուտների ավելացման և արդյունքում հարկային բազայի ընդլայնման նպատակով վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների գների կանոնակարգում, ծառայությունների գների նվազագույն սանդղակի սահմանում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | - պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների կողմից կատարվող ծախսերի (մասնավորապես, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի) արդյունավետության բարձրացման նպատակով ծախսային նորմատիվների սահմանում, աշխատանքի վարձատրության կանոնակարգում, ֆինանսական հաշվետվողականության ներդրման գործընթացի իրականացում, անհրաժեշտության դեպքում բուժհաստատությունների կառուցվածքի, հաստիքների և նախահաշվի փոփոխությունների առաջարկների ներկայացում |
| | 29. Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումների ծրագրի իրականացում | - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ (իռլանդական «The Compliance Group»-ի ծրագիր) կադրային ներուժի հզորացում, կարողությունների զարգացում, փորձագետների շարունակական վերապատրաստում<br>- պատշաճ արտադրական գործունեության կանոնների համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում<br>- «Պատշաճ բաշխման գործունեության (ՊԲԳ) հավաստագրի տրամադրման և վերանայման կարգը և հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն<br>- պատշաճ արտադրական գործունեության կանոնների և պատշաճ բաշխման գործունեություն կանոնների ներդրման նպատակով դեղագործական տեսչությունների համագործակցության (PIC/S) միջազգային կառույցին անդամակցության հայտի ներկայացման նախապատրաստական աշխատանքների իրականացում |
| | 30. ՀՀ-ում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ճշգրիտ ախտորոշման և արդյունավետ բուժման ծրագրի իրականացում | - ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, արդյունավետ բուժմանը և այդ հիվանդություններից մահացության կրճատմանն ուղղված սկրինինգային ծրագրերի մշակում և իրականացում բնակչության ռիսկային խմբերում<br>- արյունաբանական կենտրոնի արդիականացման և ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման նպատակով հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, կենտրոնի արդիականացման համար շինարարական |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | | կազմակերպություն ընտրելու նպատակով մրցույթի անցկացում, կենտրոնի հիմնանորոգման համար շինարարական աշխատանքների իրականացում, արդի բժշկական սարքավորումներով և կահույքով հագեցում, բժշկական անձնակազմի կրթում<br>- Հայաստանում ժամանակակից նոր ուռուցքաբանական կենտրոնի ստեղծման նպատակով կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, հաստատում, կենտրոնի կառուցման համար շինարարական կազմակերպություն ընտրելու նպատակով մրցույթի անցկացում, շինարարական աշխատանքների մեկնարկ |
| ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 31. Վանաձոր–Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության նախապատրաստական աշխատանքների իրականացում | - Վանաձոր–Ֆիոլետովո նոր երկաթգծի վերջնական ծրագծի ընտրություն, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման և շինարարական աշխատանքների կազմակերպում |
| | 32. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների մեկնարկում, Տրանշ 3 (Թալին-Գյումրի) ֆինանսավորման կազմակերպում և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով նախատեսված ամբողջ ծրագծի հաստատում | - Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների մեկնարկի իրականացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, Տրանշ 3 (Թալին-Գյումրի) ֆինանսավորման և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով նախատեսված ամբողջ ծրագծի հաստատմանն ուղղված միջոցառումների կազմակերպում |
| | 33. «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացի իրականացում | - «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու պայմանագրի մշակում և համապատասխան մրցույթի իրականացում |
| | 34. «Հայաստանի հեռուստառադիոհեռարձակման ցանց» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքի վարձակալության տրամադրման գործընթացի իրականացում | - «Հայաստանի հեռուստառադիոհեռարձակման ցանց» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքի վարձակալության տրամադրման պայմանագրի մշակում և համապատասխան մրցույթի իրականացում |
| ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 35. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) վարկանիշային դասակարգման սանդղակում առնվազն հինգ քայլով Հայաստանի դիրքի բարձրացում | - ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | | բարձրացում ՀՀ կառավարության 2012 թվականի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի 4-րդ՝ «Շինարարական թույլտվություններ» բաղադրիչով քաղաքաշինության նախարարությանն ուղղված հանձնարարականների կատարման շրջանակներում |
| | 36. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովում | - աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած մոտ 1500 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բնակարանային ապահովման ծրագրի իրականացում<br>- ՀՀ կառավարության 1999թ. հուլիսի 10-ի N432 և 2008թ. նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումների դրույթների համաձայն պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու համար համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված քաղաքացիների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն<br>- ուսումնասիրության արդյունքներով բնակարանային պայմանները բարելավելու հավակնող անձանց ցուցակների հաստատում |
| | 37. Շենքերի և շինությունների անվտանգությանը, սեյսմակայունությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումների իրականացում | - շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրանքների անվտանգության տեխնիկական կանոնակարգի մշակում<br>- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ մեկ բազմաբնակարան շենքի շինարարության փորձնական ծրագրի իրականացում |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 38. Համայնքներում նախադպրոցական կրթության ինստիտուցիոնալ հիմքերի ներդրում | - ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերում նախադպրոցական հաստատություններ չունեցող և թերկոմպլեկտավորված մանկապարտեզներ ունեցող համայնքներում նախադպրոցական ծառայությունների կազմակերպում՝ առնվազն 80 միկրոծրագիր<br>- շուրջ 1500 նոր երեխաների ընդգրկում այդ խմբերում |
| | 39. Հանրակրթության համակարգում նոր գործառույթների և ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրում | - շուրջ 8000 ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում՝ համաձայն նոր առարկայական ծրագրերի<br>- տարակարգերի շնորհում շուրջ 2050 ուսուցիչներին<br>- շուրջ 400 տնօրենների հավաստագրում<br>- հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում՝ |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | ինտերնետային ցանցին փոխկապակցված դպրոցների թիվը հասցնելով 1403-ի<br>- 107 ավագ դպրոցներում անլար (Wi –Fi) կապի ապահովում<br>- դպրոցական դասագրքերի էլեկտրոնային շտեմարանի ստեղծում<br>- տարրական դասարանների աշակերտներին բոլոր դասագրքերով ապահովում<br>- շախմատ առարկայի ներդնում հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանում<br>- հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակում<br>- 2012/2013 ուսումնական տարվա միասնական քննությունների համար գրավոր քննությունների 5000 և բանավոր քննությունների 1000 հարցից բաղկացած շտեմարանների մշակում և հրատարակում |
| | 40. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում նոր բովանդակային հենքի ներդրում և կադրերի մասնագիտական զարգացում | - ՀՀ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող և հեռանկարային մասնագիտությունների 17 կրթական չափորոշիչների և 17 մոդուլային ծրագրերի մշակում և ներդրում, այդ թվում՝ վերանայում և բարելավում<br>- ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի և ղեկավար անձնակազմի վերապատրաստում՝ շուրջ 800 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ, շուրջ 40 տնօրեն և տնօրենի տեղակալ |
| | 41. Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների իրականացում | - ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրման գործարկումն ապահովող միջոցառումների իրականացում<br>- ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունից բխող միջոցառումների իարականացում<br>- բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում<br>- լավագույն ուսանող հանրապետական մրցույթի կազմակերպում և անցկացում<br>- բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակում<br>- բարձրագույն մասնագիտական կրթության 3 մասնագիտությունների կրկնակի դիպլոմների համակարգի ներդնում |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 42. Եվրամիության պահանջներին համապատասխան սննդամթերքի անվտանգության օրենսդրական փոփոխությունների իրականացում և | - «Հայաստանի Հանրապետությունում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացում» Թվինինգ ծրագրի իրականացում՝ |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | ընթացակարգերի սահմանում | ա. Հայաստանի Հանրապետությունում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության մոտարկման մեթոդաբանության ուսուցում<br>բ. կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման կարողությունների, գործող ընթացակարգերի արդիականացում<br>գ. հանրության շրջանում և մասնավոր հատվածում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում<br>- Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենայի առանձնակի պահանջներ սահմանող» N 853/2004 կանոնակարգի մոտարկում ՀՀ օրենսդրությանը, բացերի վերհանում և դրա հիման վրա կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակում |
| | 43. Գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում | - հանրապետության 10 մարզերի գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների անհրաժեշտության և տվյալ տնտեսավարման ձևի առավելությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում<br>- հանրապետության գյուղական համայնքներում տարբեր ուղղվածության առնվազն 10 կոոպերատիվների ստեղծմանն աջակցություն<br>- գյուղատնտեսական կոոպերացիայի միջազգային լավագույն փորձի տեղայնացման նպատակով Եվրամիության աջակցության Թայեքս ծրագրի իրականացման համար հայտի ներկայացում<br>- գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում (սերմերի, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի առաջնահերթ տրամադրում և այլն) |
| | 44. Հայաստանի Հանրապետության համայնքներին գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մեխանիզմների կատարելագործում | - մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածության փաստացի մակարդակի և դրանց վիճակի գնահատում (ըստ գյուղատնտեսական հողատեսքերի տեխնիկայով ապահովվածության, տեխնիկայի պատրաստակամության մակարդակի, ըստ տեսակների շահագործման ժամկետների և այլն) |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | - մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի գնահատում<br>- գյուղատնտեսական տեխնիկա մատակարարող լիզինգային ընկերությունների, արտերկրի արտադրողների հետ հանրապետություն մատչելի պայմաններով տեխնիկայի մատակարարման ուղղությամբ բանակցությունների վարում, դրամաշնորհային կարգով գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հայտերի ներկայացում<br>- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 43 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում<br>- գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքներ իրականացնող համատեղ գործունեության պայմանագրով և կոոպերացման սկզբունքով գործող կառույցներին աջակցություն |
| ՀՀ մշակույթի նախարարություն | 45. Հայ գրավոր ժառանգության, գրքի, գրքարվեստի և տառարվեստի հանրահռչակում ՀՀ-ում և արտերկրում | - «Հայ գրատպության 500-ամյակին և Երևանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի իրականացում, մասնավորապես՝<br>ա. մասնակցություն 14 գրքի միջազգային տոնավաճառներին<br>բ. 20 գրական համաժողովների, փառատոների. ցուցահանդեսների, մրցույթների կազմակերպում Հայաստանում<br>գ. 8 մանկական հանրապետական միջոցառումների իրականացում Հայաստանում<br>- գրքի թանգարանի հիմնադրում<br>- հայկական տառարվեստի 3 համալիրների ստեղծում<br>- ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցու վերականգնման մեկնարկ |
| | 46. Մշակութային ծառայությունների ոլորտում էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ներդրում և գործարկում | **<u>Թանգարաններ՝</u>**<br>- 2 վիրտուալ թանգարանների (գորգի և գրատպության) և 1 մանկական սրահի ստեղծում<br>- վիրտուալ թեմատիկ ցուցադրությունների կազմակերպում<br>- էլեկտրոնային տեղեկատվական 20 կրպակների գործարկում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | <u>**Գրադարաններ՝**</u><br>- Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցում 376000 միավոր գիրքի մուտքագրում<br>- էլեկտրոնային տեղեկատվության 2 աղբյուրների («EBSKO», «Integrum World») էլեկտրոնային հրապարակումների բաժանորդագրություն<br><u>**4 համերգային դահլիճներում**</u> տոմսերի էլեկտրոնային վաճառքի գործարկում<br>մշակութային ծառայություններ մատուցող <u>**մասնագետների վերապատրաստում**</u> (100 թանգարանային աշխատողներ, 90 համայնքային գրադարանավարներ, 800 երաժշտություն դասավանդողներ) |
| | 47. Մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանն ուղղված ծրագրերի մերկնարկ | - 12 գրադարանների վերազինում<br>- 3 վերանորոգված թանգարաններում նոր մշտական ցուցադրությունների ձևավորում (Ա. Բակունցի տուն-թանգարան, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան)<br>- Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի նյութատեխնիկական և մասնագիտական բազայի արդիականացում՝ լուսաձայնային սարքավորումների և բեմական մեխանիզմների տեղադրման մեկնարկում |
| | 48. Պետություն-մասնավոր համագործակցության ներքո պատմաճարտարապետական հուշարձանների վերանորոգման ծրագրի մեկնարկ | - «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում, համաձայն որի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառը պետական հատկացումներից բացի ֆինանսավորվում է նաև հուշարձանների սեփականատերերի և օգտագործողների, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներով և օրենքով չարգելվող այլ միջոցների հաշվին<br>2012թ. նախատեսվում է այս ձևաչափով իրականացնել **3** (Օձունի Աբ. Հովհաննես եկեղեցի, Մխիթար Գոշի դամբարան, 1827 թ. Ռուս-պարսկական պատերազմում զոհված ռուս մարտիկներին նվիրված Օշականի հուշարձան) պատմամշակութային անշարժ հուշարձանների վերականգնում ու մասնակի ամրակայում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 49. Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների ներդրում | - բազմաաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող ենթաօրենսդրական և գերատեսչական իրավական ակտերի մշակում և ընդունում՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման ( 21 ՀՀ կառավարության որոշման նախագծեր և 2 գերատեսչական իրավական ակտերի նախագծեր)<br>- պետական կենսաթոշակային համակարգի տվյալների կենտրոնացված շտեմարանի ամբողջական ներդրում<br>- կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգի հիմնական բաղադրիչների մշակում և ներդրում՝ համաձայն 2011 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, eCSD Expert AS-ի և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի<br>- եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի մշակում, փորձնական կիրարկում և հիմնական ներդրում |
| | 50. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման իրավական, տեխնիկատնտեսական հիմքերի ստեղծում | - ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով համայնքի սոցիալական կարիքների գնահատման, դրա հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույցի հաստատում<br>- ինտեգրված սոցիալական ծառայությունների տեխնիկական և գույքային վերազինման, վերանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների առնվազն 10 կենտրոնի գործարկում<br>- տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության (պետական նպաստների, կենսաթոշակային ապահովության, զբաղվածության, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, սոցիալական ապահովության քարտերի, բնակչության պետական ռեգիստրի, անշարժ գույքի կադաստրի և այլ (ըստ պատրաստվածության մակարդակի) տեղեկատվական բազաների միջև) միասնական համակարգի ներդրում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | 51. ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի մշակում | - «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը մշակող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն<br>- «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն<br>- «Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն |
| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 52. Արտահանման վրա հիմնված արդյունա-բերական քաղաքականության իրականացում | - Ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և կոնյակագործության ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող միջոցառումների ցանկի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը<br>- Հայաստանի Հանրապետության վարչապետին կից արդյունաբերական խորհրդի կազմի և աշխատակարգի ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը<br>- Ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և կոնյակագործության ոլորտային խորհուրդների ձևավորման ապահովում<br>- Ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և կոնյակագործության ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող հաստատված միջոցառումների ցանկի իրագործում |
| | 53. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարձրացման ապահովում | - Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի իրականացման համակարգում, այդ թվում` հարկերի վճարման համար ծախսվող ժամանակի կրճատման և ֆինանսական հոսքերի թափանցիկության բարձրացման, մաքսային արժեքի որոշման գործընթացի բարելավման և ինքնահայտարարագրման ինստիտուտի կատարելագործման, էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների բարելավման, սնանկության վարույթում գտնվող իրավաբանական անձանց գույքի օտարման ժամկետների կրճատման ուղղություններով |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 54. ՀՀ-ԵՄ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունների մեկնարկ և հետագա բանակցային ուղղությունների ամրագրում | - ընդհանուր համակարգման, առևտրի տեխնիկական խոչընդոտների, սանիտարական և բուսասանիտարական միջոցների և մտավոր սեփականության իրավունքների ոլորտներում ամրագրված գլխավոր առաջնայնությունների իրականացման ապահովում<br>- բանակցային գործընթացի շարունակականության ապահովում՝ ըստ ամրագրված ուղղությունների |
| ՀՀ արդարադատության նախարարություն | 55. Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության և իրականացման նպատակով՝<br>1. Դատական իշխանության գործունեության արդյունավետության բարձրացում<br>2. Քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացում<br>3. Նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում | 1. Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և միջոցառումների իրականացում, որոնք կապահովեն՝<br>ա) դատարանների նկատմամբ վստահության աճը<br>բ) դատարանների կողմից գործերի առավել արագ քննությունը (միջին ժամկետները կրճատվել են 10 %-ով)<br>գ) իրավունքների դատական պաշտպանության մատչելիության բարձրացում<br>դ) դատական ակտերի կանխատեսելիության բարձրացում (վերադաս դատարան բողոքարկումների տոկոսի նվազեցում 5 %-ով)<br>ե) դատական իշխանության թափանցիկության ապահովում<br>1.1. վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների զարգացում<br>ա) արբիտրաժի միջոցով վեճերի լուծման թվի աճ (100 %-ով)<br>բ) հաշտարարության (մեդիացիա) ինստիտուտի ներդրում և կիրառում (օրենքի նախագիծը պատրաստվել է և ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը)<br>1.2. փաստաբանության ինստիտուտի արդյունավետության բարձրացում<br>ա) անվճար իրավաբանական օգնություն ստացողների թվի ավելացում (20%-ով)<br>1.3. դատավորների և դատախազների վերապատրաստման, ինչպես նաև թեկնածուների պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացում<br>ա) վերապատրաստում անցած անձանց թվի աճ (10%-ով)<br>բ) մեկ անձի թվով վերապատրաստման դասընթացների ժամաքանակի աճ (կամավոր սկզբունքներով) (10%-ով)<br>գ) դատախազների թեկնածուների և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց նշանակման ընթացակարգերի օբյեկտիվության ապահովում (օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը) |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | 1.4. ԴԱՀԿ ծառայության արդյունավետության բարձրացում<br>ա) դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետի կրճատում (10%-ով)<br>բ) դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության դեմ բերված բողոքների թվի նվազեցում (10%-ով):<br>գ) դատական ակտերի հարկադիր կատարման արդյունքում բռնագանձման տոկոսի աճ (10%-ով)<br>դ) հրապարակային աճուրդների թափանցիկության և արդյունավետ աճ, որի արդյունքում կավելանա աճուրդների մասնակիցների թիվը (10%-ով)<br>2. Քրեակատարողական համակարգ<br>ա) ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց զբաղվածության աճ (10%-ով)<br>բ) քրեակատարողական հիմնարկում հանցագործությունների թվի նվազեցում (10%-ով)<br>գ) քրեակատարողական հիմնարկներում մահացության դեպքերի նվազեցում (10%-ով)<br>դ) վարակիչ հիվանդություններով հիվանդացած անձանց թվի կրճատում (10%-ով)<br>ե) ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց՝ ուսումնական և մասնագիտական ծրագրերում ներգրավվածության աճ (10%-ով)<br>զ) դատապարտված անձանց՝ հանրային աշխատանքներում ընդգրկվածության ավելացում (առկա թվի աճ 10%-ով)<br>է) պատժից ազատելու ինստիտուտների արդյունավետության և կանխատեսելիության աստիճանի բարձրացում (պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դիմումների ընդհանուր քանակում բավարարված դիմումների չափաբաժնի աճ՝ 5%-ով)<br>ը) պատիժը կրած անձանց զբաղվածության մասնաբաժնի աճ (5%-ով)<br>թ) խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ կոնվենցիայով (CPT) նախատեսված վերահսկողության մեխանիզմի զեկույցի առաջարկությունների կատարողականի բարելավում<br>3. Նոտարիատ<br>ա) նոտարի կողմից մեկ պատուհանի սկզբունքով մատուցվող ծառայությունների թվի աճ (ընդհանուր ծառայությունների 5%-ը) |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | բ) նոտարական գործարքների բողոքարկման / վիճարկման տոկոսի նվազեցում (10%-ով)<br>գ) նոտարների շրջանում էլեկտրոնային միջոցների և ինտերնետի կիրառման ավելացում (բոլոր նոտարական գրասենյակներում առկա են համացանցին բավարար թողունակությամբ միացած համակարգիչներ, բոլոր նոտարներն ունեն էլեկտրոնային ստորագրություն, նոտարների 20%-ը անցել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ) |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 56. Ռազմական կրթության չափանիշների ներդրում | - ռազմական կրթության հայեցակարգից բխող մարտավարական, գիտելիքների և կարողությունների ձևավորմանն ուղղված կրթության կազմակերպում,<br>- պայմանագրային սերժանտական դասընթացների իրականացում<br>- ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի հստակեցման նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում |
| | 57. Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | - ՀՀ ԶՈՒ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի հիման վրա ՀՀ գիտական, գիտաարտադրական և արտադրական ներուժի ուսումնասիրում<br>- ռազմական դրության ժամանակաշրջանում արդյունաբերության ոլորտի զորահավաքային ծավալման առաջադրանքների նախատեսման իրական հնարավորությունների ուսումնասիրում |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 58. Հայաստանի Հանրապետության Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշների և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթների իրականացմանն ուղղված աշխատանքներ | Արտաքին գործերի նախարարությունն իր գործունեության մեջ շարունակելու է Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության հետագա ամրապնդման, զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ապահովման, համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում առավել ընդգրկման, բարեկամ և գործընկեր երկրների հետ երկկողմ և բազմակողմ հարաբերությունների առավել զարգացման ու ամրապնդման, միջազգային կազմակերպություններում գործուն մասնակցության ապահովման արտաքին քաղաքական ուղեգիծը, առաջնահերթ քայլերը նպատակաուղղելով՝<br>- արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը<br>- արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչների ամրապնդմանը<br>- Ռուսաստանի հետ դաշնակցային և ռազմավարական |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | հարաբերությունների առավել խորացմանը համագործակցության ընդլայմանն ուղղված նոր ծրագրերի իրականացմանը<br>- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության ամրապնդմանը<br>- եվրոպական ընտանիքին մերձեցմանը<br>- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների առավել զարգացմանը<br>- ԱՊՀ անդամ երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների խորացմանը, և ակտիվ մասնակցությանը ԱՊՀ և ԵվրԱզԷՍ-ի գործընթացներում<br>- ՀԱՊԿ –ի շրջանակում համագործակցության շարունակական խորացմանը<br>- Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության զարգացմանը<br>- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և Հարավարևելյան Ասիայի այլ երկրների հետ հարաբերությունների ընդլայնմանը<br>- Կանադայի և Հարավային Ամերիկայի երկրների հետ համագործակցության զարգացմանը<br>- հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորմանը<br>- միջազգային կազմակերպություններում ՀՀ շահերի պաշտպանությանը<br>- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը<br>- Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը |
| | 59. Եվրոպական ուղղության խորացում | ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իր գործունեության մեջ շարունակելու է եվրոպական պետությունների հետ համագործակցության ամրապնդման և խորացման քաղաքականության իրականացումն ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարաբերությունների հարթության վրա:<br>ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝<br>- շարունակելու է ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի կնքման ուղղությամբ բանակցությունները<br>- աշխատանքներ է վարելու ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման նպատակով բանակցությունների մեկնարկի և |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | միջոցներ է ձեռնարկելու այդ բանակցությունների առաջընթացն ապահովելու համար<br>- քայլեր է ձեռնարկելու ԵՄ-ի անդամ պետություններ հետ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացման վերաբերյալ համապատասխան համաձայնագրի կնքման ուղղությամբ<br>- շարունակելու է ՀՀ-ԵՄ եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի կենսագործմանն ուղղված համապատասխան քայլերը |
| | 60. Արտաքին տնտեսական ոլորտին աջակցություն | ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իր իրավասությունների սահմաններում ճյուղային նախարարությունների մասնակցությամբ միջոցներ է ձեռնարկելու հետևյալ խնդիրների լուծման ուղղությամբ՝<br>- Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովում, էներգակիրների և էներգիայի աղբյուրների զանազանեցում<br>- հաղորդակցության ուղիների ապաշրջափակում, զարգացում ու զանազանեցում, դրանց անխափան գործարկման համար պայմանների ապահովում<br>- հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտում, արտաքին առևտրի համար նպաստավոր դաշտի ստեղծում<br>- փոխշահավետ տնտեսական կապերի հաստատման, բարձր տեխնոլոգիաների և հմտությունների ձեռքբերման ու ներդրման ուղղությամբ գործադրվող ջանքերի ակտիվացում<br>- արտաքին ներդրումների խրախուսմանը, օգնության, վարկերի և դրամաշնորհների ապահովմանը նպաստող դիվանագիտական ջանքերի ակտիվացում |
| | 61. Մարդու իրավունքների ոլորտ. ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և մոնիթորինգային մարմինների կողմից տրված հանձնարարականների իրականացման ապահովում, այդ թվում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր վերանայման գործընթացի շրջանակներում | ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակելու է աշխատանքները պատասխանատու մարմինների մասնակցությամբ ՄԱԿ-ի պայմանագրային և ԵԽ-ի մոնիթորինգային մարմիններին ՀՀ ազգային զեկույցների ներկայացման ուղղությամբ՝ ապահովելով ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններում դրանց պատշաճ պաշտպանությունը, այդ թվում՝<br>- 2012 թվականի մայիսին կայանալիք խոշտանգումների դեմ կոմիտեի 48-րդ նստաշրջանի ընթացքում խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբեր-մունքից ու պատժի այլ ձևերից պաշտպանության դաշնագրի |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | | - 2012 թվականի հուլիսին կայանալիք նստաշրջանի ընթացքում քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի<br>- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունների ազգային զեկույցների ներկայացում և կոնվենցիայի և կամընտիր արձանագրությունների ազգային զեկույցների պաշտպանություն /ժամկետները ճշտվում են/ |
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 62. Բազային երկրատեղեկատվական համակարգերի ստեղծում Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանում | - աշխատանքները ներառում են թվային քարտեզագրական հիմքի ստեղծում և անհրաժեշտ տվյալների հավաքագրում՝ տեղագրական և կադաստրային քարտեզների ու հատակագծերի հիման վրա Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի բազային երկրատեղեկատվական համակարգի 1:2000 մասշտաբի քարտեզագրական հիմքի ստեղծման նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝<br>- վարչական շրջանի և դրա հեռանկարային զարգացման նպատակով նախատեսված տարածքների համար ստեղծվելու են 1:2000 մասշտաբի տեղագրական և կադաստրային թվային համադրված հատակագծերը, որոնց համար հիմք են հանդիսանալու 1998-2004 թվականների ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստեղծված 1:500 և 1:2000 մասշտաբի թվային կադաստրային քարտեզները, որոնց վրա իրականացվելու են բնակավայրերի 1:2000 մասշտաբի հատակագծերի թարմացման, ռելիեֆի տեղագրական տարրերի ստեղծման, տեղագրական հանույթների կազմման ու թվայնացման աշխատանքներ<br>- անհրաժեշտ է զգալի փոփոխություններ կրած տարածքներում (ակտիվ կառուցապատման գոտիներում) կատարել 1:2000 մասշտաբի տեղագրական նոր հանութագրում<br>- տարածքի ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում՝ շահագործող կազմակերպությունների հետ<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ թեմատիկ շերտերի ստեղծում և բոլոր տարրերի տեքստային տվյալների մուտքագրում |
| | 63. WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքներ | - ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի «WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում տեղագրական քարտեզների և հատակագծերի բաց հրատարակման ընթացակարգը կարգավորելու մասին» N 791-Ն որոշման պահանջների |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | | համաձայն կստեղծվեն ՀՀ Կոտայքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերի տարածքների համադրված, բաց հրատարակման տեղագրական, կադաստրային և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզներն ու հատակագծերը, ինչպես նաև համայնքների սահմանների շրջադարձային կետերի կոորդինատները կապակցված ազգային գեոդեզիական ցանցի հետ |
| | 64. Հայաստանի Հանրապետության մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացում, տիեզերալուսանկարահանման աշխատանքների միջոցով | Նախատեսվում է իրականացնել տիեզերալուսանկարահանման աշխատանքներ և ստացված նյութերի մշակում, որի հիման վրա կատարվելու է մոնիթորինգ, որից հետո տիեզերալուսանկարահանման նյութերի հիման վրա բացահայտվելու են նկատելի փոփոխություններ կրած տարածքները: Ստացված տվյալներով կազմվելու է տեխնիկական նախագիծ, որի հիման վրա կատարվելու են փոփոխություններ կրած տարածքների՝ Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի նախկինում ստեղծված թվային տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքներ:<br>Թարմացման աշխատանքներն իրականացվելու են 1:10 000 մասշտաբի բազային տեղագրական քարտեզների վրա, որից հետո ընդհանրացման եղանակով կիրականացվեն նույն տարածքների՝ Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի 1:25000-1:1 000 000 մասշտաբների տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները |
| ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | 65. Պետական կառավարման մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող տարածքների օպտիմալացում | - պետական կառավարման մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող տարածքների ուսումնասիրության արդյունքում տարածքների օպտիմալացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում<br>- պետական կառավարման մարմիններին անհրաժեշտ անշարժ գույքի պահանջարկի հստակեցում<br>- օպտիմալացման արդյունքում ազատված տարածքների օգտագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում |
| | 66. Պետական գույքի օտարման գործարքների թափանցիկության և հրապարակայնության ապահովում | - պետական գույքի օտարման գործարքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով պետական գույքի օտարման աճուրդներն էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար նախապայմանների ստեղծում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| ՀՀ ոստիկանություն | 67. Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդնում | - համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում՝<br>(IP, պտտվող, մեծացնող տեսախցիկներ- 22 հատ<br>օպտիկական վերափոխիչներ -44 հատ<br>օպտիկական վերափոխիչի պահարան -22 հատ<br>տեսասերվեր -2 լրակազմ<br>օպտիկա-մանրաթելային կապուղի -22 հասցեների համար)<br>- տեսախցիկների տեղադրում Երևան քաղաքի 21 վայրերում (հասցեներում)<br>- համակարգի շահագործում |
| | 68. Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի, նույնականացման քարտերի և հանրային ծառայությունների համարանիշերի տրամադրման համար անհրաժեշտ համակարգի գործարկում | - էլեկտրոնային անձնագրերում և նույնականացման քարտերում անհատական տվյալների մուտքագրման (պերսոնալացման) համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների տեղադրում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում<br>- անձնագրային ծառայությունների անձնակազմի ուսուցման ծրագրերի հաստատում և ուսուցման կազմակերպում<br>- անձնագրային նոր համակարգի օրենսդրության կիրառման վերաբերյալ իրավական իրազեկում զանգվածային լրատվամիջոցներով |
| | 69. Երևան քաղաքի ճանապարհներին, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապար-հահատվածներում արագության վերահսկման ավտոմատ համակարգերի ներդրում | -50 արագաչափ սարքերի, 15 խաչմերուկների համար 45 տեսախցիկների ձեռքբերում և տեղադրում |
| | 70. Երևան քաղաքում տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողության իրականացման ժամկետի կրճատում | - Երևան քաղաքում (Գաջեգործների 76) տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման ստորաբաժանման նոր վարչական շենքի շահագործման հանձնում<br>- տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողության իրականացում «հոսքագծի» եղանակով՝ 30-35 րոպեի ընթացքում |
| | 71. Երևան քաղաքում վարորդական վկայականի հատկացման գործընթացի պարզեցում, ժամկետների կրճատում | - Երևան քաղաքում (Գաջեգործների 76) վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունող և վարորդական վկայական հատկացնող ստորաբաժանման նոր վարչական շենքի ու քննական ավտոդրոմի շահագործման հանձնում<br>- վարորդական վկայականների հատկացում որակավորման քննությունները հանձնելուց և(կամ) սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 72. Ոստիկանության հետ քաղաքացիական հասարակության փոխգործակցության ամրապնդում | - ոստիկանություն-հասարակություն փոխգործակցության այլ պետություններում առկա փորձի վերլուծություն<br>- կատարվող իրավախախտումները (հանցագործությունները) քաղաքացիների կողմից տարբեր եղանակներով (տեսագրում, ձայնագրում) ամրագրելու և ոստիկանություն ներկայացնելու, ինչպես նաև նման անձանց խրախուսելու մեխանիզմների մշակում |
| ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե | 73. Կոմիտեի մասնագիտական կազմի համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով, նոր կադրերի պատրաստում, վերապատրաստում | - կոմիտեի աշխատակազմի կադրերի համալրում տարեկան 3-5 հաստիքներով, ՀՀ-ում միջուկային նոր էներգաբլոկ(ներ)ի կառուցման ընթացքի հետ կապված<br>- կադրերի պատրաստում և վերապատրաստում ԱԷՄԳ-ի (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն), ԵՄ-ի և ԱՄՆ-ի համագործակցության ծրագրերի շրջանակներում |
| | 74. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի պահանջներին | - ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների և ԵՄ-ի օրենսդրության ուսումնասիրում, վերլուծություն, համեմատում, համադրում և կիրառում |
| | 75. Տեսչական ստուգման արդյունավետության բարձրացում | - ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների տեսչական ստուգումների վերաբերյալ օրենսդրական ակտերի փոփոխությունների և լրացումների կատարում, ռիսկի վրա հիմնված (ատոմային էներգիայի օգտագործման անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների և այլ օբյեկտների) համակարգի ներդնում |
| ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 76. Քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության երկկողմանի միջազգային հարաբերությունների ընդլայնում | - «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին իրենց համապատասխան տարածքների և տարածքներից դուրս» համաձայնագրի ստորագրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում<br>- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսլանդիայի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի ստորագրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում<br>- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նոր նախագծի ստորագրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 77. ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրումը «Զվարթնոց» աերոդրոմում և «Էրեբունի» աերոդրոմի օդային տարածքի վերակազմակերպում | - բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) վայրէջքային սխեմաների հաշվարկում<br>- անվտանգության մակարդակի գնահատում և անվտանգության փաթեթի մշակում<br>- «Էրեբունի» աերոդրոմի շրջակայքի օդային տարածքի նոր կառուցվածքային նախագծի մշակում<br>- նախագծի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և հաստատում<br>- վայրէջքային սխեմաների և «Էրեբունի» աերոդրոմի շրջակայքի նոր փոփոխված օդային տարածքի ներդրում և դրանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակում |
| | 78. Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացում | - ավիացիոն ակումբի ստեղծում<br>- փոքր օդանավերի գրանցում |
| | 79. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի հատուկ և հարակից կառույցների շինարարություն և արդիականացում, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու նպատակով աշխատանքների իրականացում | - «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի նախագահական և ուղևորների բարձրակարգ սպասարկման (VIP) սրահների կառուցում (շուրջ 6 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրում)<br>- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ծառայություններ իրականացնող կազմակերպությունների (ոստիկանություն, մաքսային, սահմանապահ, սննդի անվտանգություն, անձնագրերի և վիզաների տրամադրում) համար նախատեսված աշխատավայրերի վերանորոգում և արդիականացում (շուրջ 400 հազար ԱՄՆ-ի դոլարի ներդրում)<br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատում և բնակելի շենքերի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ ( շուրջ 7 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրում) |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | 80. Հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողություն | - ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ամբողջական գործարկում<br>- հարկային գերավճարների վերադարձման դյուրացված (ավտոմատացված) համակարգի ամբողջական գործարկում |
| | 81. Հարկ վճարողներին մատուցվող ծառայություններ | - հարկային և մաքսային մարմինների կողմից հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսակի և քանակի էական ավելացում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակի ավելացում, հարկային պարտավորությունների, հարկային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի կիրառում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | - հարկ վճարողների երեք սպասարկման սրահների գործարկում և սպասարկման միասնական ստանդարտների ներդրում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակում |
| | 82. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ ենթակառուցվածքներ | - «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում, նոր ենթահամակարգերով (մոդուլներով) համալրում (անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային վարման, երրորդ անձանց տվյալների մշակման ենթահամակարգերի ներդրում) |
| | 83. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հարկային և մաքսային ծառայողների ուսուցման ամբողջական համակարգի ներդրում | - ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի գործարկում, հարկային և մաքսային ծառայողների ուսուցման (15 ուսուցում) և վերապատրաստման ծրագրի իրագործում<br>- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի գործարկում, հարկային և մաքսային ծառայողների միջնաժամկետ և երկարաժակետ ուսուցման ծրագրի իրագործում |
| | 84. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում | - ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում «Հարկերի վճարում» և «Արտաքին առևտուր» բաղադրիչներով Հայաստանի դիրքի բարելավման ապահովում |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 85. Խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, ինչպես նաև խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում շուրջ 450 կմ ջրագծերի և ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացում | - վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացում, նոր ներդրումային ծրագրերի համար դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարում |
| | 86. Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված շուրջ 50 կմ ոռոգման ջրանցքների վերականգնում | - Համաշխարհային բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի իրականացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 87. Օտարերկրյա պետություններից Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված աջակցության ցուցաբերում | - խնդրի առնչությամբ հետազոտության անցկացում<br>- օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների կամավոր վերադարձի և Հայաստանում կայուն վերաինտեգրման խոչընդոտների և բացերի վերհանում<br>- բացահայտված խոչընդոտների և բացերի վերացման նպատակով առաջարկությունների ներկայացում |
| ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | 88. Մրցակցային միջավայրի բարելավում | - կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող երեք ապրանքային շուկաների ուսումնասիրություն և այդ շուկաներում օրենսդրության պահանջների հնարավոր խախտումների բացահայտում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունվարի 12-ի N 77 - Ն որոշման

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Հիմնավորումները |
|---|---|

| 1 | 2 |
|---|---|
| | **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն** |
| 1. | **«Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգից բխող տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>**1. 1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 30-ի N 38 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել տարածքային զարգացման հայեցակարգը: Մինչդեռ սահմանված չեն տարածքային զարգացման հայեցակարգում ամրագրված հայեցակարգային դրույթների և մոտեցումների իրականացման միջոցառումները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգից բխող տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է հստակ սահմանել տարածքային զարգացման հայեցակարգից բխող տարածքային զարգացման իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները, դրանց կատարման ժամկետները և պատասխանատու կատարողներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունմամբ կհստակեցվեն տարածքային զարգացման ապահովման նպատակով իրականացվող անհրաժեշտ միջոցառումները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունմամբ քառամյա կտրվածքով հստակ կսահմանվի տարածքային զարգացման ապահովման ՀՀ տեսլականը: |
| 2. | **«Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների չափն ըստ առանձին համայնքների բյուջեների հաշվարկվում է՝ վերջիններս տարանջատելով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների և 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների: Արդյունքում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքներն ստանում են հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով: Միևնույն ժամանակ հանրապետությունում 2011թ. հունվարի 1-ի դրությամբ առկա են 39 համայնքներ, որոնք ունեն 300-ից քիչ ավելի բնակչություն, սակայն վերջիններիս ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը պակաս է 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանված գումարից: |

| 1 | 2 |
|---|---|
| | Օրինակ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Սաղունց համայնքի մշտական բնակչության թիվը 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ, համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության, կազմում է 301 մարդ: Գործող օրենքի համաձայն՝ 2012թ. համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը Սաղունց համայնքի համար կազմում է 1,330,000 դրամ, մինչդեռ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար նախատեսված դոտացիայի գումարը 3,500,000 դրամ է:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրները կարգավորելու նպատակով մշակվելու է «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>300-ից քիչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքները, որոնք գործող օրենքի համաձայն ստանում են օրենքով սահմանված նվազագույն (3.500.000դրամ) դոտացիայից քիչ, ստանալու են հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրինագծի ընդունման արդյունքում ինչպես 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքները, այնպես էլ այն համայնքները, որոնք, գործող օրենսդրությանը համապատասխան, 300-ից քիչ ավելի բնակչություն ունենալու պատճառով ստանում են առաջիններից պակաս գումար, կստանան հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը կսահմանվի յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: |
| 3. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» և «դ» կետերի համաձայն համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, ով դատական կարգով զրկվել է համայնքային և (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից, ինչպես նաև այն անձը, ով դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:<br>Օրենքի վերը նշված դրույթների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ կետով նախատեսվել է, որ մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող աշխատակազմը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթեր ներկայացնելու ժամկետի ավարտից հետո ոստիկանության մարմիններից հարցման միջոցով տեղեկանք է ստանում մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների դատվածության մասին:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 933-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետով օպերատիվ տեղեկատու քարտադարանից անմիջականորեն օգտվելու իրավունք ունեցող մարմինների կազմից տեղական ինքնակառավարման մարմինները բացակայում են:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդրի լուծման համար առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրա- |

| 1 | 2 |
|---|---|
| | մադրելու կարգը հաստատելու մասին» N 933-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետով օպերատիվ տեղեկատու քարտադարանից անմիջականորեն օգտվելու իրավունք ունեցող մարմինների կազմում նախատեսել տեղական ինքնակառավարման մարմիններին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունմամբ տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտրվի Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանից ստանալ մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների դատվածության մասին տեղեկատվությունը, որն առավելապես կնպաստի «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» և «դ» կետերով նախատեսված դրույթների կատարման ապահովմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տեղական ինքնակառավարման մարմիններին իրավունք կվերապահվի օգտվելու Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանից, որն առավելապես կնպաստի «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» և «դ» կետերով նախատեսված դրույթների կատարման ապահովմանը: |
| 4. | **«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է «նկատողություն» և «խիստ նկատողություն» կարգապահական տույժերից որևէ մեկի կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական խախտում թույլ տալը, այսինքն, նշված տույժերից որևէ մեկի կիրառումից հետո անգամ «նախազգուշացում» տեսակի կարգապահական տույժի կիրառումը պետք է հանգեցնի պաշտոնից ազատման:<br>«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն համայնքային ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Օրենքով նախատեսված վերը նշված սահմանափակման դեպքում որոշակի խոչընդոտներ են ի հայտ գալիս հատկապես գյուղական համայնքներում ընտրական հանձնաժողովներն իրավասու անձանցով համալրելու գործում: Քաղաքացիական ծառայողների մասով խնդիրն իր լուծումն է ստացել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով (26.05.11 ՀՕ-170-Ն օրենք), ըստ որի քաղաքացիական ծառայողն իրավունք չունի կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից (ՔԾ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ):<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով առաջարկվում է՝<br>- հստակ սահմանել, թե կարգապահական որ տեսակի տույժերի ինչ հերթականությամբ կիրառման դեպքում է ծագելու պաշտոնից ազատման հիմքը, օրինակ՝ «խիստ նկատողություն» տեսակի տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը, «խիստ նկատողություն» տեսակի տույժի կիրառումից հետո մեկ տարվա ընթացքում «համայնքային ծառայության առավելագույն դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» տեսակի տույժ կիրառելը և այլն.<br>- նախատեսել, որ համայնքային ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից: |

| 1 | 2 |
|---|---|
| | 2. Կարգավորման առարկան<br>Իրավական ակտի ընդունմամբ կհստակեցվեն համայնքային ծառայողներին պաշտոնից ազատելու հիմքերը, ինչպես նաև կվերանան ընտրական հանձնաժողովների աշխատանքներին համայնքային ծառայողների մասնակցության արգելքները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կարգապահական տույժերի հաջորդական կիրառմամբ համայնքային ծառայողների պաշտոնից ազատման հիմքի հստակեցում, համայնքային ծառայողին թույլատրվող այլ վճարովի աշխատանքների շրջանակի ընդլայնում: |
| 5. | **Զորահավաքային նախապատրաստության միջոցառումներում տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցության հստակեցում և գործընթացի կանոնակարգում**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Զորահավաքային նախապատրաստության գործընթացները կարգավորող իրավական ակտերն ամբողջ ծավալով չեն կիրառվում համայնքային մակարդակում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև առանձին պաշտոնատար անձանց կողմից գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերին առնչվելու թույլտվություն չունենալու պատճառով:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առկա խնդրի լուծման համար առաջարկվում է նկարագրել տեղական ինքնակառավարման մարմինների՝ գաղտնի փաստաթղթերին առնչվելու շրջանակը, ինչպես նաև կանոնակարգել դրանց առնչվելու գործընթացը:<br>2. Կարգավորման առարկան<br>Տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև առանձին պաշտոնատար անձանց առնչությունը զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի բնագավառի փաստաթղթերին:<br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Զորահավաքային նախապատրաստության գործընթացները կարգավորող իրավական ակտերի ամբողջական ծավալով կիրառումը համայնքային մակարդակում: |
| 6. | **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկա ժամանակաշրջանում պատշաճ ժողովրդավարական կառավարումը պահանջ է հանրային կառավարման բոլոր մակարդակների համար: Սակայն այն առավել կարևորվում է տեղական մակարդակում, քանի որ ՏԻՄ-երն ավելի մոտ են քաղաքացիներին և նրանց մատուցում են հանրային ծառայություններ և ավելի հասանելի ու արագորեն են արձագանքում ծագող հիմնախնդիրներին:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի 72-րդ կետով նախատեսված է հետևյալ ռազմավարական դրույթը. «Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը», որի շրջանակներում նախատեսվում է մշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>2. Կարգավորման առարկան<br>Իրավական ակտի ընդունմամբ օրենսդրորեն ամրագրվում է տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության պահանջը: |

| 1 | 2 |
|---|---|
| | 3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Իրավական ակտը նպատակ ունի օրենսդրորեն ամրագրելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը: |
| 7. | **«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով) իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվում են համայնքային նշանակության խնդիրները լուծելու, բնակչությանը որակյալ հանրային ծառայություններ մատուցելու նպատակով: Պայմանավորված վարչատարածքային, ֆինանսական և այլ խնդիրներով՝ ՀՀ համայնքների մեծամասնությունում բնակչությանը տրամադրվող ծառայություններից շատերը կամ իրականացվում են ցածր մակարդակով, կամ էլ ընդհանրապես չեն իրականացվում:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախատեսում է 2012 թ. ընթացքում իրականացնել մոնիթորինգ տեղական ինքնակառավարման մարմիններին աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության բնագավառներում վերապահված լիազորությունների իրականացման նկատմամբ:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման ապահովում:<br>3. Միջոցառման անցկացման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա բացահայտել աղբահանության և նախադպրոցական կրթության բնագավառներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման հետ կապված խնդիրները, բացթողումները, շտկել թերությունները՝ բարձրացնելով լիազորությունների իրականացման արդյունավետությունը: |
| 8. | **«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (պարտադիր, պետության պատվիրակած, կամավոր՝ տարանջատման տեսանկյունից, հաշվի առնելով միջազգային փորձը) շրջանակի ընդհանուր բնութագրին առնչվող օրենսդրական դաշտի գնահատման և ուսումնասիրության արդյունքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համաձայն ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում է օրենքով:<br>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված են համայնքի ղեկավարի լիազորությունները, իսկ դրանց իրականացման կարգերը սահմանված չեն:<br>ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակը կոչված է ապահովելու համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այդ տեսանկյունից, ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված լիազորությունները բաժանվում են երեք խմբի՝ պարտադիր, կամավոր և պետության կողմից պատվիրակված: ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել է, որ ՏԻՄ-երի պարտադիր լիազորություններն ունեն գերակայություն կամավոր լիազորությունների նկատմամբ: Չնայած դրանց երկուսի իրականացման ֆինանսավորումն էլ կատարվում է համայնքի բյուջեից, կամավոր լիազորությունների իրականացումը պայմանավորված է համայնքի բյուջեի ֆինանսական հնարավորություններով և հրատապության գործոնով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նաև սահմանում է, որ ՀՀ այլ |

| 1 | 2 |
|---|---|
| | օրենքներով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունները կարող են իրականացվել միայն որպես կամավոր լիազորություններ, ինչպես նաև ՏԻՄ-երը կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն: ՏԻՄ-երին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ևս ենթակա են առաջնահերթ կատարման, դրանք իրականացվում են ՀՀ օրենքներով սահմանված կարգով, ՀՀ պետական բյուջեից այդ նպատակով հատկացումների հաշվին: <br> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (հոդված 10) սահմանում է ՏԻՄ-երի լիազորությունների ընդհանուր բնութագիրը: Միևնույն ժամանակ «Տեղական ինքնակառավարման մասին» և այլ ՀՀ օրենքներում ըստ ոլորտների լիազորությունների սահմանումները որոշ դեպքերում հակասության մեջ են գտնվում 10-րդ հոդվածի դրույթների հետ: <br> ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման կարգերը պետք է սահմանվեն օրենքներով, մինչդեռ, բազմաթիվ պարտադիր լիազորությունների կարգերը դեռևս օրենքներով սահմանված չեն: <br> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ, մինչդեռ, այս նորմը շատ դեպքերում չի գործում, և պետական ու վերահսկողություն իրականացնող մարմինները գործում են հակառակ սկզբունքով՝ առաջնահերթ համարելով ոլորտային օրենքները: <br> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պետության պատվիրակված լիազորություններն իրականացվում են օրենքով կամ կառավարության սահմանած կարգով: Մինչդեռ, մի շարք պատվիրակած լիազորությունների իրականացման կարգեր դեռևս գոյություն չունեն կամ շատ ընդհանուր բնույթ ունեն: <br> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ՏԻՄ-երին ամրագրված մի շարք պարտադիր կամ պատվիրակված լիազորությունների սահմանումը կամ բովանդակային ծավալը չի համապատասխանում այդ լիազորությունների իրականացման կարգը սահմանող ոլորտային օրենքներում տրվող սահմանմանը կամ բովանդակությանը: <br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Միջոցառմամբ նախատեսվում է ուսումնասիրել օրենսդրական դաշտը (հաշվի առնելով միջազգային փորձը)՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տարանջատման տեսանկյունից, գնահատել այդ լիազորությունների ընդհանուր բնութագիրը և ըստ արդյունքների ներկայացնել առաջարկություններ ՀՀ կառավարություն: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Օրենսդրական դաշտի ուսումնասիրության արդյունքում ձևավորվելու է առաջարկությունների մի փաթեթ, որն առնչվելու է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակեցմանը և տարանջատմանը: <br> **3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Միջոցառման իրականացման արդյունքում կկարգավորվեն տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչը գործնականում հնարավորություն է ընձեռնում ՏԻՄ-երին պլանավորել իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նվազագույն ծավալները, պետական լիազորված մարմիններին կազմակերպել դրանց իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողություն: |
| 9. | **Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատակարգի մշակում** <br><br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> 2011 թվականի ընթացքում հաստատվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, համաձայն որի խնամակալության և հոգեբարձության մարմինները պետք է ունենան աշխատակարգ: «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատակարգի |

| 1 | 2 |
|---|---|
| | սահմանման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծով նախատեսվում է սահմանել աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտ, որում հնարավորինս մանրամասն կներկայացվեն իրավահարաբերությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայումս ոլորտը կանոնակարգող որևէ իրավական ակտ չկա և նախատեսվում է այն լրացնել «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատակարգի սահմանման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում կբարձրանա հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է հանձնաժողովների գործունեությունը դարձնել ավելի արդյունավետ: |
| 10. | **«ՀՀ կառավարության 2009թ. մայիսի 21-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման համաձայն յուրաքանչյուր տարի գնահատվում են մարզպետների տվյալ տարվա գործունեության արդյունքները: Որոշմամբ սահմանված է, որ գնահատման չափորոշիչները լինում են երկու տեսակի՝ հիմնական և լրացուցիչ: Գնահատման լրացուցիչ չափորոշիչները ներառում են համապատասխան մարզում այն աշխատանքների կատարումը, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակի վերապահված չեն մարզպետին, սակայն մարզպետի կողմից դրանց պատշաճ կատարումը կարող է էական նշանակություն ունենալ այդ աշխատանքների կատարման վերջնական արդյունքների վրա: Ընդ որում, սահմանված է, որ գնահատման լրացուցիչ չափորոշիչները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության գերակայությունները և իրականացվելիք ծրագրերը: Որոշման ընդունումից հետո ՀՀ կառավարության կողմից սկսվել են իրականացվել որոշակի ծրագրեր, որոնց գնահատումը կբարձրացնի դրանց իրականացման արդյունավետությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման նպատակով նախատեսվում է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 2-ի N 562 որոշման N 2 հավելվածում՝ սահմանելով գնահատման ենթակա նոր գործառույթներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունմամբ, նոր գործառույթների գնահատման արդյունքում կբարձրանա մարզպետների գործունեության գնահատման գործընթացի արդյունավետությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է մարզպետների գործունեության գնահատման գործընթացը դարձնել ավելի իրատեսական և թափանցիկ: |
| 11. | Հայ-ռուսական երկրորդ միջռեգիոնալ ֆորումի նախապատրաստում և անցկացում<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2011 թվականի ապրիլին Երևանում տեղի ունեցավ առաջին հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովը «Միջտարածաշրջանային համագործակցության նոր ձեռքբերումներ Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում» խորագրով և Արդյունաբերական նորարարությունների առաջին միջտարածաշրջանային ցուցահանդեսը: Համաժո- |

| 1 | 2 |
|---|---|
| | ղովին մասնակցել են Հայաստանի բոլոր մարզերի և Ռուսաստանի ավելի քան 20 սուբյեկտների ներկայացուցիչներ, ցուցահանդեսին մասնակցում էին երկու երկրների մարզերի նորարարական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող 100-ից ավելի ընկերություններ:<br>Նման համաժողովների կանոնավոր անցկացումը թույլ կտա վեր հանել երկու երկրների ռեգիոնների միջև համագործակցության զարգացմանն ուղղված առկա ներուժն ու հնարավորությունները, աջակցել փոքր և միջին բիզնեսի զարգացման կոնկրետ ծրագրերի իրականացմանը, հստակեցնել համագործակցության ուղղությունները, զարգացնել երկու երկրների միջև նորարարական, գիտատեխնիկական, կրթական և հումանիտար համագործակցությունը: Այս նպատակով ՀՀ-ի և ՌԴ-ի միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի արձանագրության շրջանակներում ստեղծվել է հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խումբ, հստակեցվել են աշխատանքային խմբի օրակարգային խնդիրները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն անհրաժեշտ է համարում գույքագրել երկու երկրների ռեգիոնների միջև գոյություն ունեցող իրավապայմանագրային դաշտը, կազմակերպել երկու երկրների համապատասխան մարմինների արտաքին կապերի պատասխանատուների կլոր սեղան՝ քննարկելով 2-րդ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի անցկացման թեմատիկան և ուղղությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ օրենսդրությամբ տարածքային կառավարման նախարարությանը վերապահված լիազորությունների իրականացման ապահովում:<br>**3. Միջոցառման անցկացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող ֆորումի կանոնավոր անցկացումը թույլ կտա ոչ միայն բացահայտել երկու երկրների ռեգիոնների միջև հորիզոնական շփումների առկա ներուժն ու հնարավորությունները, այլև կխթանի նոր ներդրումների և տեխնոլոգիաների, նորարարությունների ներգրավմանը, կաջակցի պրակտիկ հարցերի լուծմանը:<br>Առավել բովանդակային կդառնան կապերը հումանիտար, կրթության և գիտության, առողջապահության և տուրիզմի ոլորտներում: Հնարավորություն կընձեռվի ընդլայնելու հայ-ռուսական հարաբերություններում առկա աշխարհագրությունը, աջակցելու ռեգիոնների միջև համատեղ ձեռնարկությունների հիմնմանը, ինտելեկտուալ ու տնտեսական հնարավորությունների նպատակաուղղված լիարժեք օգտագործմանը: |
| 12. | **2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով միջոցառումների ծրագրի նախապատրաստում**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն արդյունավետ համագործակցություն է իրականացնում ԵԽ-ի համապատասխան կառույցների հետ, մասնավորապես, ԵԽ-ի տեղական և տարածքային ժողովրդավարության հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի հետ:<br>Նշված փոխգործակցության համատեքստում նախատեսվում է աշխատանքներ տանել տեղական ժողովրդավարության ամրապնդման և ապակենտրոնացված կառավարման խորացման, ինչպես նաև ԵԽ-ի համապատասխան կառույցների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ԵԽ-ի համապատասխան կառույցների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման հիմքեր կարող է ստեղծել ԵԽ-ի հետ համագործակցության 2011-2014թթ. քառամյա ծրագիրը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ օրենսդրությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը վերապահված լիազորությունների իրականացման ապահովում:<br>**3. Միջոցառման անցկացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների ծրագիրը հնարավորություն կընձեռի հստակեցնելու ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ԵԽ-ի համապատասխան կառույցների միջև համագործակցության ուղղությունները, կաջակցի տեղական ժողովրդավարության ամրապնդմանը՝ միաժամանակ բարձրացնելով ՏԻՄ-երի պատասխանատվությունն ու կարողությունները: |
| 13. | **«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մինչև 2011 թվականի վերջը նախատեսվում է ՀՀ կառավարության քննարկմանը սահմանված կարգով ներկայացնել տեղական տուրքերի և վճարների հայեցակարգը: Հայեցակարգային փոփոխություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել մի շարք իրավական ակտերում, այդ թվում՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը տեղական տուրքերի և վճարների հայեցակարգի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով նախատեսվում է մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առանձին իրավական ակտերի համապատասխանեցումը տեղական տուրքերի և վճարների հայեցակարգի դրույթներին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կընդլայնվեն համայնքների ֆինանսական կարողությունները, ինչը կբերի համայնքների կողմից մատուցվող ծառայությունների ծավալի և որակի բարձրացմանը: |
| 14. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1003-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 1003-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, որպես ծառայողական քննություն նշանակելու հիմք, նախատեսված է օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված կարգապահական տույժերից («նկատողություն», «խիստ նկատողություն») որևէ մեկի կիրառումից հետո, մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժ կիրառելու դեպքը: Այսինքն՝ եթե «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» տեսակի կարգապահական տույժերի կիրառումից հետո թեկուզ «նախազգուշացում» տեսակի տույժի կիրառումը հանգեցնելու է ծառայողական քննության նշանակման, իսկ արդյունքում այդ տույժը կիրառելու թույլտվության դեպքում՝ նաև համայնքային ծառայողին պաշտոնից ազատման:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության գործունեության 2012 թվականի միջոցառումների ծրագրով նախատեսվում է ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի |

| 1 | 2 |
|---|---|
| | նախագիծը, որով նախատեսվում է առաջարկել համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերի նկարագրությունում հստակ սահմանել, թե կարգապահական որ տեսակի տույժերի ինչ հերթականությամբ կիրառման դեպքում է ծագելու պաշտոնից ազատման հիմքը, օրինակ՝ «խիստ նկատողություն» տեսակի տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը, «խիստ նկատողություն» տեսակի տույժի կիրառումից հետո մեկ տարվա ընթացքում «համայնքային ծառայության առավելագույն դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» տեսակի տույժ կիրառելը և այլն: Նշված օրենքի ընդունումից հետո ՀՀ կառավարության որոշման նախագծով ծառայողական քննություն նշանակելու համար, որպես հիմք, կնախատեսվեն կարգապահական տույժերի այն տեսակների կիրառման դեպքերը, որոնց կիրառմամբ համայնքային ծառայողի մոտ կառաջանա պաշտոնից ազատման հիմքը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունմամբ կհստակեցվեն և կպարզեցվեն ծառայողական քննություն նշանակելու դեպքերը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառմամբ ծառայողական քննության նշանակման դեպքերի շարքում հստակ կնկարագրվեն կոնկրետ կարգապահական տույժերի հաջորդական կիրառման դեպքերը: |
| 15. | **«Գյուղական համայնքների 2-րդ համաժողովի նախապատրաստման և անցկացման, համաժողովի օրակարգին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղական համայնքների համաժողովը Հայաստանում առաջին անգամ անցկացվել է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում: Այն տեղի է ունեցել 2011 թվականի հոկտեմբերի 10-11-ին՝ Ջերմուկ քաղաքում:<br>Համաժողովի նպատակը գյուղական համայնքների կայուն զարգացմանն աջակցություն էր՝ ոլորտում գործող բոլոր դերակատարների երկխոսության, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով: Հաշվի առնելով այդ համաժողովի արդյունավետությունը՝ որոշում ընդունվեց այն դարձնել շարունակական:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախատեսում է 2012 թվականին կազմակերպել և անցկացնել գյուղական համայնքների համաժողով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նմանատիպ համաժողովների անցկացումը թույլ է տալիս ուշադրությունը կենտրոնացնել գյուղի և նրա հիմնախնդիրների վրա, համատեղ քննարկել առկա հարցերը:<br>**3. Միջոցառման անցկացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տարածքների համաչափ զարգացում, որը բազմաթիվ այլ ուղղությունների շարքում ենթադրում է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների և արդյունավետ գյուղատնտեսության զարգացում: |
| 16. | **«Հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծերի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2011 թվականի մայիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը՝ նոր խմբագրությամբ: Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «1. Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություն- |

| 1 | 2 |
|---|---|
| | ներ, բացառությամբ Երևանի ավագանու ընտրությունների, կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:» Քանի որ նոր օրենսգրքով (բացի նշվածից) նախատեսվում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման նոր ընթացակարգեր, ապա անհրաժեշտություն է առաջացել համակարգել այդ գործընթացը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախատեսում է իր լիազորությունների շրջանակում 2012 թվականի ընթացքում՝ եռամսյակային կտրվածքով համակարգել և վերահսկել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կիրարկում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասով:<br>**3. Միջոցառման անցկացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող միջոցառումը թույլ կտա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպել և անցկացնել նոր օրենսգրքի պահանջներին համապատասխան և խուսափել նախկին օրենսգրքի հնարավոր բացասական իներցիոն արտահայտումներից: |
| **ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** | |
| 17. | **«Ընդերքօգտագործման թույլտվությունների և երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնությունների ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Համաձայն «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների՝ ընդերքօգտագործման թույլտվությունների և երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնությունների ձևերը հաստատվում են ՀՀ կառավարության կողմից: Նոր օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդերքի որոշակի տեղամասում օգտակար հանածոների ուսումնասիրության և արդյունահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով ընդերքօգտագործողներին պետք է տրվի ուսումնասիրության և արդյունահանման թույլտվություն, իսկ օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված երկրաբանական աշխատանքներն իրականացնելու համար՝ ընդերքօգտագործման համաձայնություն: «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա ընդերքօգտագործողներին տրվող թույլտվությունների և համաձայնությունների օրինակելի ձևերի մշակում և հաստատում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ընդերքի ոլորտում իրավահարաբերությունները կարգավորվում են 2002թ. ընդունված «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով, համաձայն որոնց օգտակար հանածոների ուսումնասիրության և արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար տնտեսավարող սուբյեկտներին տրվում են համապատասխան լիցենզիաներ, որոնց օրինակելի ձևերը հաստատվել են լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան, օգտակար հանածոների ուսումնասիրության և արդյունահանման աշխատանքներն իրականացնելու համար, տնտեսավարողներին պետք է տրվեն թույլտվություններ, իսկ նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված երկրաբանական աշխատանքներ իրականացվելու համար՝ համաձայնություններ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի անցումային դրույթներով սահմանված է, որ |

| 1 | 2 |
|---|---|
| | նախկինում տրված ընդերքօգտագործման լիցենզիաները պահպանում են իրենց ուժը, մինչև նոր օրենսգրքին համապատասխան թույլտվությունների ստացումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայումս չկան օրենսդրությամբ հաստատված թույլտվությունների օրինակելի ձևեր, ուստի օրենսգրքի ընդունումից հետո տրվող թույլտվություններ և համաձայնություններ տալու, ինչպես նաև նախկինում տրված լիցենզիաների փոփոխության գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով պետք է մշակվեն և հաստատվեն նշված օրինակելի ձևերը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման արդյունքում, լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողներին «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան, կտրվեն ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի ձևերին համապատասխան ընդերքօգտագործման թույլտվություններ և նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համաձայնություններ: |
| 18. | **«Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Համաձայն «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատվում են ՀՀ կառավարության կողմից: Ընդերքօգտագործման պայմանագիրը լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված գրավոր համաձայնություն է, որով սահմանվում են տվյալ ընդերքօգտագործման (երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման) իրավունքի տրամադրման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները: «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա ընդերքօգտագործողների հետ նոր օրենսգրքի պահանջներին համապատասխան կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերի մշակման և հաստատման:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ընդերքի ոլորտում իրավահարաբերությունները կարգավորվում են 2002թ. ընդունված «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով, համաձայն որոնց ընդերքօգտագործողների հետ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատվել են լիազոր մարմնի ղեկավարի հրամանով, իսկ «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատվում են ՀՀ կառավարության կողմից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի անցումային դրույթներով սահմանված է, որ մինչև նշված օրենսգրքի ընդունումը տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը մնում են ուժի մեջ, մինչև նոր օրենսգրքին համապատասխան պայմանագրերի վերակնքումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը, գործող օրենսդրության համաձայն, հաստատված են լիազոր մարմնի ղեկավարի հրամանով, իսկ «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի պահանջներով ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը պետք է հաստատված լինեն ՀՀ կառավարության կողմից:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման արդյունքում լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողների հետ կկնքվեն «Ընդերքի մասին» նոր ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրեր, ինչպես նաև կիրականացվի նախկինում կնքված պայմանագրերի վերակնքման գործընթացը: |

| 1 | 2 |
|---|---|
| 19. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1458-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Տեխնիկական կանոնակարգի (ՏԿ) ընդունումից հետո կենցաղային գազի սարքերը դարձել են ավելի բազմազան, այդ սարքերը համալրված են նաև էլեկտրական մասով և դրանց վերաբերյալ ՏԿ-ով չկան սահմանված նորմատիվներ, որոնց սահմանումը կբերի գազի սարքի շահագործման անվտանգության աստիճանի բարձրացմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործում է «Կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքերի անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգը, որն ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել են որոշ վրիպակներ: ՀՀ-ում ընդունվել են գազի սարքերի վերաբերյալ նոր՝ Եվրոպական նորմերի հետ ներդաշնակեցված ստանդարտներ և առաջացել է անհրաժեշտություն կանոնակարգը լրացնել նաև էլեկտրաանվտանգության նորմերով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կկանոնակարգվեն կենցաղային գազի սարքերի անվտանգության նորմերը և շուկա մուտք գործելու պայմանները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կենցաղային գազի սարքեր:<br>**3. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կենցաղային գազի սարքերի շահագործման անվտանգության աստիճանի բարձրացում: |
| 20. | **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին (օրենքի նախագիծ) հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելը պայմանավորված է հիդրոէներգետիկայի զարգացման համար իրավական լրացուցիչ մեխանիզմներ ստեղծելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 35 արձանագրային որոշմամբ ընդունված հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրն իրագործելու նպատակով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը մինչև 2012 թվականի սեպտեմբերի 30-ը առաջարկություն կներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նոր կառուցվող, վերակառուցվող և վերազինվող ՓՀԷԿ-երում հիդրոէներգետիկ ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու նպատակով միասնական քաղաքականություն (տեխնիկական չափանիշները, պարտադիր պայմանները և այլն) կիրառելու վերաբերյալ:<br>բ, Առաջիկայում լրանում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված՝ մի շարք փոքր հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրաէներգիայի պարտադիր գնման երաշխիքի տասնհինգամյա ժամկետը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքի նախագծով կառաջարկվի էլեկտրաէներգիայի արտադրության գործունեության լիցենզիայի ժամկետը լրանալուց հետո տնտեսավարող սուբյեկտներին տալ ընտրության հնարավորություն, կամ իրենց միջոցների հաշվին և օրենքով սահմանված կարգով իրականացնել էներգետիկ փորձաքննություն (աուդիտ), որից հետո միայն տրամադրել էլեկտրաէներգիայի արտադրության գործունեության նոր լիցենզիա՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի տարածմամբ, կամ տրամադրել էլեկտրաէներգիայի արտադրության գործունեության նոր լիցենզիա՝ առանց էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի տարածման՝ էլեկտրաէներգիայի սպառման շուկա ինքնուրույն գտնելու պայմանով: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>ՓՀԷԿ-երում հիդրոէներգետիկ ներուժի առավելագույնս արդյունավետ օգտագործում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կսահմանվեն պահանջներ, որոնք կնախատեսեն փոքր հիդրոկայանների համար «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի ավարտից հետո նոր արտոնությունների տրամադրման մեխանիզմները: |
| 21. | **«ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծով նախատեսված էներգետիկայի բնագավառի իրավական ակտերի և ազգային ստանդարտների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ-ԵՄ ասոցացման գործընթացում էներգետիկայի բնագավառի գործող և մշակման ենթակա իրավական ակտերի և ազգային ստանդարտների համալիր ցանկի մշակում, կատարողների, մշակման ժամկետների և ֆինանսական աղբյուրների սահմանում: Սույն ակտի նպատակը ԵՄ-ի նորմերը սահմանող իրավական ակտերի և ազգային ստանդարտների ցանկը հստակեցնելն է՝ համաձայն ՀՀ-ում դրանց ընդունման առաջնայնությունների, այնպես, որ դրանց ներդրումը կրի համաչափ աստիճանական բնույթ և չխաթարի էներգամատակարարման հուսալիությունն ու անվտանգությունը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս էներգետիկայի բնագավառում գործում են ինչպես նախկին ԽՍՀՄ որոշ նորմատիվ ակտեր և ստանդարտներ, այնպես էլ ներդաշնակեցված եվրոպական ստանդարտներ, սակայն դրանք ոչ բոլորն են համապատասխանում ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծով սահմանված պահանջներին, ուստի անհրաժեշտ է մշակել միասնական համալիր ցանկ, ինչը կհամապատասխանի ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի պահանջներին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի պահանջներին համապատասխանող իրավական ակտերի և ազգային ստանդարտների միասնական համալիր ցանկի մշակում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտերի և ազգային ստանդարտների միասնական համալիր ցանկ: |
| 22. | **«Հայաստանում կենսազանգվածի և կենսաէներգիայի օգտագործման գործարար ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ-ում և ԼՂՀ-ում կենսազանգվածի և կենսաէներգիայի պոտենցիալի գնահատումը և դրանց առաջնահերթ օգտագործման համար գործարար ծրագրի բացակայությունը հնարավորություն չի տալիս ցուցաբերել համալիր մոտեցում նշված պոտենցիալի օգտագործման համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կենսազանգվածի և կենսաէներգիայի ներուժն օգտագործվում է տարերայնորեն և ոչ միշտ արդյունավետ, ուստի անհրաժեշտ է մշակել համալիր ծրագիր, ինչը գործարար միջավայրի համար կդառնա ուղեցույց ներդրումներ կատարելու համար և միաժամանակ կբացահայտվեն այն օրենսդրական խնդիրները, որոնց անհրաժեշտ կլինի տալ համապատասխան լուծում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործարար ծրագրի մշակում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Վերականգնվող էներգետիկայի բնագավառ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կենսազանգվածի և կենսաէներգիայի ներուժի արդյունավետ օգտագործմանն ուղղված գործարար ծրագիր: |

| 1 | 2 |
|---|---|
| 23. | **«Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1.Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտը հանրապետության տնտեսության զարգացման հիմնական գրավականներից մեկն է: Ոչ մետաղական հանքային պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ Հայաստանի Հանրապետությունն աշխարհում առաջատար տեղ է գրավում: Հանրապետության փոքրիկ տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի համարյա բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Ներկայացվող արձանագրային որոշման նախագծի նպատակը հանրապետության ոչ մետաղական հանքային ռեսուրսների օգտագործման և վերամշակման ոլորտի առկա վիճակի վերլուծությունը կատարելն է և հետագա զարգացման ուղիների հստակեցումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի անկախացումից հետո ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի վերլուծություն չի կատարվել: Ներկայումս, ոլորտում գերիշխում են օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման համալիր ցիկլի անկատարելությունը, հին տեխնոլոգիաների կիրառման դեպքում ընդերքում հաշվառված պաշարների կորուստները, բնական պաշարների վերարտադրությանն ուղղված նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ նպատակային ուսումնասիրությունների բացակայությունը, ոչ մետաղական հանքանյութերի (բացի բնական քարերից անմիջականորեն ստացվող շինանյութերից) վերամշակման արտադրության կազմակերպման գործընթացի կառավարման (մենեջմենթի) անկատարությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կտրվեն առաջարկություններ ոլորտի վերականգնման հեռանկարների վերաբերյալ:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Նշված հայեցակարգով կբացահայտվեն ոլորտի զարգացմանը նպաստող հիմնախնդիրները և կտրվեն դրանց լուծման ուղիները:<br>**3.Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներկայացված նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հանրապետության ոչ մետաղական հանքային ռեսուրսների օգտագործման և վերամշակման ոլորտի առկա վիճակի վերլուծություն, որի արդյունքում կտրվեն առաջարկություններ ոլորտի վերականգնման հեռանկարների վերաբերյալ՝ ակնկալելով ընդերքօգտագործման ոլորտում արդյունավետության բարձրացում, ներդրումների խթանում: |
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | |
| 24. | **«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2013 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2013 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը կապված է լճի և դրա ջրհավաք ավազանի ներկայիս վիճակի բարելավման խնդրի հետ, որի համար անհրաժեշտ է ապահովել Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանությանը, լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը և Սևանա լճի ջրհավաք ավազանի բնական պաշարների կայուն օգտագործմանն ուղղված 2013թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարումը:<br>Սկսած 2001 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը: Տարեկան ծրագրի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների պահանջներից և «Սևանա |

| 1 | 2 |
|---|---|
| | լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակներից ու խնդիրներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հանրապետությունում առաջնային են Սևանա լճի մակարդակի բարձրացման և նրա ջրհավաք ավազանի բնական պաշարների պահպանության և կառավարման հարցերը:<br>Սևանա լճի մակարդակի բարձրացման շնորհիվ առաջացել են հիմնախնդիրներ՝ կապվածափամերձ անտառապատ ջրածածկված տարածքների մաքրման աշխատանքների իրականացման հետ: Ջրի տակ մնացող օրգանական նյութերի մեծ զանգվածները վտանգում են լճի վիճակը՝ ջրի աղտոտման տեսակետից: Լուրջ խնդիրներ են առաջացնում նաև ջրի տակ մնացած բազմաթիվ շինությունները և ենթակառուցվածքները: Ջրի բարձր որակն ապահովելու համար կարևոր է կտրուկ բարելավել վիճակը՝ կապված մեծ քանակի չմաքրված կեղտաջրերի լիճ թափվելու հետ: Ներկայումս լճի շրջակայքում առկա բոլոր մաքրման կայանները դեռ չեն գործում: Միաժամանակ, հիմնական խնդիրներից է նաև լճում բնական և արհեստական եղանակներով էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի մեծացումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սևանա լճի հիմնախնդրի լուծումը Հայաստանի բնապահպանական քաղաքականության կարևորագույն մասն է: Հիմնական ջանքերը կենտրոնանում են հետևյալ խնդիրների լուծման վրա՝ լճի մակարդակի շարունակական բարձրացում, Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման կանխարգելում, փաստացի ջրօգտագործման պայմանների նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործում, լճի ջրհավաք ավազանի ջրի որակի բարելավում, կենսաբանական ռեսուրսների պահպանում և վերականգնում, Սևանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման հետ կապված խնդիրների լուծում, թափոնների կառավարման կատարելագործում: «Սևան» ազգային պարկի կառավարման բարելավմանը և կատարելագործմանը նպաստելու համար ստեղծվել է «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը:<br>**2. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>Որոշման նախագծի կարգավորման նպատակն է Սևանա լճի, որպես ազգային և տարածաշրջանային նշանակության, քաղցրահամ ջրավազանի պահպանումը, էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգերի բնականոն ներդաշնակ զարգացմանն ու կայուն օգտագործմանն ուղղված 2013թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարման ապահովումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում, լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն և կենսապաշարների կայուն օգտագործման բարելավում, ափամերձ ջրածածկ տարածքներից անտառաշերտերի մաքրում, ռեկրեացիայի արդյունավետ զարգացում, կենցաղային թափոնների կառավարման բարելավում, «Սևան» ԱՊ-ի կառավարման համակարգի կատարելագործում: |
| 25. | **«Մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի քննության և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը/ նպատակը**<br>ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 21-ի «Մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի քննության և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» N 953-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը կապված |

| 1 | 2 |
|---|---|
| | է անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների արտանետումների նորմավորման բնագավառում առկա իրավական դաշտի որոշ բացերը վերացնելու հետ, մասնավորապես, սահմանել մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման կարգը, որի անհրաժեշտությունը բխում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 5,12,13 և 14-րդ հոդվածների պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների արտանետումների նորմավորման հարցերը կանոնակարգվում են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ը «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին» N 192-Ն և ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 21-ի «Մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի քննության և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» N 953-Ն որոշումներով և մի քանի գերատեսչական ակտերով: Այս իրավական ակտերը, սակայն, չեն ծածկում սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակմանը վերաբերող որոշ հարցեր, որոշ դրույթներ էլ հնացած են և վերանայման կարիք ունեն՝ նկատի ունենալով օրենսդրության ներկա պահանջները և Եվրոպական միության օրենսդրության հետ մոտարկման քաղաքականությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է օրենսդրորեն տարբերակել արտանետումների նորմավորմանն ուղղված պահանջները՝ կախված արտանետումների քանակություններից և վնասակարությունից և ըստ այդմ կանոնակարգել արտանետման թույլտվություն տալու գործընթացները: Ներկայումս դրանք իրականացվում են մեկ գործընթացով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը հիմնվում է աղտոտվածության մոնիթորինգի, արտանետումների հաշվառման, նորմավորման և վերահսկողության վրա: Կառավարման այս բաղադրիչներից որևէ մեկում առաջացած խնդիրները կարող են խաթարել կառավարման ամբողջ համակարգը:<br>**2. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի կարգավորման նպատակը մթնոլորտային օդի պահպանության բնագավառում օրենսդրության կատարելագործումն է, ինչը կնպաստի վարչարարության կրճատմանը, ինչպես նաև ՀՀ օրենսդրության և Եվրոպական միության օրենսդրության մոտարկմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է մթնոլորտի պահպանության բնագավառի օրենսդրության բարելավում, որի արդյունքում կբարելավվի մթնոլորտի աղտոտվածության վիճակը և կնվազեն կոռուպցիոն ռիսկերը: |
| 26. | **«Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը/ նպատակը<br>Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին նոր օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից: Հայաստանի Հանրապետության կառավարության «Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի |

| 1 | 2 |
|---|---|
| | Հանրապետության ընդերքի մասին նոր օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի պահանջներից՝ հանդիսանալով ընդերքի օգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություն:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման խնդիրը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին նոր օրենսգրքի կիրարկման անհրաժեշտությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկա ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում հանքավայրերի կոնսերվացումից (փակումից) հետո հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումներ չեն իրականացվում: Հետևաբար չկան տեղեկություններ բնության և շրջակա միջավայրի վրա կոնսերվացված հանքավայրերի ազդեցության մասին: Մոնիթորինգի իրականացումը կնպաստի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աղբյուրների բացահայտմանը և բնակչության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:<br>**2. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>«Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը կնպաստի մշտադիտարկումների կայուն համակարգի ստեղծմանը, որը թույլ կտա բացահայտել և ժամանակին ուսումնասիրել բնության և շրջակա միջավայրի վրա ներգործությունները, հավաքագրել և մշակել դրանց հետևանքների վերաբերյալ տվյալները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունումը հիմք կհանդիսանա, դեռևս շրջակա միջավայրի վրա ազդեցության փուլում, ընդերքօգտագործողների կողմից հանքի փակման ծրագրի և դրանից հետո մշտադիտարկումների իրականացման ծրագրի մշակման համար: Իրավական ակտի մշակումը կնպաստի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աղբյուրների բացահայտմանը, ուսումնասիրությանը, նվազեցմանը, ինչպես նաև հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովմանը: |
| 27. | **«Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծում» ծրագրի կատարման մասին տեղեկատվություն ներկայացնելը**<br><br>2011 թվականի հուլիսի 18-ին Գերմանական վերակառուցման և զարգացման բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից ստորագրվել է «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր - Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր - Հայաստան, փուլ 3-րդ)» ֆինանսավորման համաձայնագիրը, որով պլանավորվում է իրականացնել 4.0 մլն եվրոյի արժողությամբ Կենսոլորտային պահպանավայրի ստեղծման ծրագիր հարավային Հայաստանում:<br>Գերմանական վերակառուցման և զարգացման բանկի 2011թվականի սեպտեմբերին կատարված առաքելության ժամանակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ կնքվել է համագործակցության լրացուցիչ համաձայնագիր, որով նշված ծրագրի ֆինանսավորման ծավալներն ավելացվել են ևս 4.25 մլն եվրոյով:<br>Վերանվանված Հայաստանի բաց ներդրումային (օժանդակության) ծրագրի շրջանակներում ընտրված տարածքներում կենսոլորտային պահպանավայրի ստեղծման նպատակով 2012-2015թթ. կիրականացվեն բնական ռեսուրսների և պահպանվող տարածքների կառավարման բարելավմանը, հարակից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպատակաուղղված միջոցառումներ:<br>2012 թվականին ծրագրավորված է հիմնականում կատարել ծրագրի սկսման համար անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները: |

| 1 | 2 |
|---|---|
| | **ՀՀ ֆինանսների նախարարություն** |
| 28. | **«Մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի հաշվարկային մեծության որոշման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է սահմանի համապատասխան կարգ, որին համապատասխան պետք է վերահաշվարկվեն մինչև 2013թ. հունվարի 1-ը վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախագծով առաջարկվում է սահմանել մինչև 2013թ. հունվարի 1-ը վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերի վերահաշվարկման կարգ:<br>2. Կարգավորման առարկան<br>Նախագծի կարգավորման առարկան մինչև 2013թ. հունվարի 1-ը վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերի վերահաշվարկման կարգն է:<br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Նախագծի ընդունման և կիրառության դեպքում ակնկալվում է ձևավորել իրավական հիմք՝ մինչև 2013թ. հունվարի 1-ը վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերի վերահաշվարկման համար: |
| 29. | **«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Գործող օրենսդրության համաձայն զուգահեռաբար կիրառվում են ինչպես շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն գումարների, այնպես էլ կանխավճարների համակարգերը: Խնդիրը կայանում է նրանում, որ ի տարբերություն կանխավճարների, շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն գումարների վճարումը որևէ կերպ կախված չէ տնտեսավարող սուբյեկտի գործունեության շահութաբերությունից (եկամտաբերությունից), քանի որ այդ գումարները հաշվարկվում և վճարվում են ընդամենի իրացումից հասույթի արձանագրվող ցուցանիշների հիման վրա: Բացի դրանից, ի տարբերություն կանխավճարների, հաշվետու տարվա ընթացքում կատարվող շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն գումարների հանրագումարի այն մասը, որը գերազանցում է հաշվետու տարվա արդյունքներով հաշվարկվող շահութահարկի (եկամտահարկի) գումարները, ենթակա չէ հարկ վճարողին հետ վերադարձման և փոխանցվում է հաջորդ տարիներին առաջանալիք շահութահարկի (եկամտահարկի) գծով պարտավորությունների դիմաց: Նման իրավիճակը պարունակում է հարկման որոշակիորեն ոչ արդարացի մոտեցումներ:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախագծերով առաջարկվում է վերացնել շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն գումարների համակարգը և զուգահեռաբար, պետական բյուջեի եկամուտների նկատելի կորուստ չունենալու համար, կատարելագործել շահութահարկի (եկամտահարկի) կանխավճարների համակարգը՝ կրճատելով կանխավճարներ չկատարելու ներկայումս օրենսդրորեն սահմանված դեպքերը:<br>2. Կարգավորման առարկան<br>Նախագծի կարգավորման առարկան շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն գումարների և կանխավճարների համակարգերն են: |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծերի ընդունման և կիրառության դեպքում ակնկալվում է, որ կստեղծվեն հարկման առավել արդարացի ու տնտեսապես առավել հիմնավորված պայմաններ: |
| 30. | **«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենսդրության համաձայն շահութահարկով հարկման նպատակով հիմնական միջոցների տարեկան ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են որպես հիմնական միջոցների սկզբնական արժեքների (իսկ օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման դեպքում՝ վերագնահատված արժեքների) և հիմնական միջոցի տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Ամորտիզացիոն մասհանումների իրականացման նման համակարգը գործնական կիրառության տեսանկյունից շատ պարզ է, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ այն արագացված ամորտիզացիայի կիրառության հնարավորություն չի ընձեռում և դրանով իսկ չի նպաստում տնտեսության արտադրատեխնիկական հիմքի կատարելագործմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծերով առաջարկվում է վերանայել հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումներ կատարելու համակարգը և ներդնել ամորտիզացիոն մասհանումների կատարման այնպիսի համակարգ, որը հիմնված է հիմնական միջոցների խմբավորման (pooling) վրա: Վերջինս տնտեսավարող սուբյեկտներին արագացված ամորտիզացիա կիրառելու որոշակի հնարավորություններ կընձեռի:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան շահութահարկով հարկման նպատակով ամորտիզացիոն մասհանումներ կատարելու համակարգն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման և կիրառության դեպքում ակնկալվում է, որ կստեղծվեն հարկման առավել նպաստավոր ու տնտեսապես առավել հիմնավորված պայմաններ: |
| 31. | **«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի տնօրինման և կառավարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում նախատեսվել էր կենսաթոշակային բարեփոխումների իրականացում: Այդ նպատակով ընդունվեց ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 1487-Ն որոշումը: Այնուհետև 2010թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացավ կենսաթոշակային բարեփոխումների օրենսդրական փաթեթը, որում ներառված էր նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, սակայն դեռևս բաց է մնում ենթաօրենսդրական դաշտը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ընդհանուր կուտակային կենսաթոշակային համակարգի գործունեության ապահովման և անհրաժեշտ ենթաօրենսդրական դաշտի ձևավորման համար մշակվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկ, որն էլ հաստատվել է ՀՀ վարչապետի 2011թ. փետրվարի 16-ի N 113-Ա |

| 1 | 2 |
|---|---|
| | որոշմամբ: Վերջինիս N 2 հավելվածի 8-րդ կետով էլ պայմանավորված է նշված նախագծի մշակման անհրաժեշտությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ օրենսդրությամբ կսահմանվի պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի տնօրինման և կառավարման կարգը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի տնօրինման և կառավարման կարգի սահմանմամբ կապահովվեն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետագա գործունեության ծավալման համար անհրաժեշտ ձևաչափերը: |
| 32. | **«Հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում նախատեսվել էր կենսաթոշակային բարեփոխումների իրականացում: Այդ նպատակով 2010թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացավ կենսաթոշակային բարեփոխումների օրենսդրական փաթեթը, որում ներառված էր նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, սակայն դեռևս բաց է մնում ենթաօրենսդրական դաշտը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ընդհանուր կուտակային կենսաթոշակային համակարգի գործունեության ապահովման և անհրաժեշտ ենթաօրենսդրական դաշտի ձևավորման համար մշակվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկ, որն էլ հաստատվել է ՀՀ վարչապետի 2011 թ. փետրվարի 16-ի N 113-Ա որոշմամբ: Վերջինիս N 2 հավելվածի 9-րդ կետով էլ պայմանավորված է նշված նախագծի մշակման անհրաժեշտությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ օրենսդրությամբ կսահմանվի հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպությունների ցանկը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպությունների ցանկով կսահմանվեն բոլոր այն կազմակերպությունները, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են իրականացնել հաշվի օպերատորի համար նախատեսված գործառույթները: |
| 33. | **«Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները ֆինանսական գործիքներում ներդնելու քանակական և արժութային սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում նախատեսվել էր կենսաթոշակային բարեփոխումների իրականացում: Այդ նպատակով ընդունվեց ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 1487-Ն որոշումը: Այնուհետև 2010 թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացավ |

| 1 | 2 |
|---|---|
| | կենսաթոշակային բարեփոխումների օրենսդրական փաթեթը, որում ներառված էր նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, սակայն դեռևս բաց է մնում ենթաօրենսդրական դաշտը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ընդհանուր կուտակային կենսաթոշակային համակարգի գործունեության ապահովման և անհրաժեշտ ենթաօրենսդրական դաշտի ձևավորման համար մշակվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկ, որն էլ հաստատվել է ՀՀ վարչապետի 2011 թ. փետրվարի 16-ի N 113-Ա որոշմամբ: Վերջինիս N 2 հավելվածի 10-րդ կետով էլ պայմանավորված է նշված նախագծի մշակման անհրաժեշտությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ օրենսդրությամբ կսահմանվեն պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները ֆինանսական գործիքներում ներդնելու քանակական և արժութային սահմանափակումները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները ֆինանսական գործիքներում ներդնելու քանակական և արժութային սահմանափակումների սահմանմամբ կիրականացվի պարտադիր կենսաթոշակային ներդրումային ակտիվների դիվերսիֆիկացիա և ռիսկերի կառավարում: |
| **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** | |
| 34. | **«Քաղաքացիական պաշտպանության քողարկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Քաղաքացիական պաշտպանության քողարկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը բխում է «Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 13-րդ կետի պահանջներից:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ժամանակակից ռազմական գործողությունների բնույթն ու օգտագործվող ազդեցության միջոցները պահանջում են քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար նոր մոտեցումների և մեթոդների կիրառում: Քաղաքացիական պաշտպանության հիմնական միջոցառումներից է համարվում նաև քողարկումը:<br>Քաղաքացիական պաշտպանության քողարկումը ժամանակակից պատերազմի պայմաններում միջոցառումների համալիր է ուղղված կառավարման մարմինների, արդյունաբերական օբյեկտների, ենթակառուցվածքների, ինչպես նաև բնակչության, զինված ուժերի պաշտպանությանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քաղաքացիական պաշտպանության քողարկման միջոցառումները պետք է կատարվեն հաշվի առնելով ռազմական գործողությունների պատճառով ստեղծված խնդիրների ծավալը և բնույթը: Քողարկման արդյունավետությունը կապված է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների համալիր և տարբերակված օգտագործմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Քաղաքացիական պաշտպանության քողարկման կարգը կկարգավորի քողարկման կազմակերպման, ապահովման և իրականացման հարցերը: Կարգը սահմանում է քողարկման տեսակները, կառավարման մարմինների, կազմակերպությունների, քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների խնդիրները և գործառույթները՝ քողարկման միջոցառումների իրականացման ժամանակ:<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքացիական պաշտպանության քողարկման համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում: |

| 1 | 2 |
| --- | --- |
| 35. | **«Քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտումը, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման իրականացումը բնակչության պաշտպանության կարևորագույն միջոցառումներից են, որոնք նշված են նաև «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Ելնելով ներկա ռազմաքաղաքական իրադրությունից, բնակչության պաշտպանության խնդրի գերակայությունից, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների օպերատիվ իրականացման պահանջների արդիականությունից՝ առաջացել է անհրաժեշտություն սահմանել նշված կարգը: Սույն որոշման նախագծի ընդունմամբ ապահովվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի «թ» կետի և ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 7-րդ կետի կատարումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման հարաբերությունների վերաբերյալ ներկայումս չի գործում որևէ իրավական ակտ, չկա համապատասխան քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանում (ՀՀ ԱԻՆ ՀՓԾ կազմում գործում է ՃՔԿԻՄ բաժին, որը զբաղվում է միայն վտանգավոր տարածքների բացահայտման նպատակով հետախուզության և մոնիթորինգի գործառույթների իրականացմամբ), որը կիրականացնի քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման միջոցառումներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քաղաքացիական պաշտպանությունը, որպես երկրի ազգային անվտանգության անքակտելի բաղադրիչ, պետք է պատրաստ լինի ցանկացած ռազմական գործողությունների և աղետների ընթացքում օպերատիվ արձագանքման գործողությունների կատարմանը, ինչպես նաև մասնակցելու բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներում տարածքների և բնակչության պաշտպանությանը, այդ թվում՝ և ճառագայթային, քիմիական և մանրէաբանական պաշտպանության իրականացմանը:<br>Քաղաքացիական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության նպատակը երկրում անհրաժեշտ պայմանների ստեղծումն է, որոնք պատերազմական և բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների (այդ թվում՝ ճառագայթային, քիմիական և մանրէաբանական ՃՔՄ բնույթի) առաջացման ժամանակ, ինչպես նաև ՃՔՄ-ի ահաբեկչական գործողությունների դեպքում կկանխարգելվեն կամ առավելագույնս կնվազեցվեն կորուստները և վնասները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կազմում ստեղծել քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման ստորաբաժանում և սահմանել այդ գործառույթների կարգը՝ հիմք ընդունելով «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներն ու դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն իրավական ակտի ընդունմամբ կկանոնակարգվեն քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից վտանգավոր տարածքների բացահայտման, ինչպես նաև ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներով վարակված տարածքների վնասազերծման ու վարակազերծման գործընթացները: |

| 1 | 2 |
|---|---|
| | **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** |
| 36. | **«Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում առավել բարձր ցուցանիշների հասած մարզիկներին, մարզիչներին, բժիշկներին և մարզական կազմակերպություններին դրամական մրցանակներ շնորհելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի N 462 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Իրավական ակտի նպատակը հաշմանդամների ինտեգրվելն է հասարակությանը՝ ապահովելով հաշմանդամների լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի մարզական ոլորտում: Այն ուղղված է հաշմանդամների համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, պետական և ոչ պետական կազմակերպությունների համագործակցությանը նոր որակ հաղորդելու նպատակով համապատասխան օրենսդրական դաշտի ապահովմանը, ինչպես նաև կնպաստի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամներին լիարժեք կյանք վերադարձնելուն:<br>Որոշումը ներառում է հաշմանդամների մեջ առավել ուշադրություն պահանջող խմբերի նկատմամբ հատուկ մոտեցում (հաշմանդամ երեխաներ, երիտասարդներ, հաշմանդամ կանայք, բազմահաշմանդամություն ունեցող անձինք):<br>Որոշման ընդունումը թույլ կտա պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում առավել բարձր ցուցանիշների հասած հաշմանդամ մարզիկներին ևս շնորհել դրամական մրցանակներ և կուժեղացնի հասարակության լիարժեք անդամ լինելու նրանց զգացողությունը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առ այսօր հաշմանդամային սպորտում տարբեր մարզաձևերից մրցանակային տեղեր գրաված հաշմանդամ մարզիկների համար պարգևատրման և խրախուսման ծրագրեր չեն իրականացվել:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է դրամական մրցանակների հատկացում հաշմանդամային սպորտում պարալիմպիկ և սուրդլիմպիկ խաղերի ծրագրով նախատեսված մարզաձևերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հաշմանդամային սպորտում պարալիմպիկ և սուրդլիմպիկ խաղերի ծրագրով նախատեսված մարզաձևերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին դրամական պարգևներով խրախուսում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բարձր մարզական արդյունքների ձեռքբերում, մրցանակային տեղերի գրավում, սոցիալական վիճակի բարելավում: |
| 37. | **«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Մարզական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման համար մարզակառույցների՝ ժամանակակից մարզական գույքով ապահովումը, դրանց նյութատեխնիկական պայմանների բարելավումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ոչ բոլոր մարզակառույցներն են համալրված անհրաժեշտ և ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով: 2011 թվականի համար հայտ են ներկայացրել 60-ից ավելի |

| 1 | 2 |
| --- | --- |
| | կազմակերպություններ՝ շուրջ 350 անուն մարզագույքի համար, որից՝ 2011 թվականին 19 կազմակերպությունների տրամադրվել է 19 անուն մարզագույք: 2012 թվականին կվերանայվի նաև նշված պահանջարկը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2012 թվականին 50.000.000 դրամի շրջանակներում անհրաժեշտ մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերում և բաշխում: Մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերման և բաշխման աշխատանքների համակարգում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մարզադպրոցներում մարզումների համար բավարար պայմանների ստեղծում՝ մարզադպրոցներին տրամադրելով համապատասխան մարզագույք:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մարզադպրոցների մարզագույքի պահանջարկի թեկուզ մասնակի բավարարում: |
| 38. | **Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի քարոզչություն:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջոցառումն անցկացվում է 2004 թվականից, որին մասնակցել են. 2004 թվականին՝ 3895 դպրոցականներ, 2005-ին՝ 4225, 2006-ին՝ 5230, 2007-ին՝ 9570 դպրոցականներ: 2008 և 2009 թվականներին միջոցառումը չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: 2010 թվականից միջոցառումը վերականգնվել է և մասնակցել են 25461, իսկ 2011-ին՝ 30751 դպրոցականներ:<br>Ռազմամարզական խաղերն անցկացվում են 4 փուլով՝ ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային և եզրափակիչ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքների ընդլայնում, միջոցառման մասնակիցների թվի ավելացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի կազմակերպման և անցկացման միջոցով երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, քարոզչության իրականացում, մարզական մասսայական աշխատանքների ընդլայնում, միջոցառման մասնակիցների թվի ավելացում:<br>**3. Գերակա խնդիրների կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական գաղափարների սերմանում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ֆիզիկական որակների բարձրացում և կատարելագործում, անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, առողջության ամրապնդում: Հաղթող դպրոցներին մրցանակների բաշխում: |
| 39. | **Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրապետական մարզական փառատոնի անցկացում**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում Հայաստանի Հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջոցառումն անցկացվում է 2004 թվականից, որին մասնակցել են 2004 թվականին՝ 20000 մասնակից, 2005 թվականին՝ 22000, 2006 թվականին՝ 28000, 2007 թվականին՝ 30000, 2008 թվականին 28587, 2009 թվականին՝ 10997, 2010 թվականին՝ 23383, 2011 թվականին՝ 24495 մասնակիցներ: Փառատոնն անցկացվում է Հայաստանի Հանրապետության 48 քաղաքներում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում: Ծրագրում ընդգրկված են 7 մարզաձև, այդ թվում՝ նաև կոխ ըմբշամարտ ազգային մարզաձևը:<br>Նկատվում է անհրաժեշտ քարոզչության պակաս, ոչ բոլոր ազգային մարզաձևերի ընդգրկում միջոցառման ծրագրերի մեջ, որոշ մարզերում մասնակիցների անբավարար մասնակցություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տեղերում խորհրդակցությունների անցկացում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների հետ, անհրաժեշտ մեթոդական օգնության տրամադրում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում, երիտասարդությանը մարզական խմբակներում ընդգրկում, համայնքներում ֆիզկուլտուրայի օրերի անցկացման ավանդույթի վերականգնում, անհատի ներդաշնակ զարգացում և աշխատունակության բարձրացում, առողջ ապրելակերպի ձևավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված միջոցառումները կնպաստեն անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բնակչության առողջության ամրապնդմանը, առողջ կենսակերպի ձևավորմանը, ակտիվ հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը, ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների բարելավմանը, ընդհանուր ֆիզիկական պատրաստականության և առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների՝ պարզ տիպի խաղահրապարակների և խաղասենյակների ստեղծմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև բնակչության, մասնավորապես, երիտասարդության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզմանը: |
| 40. | **«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) կոչված է սահմանելու Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության այն ուղղությունը, որը միտված է հաշմանդամային սպորտին առնչվող խնդիրների լուծմանը, նպատակների և խնդիրների հստակեցմանը, իրավական հիմքերի ստեղծմանը, պետական աջակցության ապահովմանը:<br>Ծրագրի ընդունման նպատակը հաշմանդամների կողմից ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանները բարելավելն է, առողջ ապրելակերպը խրախուսելն է, նրանց հանգիստը կազմակերպելն է ու նրանց մասնակցության աստիճանը հասարակական կյանքին բարձրացնելն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Թեև պետությունն աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզկուլտուրայի և սպորտի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, սակայն առ այսօր հաշմանդամային սպորտի զարգացման հեռանկարները նախանշող որևէ իրավական միասնական ծրագիր մշակված չէ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է պետության կողմից աջակցության ցուցաբերում, գույքային ծրագրի իրականացում, մեթոդական օգնության տրամադրում, դրա- |

| 1 | 2 |
| --- | --- |
| | մական մրցանակների հատկացում հաշմանդամային սպորտում պարալիմպիկ և սուրդլիմպիկ խաղերի, աշխարհի և Եվրոպային առաջնությունների ծրագրով նախատեսված մարզաձևերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին և այլն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրով նախատեսված հիմնական ուղղություններին և սկզբունքներին համապատասխան հաշմանդամային սպորտի տարբեր մարզաձևերի զարգացմանը միտված միջոցառումների հետևողական իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշմանդամային սպորտում բարձր մարզական արդյունքների ձեռքբերում, առողջ ապրելակերպի և մրցակցային գաղափարների տարածում, սոցիալական վիճակի բարելավում: |
| 41. | **«Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) կոչված է ապահովելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության պետական քաղաքականության շարունակական իրականացումը՝ սահմանելով առաջնային լուծում պահանջող խնդիրներն ու հիմնական ուղղությունները, գերակայություններն ու հստակ միջոցառումները:<br>Ծրագրի ընդունման նպատակը ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանները բարելավելն է, ազգաբնակչության շրջանում առողջ ապրելակերպը խրախուսելն է, նրանց հանգիստը կազմակերպելն է ու մարդու ներդաշնակ զարգացմանը նպաստելն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հնգամյա ծրագրի մշակումն ու համակարգված մոտեցումները դրականորեն կանդրադառնան բնակչության ֆիզիկական դաստիարակության և բարձրագույն սպորտի առաջընթացի վրա: Թեև յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի կազմում ներկայացվում է պետական ծրագիր, սակայն դեռևս արդյունավետ չի գործում բնակության վայրերում իրականացվող ֆիզկուլտուրային-առողջարարական ավանդական համակարգը, նկատելի է ոլորտի մասնագետների թվի նվազում, խնդիրներ կան մարզական կառույցների շինարարության, շահագործման և վերանորոգման գործընթացներում և այլն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրով նախատեսված համապարփակ և համալիր միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում, ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին մարզագույքով ապահովում, ՀՀ հավաքական թիմերի անդամների գիտամեթոդական բժշկական և հակադոպինգային ուսումնասիրությունների ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում, մանկապատանեկան սպորտի մասսայականացում և այլն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրով նախատեսված հիմնական ուղղություններին, սկզբունքներին և գերակայություններին համապատասխան ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը միտված միջոցառումների սահմանում և շարունակական իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, աշխատունակության բարձրացում և երկարակեցության ապահովում, բարձրակարգ մարզիկների պատրաստում, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովում և բարձր ցուցանիշների նվաճումների հասնելը: |

| 1 | 2 |
|---|---|
| 42. | **«Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն) կոչված է սահմանելու Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության այն գերակա ուղղությունները, որոնք ուղղված են երիտասարդությանն առնչվող խնդիրների լուծմանը և ներառելու դրանցում երիտասարդության մասնակցության հարցերը:<br>«Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման նպատակը երիտասարդների կենսապայմանները և կրթական մակարդակը բարելավելն է, առողջ ապրելակերպը խրախուսելն է, նրանց հանգիստը կազմակերպելն է և նրանց մասնակցության աստիճանը հասարակական, քաղաքական զարգացումներին բարձրացնելն է: Այն ներառում է երիտասարդներին առնչվող հասարակական-քաղաքական, սոցիալական և մշակութային խնդիրներ: Սույն ռազմավարության մեջ երիտասարդությունն անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդնող կարևոր մասնակից:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի նիստի N 39 արձանագրության 21-րդ կետով հավանություն է տրվել պետական երիտասարդական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարությանը:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի նիստի N 13 արձանագրության 16-րդ կետով հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության կատարումն ապահովող՝ 2009-2012 թվականների գործողությունների ծրագրին և միջոցառումների ցանկին:<br>Ռազմավարությամբ սահմանվել էին Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործողությունների գերակայությունները, որոնք հիմք են դարձել նշված տարիներին երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համար:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>2013-2017 թվականների ռազմավարության մշակման նպատակով անհրաժեշտ է կայացնել երիտասարդության հիմնահարցերի ուսումնասիրությունների ինստիտուտ, ինչը ենթադրում է հետևյալ լուծումները՝<br>- համապատասխան միջավայրի ձևավորում գիտակրթական կազմակերպություններում երիտասարդության հիմնահարցերի ուսումնասիրություններով զբաղվող անձանց համար (տարեկան համաժողովի կազմակերպում, աշխատանքների ժողովածուի հրատարակում և այլն), աջակցություն մասնագիտական աճի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ու մեխանիզմների զարգացմանը,<br>- երիտասարդության հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների ներուժի զարգացման և ուսումնասիրություններով զբաղվող մասնագետների ներգրավման մեխանիզմների մշակում և կիրառում,<br>- ուսումնասիրությունների իրականացման նպատակով առցանց դրամաշնորհային մրցույթների անցկացում (առնվազն 2 մրցույթ), իրականացված ուսումնասիրությունների արդյունքում զեկույցների հրապարակում և տպագրում (առնվազն 2 զեկույց),<br>- երիտասարդության հիմնահարցերի ուսումնասիրությունների ոլորտում միջազգային համագործակցության խթանում, համատեղ ուսումնասիրությունների ծրագրերի մշակում և իրականացում,<br>- 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության մշակման համար առաջարկությունների փաթեթը ներկայացնելը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Համալիր ուսումնասիրությունների հենքի վրա երիտասարդության հիմնախնդիրներն արծարծող առաջնայնությունների փաթեթները ներկայացնելը՝ Հայաստանի Հանրապետությունում 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության մշակման համար:<br>**3. Իրավական ակտի առաջարկվող լուծումների կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2013-2017 թվականներին երիտասարդների աշխատանքի, կրթության, զբաղվածության, կենցաղի, առողջության պահպանման, սոցիալական պաշտպանվածության, ստեղծագործական ներուժի բազմակողմանի զարգացման, հասարակության քաղաքական, տնտեսական, մշակութային մասնակցության հիմնական ուղենիշների սահմանում և ծրագրային միջոցառումների միջոցով իրականացում: |
| 43. | **Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման միջոցառումների կազմակերպում**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) առումով երիտասարդության շրջանում մեծ են ռիսկերը, ինչը պայմանավորված է արտագնա աշխատանքի մեկնողների թվում երիտասարդների (հատկապես՝ մարզաբնակ) մեծ թվով, անհրաժեշտ է մարդկանց շահագործման վերաբերյալ երիտասարդության իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարդկանց շահագործման՝ որպես մարդկանց անօրինական տեղափոխմամբ և հարկադրական շահագործմամբ պայմանավորված, միջազգայնորեն բնորոշված ժամանակակից ստրկության տեսակներից մեկի դեմ պայքարի կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում սկսվել է 2002 թվականի հոկտեմբերից, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առք ու վաճառքի (թրաֆիքինգ) հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով:<br>Չնայած մարդկանց շահագործմանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցներին և մարդկանց շահագործում իրականացնող անձանց բացահայտման և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ իրականացված զգալի աշխատանքներին՝ շարունակական բարելավման կարիք է զգացվում մասնագիտական վերապատրաստման, համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովման, փոփոխվող միտումների վերլուծության հիման վրա մարտավարական մոտեցումների վերանայման և ըստ անհրաժեշտության զոհերի պաշտպանության ապահովման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>• մարդկանց շահագործման կանխարգելման նպատակով Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում տեղեկատվական մակարդակը բարձրացնելու նպատակով սեմինար-խորհրդակցությունների հրավիրում,<br>• 2012 թվականի 3-րդ եռամսյակում սոցիալական տեսահոլովակների միջոցով մարդկանց շահագործման մասին ծանուցողական նյութերի տարածում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մարդկանց շահագործման՝ որպես մարդկանց անօրինական տեղափոխմամբ և հարկադրական շահագործմամբ պայմանավորված, միջազգայնորեն բնորոշված ժամանակակից ստրկության տեսակներից մեկի դեմ պայքարի կազմակերպում.<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետության երիտասարդների շրջանում մարդկանց շահագործման կանխարգելում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում, քարոզչության ապահովում: |

| 1 | 2 |
|---|---|
| ՀՀ սփյուռքի նախարարություն | |
| 44. | «Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան պարբերական այցելությունների՝ «Արի տուն» 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 34 նիստի արձանագրային որոշումների դրույթներից:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ սփյուռքի նախարարությունը 2009 թվականից իրականացնում է «Սփյուռքի երիտասարդության այցելություններ Հայաստան» ծրագիրը՝ «Արի տուն» խորագրով: Ծրագրի նպատակն է աշխարհասփյուռ հայ երիտասարդներին ճանաչելի դարձնել Հայաստան-հայրենիքը, նպաստել երիտասարդական կապերի ամրապնդմանը, նրանց մեջ սերմանել ազգային արժեքների նկատմամբ հարգանք և անհրաժեշտ վերաբերմունք, սփյուռքահայ երիտասարդությանը ծանոթացնել հայ ժողովրդի ավանդույթներին ու սովորույթներին, հայ ընտանիքին, հայ մարդու հոգեկերտվածքին, աջակցել Հայաստան-սփյուռք կրթամշակութային մերձեցմանը:<br>2009-2011 թվականներին հյուրընկալվել է 1700 սփյուռքահայ երիտասարդ: Ճամբարային փուլին մասնակցել են նաև հայաստանյան հյուրընկալ ընտանիքների շուրջ 300 երիտասարդ: Գլխավոր խնդիրը հյուրընկալ ընտանիքների ընտրությունն է:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ծրագիրն իրականացվում է 6 ամիս տևողությամբ՝ մայիս-հոկտեմբեր ամիսներին՝ փուլերով, յուրաքանչյուրը՝ 2 շաբաթ տևողությամբ: Ծրագրին մասնակցում են 13-20 տարեկան սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ:<br>2009 թվականին ծրագրին մասնակցել են շուրջ 300, 2010 թվականին՝ շուրջ 600, 2011-ին՝ շուրջ 800 երիտասարդ: Մասնակիցների թվի շարունակական աճն անհրաժեշտություն է առաջանում հյուրընկալող ընտանիքների բազայի ստեղծմանը զուգահեռ կիրառել նաև մասնակիցների հյուրընկալման ճամբարային տարբերակը, որը հաջողությամբ իրականացվեց 2011 թվականին՝ 4 օրով՝ մասնակիցներին հյուրընկալելով Աղվերանի «Արի տուն» ճամբարում: Ավելի են բարելավվելու ճամբարային պայմաններն ու սննդի որակը:<br>2012 թ. ակնկալվում է «Արի տուն» ծրագրին մասնակցության 1000-ից ավելի հայտ: Հյուրընկալ ընտանիքների ընտրությունը կատարվելու է Երևանի վարչական շրջանների և տարածքային կառավարման մարմինների, երևանամերձ շուրջ 30 համայնքների ու ՏԻՄ-երի աջակցությամբ:<br>2. Կարգավորման առարկան<br>«Արի տուն» ծրագրի շրջանակներում ՀՀ սփյուռքի նախարարության միջոցներով կազմակերպվում է միջոցառումների լայն ծրագիր, որի ընթացքում իրականացվում են սփյուռքի և հայաստանցի երիտասարդ հասակակիցների ակտիվ շփումներ, հայրենակցական կապերի ստեղծում, ծանոթացում Հայաստանի Հանրապետության պատմամշակութային հուշարձաններին, հայոց պատմությանը, շրջայցեր Հայաստանի տեսարժան վայրեր, համերգների, թատերական ներկայացումների, ցուցահանդեսների դիտումներ, փառատոների կազմակերպում: Իրականացվում են նաև ուսուցողական ծրագրեր «Հայոց լեզու, գրականություն», «Հայ ժողովրդի պատմություն» և «Հայ եկեղեցու պատմություն» առարկաներից, մասնակցություն երգի, պարի, գեղարվեստի խմբակների: Կազմակերպվում են հանդիպումներ նշանավոր մարդկանց, ինչպես նաև ՀՀ պետական պաշտոնյաների հետ:<br>2011 թ. ծրագրի իրականացման արդյունքները վկայում են, որ նրա շարունակականությունը նպաստում է հայապահպանությանն ու հայադարձությանը, երիտասարդների միջև հաղորդակցության միասնական ցանցի ստեղծմանը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**<br>Ելնելով շարադրվածից՝ «Արի տուն» 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատմամբ կապահովվի ծրագրի շարունակականությունը՝ դրանից բխող դրական բոլոր միտումներով: |
| 45. | **«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 380-Ա որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի N 34 արձանագրային որոշման 29-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստան-սփյուռք գործակցության հայեցակարգի դրույթներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ սփյուռքի նախարարությունը 2012 թվականից իրականացնելու է «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը, որի նպատակը սփյուռքում հայ մշակույթի և մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը նպաստելը, Հայաստան-Արցախ-սփյուռք մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, համագործակցության նոր ձևաչափերի ձևավորմանն աջակցելը, Հայաստանի և սփյուռքի երիտասարդ ստեղծագործողների միջև մշակութային կապերի խորացմանը, համատեղ ծրագրերի մշակմանը և իրականացմանը սատարելը, ժամանակակից հայ արվեստի զարգացմանը և գովազդմանն օժանդակելը, մշակույթի ոլորտում համահայկական մասնագիտական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը նպաստելը, սփյուռքի ուծացման և լեզվամշակութային ինքնության կորստի դեմ պայքարելը, ազգային մշակույթի պահպանության գործին սփյուռքի ստեղծագործող երիտասարդությանը ներգրավելը, համահայկական մշակութային ծրագրերի համատեղ մշակման և իրականացման մեխանիզմներ ստեղծելը, սփյուռքի ստեղծագործական խմբերի և մշակութային կազմակերպությունների մասին ամբողջական տեղեկատվական տվյալների շտեմարան ստեղծելն է՝ նպաստելով նրանց գործունեության վերաբերյալ Հայաստանում տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագիրն իրականացվելու է հունիս-հոկտեմբեր ամիսներին՝ յուրաքանչյուր միջոցառումը 7 կամ 10 օր տևողությամբ՝ երաժշտարվեստի, պարարվեստի, թատրոնի, գրականության և ԶԼՄ-ների ոլորտներում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի հաստատմամբ կկարգավորվի 2012 թվականին նախատեսված միջոցառումների կազմակերպման գործընթացը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**<br>Ծրագրի նախագծի հաստատումը հնարավորություն կտա 2012 թվականին կազմակերպելու մի շարք համահայկական միջոցառումներ: |
| 46. | **«Օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների ներկայացուցիչների համաժողովի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած՝ «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման դրույթներից: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ելնելով Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման դրույթներից՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է իրականացնել օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների ներկայացուցիչների համաժողով, որը հնարավորություն կտա գնահատելու օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների գործունեությունը, բացահայտելու առկա մասնագիտական ներուժը, քննարկելու արդիական նշանակություն ունեցող հարցեր, ստեղծելու փոխադարձ ճանաչողության և գործակցության դաշտ, կապ հաստատելու հայաստանյան հայագիտական կենտրոնների հետ և մշակելու համագործակցության ծրագրեր: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագիրը հնարավորություն կտա հայտնաբերելու, հաշվառելու և համախմբելու օտար պետություններում առկա հայագիտական ոլորտի ներուժը, ձևավորելու ընդհանուր մոտեցում համահայկական խնդիրները հետազոտելու և արդյունքները ներկայացնելու համար: **2. Կարգավորման առարկան** Նախագծի հաստատմամբ կկարգավորվի 2012 թվականին նախատեսված համաժողովների կազմակերպման գործընթացը: **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները** Ծրագրի նախագծի հաստատումը հնարավորություն կտա 2012 թվականին կազմակերպելու օտար պետություններում գործող հայագիտական կենտրոնների ներկայացուցիչների համահայկական համաժողով: |
| 47. | **ԱՊՀ տարածաշրջանային հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության ծրագրի իրականացում**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)** Ծրագրով ապահովվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի N ՆՀ-37-Ն հրամանագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշման 4.4.7-րդ կետով սահմանված դրույթների իրականացումը, ինչպես նաև ԱՊՀ տարածաշրջանային հայ համայնքներում առկա կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցությունը: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Այսօր աշխարհի շատ երկրների հայ համայնքներում խիստ կարևոր նշանակություն ունեն հայապահպանության խնդիրները: Համայնքները կանգնած են ամբողջական ուծացման, լեզվի և ինքնության կորստի եզրին: ԱՊՀ երկրների հայկական համայնքներում ազգային-մշակութային ինքնության թուլացումը դարձել է սպառնալիք տարածաշրջանում հայ համայնքների համար, ուստի, հայության համար արդիական և հրատապ է մտավոր և հոգևոր արժեքների և ներուժի պահպանման, հայության համար վճռորոշ նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը գործուն մասնակցությունը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ծրագրի նպատակն է հայրենիք-սփյուռք հուսալի և արդյունավետ կամուրջների ամրապնդումը, հայոց լեզվի իմացությունն ու կիրառումը խրախուսելը, կրթական, մշակութային և հայագիտական օջախների գործունեությունը խթանելը, համայնքներում առկա ներուժի հաշվառումը, համախմբումը և համահայկական ծրագրերում դրանց ներգրավմանն աջակցելը: **2. Կարգավորման առարկան** Ծրագրով հնարավոր կլինի օժանդակել ԱՊՀ տարածաշրջանային հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանը: **3. Ակնկալվող արդյունքները** Ծրագրի իրականացման դեպքում ակնկալվում է Հայաստան-սփյուռք գործակցության խորացում, հայկական ներուժի հաշվառում, հայագիտական գիտելիքների տարածում և զարգացում, հայկական աշխարհի ձևավորման, համաշխարհայնացման մարտահրավերների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում: |

| 1 | 2 |
|---|---|
| 48. | «Մեր մեծերը» ծրագրի իրականացում<br><br>1. Անհրաժեշտությունը (նպատակը)<br>Ծրագրի անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումից, ինչպես նաև հայազգի հայտնի անձանց կյանքի և գործունեության վերաբերյալ իրազեկումից:<br>1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս հասարակությունը բավականաչափ տեղեկացված չէ հայազգի հռչակավոր անձանց, նրանց գործունեության, ունեցած ավանդի մասին, որն ի վերջո կհանգեցնի ազգային արմատների և ինքնության ճանաչողության կորստի:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Յուրաքանչյուր տարի ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվում է հայազգի մի շարք անհատների գործունեության լուսաբանում, իսկ 2012 թվականին նախատեսվում է Հովհաննես Բաղրամյանի, Հովսեփ Օրբելու, Գառզուի (Գառնիկ Զուլումյան), Սայաթ-Նովայի, Գարեգին Հովսեփյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրում և ներկայացում, ՀՀ - ում և սփյուռքում միջոցառումների կազմակերպում:<br>2. Կարգավորման առարկան<br>Ծրագրով հնարավոր կլինի նպաստել հայազգի անվանի անձանց գործունեությունը ներկայացնելը և նրանց մեծարումը:<br>3. Ակնկալվող արդյունքները<br>Ազգային արմատների և ինքնության ճանաչողություն, սերնդի մեջ հայրենասիրության, ազգային իրական արժեքների հանդեպ հարգանքի ձևավորում, հայապահպանության և հայազորացման գործընթացների խթանում: |
| 49. | «Հայաստան-սփյուռք» թեմատիկ տեսաժողովների կազմակերպում<br><br>1. Անհրաժեշտությունը (նպատակը)<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածի 49-րդ կետի «գ» ենթակետից:<br>1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ նրա մշտական և բազմաբնույթ հարաբերություններն են, սփյուռքի կազմակերպությունների, համայնքային կառույցների և անհատների ներգրավումը համահայկական խնդիրներին:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>«Հայաստան-սփյուռք» թեմատիկ տեսաժողովների կազմակերպման միջոցով հնարավոր կլինի աջակցել սփյուռքի հայկական կազմակերպությունների, համայնքային կառույցների հետ գործակցության զարգացմանը, համայնքներում առկա խնդիրների վերհանմանը, հայապահպանությանը, սփյուռքի ներուժի համախմբմանն ուղղված ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի և միջոցառումների մշակմանը, այդ ծրագրերին սփյուռքի կազմակերպությունների, համայնքային կառույցների և անհատների ներգրավմանը, համահայկական հիմնախնդիրների լուծմանը:<br>2. Կարգավորման առարկան<br>«Հայաստան-սփյուռք» թեմատիկ տեսաժողովների կազմակերպման միջոցով հնարավոր կլինի ավելի արդյունավետ ապահովել խնդիրների, հարցերի մասին համապատասխան տեղեկատվության փոխանակումը:<br>3. Ակնկալվող արդյունքները<br>Հայաստան-սփյուռք գործակցության խորացում, զարգացում: |

| 1 | 2 |
|---|---|
| 50. | **Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի համախմբում և նրա ներգրավում Հայաստանի զարգացման գործընթացում**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 34 արձանագրային որոշման և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրի դրույթներից:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում օրեցօր ավելի զգալի է դառնում համաշխարհայնացման ազդեցությունը, 21-րդ դարում գիտելիքը և նորարարությունը դառնում են գերիշխող գործոններ մարդկային հասարակության զարգացման գործընթացներում: Հայաստանի Հանրապետության ռեսուրսները երբեմն կարող են բավարար չլինել այդ փոփոխություններին ամբողջությամբ հետևելու և պետության ու ազգի առջև ծառացած բոլոր խնդիրները լուծելու համար:<br>Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը՝ սփյուռքը համարելով համաշխարհային ինտեգրման հուսալի և արդյունավետ կամուրջ, միաժամանակ կարևորում են մշակել սփյուռքի ներուժի հայտնաբերման և համախմբման կառուցակարգեր, սփյուռքի կարող ուժերին ներգրավել երկրի ներքին կյանքին՝ հայկական պետականության ամրապնդման և մրցունակ պետության ձևավորման, ազգային հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև սփյուռքահայերի աջակցությամբ միջազգային կառույցների հետ ներպետական կառույցների աշխատանքի բարելավման նպատակով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության և սփյուռքի համար նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը սփյուռքի համակարգված մասնակցության ապահովումը՝ մասնագիտական համաժողովների կազմակերպման միջոցով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայ գրականության օրերի, Լրատվամիջոցների և լրագրողների համահայկական VI համաժողովի ու Բանկիրների և ֆինանսիստների համահայկական 2-րդ մասնագիտական համաժողովների կազմակերպման միջոցով այդ ոլորտների մասնագետների ներուժի համախմբումը:<br>**3. Ակնկալվող արդյունքները**<br>Հայաստան-սփյուռք գործակցության խորացում, հայկական ներուժի ներգրավում: |
| 51. | **Ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպում**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 34 արձանագրային որոշման և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրի դրույթներից:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սփյուռքահայության ազգային, լեզվամշակութային ինքնությունը զնալով թուլանում է, հայ նոր սերունդը կանգնած է ազգային նկարագրի, մայրենի լեզվի մոռացության, ազգային |

| 1 | 2 |
|---|---|
| | արմատներից, ավանդույթներից, սովորույթներից հեռանալու, հայկական մշակութային արժեքները կորցնելու վտանգի առջև, ուստի անհրաժեշտ է մշակել և իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնցով հնարավոր լինի խրախուսել սփյուռքում հայ ազգային ինքնության, մայրենի լեզվի պահպանման, զարգացման և տարածման, հայ սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության գործում նշանակալի ավանդ ունեցող ուսուցիչներին, ներկայացնել և տարածել նրանց մանկավարժական ու մասնագիտական առաջավոր փորձը սփյուռքում, վերհանել հայ երիտասարդի մտահոգությունները, հայրենիքի ամրապնդմանն ու հզորացմանն ուղղված քայլերի կանխատեսումը, ոգևորել և խրախուսել սփյուռքի լրատվամիջոցներին՝ կարևորելով նրանց դերակատարությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար կառույցների և անհատների ունեցած ներդրման գնահատման և խրախուսման նպատակով մրցույթների անցկացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Լավագույն լրատվամիջոց», «Լավագույն հայագիտական կենտրոն», «Մայրենիի պաշտպան» անվանակարգերով մրցույթների անցկացում:<br>**3. Ակնկալվող արդյունքները**<br>Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար կառույցների և անհատների խրախուսում: |
| **ՀՀ առողջապահության նախարարություն** | |
| 52. | **«Քաղաքային պոլիկլինիկական ոլորտի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ, թեև առողջության առաջնային պահպանումը դիտարկվում է առողջապահության համակարգի գերակա ուղղություններից մեկը և որպես բարեփոխման իրականացման ճանապարհ է ընտրվել այլ երկրներում գործարկված և առավել արդյունավետ ճանաչված ընտանեկան բժշկության ներդրումը, ներկայումս՝ բարեփոխումների սկզբից 10 տարի անց, արձանագրվում է, որ այն հանգեցրել է զգալի առաջընթացի հանրապետության մարզերում (հատկապես՝ գյուղական վայրերում), մինչդեռ՝ մեծ քաղաքներում ընտանեկան բժշկությունը դեռևս կայացած չի կարելի համարել:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Անցած 10 տարվա ընթացքում Համաշխարհային բանկի առողջապահական վարկային ծրագրերի շրջանակներում հանրապետության մարզերի գյուղական բժշկական ամբուլատորիաները վերակառուցվել կամ վերանորոգվել են և հագեցվել ժամանակակից սարքավորումներով ու բուժգույքով, մինչդեռ, քաղաքային պոլիկլինիկաները շարունակում են գործել անբավարար շենքային պայմաններում և հին ու ոչ արդիական սարքավորումներով:<br>Չնայած այն հանգամանքին, որ քաղաքային պոլիկլինիկաների առողջության առաջնային պահպանման գրեթե բոլոր բժիշկներն անցել են ընտանեկան բժշկության մասնագիտացում, շարունակում են (հատկապես՝ Երևանի պոլիկլինիկաներում) աշխատել որպես տեղամասային թերապևտ և մանկաբույժ:<br>Երևանի և ՀՀ մարզերի պոլիկլինիկական ծառայությունում առկա է նաև մասնագիտական ներուժի անհամաչափ բաշխում:<br>Եթե որոշ մարզերում առկա է մանկաբույժների և նեղ մասնագետների զգալի պահանջարկ, ապա Երևանում այն չափազանց գերբեռնված է: ՀՀ մարզերի պոլիկլինիկական օղակի նեղ մասնագետների թվի պակասը կարևոր է նաև այն առումով, որ այդ մասնագետները հիմնականում ՀՀ մարզերի բուժհիմնարկների համատեղող մասնագետներ են, հետևաբար, նեղ մասնագետների կարիք կա տվյալ բնակավայրում ոչ միայն առաջնային օղակում, այլև՝ ընդհանուր առմամբ: Կարևորագույն խնդիր է Երևանի փոքրաթիվ բնակչություն սպասարկող պոլիկլինիկաների հարցը, որոնք, սպասարկելով 10000-15000 բնակչի և այդպիսով չունենալով ֆինանսական հնարավորություններ, շարունակում են պահել նեղ մասնագետների բավականին մեծ թվով հաստիքներ: |

| 1 | 2 |
|---|---|
| | Թեև փոքրաթիվ բնակչություն սպասարկող պոլիկլինիկաներում այդ մասնագետները հիմնականում համատեղողներ են, իրենց թվով հաճախ գերազանցում են առաջնային օղակի մասնագետներին (ընտանեկան բժիշկներ, տեղամասային թերապևտներ և մանկաբույժներ):<br>Նկարագրված իրավիճակը (թերբեռնված աշխատանք և դրանից բխող՝ ցածր աշխատավարձ) ստեղծում է կոռուպցիոն ռիսկեր, ինչպես նաև բացասաբար է անդրադառնում իրականացվող բժշկական օգնության որակի վրա:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի կարգավորման նպատակով առաջարկվում է մշակել քաղաքային պոլիկլինիկական ծառայությունների կառուցվածքի առավել արդյունավետ մոդելներ, դիտարկել առանձին ծառայությունների օպտիմալացման, աշխատավարձերի բարձրացման, կադրային ներուժի կատարելագործման, քաղաքային պոլիկլինիկական համակարգում ընտանեկան բժշկության արդյունավետ ներդրման մեխանիզմներ և այլն:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունման արդյունքում ակնկալվում է պետության կողմից առաջնային օղակին ուղղված ֆինանսական միջոցների ծախսարդյունավետության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազում և առաջնային օղակում իրականացվող բժշկական օգնության ու մատուցվող ծառայությունների որակի բարելավում: |
| 53. | **«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական պատվերի ֆինանսավորման մոտեցումների, սկզբունքների և մեխանիզմների՝ առողջապահական գործընթացների հետ համապատասխանեցմամբ:<br>**2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանել առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների փոխհատուցման նոր եղանակի կիրառման հետ կապված հարաբերությունները՝ արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների տրամադրումն իրականացնելով համաֆինանսավորման սկզբունքի կիրառմամբ: Նոր հայեցակարգը արտացոլելու է ինչպես առողջապահության ոլորտի տարբեր բնագավառների ֆինանսավորման նոր մոտեցումները, այնպես էլ՝ բուժօգնության տարբեր ծառայությունների գծով բուժհաստատությունների բյուջեների հաշվարկման նոր սկզբունքները:<br>**3. Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի ընդլայնել բնակչության սահմանված խմբերի ցանկում ընդգրկված քաղաքացիներին մատուցվող բուժսպասարկման և ծառայությունների ծավալը, բարելավել առողջությունը և բարձրացնել կյանքի որակը: Հնարավոր կլինի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց կիրառել նաև համաֆինանսավորման սկզբունքը, ինչպես նաև կարտացոլվեն բուժհաստատությունների բյուջեների հաշվարկման նոր սկզբունքները: |
| 54. | **«Երեխաների հիվանդանոցային բուժօգնության բարելավման 2013-2015 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է մանկական հիվանդանոցային ծառայությունների, հատկապես, մարզային մակարդակում, մատչելիության և որակի բարելավման միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությամբ: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Առողջապահության բնագավառում մտահոգության առարկա է մանկական հիվան-դանոցային օգնության մատչելիության ու որակի անկման միտումը, ինչպես նաև երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի աճը, հատկապես, մարզային մակարդակում, մարզային մակարդակում մանկական վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ծառա-յության ժամանակակից սարքավորումներով անբավարար հագեցվածությունը, լաբորատոր-գործիքային հետազոտությունների սահմանափակ հնարավորությունները, մանկաբուժական մասնագիտությունների գծով մարդկային ռեսուրսների անբավարար մակարդակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մարզային վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքների ստեղծում (հզորացում) և մանկաբուժական կադրերով հագեցում, միջմարզային նշանակության մանկական վերակենդանացման և նորածնային ծառայությունների ստեղծում<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երեխաների հիվանդանոցանոցային բուժման մատչելիության և որակի բարելավում<br>**3. Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարության մշակմամբ և դրանով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել երեխաների հիվանդանոցային ծառայությունների որակը և մատչելիությունը (այդ թվում՝ աշխարհագրական), նվազեցնել մանկական անհե-տաձգելի արտազնա ծառայության աճի միտում ունեցող կանչերի և մարզ-Երևան ուղեգրում-ների թիվը, նվազեցնել երեխաների հիվանդանոցային մահաբերությունը, արդյունքում նաև կրճատել հանրապետությունում մանկական մահացության ցուցանիշը: |
| 55. | **«Բնակչության սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է սոցիալական խմբերին անվճար կամ արտոն-յալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման անհրա-ժեշտությունից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Արտոնյալ խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացում առկա են մի շարք խոչընդոտներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվելու են փոխհատուցման տարբերակներ՝ սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավ-ման նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բնակչության՝ սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայ-մաններով դեղերի տրամադրման գործընթաց<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունման արդյունքում ակնկալվում է պետության կողմից սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պար-զեցում և բարելավում: |
| 56. | **«Բժշկական էթիկայի օրինակելի կանոնները և բժշկական էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության օրինակելի կարգը և գործառույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է բուժաշխատողների մասնագի-տական գործելակերպի, ծառայողական պարտականությունների իրականացման օրինակելի |

| 1 | 2 |
|---|---|
| | կանոնները հաստատելու, ինչպես նաև բժշկական և դեղագործական անձնակազմի, պացիենտների, կլինիկական հետազոտություններ անցնող անձանց իրավունքների ու շահերի արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ սահմանելու անհրաժեշտությամբ: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Բժշկական ծառայությունների որակի ապահովման կարևորագույն բաղադրիչներից մեկը բուժաշխատող-պացիենտ փոխադարձ հարգանքի և վստահության վրա հիմնված հարաբերությունների առկայությունն է: Բժշկական էթիկայի կանոններն ուղղված են բուժաշխատողների համար գործունեության բարոյական և մասնագիտական որոշակի ուղենիշներ սահմանելու, պացիենտների հետ նրանց վարվելակերպին հստակ պահանջներ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Հայաստանի Հանրապետությունում ներկայումս նման կանոններ սահմանված չեն, ինչը հաճախ բժիշկ-պացիենտ նորմալ հարաբերությունների ձևավորման վրա բացասաբար է ազդում, չի խթանում հարգանքի, վստահության մթնոլորտի ձևավորմանը, իսկ առանձին բուժաշխատողների մղում է ոչ բարեխիղճ, անտարբեր գործելակերպի: Ներկայումս բժշկական էթիկայի հանձնաժողովներ չեն գործում, մինչդեռ նման անկախ հանձնաժողովները կարևորագույն դեր են խաղում այլ պետությունների առողջապահական համակարգերի զարգացման գործում: Լինելով անկախ մարմիններ՝ դրանք ունեն բազմապրոֆիլ գործառույթներ՝ սկսած նեղ մասնագիտական ոլորտներում բժշկական էթիկայի կանոնների, բժշկական օգնության և սպասարկման որակի, բժշկատնտեսագիտական չափորոշիչների, բուժման սխեմաների և ստանդարտների մշակման, բուժաշխատողների գործունեության էթիկայի կանոնների խախտման գործեր քննելու և մի շարք այլ լիազորություններ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախագծով նախատեսվում է սահմանել բուժաշխատողների էթիկայի նորմեր, որոնք համընդհանուր կլինեն ինչպես ավագ, այնպես էլ՝ միջին և կրտսեր բուժանձնակազմի համար: Մասնավորապես, նախագծով կսահմանվեն մասնագիտական գործունեությանը, պացիենտի շահերով առաջնորդվելուն, բժշկական գաղտնիքի պահպանմանը, ազնվության, հարգանքի ապահովմանն ուղղված, ինչպես նաև ինքնագովազդի, առանց բժշկական անհրաժեշտ հիմնավորման պացիենտներին գործընկերներ-բուժաշխատողներին ուղեգրելն արգելող նորմեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ստեղծել բժշկական էթիկայի հանձնաժողովներ, որոնք կգործեն տարբեր մակարդակներում՝ միաժամանակ սահմանելով դրանց ձևավորման, գործունեության կարգը և գործառույթների շրջանակը: **2. Կարգավորման առարկան** Բուժաշխատողների գործունեության բժշկական էթիկայի նորմեր, ինչպես նաև բժշկական էթիկայի հանձնաժողովներ ստեղծելու և դրանց գործառույթները սահմանելու իրավաuություններ **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է բուժաշխատողների կողմից մատուցվող ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության, որակի, բուժաշխատող-պացիենտ հարաբերություններում վստահության, հարգանքի մակարդակի բարձրացում: Բժշկական էթիկայի հանձնաժողովների ստեղծում, արդյունքում բուժաշխատողների և պացիենտների իրավունքների պաշտպանության նոր գործիքների ստեղծում, բժշկական մասնագիտական գործունեության ստանդարտները մշակող մարմինների ձևավորում: |
| 57. | **«ՀՀ Վայոց ձորի մարզի առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման** **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** Միջոցառումների նպատակը ՀՀ Վայոց ձորի մարզում առողջապահական ծառայությունների, բժշկական օգնության ու սպասարկման արդյունավետության, մատչելիության ու որակի բարձրացումն է: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում ներկայումս գործում են հիվանդանոցային ծառայություն մատուցող 3 փակ բաժնետիրական ընկերություն՝<br>● Եղեգնաձորի ԲԿ<br>● Վայքի ԲՄ<br>● Ջերմուկի ԱԿ<br>Ամբուլատոր համակարգում մեկ բնակչին ընկնող տարեկան միջին հաճախումների թիվը ցածր է: Հիվանդանոցային ծառայություններում ցածր է մահճակալների ծանրաբեռնվածությունը: Ընդհանուր առմամբ համակարգը կարիք ունի առողջապահական ծառայությունների, բժշկական օգնության ու սպասարկման արդյունավետության, մատչելիության ու որակի բարձրացման, հիվանդանոցային ծառայություն մատուցող բուժհաստատությունների օպտիմալ կառուցվածքի ձևավորման:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վայոց ձորի մարզի առողջապահական համակարգի կողմից իրականացվող ծառայությունների արդյունավետության ու որակի բարձրացման առումով առաջարկվում է վերակազմակերպել գործող համակարգը՝ ելնելով հետևյալ չափանիշներից և սկզբունքներից՝<br>● կրկնվող, միանման գործառույթներ իրականացնող և թերծանրաբեռնությամբ աշխատող ծառայությունների միավորում,<br>● լաբորատոր-ախտորոշիչ ծառայությունների միավորում,<br>● չօգտագործվող կամ անարդյունավետ օգտագործվող տարածքների օտարում:<br>Մարզի առողջապահական համակարգում՝ ըստ առանձին տարածաշրջանների կկատարվեն կառուցվածքային փոփոխություններ՝ կազմակերպությունների վերակազմավորման և լուծարման աշխատանքներն իրականացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Վայոց ձորի մարզի առողջապահական համակարգի կողմից իրականացվող ծառայությունների արդյունավետության ու որակի բարձրացման նպատակով գործող համակարգի վերակազմակերպումը՝ ելնելով համապատասխան չափանիշներից և սկզբունքներից:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի և միջոցառումների ծրագրի ընդունման արդյունքում ակնկալվում է Վայոց ձորի մարզում պետական ֆինանսական միջոցների ծախսարդյունավետության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազում և ծառայությունների, բժշկական օգնության ու սպասարկման արդյունավետության, մատչելիության ու որակի ցուցանիշների բարելավում: |
| 58. | **«ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Առողջապահական ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի, ներառյալ բժշկական քարտերի համակարգի ներդրման նպատակը Հայաստանի Հանրապետությունում առողջապահության համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումն է, որն ապահովելու է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր բնակչի մասին լիարժեք բժշկական տեղեկատվություն՝ միասնական և ամբողջական ձևաչափով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Ներկայումս ՀՀ առողջապահության համակարգում գործում են տեղեկատվական ավտոմատացված համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային (ամբուլատոր-պոլիկլինիկական, ստոմատոլոգիական) բուժօգնություն ստացած անձանց մատուցված ծառայությունների, օգտագործված դեղերի և բժշկական նշանակության պարագաների, իրականացված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների մասին տեղեկատվություն՝ անհատական հաշվառման ձևերի միջոցով: Գործում է նաև առողջության |

| 1 | 2 |
|---|---|
| | առաջնային պահպանման ծառայություններ իրականացնող բժշկի մոտ գրանցված բնակչության տվյալների շտեմարանը: Այս համակարգերը, սակայն, այսօր գործում են առանձին մոդուլների միջոցով, չնայած օգտագործում են նույնականացված որոշակի շտեմարաններ (բուժհիմնարկներ, դեղորայք և այլն): Անձի նույնականացման հնարավորության բացակայությունը հնարավորություն չի տալիս միավորելու համակարգի տարբեր մոդուլների միջոցով հավաքագրվող տվյալները, թույլ են զարգացած տվյալների փոխանակման ենթակառուցվածքները, բացակայում է ցանցային ենթակառուցվածքը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ առողջապահության միասնական տեղեկատվական համակարգ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ, օգտագործելով արդեն իսկ գործող ավտոմատացված տեղեկատվական համակարգերի հնարավորությունները, ձևավորել միօրինականացված տվյալների փոխանակման և դինամիկ թարմացման ծրագրային միջոց, հաստատել համակարգի պատասխանատու ստորաբաժանումը, որը կստանձնի Հայաստանի Հանրապետությունում առողջապահական միասնական շտեմարանի ստեղծման նախագծի ղեկավարումը: Անհրաժեշտ է նաև իրականացնել համակարգի գործարկման համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքների մշակումը և տեխնիկայի ներդրումը, մասնավորապես, ցանցային ենթակառուցվածքի, համակարգիչների, քարտային տերմինալների, այլ սարքավորումների, ինչպես նաև ծրագրային ապահովման ներդրումը, տեխնիկական միջոցների ձեռքբերումը, համակարգի ներդրման համար օրենսդրական փոփոխությունների իրականացումը, համակարգի փորձարկումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Խնդրի կարգավորման առարկան հասարակությանն առավել որակյալ և արդյունավետ առողջապահական ծառայությունների մատուցման ապահովումը, բուժօգնություն ստանալու կարիք առաջանալու պահին անհրաժեշտ և կարևոր տեղեկատվությունը բուժօգնություն իրականացնողին տրամադրելը, առողջապահության ոլորտի թափանցիկության և հրապարակայնության բարձրացումն է:<br>**3. Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Խնդրի կատարման արդյունքում հնարավորություն է ստեղծվելու ճիշտ ժամանակին ապահովելու անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը մասնագետների համար: Համակարգի շրջանակներում տեղեկատվության հոսքերը կազմակերպված են լինելու այնպես, որպեսզի անձի մասին բժշկական անհրաժեշտ տվյալները նվազագույն ժամանակում հասանելի լինեն համապատասխան մասնագետին: Բժշկական քարտերի միջոցով անձի բժշկական անհրաժեշտ տվյալները կտեղադրվեն նույնականացման քարտերում` հնարավորություն ստեղծելով անհրաժեշտության դեպքում ամենակարճ ժամանակահատվածում միշտ և ամենուր ստանալու տեղեկատվություն մարդու առողջական վիճակի մասին: Համակարգը հնարավորություն կտա բարձրացնելու ընդհանուր վերահսկողությունը մատուցվող բուժօգնության որակի վրա, կբարձրացնի ծառայություններից օգտվելու մատչելիությունը, կնվազեցնի տարբեր տեսակի թղթային տվյալների պահպանման կամ տեղափոխման անհրաժեշտությունը: |
| 59. | **«Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հսկողության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հսկողության համակարգ ստեղծելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Աշխարհում վերջին տարիներին արձանագրվում են բազմաթիվ նոր վարակիչ հիվանդություններ: Արձանագրվում են նաև այնպիսի հիվանդություններ, որոնք վերջին տասնամյակների ընթացքում ընդհանրապես չեն արձանագրվել: Համաճարակաբանական հետազոտությունների և իրականացված վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ դրանց |

| 1 | 2 |
|---|---|
| | մեծամասնությունն ունեն կենդանական ծագում: Ավելին՝ այսօր արձանագրվում են նաև այնպիսի հիվանդություններ, որոնք բնորոշ են կենդանական պոպուլյացիային, սակայն վերջիններիս հարուցիչները, հաղթահարելով միջտեսակային պատնեշը, արձանագրվում են նաև մարդկանց շրջանում: Հանրապետությունում համաճարակաբանության ոլորտի աշխատանքն զգալիորեն լարված ընթացք է ստանում այս հիվանդությունների դիմակայման ուղղությամբ գործադրվող կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման և իրականացման համար: Խնդիր է առաջանում նաև ոլորտի պատասխանատուների՝ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցված աշխատանքի կազմակերպման և փոխտեղեկատվական համակարգի ձևավորման ու գործադրման ուղղությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների կանխարգելման և անհրաժեշտության դեպքում տեղայնացման համար «Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հսկողության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի նշված հիվանդությունների դեմ համակարգված լիարժեք միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հսկողության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը հատկապես կարևորվում է նաև մարդու և կենդանիների ընդհանուր հիվանդությունների հարուցիչների (միկրոօրգանիզմների) ախտածնության օրինաչափությունների վերաբերյալ իրազեկվածության, տարբեր շահագրգիռ մարմինների միջև փոխտեղեկատվության, կենսաբանական գործոնով պայմանավորված միջազգային նշանակության արտակարգ իրավիճակների և հանրային առողջության ռիսկերի արագ բացահայտման, չկրկնվող և նպատակային իրականացված միջոցառումների, արագ արձագանքման համակարգի զգայունության կատարելագործման, հիմնական կարողությունների ձևավորման արդիականացման գործընթացում: Վերջինս նաև հիմնավորվում է Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների պահանջներով:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում կապահովվի մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների կանխարգելման, վերահսկման միջոցառումների, կարողությունների ձևավորման արդիականացման իրավական հիմքը: |
| 60. | **«Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակները և բժշկական գործելակերպը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով ամրագրված և առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող հարցերի կանոնակարգման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանում է ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը: Գործնականում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ոլորտը լայն է և վերաբերում է ոչ միայն առողջապահության ոլորտին, այլ նաև՝ օժանդակ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ծնված երեխաների գրանցման խնդիրներին, փոխնակ և կենսաբանական մայրերի անաշխատունակության ժամկետների, նրանց անաշխատունակության նպաստներ տրամադրելու, երեխայի խնամքի |

| 1 | 2 |
|---|---|
| | կապակցությամբ ծնողի արձակուրդի հետ կապված խնդիրներին՝ հարցեր, որոնց կարգավորումը դուրս է առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի իրավասությունների շրջանակից և կարող է կանոնակարգվել ՀՀ կառավարության որոշմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ոլորտը կանոնակարգելու և տարբեր գերատեսչությունների իրավասություններին վերաբերող հարցերը կանոնակարգելու դեպքում կհստակեցվեն վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների ոլորտում ինչպես բժշկական գործելակարգերը, այնպես էլ՝ միջգերատեսչական այնպիսի խնդիրներ, որոնք առնչվում են այդ մեթոդների կիրառմամբ ծնունդների գրանցման գործընթացին, անաշխատունակության թերթիկների տրամադրման, երեխայի խնամքի արձակուրդի և (կամ) նպաստի հարցերին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգի, մեթոդների տարատեսակների ու բժշկական գործելակերպի սահմանումը և խնդրին առնչվող միջգերատեսչական հարցերի հստակեցումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հստակեցնել և սահմանել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգին, մեթոդների տարատեսակներին ու բժշկական գործելակերպին ներկայացվող պահանջները: |
| 61. | **«Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագիրը<br>և միջոցառումների ցանկը հաստատելու մասին»<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների ախտորոշման, ինչպես նաև շրջակա միջավայրում վարակիչ ազդակների բացահայտման լաբորատոր կարողությունները չափավոր են: Հետազոտությունները ցույց են տվել, որ ներկայիս լաբորատոր կարողությունները բավարար չեն շրջանառող և նոր ի հայտ եկող ախտածինները բացահայտելու համար: Կանոնակարգված չէ բժշկական լաբորատորիաներում կիրառվող մեթոդների մեծ մասի կիրառման կարգը: Առողջապահական մասնավոր լաբորատորիաները կիրառում են բոլոր գործող մեթոդները, սակայն ստանդարտ ընթացակարգերը բացակայում են: Վարակիչ հիվանդությունների ախտորոշման լաբորատորիաները բավարար ժամանակակից հագեցվածություն չունեն: Գերատեսչական լաբորատորիաներում առկա սարքերի մի մասը, որոնցով իրականացվում են հետազոտություններ վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ազդակների նկատմամբ՝ հնամաշ են և արդիականացման խիստ կարիք ունեն: Հանրապետությունում բացակայում է լաբորատորիաների, կլինիկաների միջև հորիզոնական տեղեկատվության փոխանակումը: Հանրապետությունում բացակայում է լաբորատորիաների գնահատման համակարգը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում հնարավորություն կընձեռվի Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների ախտորոշման, ինչպես նաև շրջակա միջավայրում վարակիչ ազդակների բացահայտման ուղղությամբ ձևավորելու ժամանակակից լաբորատոր կարողություններ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում կկանոնակարգվեն լաբորատորիաներում կիրառվող մեթոդները, կմշակվի մեթոդաբանությունների կիրառման կարգ, կմշակվեն և կներդրվեն ստանդարտ ընթացակարգեր՝ բոլոր լաբորատորիաների համար, ինչպես նաև՝ լաբորատորիաների միջև փոխտեղեկատվական համակարգեր, կմշակվեն սահմանող դրույթներ, որոնցով հնարավոր կլինի |

| 1 | 2 |
|---|---|
| | իրականացնել լաբորատորիաների գնահատում, որի միջոցով հնարավորություն կընձեռվի գնահատելու լաբորատորիաների պատրաստության աստիճանը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում կստեղծվի համընդհանուր լաբորատոր ցանց: |
| **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն** | |
| 62. | **«Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն նախագծի նպատակը երկաթուղային փոխադրման ծառայութունների սակագների, կոնցեսիոն ակտիվների կազմի փոփոխման, դրանց դուրսգրման, ուղևորափոխադրումներից ստացված կոնցեսիոների տարեկան վնասի սուբսիդավորման հետ կապված և այլ կանոնակարգման ենթակա խնդիրների կարգավորումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս կոնցեսիոն գործունեության ընթացքում առաջանում են խնդիրներ, մասնավորապես, կապված կոնցեսիոների կողմից նոր գույքի ձեռք- բերման, երկաթուղային փոխադրման ծառայությունների սակագների սահմանման, փոփոխման, ուղևորափոխադրումներից ստացված՝ կոնցեսիոների տարեկան վնասի սուբսիդավորման և այլնի հետ, որոնց կարգավորումը հնարավոր է միայն կոնցեսիոն պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կոնցեսիոն գործունեության ընթացքում առաջացած խնդիրները կանոնակարգելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել կոնցեսիոն պայմանագրում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության (Կոնցեդենտ) և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (Կոնցեսիոներ) միջև հարաբերությունների հստակեցումը, կանոնակարգումը<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն որոշման ընդուման արդյունքում կհստակեցվի կոնցեսիոն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման, կոնցեսիոն ակտիվների վերադարձման կարգը՝ ինչը կնպաստի հայկական երկաթուղու համակարգի արդյունավետ կառավարմանը, երկաթուղու փոխադրման ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը: |
| 63. | **«Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն նախագծի նպատակը ընդհանուր (ոչ ընդհանուր) օգտագործման երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվելու ընթացքում ընդհանուր (ոչ ընդհանուր) օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի սեփականատիրոջ, կառավարչի, փոխադրողների, ուղևորների, բեռ առաքողների, բեռ ստացողների միջև առաջացած հարաբերությունների կանոնակարգումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս երկաթուղային տրանսպորտի գործունեություն կազմակերպողների միջև հարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ օրենսդրությամբ կանոնակարգված չեն, ինչը կարող է կամայականությունների, ոչ հավասար մոտեցման պատճառ հանդիսանալ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| 1 | 2 |
|---|---|
| | ՀՀ կառավարության որոշմամբ կանոնակարգել ընդհանուր (ոչ ընդհանուր) օգտագործման երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվելու ընթացքում ընդհանուր (ոչ ընդհանուր) օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի սեփականատիրոջ, կառավարչի, փոխադրողների, ուղևորների, բեռ առաքողների, բեռ ստացողների միջև առաջացած հարաբերությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ընդհանուր (ոչ ընդհանուր) օգտագործման երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվելու ընթացքում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի սեփականատիրոջ, կառավարչի, փոխադրողների, ուղևորների, բեռ առաքողների, բեռ ստացողների միջև առաջացած հարաբերությունների կանոնակարգումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ընդհանուր (ոչ ընդհանուր) օգտագործման երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվելու ընթացքում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի սեփականատիրոջ, կառավարչի, փոխադրողների, ուղևորների, բեռ առաքողների, բեռ ստացողների միջև առաջացած հարաբերությունների սահմանում, ինչի արդյունքում վարքագծի միատեսակ կանոններ կսահմանվեն երկաթուղային տրանսպորտի գործունեության մասնակիցների համար: |
| 64. | **«Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Որոշման նախագծի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում զարգացնել էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային և այլ ծառայություններն ու գործարքները, սահմանել պատվիրատուի և մատակարարի միջև հարաբերությունները, տեղեկատվության փոխանակման և անվտանգության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության նվազագույն պահանջները:<br>**1.2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի ծառայությունները զարգացած չեն, ինչպես նաև կանոնակարգված չեն ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության հետ կապված խնդիրները:<br>Էլեկտրոնային առևտրի զարգացումը պահանջում է եվրոպական լավագույն փորձի հիման վրա նորագույն տեխնոլոգիաների ներդրում՝ միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություններ մատուցելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նպատակն է՝<br>1) ապահովել հանրությանը հասանելի էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային ծառայությունների լայն տեսականի,<br>2) սահմանել էլեկտրոնային առևտրի զարգացման մեխանիզմները.<br>3) սահմանել պատվիրատուի և մատակարարի միջև հարաբերությունները.<br>4) սահմանել տեղեկատվության փոխանակման և անվտանգության ապահովման մեխանիզմները.<br>5) սահմանել ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության նվազագույն պահանջները:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունման արդյունքում կկանոնակարգվեն Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային ծառայությունների և գործարքների բնագավառում պատվիրատուի ու մատակարարի միջև հարաբերությունները, ինչի արդյունքում կզարգանան էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային և այլ ծառայությունները, ինչպես նաև կբարձրանա ծառայություն մատուցողների կողմից տեղեկատվության անվտանգության ապահովման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության աստիճանը: |

| 1 | 2 |
|---|---|
| 65. | **«Տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցառումների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցառումների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՆԿ-97-Ն կարգադրությունը և ՀՀ-ում ներկայումս իրականացվող կիբեռանվտանգության գործընթացները:<br>Որոշման նախագծի նպատակն է սահմանել ցանցերի հուսալիության բարձրացման, հակավիրուսային միջոցառումների նույնականացման, ցանցային գրոհների դեմ միջոցառումների ցանկի մշակման, անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացման միջոցառումները:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ տեղեկատվական անվտանգության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Քանի որ տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացման և ցանցային գրոհների դեմ պայքարը շարունակական բնույթ է կրում, ուստի, տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է ձեռնարկել նոր քայլեր ՀՀ-ում տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայացված նախագծի ընդունմամբ կհաստատվի ցանցերի հուսալիության բարձրացման, հակավիրուսային միջոցառումների նույնականացման, ցանցային գրոհների դեմ միջոցառումների ցանկի մշակման, անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացման միջոցառումների համալիր ծրագիր, որի արդյունքում ՀՀ-ում կբարձրանա տեղեկատվական անվտանգության մակարդակը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացված նախագծի ընդունմամբ ՀՀ-ում կբարձրանա տեղեկատվական անվտանգության մակարդակը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունմամբ նախատեսվում է հաստատել ցանցերի հուսալիության բարձրացման, հակավիրուսային միջոցառումների նույնականացման, ցանցային գրոհների դեմ միջոցառումների ցանկի մշակման, անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացման միջոցառումների համալիր ծրագիր, որի արդյունքում ՀՀ-ում կբարձրանա տեղեկատվական անվտանգության մակարդակը: |
| 66. | **«Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում տեխնիկական վերահսկողության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Սույն հայեցակարգի ընդունումը նպատակ ունի կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության տարածքում գործող էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի և ենթակառուցվածքների, ինչպես նաև ռադիո- և հեռուստատեսային հեռարձակման համակարգերի կառուցմանը, պահպանմանը և շահագործմանն առնչվող խնդիրները:<br>**1.1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը հիմնականում կարգավորվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, գերատեսչական և այլ իրավական ակտերով:<br>Նշված իրավական ակտերում սահմանված չեն գործող էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի և ենթակառուցվածքների շահագործման, պահպանության և անվտանգության նորմերի ապահովման վերաբերյալ դրույթներ:<br>**1.2. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**<br>Սույն հիմնավորման 1-ին կետում նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկ- |

| 1 | 2 |
|---|---|
| | վում է էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում կենտրոնացված վերահսկողության իրավասու մարմնի գործառույթների կանոնակարգում:<br>**2. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում գործող էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի և ենթակառուցվածքների, ինչպես նաև ռադիո- և հեռուստատեսային հեռարձակման համակարգերի կառուցմանը, պահպանմանը և շահագործմանն առնչվող խնդիրների կանոնակարգում<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Սույն հայեցակարգի ընդունումը կնպաստի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի և ենթակառուցվածքների շահագործման, պահպանության և անվտանգության նորմերի ապահովման օրենսդրական դաշտի ձևավորմանը: |
| 67. | **«Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1.1. Անհրաժեշտությունը**<br>«Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի բնագավառում գործունեության իրավական հիմքերի կատարելագործմամբ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման միջազգային փորձը, մասնավորապես, ԵՄ-ի երկրների փորձը:<br>**1.2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>Ներկայացված նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտը համապատասխանեցնել եվրոպական երկրներում գործող փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտին, ինչպես նաև բացառել գործող օրենքում առկա ոչ հստակ ձևակերպումները:<br>**2. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>Փոստային կապի ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանությունը, շուկայական հարաբերությունների ներկա փուլի կարգավորումը, ինչպես մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնումը, այնպես էլ՝ դրանց որակի բարձրացումը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Սույն օրենքի ընդունման արդյունքում փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտը կհամապատասխանեցվի եվրոպական երկրներում գործող փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտին, մասնավորապես, կսահմանվի փոստային կապի ունիվերսալ ծառայությունների ցանկը: |
| 68. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն նախագծի նպատակը տրանսպորտի օբյեկտների, մասնավորապես, երկաթուղու պաշտպանական գոտիներում քաղաքաշինական գործունեության (շինարարության կամ քանդման իրականացման ) առանձնահատկությունների սահմանումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երկաթուղիների և երկաթուղային այլ օբյեկտների անվտանգ շահագործման, ինչպես նաև բնակչության, երկաթուղային տրանսպորտի աշխատողների և ուղևորների անվտանգության |

| 1 | 2 |
|---|---|
| | ապահովման նպատակով սողանքների, փլուզումների, ողողումների և այլ բացասական ազդեցությունների ենթակա տեղերում սահմանվում են պաշտպանական գոտիներ, որոնցում գործում է հողերի օգտագործման և դրա նկատմամբ սահմանափակումների կիրառման հատուկ ռեժիմ: Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ կանոնանարգված չեն երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ օրենսդրության բացը լրացնելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ կանոնակարգելով երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում քաղաքաշինական գործունեության առանձնահատկությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում քաղաքաշինական գործունեության առանձնահատկությունների սահմանում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն որոշման ընդունման արդյունքում կկանոնակարգվի տրանսպորտի օբյեկտների, մասնավորապես, երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում շինարարության թույլտվության տրամադրման գործընթացը: |
| | **ՀՀ քաղաքաշինության նախարարություն** |
| 69. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «թ» կետում կատարված լրացմամբ, որում նախատեսվում է տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը փոխարինել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով:<br>Նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 և 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշումներում, ինչպես նաև՝ բնակելի տների օրինակելի նախագծերի կիրառումը կանոնակարգող իրավական ակտերում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նոր կառուցվող և վերակառուցվող որոշակի օբյեկտների շինարարության ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհակասելու դեպքում ՀՀ կառավարության սահմանած՝ տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողության գործառույթները, կառուցապատողի և շինարարություն իրականացնողի փոխհամաձայնությամբ, կապալառու կազմակերպության երաշխավորության պայմանագրով փոխարինելու խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 և 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշումներում, որոնցում նախատեսված է պարտադիր կարգով իրականացնել տեխնիկական հսկողություն բոլոր օբյեկտների նկատմամբ: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով ամրագրված սկզբունքն անհրաժեշտ է մանրամասնել և կանոնակարգել համապատասխան իրավական ակտերով՝ նպատակ ունենալով ողջամիտ շրջանակներում պարզեցնել շինարարության գործառույթները: Նշված մոտեցումները նախատեսվում է ամրագրել նաև բնակելի տների օրինակելի նախագծերի կիրառումը կանոնակարգող իրավական ակտերում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված իրավական ակտերում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնք կամրագրեն կապալառուի կողմից շինարարության որակի ինքնահավաստման սկզբունքը՝ օրենքի պահանջներին համապատասխան: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Կանոնակարգման ենթակա են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքից բխող կառուցապատման ընթացակարգերի վերանայմամբ պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 և 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշումներում, ինչպես նաև բնակելի տների օրինակելի նախագծերի կիրառումը կանոնակարգող իրավական ակտերում նախատեսված լրացումներն ու փոփոխությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են շինարարության ընթացակարգերի պարզեցում, ֆինանսական ներդրումների կրճատում և օրենքի պահանջներին առնչվող այլ իրավական ակտերի համապատասխանեցում: |
| 70. | **«Կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման հայեցակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ պետական բյուջեի նախագծի մշակման և այլ աղբյուրներից ֆինանսավորվող շինարարական ծրագրերում հիմնանորոգման անհրաժեշտություն ունեցող օբյեկտներ ընդգրկելու համար իրավական հիմքի ստեղծում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս տարբեր ծրագրերում ընդգրկվող՝ հիմնանորոգման կամ կառուցման անհրաժետություն ունեցող օբյեկտները ներառվում են համայնքի ղեկավարների կամ մարզպետների գրությունների, հայտերի հիման վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Իրավական ակտի ընդունումից հետո կհստակեցվեն կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման աշխատանքների իրականացման հիմնական դրույթները և ժամանակացույցը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կրթական, մշակութային, մարզական օբյեկտների հիմնանորոգում, արդիականացում, շենքային պայմանների բարելավում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետական սուղ միջոցների առավել արդյունավետ ուղղորդվածության ապահովում (շենքային ֆոնդի պահպանում և արդիականացում): |
| 71. | **«ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1.Իրավական ակտի անհրաժեշտությունը ( նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն և 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշումներով ամրագրված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների կառուցապատման գործառույթների պարզեցման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում քաղաքաշինական գործընթացներն իրականացվում են համալիր կառուցապատման սկզբունքի կիրառման ոչ բավարար ընթացակարգով, ինչը և խոչընդոտում է բնակավայրերի կառուցապատման գործընթացների արդյունավետ իրականացմանը: Առկա խնդիր է նաև պարզեցնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներում իրականացվող որոշ գործառույթների ընթացակարգերը և կրճատել դրանց իրականացման համար սահմանված ժամկետները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում իրականացվող կառուցապատման գործառույթներում անհրաժեշտ է ներդնել համալիր կառուցապատ- |

| 1 | 2 |
|---|---|
| | ման սկզբունքը, որի արդյունքում կպարզեցվեն քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման ընթացակարգերը և դրանց իրականացման համար սահմանված ժամկետները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կանոնակարգման ենթակա են հատուկ կարգավորման օբյեկտներում ՀՀ համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության ընթացակարգերի պարզեցման, համաձայնեցման գործառույթների օպտիմալացման և դրանց իրագործման ժամկետների կրճատման խնդիրները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում ներդնել կառուցապատման կանոնակարգմանը նպատակաուղղված համալիր կառուցապատման սկզբունքը, պարզեցնել քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը և կրճատել իրագործման ժամկետները: |
| 72. | **Ղազախստանի Հանրապետության փորձի ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետությունում այդ փորձի կիրառման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում**<br><br>1. Անհրաժեշտությունը<br>Շինարարության ոլորտի զարգացման հայեցակարգի դրույթների իրականացման նպատակով շինարարության ոլորտում անհրաժեշտ է ուսումնասիրել նախկին խորհրդային պետությունների զարգացման փորձը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ուսումնասիրվում է ԱՊՀ և այլ արտերկրների զարգացման փորձը շինարարական ոլորտում:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ղազախստանի շինարարական ոլորտի զարգացման ուսումնասիրության արդյունքում կհստակեցվի Հայաստանի Հանրապետությունում ոլորտի նորմատիվային դաշտի զարգացման ուղղությունը:<br>2. Կարգավորման առարկան<br>Շինարարության ոլորտի նորմատիվային դաշտի արդիականացում:<br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Ղազախստանի Հանրապետության շինարարության ոլորտի զարգացման փորձը համադրել այլ պետությունների զարգացման ուղղությունների հետ և ըստ անհրաժեշտության ներկայացնել տեղեկատվություն: |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարություն** | |
| 73. | **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 23 արձանագրային որոշման 14-րդ կետով հաստատված ժամանակացույցի 1.1-ին կետից: Այն հիմնվում է Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթների վրա, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 4 արձանագրային որոշմամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքն ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին և, կապված գիտության ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների, ինչպես նաև մի շարք նոր օրենքների ընդունման հետ, կարիք ունի էական փոփոխությունների: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածների ու դրույթների ճնշող մեծամասնությունը հստակեցման և արդիականացման կարիք ունի: Գիտության արդի պահանջներին պետք է համապատասխանեցնել օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, օրենքի հիմնական խնդիրները, գիտական կազմակերպության իրավասությունները և այլ դրույթներ:<br>Օրենքում պետք է ներառվեն նաև մի շարք նոր հոդվածներ ու հասկացություններ: Մասնավորապես, հստակեցման կարիք ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության և գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները, կանոնակարգման կարիք ունեն գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները, արդիականացվեն ֆինանսավորման ձևերը: Բացի դրանից, անհրաժեշտ է սահմանել նոր հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին, հետազոտական համալսարան, գիտական դրամաշնորհ և այլն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի իրավահարաբերությունների բարելավման և արդիականացման նպատակով օրենքում տեղ գտած բացթողումների լրացում, ժամանակակից հասկացությունների ներմուծում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունումը հնարավոր կդարձնի ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի համապատասխանեցումը գիտության զարգացման արդի վիճակին և միջազգային չափանիշներին, կնպաստի Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի առաջընթաց և դինամիկ զարգացմանը: |
| 74. | **«Ուսանողի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ուսանողի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշների հստակեցման պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հստակ չեն ուսանողների ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները, ինչը հանգեցնում է տարբեր մոտեցումների:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել ուսանողների ֆինանսական վիճակի գնահատման հստակ չափանիշներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ուսանողների ֆինանսական վիճակի գնահատման չափանիշների մշակում և հաստատում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ուսանողների ֆինանսական վիճակի գնահատման չափանիշների մշակման և հաստատման արդյունքում ուսանողների ֆինանսական խրախուսման ու օժանդակության համակարգերը կգործեն ավելի արդյունավետ: |
| 75. | **«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունը և փորձնական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին դպրոցական սննդով ապահովելու արդյունավետ մեխանիզմների ներդրում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության և Միավորված ազգերի կազմակերպության Պարենի համաշխարհային ծրագրի միջև դպրոցական սննդի |

| 1 | 2 |
|---|---|
| | զարգացման ծրագրի («Նո 200 128 ծրագիր») շրջանակներում հաստատված գործողությունների պլանի, դպրոցական սննդի ծրագրեր են իրականացվում հանրապետության 7 մարզի հանրակրթական դպրոցներում, որոնցում ընդգրկված են շուրջ 50000 տարրական դասարանների աշակերտներ: Ծրագիրն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության ֆինանսավորմամբ և շարունակվելու է մինչև 2013 թ.:<br>Միաժամանակ, ծրագրով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետությունն այս ընթացքում կմշակի կայուն դպրոցական սննդի ազգային ռազմավարություն, քանի որ դպրոցական սնունդը ներառված չէ պետական քաղաքականության մեջ, ռազմավարություններում և ծրագրերում՝ որպես առանձին խնդիր:<br>**1.2, Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Դպրոցական սննդի կազմակերպման արդյունավետ մեխանիզմներ մշակելու նպատակով նախատեսվում է հանրապետության տարբեր մարզերում (տարածաշրջաններում) դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացնել փորձնական ծրագրեր՝ հաշվի առնելով տարածաշրջանի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Ազգային ծրագրին անցման հիմնական նախադրյալներն են դպրոցական սննդի հաշվառումն ազգային զարգացման ռազմավարություններում և գործողությունների պլաններում, մասնավորապես, կրթության ոլորտի ծրագրերում, ազգային ֆինանսավորման աղբյուրների որոշումը և ազգային կարողությունների ամրապնդումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Դպրոցական սննդով ապահովման արդյունավետ մեխանիզմների ներդրումը թույլ է տալիս ապահովել ռազմավարական պլանավորման ավելի մեծ ճշգրտություն և կայունություն՝ կապված տարեկան բյուջետավորման հետ՝ հաշվի առնելով կարճաժամկետ միտումները, արտաքին գործոնները, ռազմավարության իրականացման առաջընթացը:<br>**3, Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Դպրոցական սննդով ապահովման արդյունավետ մեխանիզմների ներդրումն ուղղակիորեն նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Դպրոցական սնունդը, որպես պետական քաղաքականության մաս, կարող է առավել դրական ազդեցություն ունենալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, մասնավորապես, կրճատել աղքատությունը, բարելավել սոցիալական ապահովությունը, ապահովել պարենային անվտանգությունը: Դպրոցական սննդի պատշաճ կազմակերպումը ներդրում է՝ ժողովրդագրական և առողջապահական խնդիրների վերացման համար: |
| 76. | **«Օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցից, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության և Բոլոնիայի գործընթացում ընդգրկված երկրների կրթության և տնտեսության փոխադարձ կապերի ամրապնդմանը, միջազգային մրցունակության բարձրացմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականին միացել է Բոլոնիայի գործընթացին՝ նպատակ ունենալով ապահովելու ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպական կրթական միասնական տարածքին: Բոլոնիայի գործընթացի առանցքային բաղադրիչներից մեկը բարձրագույն կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրումն է, որը նպաստում է մասնակից երկրների բարձրագույն կրթության համակարգերի համադրելիությանը, կրթության և տնտեսության փոխադարձ կապերի ամրապնդմանը, միջազգային մրցունակության բարձրացմանը և ուսանողների շարժունությանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցին համապատասխան՝ մշակել օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման կարգ: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Եվրոպայի բարձրագույն կրթության միասնական տարածքի բարեփոխումներին համահունչ՝ կրթական բարեփոխումների իրականացում, որակավորումների փոխճանաչում, համադրելիության ապահովում<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բոլոնիայի գործընթացում ընդգրկված երկրների կրթության և տնտեսության փոխադարձ կապերի ամրապնդում, միջազգային մրցունակության բարձրացում և ուսանողների շարժունության ապահովում: |
| 77. | **«Կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցից, որը կնպաստի կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կրթական որակավորումների շնորհումը կրթության տարբեր մակարդակներում կանոնակարգվում է տարբեր օրենսդրական ակտերով, ինչը հանգեցնում է տարաբնույթ մեխանիզմների առկայությանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կրթության տարբեր աստիճաններում որակավորումների շնորհման միասնական քաղաքականության սահմանում: Շնորհվող որակավորումների հստակեցում և կանոնակարգում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ որակավորումների շնորհման կանոնակարգում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բարձրագույն կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրում: Այն կնպաստի որակավորումների համադրելիության ապահովմանը: |
| 78. | **«Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցից, որը կնպաստի կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրմանը, նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցմանը գործող որակավորումների համակարգին:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախկինում շնորհված որակավորումները չեն համապատասխանում գործող որակավորումներին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցում գործող որակավորումներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Շնորհվող որակավորումների համակարգում: Բարձրագույն կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցում գործող որակավորումների համակարգին: |

| 1 | 2 |
|---|---|
| 79. | **«Մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների հայեցակարգը և 2012-2016 թականների գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունումը բխում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներից:<br>Իրավական ակտի նպատակը Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնախնդիրների լուծման նոր ուղիների մշակումն ու ներդրումն է՝ կրթական նոր հայեցակարգի և գործողությունների ժամանակացույցի միջոցով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՄԿՈՒ-ի բնագավառում հիմնական բարեփոխումներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգին և Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011 թվականների միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին համապատասխան՝ հաստատված ՀՀ կառավարության 2008 դեկտեմբերի 18-ի նիստի N 51 արձանագրային որոշմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՄԿՈՒ-ի բարեփոխումների հայեցակարգի և 2012-2016 թվականների գործողությունների ժամանակացույցի մշակում, որի համար հիմք կծառայի «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2011 թվականի հունիսի 23-ին, որում ներառված են նաև ՄԿՈՒ-ի համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև ԵՄ-ի կողմից 2007 թվականի և 2009 թվականի ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված փորձը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքի՝ կրթության զարգացման պետական ծրագրի հիմնադրույթների կատարման ապահովում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՄԿՈՒ-ի բարեփոխումների մասին հայեցակարգ և 2012-2016 թթ. գործողությունների ժամանակացույց՝ հաստատված ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ: |
| 80. | **«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, ինչպես նաև 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցի պահանջներից:<br>Իրավական ակտի նպատակն է վերանայել մասնագիտություններն ու որակավորումները և հնարավորություն ընձեռել ուսումնական հաստատություններին, ՀՀ աշխատաշուկայի պահանջներից ելնելով, պատրաստել համապատասխան որակավորմամբ մասնագետներ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332–Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ), իսկ 2011 թվականի օգոստոսի 25-ի |

| 1 | 2 |
|---|---|
| | N 1230-Ա որոշմամբ՝ ՈԱՇ-ի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցը, որի համաձայն կիրականացվեն մի շարք բովանդակային փոփոխություններ կրթության որակավորումների համակարգում, այդ թվում՝ ՄԿՈՒ-ի համակարգում:<br>«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունները և որակավորումները հաստատվել են 2006 թվականին, որոշակի փոփոխություններ են կատարվել վերջին տարիներին, և ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտություններով շրջանավարտների որոշ մասն ստանում է որակավորումներ, որոնք պահանջված չեն աշխատաշուկայում , և (կամ) մասնագիտություններ ու որակավորումներ, որոնք բացակայում են ցանկից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ սոցիալական գործընկերների հետ համատեղ վերանայել մասնագիտությունների և որակավորումների ցանկը, փոփոխություն կատարելով ցանկում՝ հնարավորություն ընձեռելով ուսումնական հաստատություններին պատրաստել աշխատաշուկային անհրաժեշտ որակավորմամբ մասնագետներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ելնելով աշխատաշուկայի պահանջից և ազգային որակավորումների շրջանակին համապատասխան՝ մասնագետների պատրաստում:<br>**3, Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ելնելով աշխատաշուկայի պահանջից՝ ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկ՝ հաստատված ՀՀ կառավարության որոշմամբ: |
| 81. | **«Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցից, որը կնպաստի կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կրթական որակավորումների շնորհումը կրթության տարբեր մակարդակներում կանոնակարգվում է տարբեր օրենսդրական ակտերով, ինչը հանգեցնում է տարաբնույթ մեխանիզմների առկայությանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կրթության տարբեր աստիճաններում որակավորումների միասնական քաղաքականության սահմանումը:<br>Բուհերում գործող մասնագիտությունների ինտեգրացում, ինչպես նաև մասնագետների պատրաստման զուգահեռականության վերացում բուհերում՝ ելնելով դրանց հիմնական ուղղվածությունից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ-ում գործող մասնագիտությունների ցանկի կարգավորում, վերանայում, համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բարձրագույն կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրում: |

| 1 | 2 |
|---|---|
| 82. | «Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրին և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման<br><br>**1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 23 արձանագրային որոշման 14-րդ կետով հաստատված ժամանակացույցի 2.2-րդ կետից:<br>Ծրագրի ընդունման և իրականացման նպատակը գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվի կայուն աճի և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը: Շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին, երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում նաև` արտերկիր: Արդյունքում` գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները հանգեցրին գիտության արագ «ծերացման», գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի որակական փոփոխության, խախտվեցին գիտական և գիտամանկավարժական դպրոցների շարունակականությունը, սերնդափոխության սահուն ընթացքը:<br>Միևնույն ժամանակ, ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ` նպատակաուղղված երիտասարդ գիտնականների և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցմանը: Մասնավորապես, ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների հայտերի մրցույթների ժամանակ սահմանվել է երիտասարդ կատարողների (ասպիրանտներ և մագիստրանտներ) մասնակցության նվազագույն սահմանը, իրականացվում են ասպիրանտների և երիտասարդ գիտնականների աջակցության, ինչպես նաև շարժունակության ապահովման ծրագրեր: Սակայն դրանք բավարար չեն գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերարտադրության և բնագավառի կադրային կազմի տարիքային կառուցվածքի անհրաժեշտ փոփոխությունն ապահովելու համար: Նպատակին կարելի է հասնել միայն պետական ծրագրային քաղաքականության միջոցով, որի արդյունավետությունը պայմանավորված է համակարգային բնույթով և, որը հնարավորություն կտա կենտրոնացնել ռեսուրսները` բնագավառը երիտասարդ կադրերով համալրելու և ամրապնդելու առաջնայնությունների վրա:<br>Սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի վերարտադրության և երիտասարդ գիտնականների աջակցության միասնական ծրագիրը, որի կարևորագույն տարրերից են գիտական աշխատողի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավումը, գիտական աշխատողի կարիերայի գրավչության խնդիրը և այն գիտնականների ու գիտամանկավարժական կազմակերպությունների աջակցության հարցը, որոնք իրենց օրինակով ապացուցում են գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի հաջող լինելը և արդյունավետ իրականացնում են երիտասարդ կադրերի պատրաստումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի կատարումը նպատակաուղղված է գիտության ոլորտում այնպիսի միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, որոնց արդյունքում հնարավոր կլինի ներդնել ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ու հաստատման մեխանիզմներ, մեծացնել երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, բարձրացնել գիտական աշխատողի վարկանիշը և երիտասարդների շրջանում առաջացնել հետաքրքրություն գիտության նկատմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման ծրագիրը կներառի տաղանդավոր երիտասարդների` գիտության ասպարեզ ներգրավումը խթանող, |

| 1 | 2 |
|---|---|
| | օտարերկրյա պետություններում աշխատող կամ բուհերում սովորող հայ երիտասարդների վերադարձին նպաստող մասնագիտական ու սոցիալական պատշաճ պայմանների ստեղծման նախադրյալներ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում ներդնելու գիտական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակներ, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, կհանգեցնի գիտական կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացմանը: |
| 83. | **«Հասարակական գիտությունների հիմնադրամ ստեղծելու մասին»**<br>**ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 18-ի «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 10 արձանագրային որոշման 16-րդ կետով հավանության արժանացած ժամանակացույցի 2.1-ին կետի պահանջից: Հիմնադրամի ստեղծման հիմնական նպատակը հասարակական գիտությունների բնագավառի ծրագրերի և թեմաների ֆինանսավորման մեջ արտաբյուջետային միջոցների ներգրավումն է և բնագավառի կայուն զարգացմանն աջակցելը, մասնավորապես, հիմնադրամի ստեղծումը պայմանավորված է հասարակական գիտությունների բնագավառում հետևյալ նպատակներին հասնելու անհրաժեշտությամբ՝<br>1) հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացում.<br>2) հասարակական և տնտեսական զարգացումների մեջ կիրառվելիք գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում.<br>3) հետազոտական ծրագրերի ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի, այլ իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների միջոցների ներգրավում.<br>4) ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացմանը նպաստում.<br>5) ինդեքսավորված ամսագրերում հրապարակումների խրախուսման մեխանիզմների ներդրում.<br>6) գիտական կադրերի փոխանակման ծրագրերի իրականացում, միջազգային համագործակցությանն աջակցում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող գիտական ծրագրերին և թեմաներին Հայաստանի Հանրապետութան 2011 թվականի պետական բյուջեից հատկացվել են ընդհանուր բազային ֆինանսավորման ծավալների 3.6 տոկոսի չափով ֆինանսական միջոցներ, իսկ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ծավալների՝ 4.2 տոկոսի չափով: Իրականացվում են գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 10 ծրագիր և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 6 գիտական թեմա: Ֆինանսավորման ծավալների մեծացումն անհրաժեշտ է իրականացնել ինչպես բյուջետային, այնպես էլ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին, մասնավորապես, ստեղծելով հասարակական գիտությունների հիմնադրամ: Ֆինանսական միջոցների ավելացմանը զուգընթաց պետք է բարձրացնել նաև դրանց օգտագործման արդյունավետությունը, որն էլ իր հերթին պայմանավորված է բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացմամբ և միջազգային չափանիշներին համապատասխանեցմամբ: Այդ ծրագրերն ու թեմաները կատարվում են 8 գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:<br>Հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունները հիմնականում չեն արտացոլում և անհրաժեշտ գիտական հենքով չեն ապահովում |

| 1 | 2 |
|---|---|
| | հանրապետությունում տեղի ունեցող զարգացումները, թույլ են գիտական հետազոտություններ- հասարակական զարգացումներ կապերը, ցածր մակարդակի վրա է գտնվում գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության արդյունավետությունը, ցածր է միջազգային համագործակցության, միջազգային գիտական տարածքի հետ ինտեգրման մակարդակը, փոքր թիվ են կազմում ոլորտի համընդհանուր մարտահրավերների լուծումներին միտված ու համաշխարհային գիտական հասարակայնությանը հասանելի հրապարակումները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հասարակական գիտությունների հիմնադրամի ստեղծումը հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել բնագավառի ֆինանսավորման աղբյուրները, կնպաստի գիտական կադրերի պատրաստման ու վերապատրաստման ժամանակակից մեխանիզմների ներդրմանը, թույլ կտա ներդնել գիտական ծրագրերի և թեմաների ընտրության ֆինանսավորման ճկուն մեխանիզմներ, կնպաստի միջազգային գիտական տարածքի հետ ինտեգրման մակարդակի բարձրացմանը և վերջնական արդյունքում՝ իրականացվող գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հասարակական գիտությունների բնագավառում գիտական ծրագրերի և թեմաների ընտրության ու ֆինանսավորման, գիտական կադրերի պատրաստման, գիտական ներուժի վերարտադրության բարձրացման, գիտության և տնտեսության ինտեգրման, միջազգային համագործակցության մասնակցության միջազգային արդի չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հիմնադրամի ստեղծմամբ հնարավոր կլինի արտաբյուջետային միջոցների հաշվին ավելացնել հասարակական գիտությունների բնագավառի ֆինանսավորման ծավալները, ներդնել գիտական ծրագրերի և թեմաների ընտրության ու արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդներ, բարձրացնել գիտության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավվածության մակարդակը, ներդնել գիտական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակներ և բարձր արդյունավետությամբ աշխատող գիտնականների խրախուսման մեխանիզմներ, բարձրացնել միջազգային համագործակցության մակարդակը:<br>Այն կխթանի հասարակական գիտությունների բնագավառի հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացմանը, հանրապետության տնտեսության պահանջներին համապատասխանեցմանը: |
| **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն** | |
| 84. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման նպատակն է անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների գրանցման կարգի դյուրինացման և անասնաբուժական դեղամիջոցների փորձաքննության համար սահմանվող վճարների վերանայման միջոցով բարձրացնել անասնաբուժական միջոցառումների արդյունավետությունը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետության անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների ու ախտորոշիչ միջոցների պետական գրանցման կարգը և դրանց պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը: Սակայն, անասնաբուժական միջոցների ներմուծման կարգի պահանջների կատարման հետ կապված փորձաքննության իրականացման, հայտում ներառվող փաստաթղթերի ապահովման, տեղե- |

| 1 | 2 |
|---|---|
| | կատվության տրամադրման, փորձաքննության վճարի և այլնի, լրացուցիչ բարդություններ են ստեղծվում ինչպես ժամանակի, այնպես էլ՝ դրամական միջոցների ծախսման առումով, որը բացասաբար է անդրադառնում անասնաբուժական միջոցառումների արդյունավետության վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով ընդլայնել փորձաքննություն իրականացնող մարմինների ցանկը, կրճատել անասնաբուժական դեղամիջոցների պետական գրանցման նպատակով ներկայացվող հայտում ներառվող փաստաթղթերի թիվը, փորձաքննության առավելագույն տևողությունը, ինչպես նաև փորձաքննության վարձավճարները և այլն: Վերջիններս կնպաստեն անասնաբուժական դեղամիջոցների գրանցման գործընթացի բարելավմանը և ծախսերի կրճատմանը: Նշվածը դրականորեն կանդրադառնա իրականացվող անասնաբուժական միջոցառումների արդյունավետության վրա:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում՝ անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման գործընթացի բարելավում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունումը հնարավորություն կընձեռի՝<br>- դյուրինացնել անասնաբուժական դեղամիջոցների պետական գրանցման գործընթացը,<br>- կրճատել անասնաբուժական դեղամիջոցների գրանցման տևողությունը,<br>- վերանայել փորձաքննության տևողությունը, հայտում ներառվող փաստաթղթերի ցանկի նկատմամբ պահանջները,<br>- կրճատել անասնաբուժական դեղամիջոցների փորձաքննության և պետական գրանցման հետ կապված ծախսերը,<br>- բարձրացնել անասնաբուժական միջոցառումների արդյունավետությունը: |
| 85. | **«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների հայեցակարգին հավանություն տալու մասին»**<br>***Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման***<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման գործընթացի վերականգնման անհրաժեշտությամբ, ինչը հնարավորություն կընձեռի իրականացնելու լայնածավալ տոհմասելեկցիոն աշխատանքներ, ինչպես նաև կատարելագործելու բուծվող ցեղերի տոհմային և մթերատու հատկանիշները:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում մինչև 2009 թվականը թեև նվազ ծավալով (տարեկան 13-15 հազ. գլուխ), այնուամենայնիվ պետական աջակցությամբ իրականացվում էր կովերի արհեստական սերմնավորում: Վերջինս գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների կատարելագործման առավել արագ և արդյունավետ եղանակ է: Այն 1980-ական թվականներին հանրապետությունում ծավալուն բնույթ էր կրում և յուրաքանչյուր տարի արհեստական սերմնավորման էր ենթարկվում ավելի քան 200 հազ. կով:<br>Վերջին տարիներին, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, պետական աջակցությամբ արհեստական սերմնավորման միջոցառումները դադարել են, իսկ առանձին ընկերությունների և ֆերմերների կողմից իրականացվող արհեստական սերմնավորման ընդհանուր տարեկան ծավալը չի գերազանցում 10 հազ. գլուխը: Արդյունքում, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության աճը խիստ դանդաղ է, իսկ կովերի միջին կաթնատվության ծավալը յուրաքանչյուր տարի ավելանում է ընդամենը 30-40 կգ-ով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերջին տարիներին հանրապետություն են ներկրվել շվից, սիմենթալ և հոլշտին ցեղերի տոհմային կենդանիներ, որոնցից տարեկան ստացվում է ավելի քան 1000 գլուխ բարձրարժեք |

| 1 | 2 |
|---|---|
| | սերունդ, ինչը հարուստ գենոֆոնդ է հանդիսանում արհեստական սերմնավորման գործընթացը մեկնարկելու համար:<br>Հարկ է նշել, որ ներկայումս պետական կարգավիճակ ունեցող Մարտունու և Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայանները, ինչպես նաև արդեն մասնավորեցված նմանատիպ կայանների զգալի մասն ունեն համապատասխան ներուժ՝ արհեստական սերմնավորման աշխատանքներ իրականացնելու համար, և անհրաժեշտ պարագաների հատկացման դեպքում կարող են կարճ ժամանակահատվածում ձեռնամուխ լինել արհեստական սերմնավորման գործընթացի իրականացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայեցակարգով կարգավորվում են հայրենական սելեկցիայի արդյունքում ստացված կովկասյան գորշ ցեղի տավարի գենոֆոնդի պահպանման, տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացման, ցեղային կազմի բարելավման, ինչպես նաև ամենակարևորը՝ մթերատվության բարձրացման գործընթացները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի տոհմասելեկցիոն աշխատանքի խթանման շնորհիվ առաջիկա 3 տարվա ընթացքում կովերի միջին կաթնատվությունն ավելացնելու ավելի քան 300 կգ-ով և հասցնելու շուրջ 2500 կգ-ի, իսկ բտվող տավարի միջին կենդանի զանգվածն ավելացնելու 20-կգ-ով, ինչը հնարավորություն կընձեռի մսի համար աճեցված տավարն իրացնել 340 կգ զանգվածով:<br>Վերլուծությունները ցույց են տալիս, որ ներկայումս բուծվող 273 հազ. գլուխ կովերի նույնիսկ 35-40 տոկոսի (շուրջ 100 հազ. գլուխ) արհեստական սերմնավորման դեպքում արդեն 2015 թվականին հնարավորություն կընձեռվի տարեկան լրացուցիչ արտադրելու 15 հազ. տոննա կաթ և ավելի քան 20 հազ. տոննա տավարի միս:<br>Արհեստական սերմնավորման գործընթացի ներդրումը միաժամանակ հնարավորություն կընձեռի կտրուկ նվազեցնելու վարակիչ հիվանդությունների տարածման ռիսկը և 10 տոկոսով ավելացնելու հորթատվության մակարդակը: |
| 86. | **«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հետսեփականաշնորհման ժամանակահատվածում ձևավորված գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն ու մասնատված հողաբաժինները սահմանափակում են գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացումը և լուրջ խոչընդոտ են հանդիսանում ոլորտի արդյունավետության բարձրացման համար:<br>Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման, մրցունակության բարձրացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, մասնավորապես, կոոպերատիվների, ընկերությունների, ընկերակցությունների, ասոցիացիաների և կամավորության սկզբունքի վրա հիմնված այլ միավորումների ձևավորման միջոցով: Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության բարձրացման, ընդլայնված վերարտադրության ապահովման, ապրանքայնության մակարդակի բարձրացման, ոլորտի ինտենսիվացման առումով գյուղացիական տնտեսությունների խոշորացումը պահանջված գործընթաց է: Սակայն այդ գործընթացը պահանջում է հստակեցված, համակարգված քաղաքականության իրականացում, որի համար կարող է հիմք ծառայել սույն հայեցակարգը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հանրապետությունում կոոպերատիվների ձևավորումը և գործունեության ընթացքում ծագող իրավական հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (հոդվածներ 117-121): Սակայն օրենսգիրքը չի կարգավորում կոոպերացիայի, մասնավորապես, գյուղատնտեսական կոոպերացիայի հետ կապված մի շարք հարաբերություններ: Հետևաբար, առաջարկվող հայեցակարգի մշակումը և |

| 1 | 2 |
|---|---|
| | ընդունումը հիմք կծառայեն նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման և համալրման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայեցակարգի մշակմամբ կհստակեցվի գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի, մասնավորապես, կոոպերացիայի զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով գյուղատնտեսության առանձնահատկությունները և ներկա խնդիրները: Հայեցակարգի դրույթները հիմք կծառայեն գյուղատնտեսության կոոպերացիայի բնագավառը կարգավորող օրենսդրության կատարելագործման համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես, կոոպերացիայի խթանման պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և դրանց իրականացման մեխանիզմների սահմանումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում կհստակեցվեն գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նախադրյալներ կստեղծվեն այդ բնագավառում օրենսդրության կատարելագործման, գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի զարգացման և արտադրության արդյունավետության բարձրացման համար: Հայեցակարգի ընդունմանը հաջորդող տարում կավելանա գյուղատնտեսական ուղղվածության տարբեր տեսակի կոոպերատիվների թիվը՝ 15-17 տոկոսով: |
| 87. | **«Կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրության բարելավման, Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկի 132.Ե.22-րդ և 141.Ե.24-րդ կետերի ու Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումների կատարման, ինչպես նաև իրացվող կենդանական ծագում ունեցող սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման և արտահանման խթանման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն և N 79-Ն որոշումներով հաստատվել են սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների և ձկնորսության արտադրանքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգերը, որոնք մշակվել են Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի «Սննդամթերքի հիգիենայի մասին» N 852/2004 կանոնակարգի և «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենայի առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 853/2004 կանոնակարգի համապատասխան բաժնի հիման վրա: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դեռևս սահմանված չեն կենդանական ծագում ունեցող սննդամթերքի (բացառությամբ ձկնորսության արտադրանքի) հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որոշման նախագծով նախատեսվում է Եվրամիության պահանջներին համապատասխան՝ արտադրության և շրջանառության բոլոր փուլերում սահմանել կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջներ՝ ըստ կենդանական ծագում ունեցող մթերքի տեսակների: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կսահմանվեն Եվրամիության պահանջներին համապատասխան կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջներ՝ ամբողջացնելու համար սննդի ամբողջ շղթայում սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ ոլորտի օրենսդրական դաշտը հնարավորինս կհամապատասխանեցվի Եվրամիությունում ընդունված պահանջներին՝ ապահովելով կենդանական ծագում ունեցող սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում, սպառողների շահերի պաշտպանություն, ինչպես նաև կոմանդակի ոլորտում գործող տնտեսավարողներին՝ թողարկվող արտադրատեսակների արտահանման խոչընդոտները հաղթահարելու և միջազգային շուկային ինտեգրվելու գործում: |
| 88. | **«Հայաստանի Հանրապետությունում թռչնաբուծության զարգացման հայեցակարգը հաստատելու մասին»**<br>**ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայեցակարգի նպատակն է թռչնաբուծության զարգացման խթանման և թռչունների մթերատվության բարձրացման համար համապատասխան գենոֆոնդի ձևավորման, ինչպես նաև հանրապետությունում թռչունների գլխաքանակի համապատասխան աճի ապահովման ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանումը և դրանց իրականացման համար նախադրյալների ստեղծումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետությունում հետսեփականաշնորհման ժամանակահատվածում որոշակիորեն տուժել է նաև թռչնաբուծության ճյուղը:<br>Այդ տարիներին տեղական արտադրությունն ապահովում էր բնակչության ձվի պահանջարկի 12-15 տոկոսը, թռչնի մսի՝ 2-2,5 տոկոսը: Թռչնամսի և ձվի պակասը լրացվել է ներկրման հաշվին:<br>2000 թվականի սկզբին ճյուղում արդեն հաղթահարվել էր ճգնաժամային իրավիճակը և նկատվել էր կայունացում: Սակայն թռչնամսի և ձվի արտադրության բնագավառներում էական առաջընթաց չէր արձանագրվել:<br>Թռչնաբուծության ոլորտում արտադրության ծավալների աճման դրական միտումներ նկատվել են 2003-2004 թվականներին:<br>Վերագործարկվել և ավելացել են ձվատու ուղղության ֆաբրիկաները: Տեխնիկական վերազինումից հետո մսատու ուղղության ֆաբրիկաները վանդակային պահվածքից աստիճանաբար անցում են կատարել հատակային պահվածքի՝ եվրոպական սարքավորումների կիրառմամբ: Այս առումով շոշափելի հաջողությունների են հասել խոշոր մասնագիտացված տնտեսությունները, իսկ 2004 թվականին առաջին անգամ հանրապետությունից ապրանքային ձու է արտահանվել Վրաստանի Հանրապետություն:<br>Սկսած 2009 թվականից հանրապետությունում գրեթե ամբողջ հզորությամբ գործում են 8 խոշոր և միջին հզորության ձվատու, ինչպես նաև 4 խոշոր ու միջին հզորության մսատու ուղղության թռչնաֆաբրիկաներ, որոնք ապահովել են թռչնամթերքի սպառման տեղական շուկայի պահանջարկը համապատասխանաբար՝ ձվինը՝ 100 տոկոսով և թռչնի մսինը՝ 24 տոկոսով:<br>Ներկայումս հանրապետությունում տարեկան արտադրվում է 630 մլն ձու, 8.7 հազ. տոննա թռչնի միս:<br>Ճյուղի հետագա զարգացումը պահանջում է վարվող քաղաքականության ուղղությունների հստակեցում, որը հնարավոր է առկա վիճակի համակողմանի գնահատման հիման վրա հայեցակարգի նախագծի մշակման և վերջինիս դրույթներն իրականացվող քաղաքականությունում կիրառելու միջոցով: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանրապետությունում թռչնամսի առկա կարողությունները կազմում են ավելի քան 30.0 հազ. տոննա, իսկ փաստացի արտադրությունը՝ 7.4 հազ. տոննա, կամ եղած հնարավորությունները օգտագործվում են 10-41.7 տոկոսով, ոլորտը խթանելու և պետության կողմից համապատասխան աջակցություն ցուցաբերելու արդյունքում հնարավոր է թռչնամսի արտադրության ծավալները 3-4 տարվա ընթացքում ավելացնել 2-3 անգամ, որին և ուղղված է հայեցակարգի ընդունումն ու իրագործումը:<br>Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝<br>- ապահովել թռչնաբուծության բնագավառում առկա ներուժի՝ արտադրական կարողությունների, չօգտագործվող ենթակառուցվածքների, ինչպես նաև աշխատանքային և գիտատեխնիկական ռեսուրսների լիարժեք և արդյունավետ օգտագործումը,<br>- ստեղծել թռչնաբուծական արտադրանքի ծավալների ավելացմանը համապատասխան կերարտադրության բազա,<br>- իրականացնել տոհմասելեկցիոն աշխատանքների համալիր միջոցառումներ,<br>- ապահովել թռչնաբուծությանն առնչվող հարկային, մաքսային ու վարկային համապատասխան քաղաքականության իրականացումը և վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը,<br>- բարձրացնել թռչնամսի տեղական արտադրության մրցունակությունը,<br>- աջակցել թռչնաբուծական տնտեսությունների տեխնիկական վերազինմանը և ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրմանը,<br>- նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը:<br>Նշված խնդիրների լուծումը պահանջում է ոլորտում համակարգված քաղաքականության իրականացում, որի կարևոր նախադրյալներից է համապատասխան հայեցակարգի մշակումը և ընդունումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան հանրապետությունում թռչնաբուծության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունների հստակեցումն է:<br>Թռչնաբուծության ոլորտում արտադրական գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման արդյունքում թռչնաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով կապահովվի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Հայեցակարգի ընդունումը կնպաստի ոլորտի ինտենսիվացմանը և տեխնիկական վերազինման աջակցությանը և գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի իրականացումը հնարավորություն կընձեռի խթանելու արդյունաբերական թռչնաբուծության զարգացումը, արդյունքում՝<br>- զգալիորեն կավելանան թռչնամսի տեղական արտադրության ծավալները, և կնկատվեն դրանց տարեցտարի համաչափորեն աճման կայուն միտումներ,<br>- առավել արդյունավետ կօգտագործվեն հանրապետությունում առկա արտադրական կարողությունները և ձևավորված ենթակառուցվածքները,<br>- կխթանվեն թռչնաբուծության ոլորտում իրականացվող տոհմասելեկցիոն և կերարտադրության բազայի ամրապնդման աշխատանքները,<br>- թռչնաբուծական ֆաբրիկաներում կտեղակայվեն արդյունաբերական տեխնոլոգիաներին համապատասխան ժամանակակից սարքավորումներ և հոսքագծեր,<br>- կստեղծվեն նոր աշխատատեղեր,<br>- թռչնամսի արտադրության ծավալը (սպանդային քաշով) կավելանա 2015 թ.՝ 2.0, իսկ 2020 թ.՝ 4.5 հազ. տոննայով, թռչնամսի ինքնաբավության մակարդակը կբարձրանա համապատասխանաբար՝ 4.5 և 10.2 տոկոսային կետով՝ հասնելով 16.8 և 22.5 տոկոսի՝ ներկայիս (2010 թ.) 12.3 տոկոսի դիմաց: |

<table>
<tr><td>1</td><td>2</td></tr>
<tr><td>89.</td><td>«Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասին»<br>ՀՀ օրենքի նախագծի ընդունման<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>«Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կառավարման համակարգի, նպատակների ու խնդիրների, ինչպես նաև իրավասությունների շրջանակների, վերապահված գործառույթների և լիազորությունների հստակեցման անհրաժեշտությամբ:<br>2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս հստակեցված չեն ծառայության նպատակներն ու խնդիրները, վերապահված իրավասությունների իրականացման գործընթացները, ինչպես նաև ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված մի շարք գործառույթներ:<br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Նախագծի ընդունմամբ կհստակեցվի ծառայության կառավարման համակարգը, նպատակները, խնդիրները և իրավասությունները, դրանցից բխող գործառույթները և լիազորությունները:</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ մշակույթի նախարարություն</td></tr>
<tr><td>90.</td><td>«Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2012-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին»<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Իրավական ակտը սահմանում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության տեղը պետական մշակութային քաղաքականության մեջ, որոշում է գեղարվեստական կրթության համակարգի ռազմավարությունը, զարգացման ուղղությունները, մատնանշում է նպատակներն ու խնդիրները, գեղարվեստական կրթության բովանդակությունը և հիմնական մեթոդաբանական սկզբունքները, ինչպես նաև ՀՀ ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացումը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Վերջին տարիներին մշակութային կրթության մատչելիության և որակի ապահովմամբ, մասնավորապես, երեխաների համար գեղագիտական դաստիարակության մատչելիության ապահովման ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագիրը, հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի ու պարարվեստի դպրոցների սաներին և ուսուցիչներին ուսումնամեթոդական ու գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակով Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում մանուկների և պատանիների համար հատուկ ծրագրեր («Մենք ենք, մեր մարզը», «Նռան հատիկ» մանկապատանեկան թատերական միջմարզային փառատոն, «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթ, «Հեքիաթին հյուր» ծրագիրը գյուղական մանկահասակ բնակչության համար): ՀՀ մարզերում մշակվել և ներդրվել են գեղարվեստական կրթական հաստատությունների նոր ուսումնամեթոդական ուղեցույցները և առարկայական ծրագրերը, հրատարակվել և անվճար դպրոցներին են տրամադրվել ուսումնական գրականությունը, ստեղծվել է ՀՀ-ի և ԼՂՀ-ի շնորհալի երեխաների տեղեկատվական բանկը, վերաբացվել է Դպրոցականի ֆիլհարմոնիան, կազմակերպվել է «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարը:<br>Նշված և այլ ծրագրերի իրականացման հիմք են հանդիսացել մի շարք ռազմավարական, նպատակային ծրագրեր (ՀՀ-ում «Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015</td></tr>
</table>

| 1 | 2 |
|---|---|
| | թվականների ազգային ծրագիր», «Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման ծրագիր» և այլն), սակայն, անհրաժեշտություն է առաջացել ծրագրերի առավել արդյունավետ իրականացման նպատակով մեկ պետական ծրագրի շրջանակներում ամփոփել կատարված աշխատանքները, նախատեսել հետագա զարգացման ուղղությունները, խնդիրները և նպատակները, սահմանել գործողությունների և միջոցառումների իրականացման միասնական ցանկ, ինչպես նաև լուծել հետևյալ խնդիրները՝<br>ա. կրթված և ստեղծագործող, մտավոր զարգացած սերնդի ձևավորում.<br>բ. մշակույթի պահպանման և զարգացման նպատակով գեղագիտորեն զարգացած և շահագրգիռ լսարանի ստեղծում,<br>գ. արվեստի բնագավառի մասնագիտական կրթության ավանդույթների պահպանում և հետագա զարգացում,<br>դ. մանուկների և պատանիների հաղորդակցումն ազգային և համաշխարհային արվեստին,<br>ե. գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության իրականացման միջոցով պատանիների բարձրագույն նպատակների, բարոյական սկզբունքների, գեղագիտական ճաշակի ձևավորում,<br>զ. ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության հաղորդակցում և ուսումնասիրում,<br>է. մշակութային կյանքին պատանիների մասնակցության պայմանների ապահովում,<br>ը. տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտում, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մանկապատանեկան կրթամշակութային և գեղագիտական դաստիարակության բնագավառում պետական միասնական քաղաքականության իրականացմամբ զարգացման հիմքերի ապահովում, գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության համակարգերի ժամանակակից չափանիշներին համապատասխանեցում, նյութատեխնիկական բազայի բարելավում և արդիականացում, մշակույթի բնագավառի կադրային պահանջարկի համալրման պայմանների ստեղծում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մանկապատանեկան կրթամշակութային և գեղագիտական դաստիարակության բնագավառում պետական միասնական քաղաքականության ապահովում, իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման հիմքերի ստեղծում<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ազգային և համամարդկային մշակույթի ճանաչում, ուսումնասիրում, պահպանում, տարածում և զարգացում, արվեստների ուսուցման և գեղագիտական դաստիարակության միջոցով. հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծում. արվեստի և մշակույթի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթների պահպանում ու զարգացում, համապատասխանեցում նոր տնտեսական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չափորոշիչներին: |
| 91. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-Ի N 104-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգում սահմանված չեն դրույթներ, համաձայն որոնց պետք է իրականացվեն ու կանոնակարգվեն պատմության և |

| 1 | 2 |
|---|---|
| | մշակույթի անշարժ հուշարձանների պետական կադաստրի վարումն ու ներդրումը: Օրենսդրական այս բացթողումն արձանագրվել է նաև ՀՀ կառավարության կողմից՝ 2009 թ. փետրվարի 5-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին» N 104-Ն որոշմամբ հաստատված կարգում, որում սահմանված չեն հուշարձանների կադաստրի կազմման և ներդրման վերաբերյալ դրույթները, ինչի պատճառով ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 5-ի N 02/24.2/3748-09 հանձնարականի համաձայն նշված որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հուշարձանների կադաստրի կամ հուշարձանների վերաբերյալ ամբողջական հավաստի և արդիական համակարգի բացակայությունը թույլ չի տալիս նախարարությանը պատշաճ մակարդակով իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կառավարմանն առնչվող գործառույթների և դրանց վերաբերյալ հավաստի տեղեկատվության տրամադրումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչը զգալի նշանակություն կունենա հուշարձանների պահպանության և օգտագործման խնդիրները համակարգված կարգավորելու հարցում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերաբերյալ ամբողջական (ներառյալ հուշարձանների կադաստրային տեղեկատվությունը) համակարգի ստեղծման համար, մասնավորապես, անհրաժեշտ է՝<br>ա. լրամշակել և ամբողջացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրի համակարգի ձևավորումն ու վարումն ապահովող նորմատիվ իրավական ակտերը,<br>բ. ժամանակակից սարքավորումների կիրառմամբ ապահովել հուշարձանների փաստագրման, հաշվառման, պահպանության գործընթացը,<br>գ. ներդնել բնագավառին առնչվող տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ,<br>դ. կազմակերպել մասնագետների պատրաստման համար ուսուցողական և վերապատրաստման դասընթացներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերաբերյալ ամբողջական տեղեկույթի ստեղծում, պետական այլ կադաստրների ու տեղեկատվական համակարգերի հետ հուշարձանների կադաստրի փոխկապակցում, հուշարձանների վերաբերյալ առկա տեղեկատվության մատչելիության ապահովում, պահպանության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված սուբյեկտների իրավունքների և պարտականությունների հստակեցում, սահմանազատում, փոխհարաբերությունների կանոնակարգում, մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն իրավական ակտի ընդունումը թույլ կտա կանոնակարգել հուշարձանների կադաստրի կազմման, ներդրման և վարման հետ կապված խնդիրները, ինչը նախադրյալներ կստեղծի համակարգի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար: |
| | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| 92. | **«Հայաստանի Հանրապետությունում անօթևան միայնակ տարեցների և բնակարանի կարիք ունեցող սոցիալական այլ խմբերին պատկանող անձանց սոցիալական բնակարան տրամադրելու համար քաղաքացիների հաշվառման և ընդունելության կարգը, ինչպես նաև ընտրության չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի N 25 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մշակած՝ |

| 1 | 2 |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետությունում անօթևան միայնակ տարեցների և բնակարանի կարիք ունեցող սոցիալական այլ խմբերին պատկանող անձանց համար սոցիալական բնակարանների համալիրի ստեղծման հայեցակարգին, որի նպատակն անօթևան և բնակարանի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված տարբեր սոցիալական խմբերին պատկանող ընտանիքների համար սոցիալական բնակարանների, տների (համալիրների) կազմակերպումն է:<br>Այս գործընթացի շրջանակներում արդեն շահագործման են հանձնվել Մարալիկի բնակարանային համալիրի երկու շենքերը՝ 35 բնակարանով, որոնք առաջիկայում կբնակեցվեն, հետևաբար, քաղաքացիների հաշվառման և սոցիալական տուն ընդունելության կարգն ու ընդունելության չափորոշիչները՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված լինելն իրավական և կազմակերպչական տեսակետից ավելի արդյունավետ կդարձնի այդ գործընթացը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մինչև այժմ Հայաստանում իրականացվել է «Սոցիալական բնակարան՝ աջակից պայմաններով» երկու ծրագիր՝ Գորիսում և Երևանում: Այդ սոցիալական տները 2006-2008 թթ. կառուցվել են Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի ֆինանսավորմամբ:<br>Անօթևան միայնակ տարեցների և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող սոցիալական այլ խմբերի քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված կարևոր քայլերից է ՀՀ պետական բյուջեի միջոցների սահմաններում սոցիալական բնակարանային համալիրի ստեղծումը Մարալիկում: Գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված է համապատասխան հանձնաժողով, որի կողմից որոշ աշխատանքներ արդեն կատարվել են՝ կապված անհրաժեշտ կանոնակարգերի մշակման հետ, որոնք, սակայն հաստատված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով: ՀՀ կառավարության կողմից կանոնակարգերի և չափորոշիչների հաստատումն էլ ավելի կհստակեցնի և իրավական տեսակետից արդյունավետ կդարձնի սոցիալական տների կազմակերպման հետագա աշխատանքները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաստատել քաղաքացիներին սոցիալական բնակարան (տուն) տրամադրելու կարգը և ընտրության չափորոշիչները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Քաղաքացիներին սոցիալական բնակարաններ տրամադրելու հետ կապված հարաբերությունների կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալական տուն քաղաքացիների ընդունելության կազմակերպման կանոնակարգում՝ հաշվառման և ընդունելության կարգի, ինչպես նաև քաղաքացիների ու սատարող ընտանիքների ընտրության չափորոշիչների հաստատում, ինչն արդյունավետ կդարձնի այդ գործընթացը: |
| 93. | **«Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ձևավորելու և վարելու, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտը ներկայացվում է ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 2.4-րդ կետի և ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի՝ պայմանավորված կենսաթոշակային բարեփոխումների իրականացմամբ:<br>Իրավական ակտի նպատակը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ձևավորելու և վարելու, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորելն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը: Համաձայն նշված օրենքի՝ նախատեսվում է ներդնել պետական կենսաթոշակային |

| 1 | 2 |
|---|---|
| | համակարգի տվյալների շտեմարան՝ անձի կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացումն ապահովելու նպատակով: Շտեմարանը ձևավորվում է հարկային մարմնից, պետական կառավարման և այլ մարմիններից ստացված և անձանց՝ կենսաթոշակ նշանակելու համար կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացրած տվյալներից: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Շտեմարանը ձևավորելու և վարելու, հարկային մարմնից և պետական կառավարման այլ մարմիններից տվյալներն ստանալու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ձևավորելու և վարելու, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կարգը: **2. Կարգավորման առարկան** Իրավական ակտի նախագծով կարգավորվելու են շտեմարան ձևավորելու և վարելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվելու են շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրող պետական մարմինները, տրամադրվող տվյալները և տվյալները տրամադրելու ընթացակարգերը: Նախատեսվում է պետական մարմիններից տեղեկատվությունն ստանալ և կիրառել ինքնաշխատ եղանակով: **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** Իրավական ակտի ընդունումը կապահովի շտեմարան ձևավորելը և վարելը: Շտեմարանի ներդրումը էապես կնվազեցնի կենսաթոշակների նշանակման և վճարման կապակցությամբ առկա կոռուպցիոն ռիսկերը, պատահական և միտումնավոր սխալների հնարավորությունը: |
| 94. | **«Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման** **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** Իրավական ակտը ներկայացվում է ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 1.5-րդ կետի և ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 5 հավելվածի 1-ին կետի: Իրավական ակտի նպատակը եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների կարգավորումն է: **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** ՀՀ Ազգային ժողովի 2010 թվականի դեկտեմբերի 22-ին կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների շրջանակներում ընդունել է նաև «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ խնդրո առարկա միջոցառման ժամկետը, ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 5 հավելվածի 1-ին կետի համաձայն, սահմանվել է 2012 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ, սակայն ակնհայտ է, որ նշված կարգերի նախագծերում վերջնական լրամշակումները պետք է իրականացվեն համակարգի փորձնական կիրառման շրջանակներում: **2. Կարգավորման առարկան** «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանելու է եկամտային հարկի և պարտադիր |

| 1 | 2 |
|---|---|
| | կուտակային վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայի ձևավորման ընթացակարգերը, մասնավորապես՝<br>• անձնավորված հաշվետվություն ձևավորելու և լիազոր մարմին ներկայացնելու կարգը,<br>• տեղեկատվական բազա ներառված տվյալներում փոփոխություններ կատարելու կարգը,<br>• տեղեկատվական բազայից տվյալներ տրամադրելու կարգը,<br>• հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու՝ հարկային մարմնի կողմից ծառայությունների մատուցման կարգը,<br>• տվյալների սուբյեկտի դիմումի հիման վրա անհատական հաշվի քաղվածքը նրան տրամադրելու կարգը,<br>• աշխատողի՝ իր բնակության վայրի մասին տվյալները գործատուներին (հարկային գործակալներին) ներկայացնելու կարգը (առաջին անգամ ներկայացրած անձնավորված հաշվետվություններում ներառելու նպատակով):<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունումը կապահովի եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրումը, ի կատարումն «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ կանոնակարգելով համակարգի ներդրման և վարման կապակցությամբ առաջացող հարաբերությունները: |
| 95. | **«Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման իրավական նորմատիվ ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելու ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրությամբ հավանության է արժանացել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը, 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի N 50 արձանագրային որոշմամբ՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական կառուցվածքագործառութային մոդելի հայեցակարգային մոտեցումները, իսկ 2011 թվականի մարտի 24-ի նիստի N 11 արձանագրային որոշմամբ՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, որում ներառված միջոցառումների ժամկետները նախատեսված են մինչև 2013 թվականը ներառյալ: Սույն միջոցառմամբ սահմանվելու են համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման հստակ ժամկետներ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական կառուցվածքագործառութային մոդելի հայեցակարգային մոտեցումները, իրականացվել են նախապատրաստական մի շարք աշխատանքներ, համաձայն ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի, սակայն ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերը դեռևս մշակված չեն:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական նորմատիվ ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելու ծրագիր-ժամանակացույցը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման իրավական նորմատիվ ակտերի ցանկը և դրանց նախագծերը մշակելու հստակ ժամկետների սահմանում: |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի գործարկումն ապահովող բիզնես գործընթացների նկարագրերի առկայություն: |
| 96. | **«Անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազա և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտը ներկայացվում է ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 2.4-րդ կետի և ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի:<br>Իրավական ակտի նպատակը անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազա և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը: Համաձայն օրենքի՝ նախատեսվում է ներդնել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան, որը ներառելու է նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա՝ աշխատանքային ստաժին վերաբերող, ինչպես նաև կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազայում առկա՝ կենսաթոշակառուներին վերաբերող տվյալները:<br>Միաժամանակ նախատեսվում է, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա՝ աշխատանքային ստաժին վերաբերող տվյալները, անձանց կենսաթոշակ նշանակելիս, հիմք են հանդիսանալու մինչև 2013 թվականը (եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրումը) ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաշվարկելու համար:<br>Ըստ այդմ, անհրաժեշտ է ամբողջացնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա տեղեկատվությունը (ներառյալ 2012 թվականի տվյալները):<br>Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ խնդրո առարկա միջոցառման ժամկետը, ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի համաձայն, սահմանվել է 2012 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ, սակայն նշված ամբողջացումը պետք է իրականացվի ձևավորվող՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի շրջանակներում կիրառվող ընթացակարգերի հաշվառմամբ:<br>Հաշվի առնելով պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի ներդրման ժամկետները՝ առաջարկվում է միջոցառման կատարման ժամկետը սահմանել 2012 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որը կսահմանի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա տվյալներն ամբողջացնելու (այդ թվում՝ 2012 թվականի տվյալները) և այդ տվյալները, ինչպես նաև կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի շտեմարան ներառելու կարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի նախագիծը սահմանելու է անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա տվյալների ամբողջացման միջոցառումները (այդ թվում՝ անհրաժեշտ համադրումները, առկա տվյալները տվյալների սուբյեկտին հասանելի դարձ- |

| 1 | 2 |
|---|---|
| | ները), նշված միջոցառումներն իրականացնելու ընթացակարգերն ու դրանց կատարման համար պատասխանատու գերատեսչությունները:<br>Միաժամանակ, հաշվի առնելով պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում անձի՝ կենսաթոշակային ապահովությանը վերաբերող տեղեկատվության հաշվառման ընթացակարգերը, առաջարկություններ կներկայացվեն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ձևավորված կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալներն անհրաժեշտ բացվածքով մուտքագրելն ապահովելու վերաբերյալ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունումը կապահովի անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա տվյալներն ամբողջացնելու (այդ թվում՝ 2012 թվականի տվյալները) և այդ տվյալները, ինչպես նաև կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելը: Արդյունքում, հնարավոր կլինի էապես բարելավել ոլորտի գործունեության արդյունավետությունը, շահառուներին մատուցվող ծառայությունների որակը: |
| **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** | |
| 97. | **«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի ընդունման և իրականացման նպատակն է նպաստել Հայաստանում տեղեկատվական հասարակության և զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի կայացմանը, Հայաստանը որպես ՏՀՏ ուղղվածություն ու լայն տարածում ունեցող էլեկտրոնային հասարակությամբ երկիր աշխարհի առաջատար ՏՀՏ երկրների շարքը դասվելուն, ոլորտի արդյունավետության աճի պահպանմանը և զարգացմանը, որակյալ աշխատուժի աճի պահպանմանն ու առավել զարգացմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներն են՝<br>• ՏՏ-ի ոլորտում գործունեության ծավալման և ՏՏ-ի գործիքների համատարած կիրառման համար բարենպաստ գործարար միջավայրի և համաշխարհային չափանիշներին համապատասխանող անհրաժեշտ ՏՀՏ-ի ենթակառուցվածքների թերիություն,<br>• էլեկտրոնային գրագիտության համեմատաբար ցածր մակարդակ,<br>• Հայաստանի ՏՏ-ի արտադրանքի և ծառայությունների արտահանման շուկաների սահմանափակություն,<br>• Հայաստանում համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ-ի կազմակերպությունների սահմանափակ ներկայություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>• Էլեկտրոնային գրագիտության բարձրացմանն ու ոլորտի զարգացմանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում,<br>• մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծրագրերի խթանում, մասնավորապես, «Համակարգիչ՝ բոլորի համար» ազգային ծրագրի իրականացում,<br>• ՏՏ-ի լուծումների և արտադրանքի նկատմամբ տեղական պահանջարկի ձևավորման խթանում,<br>• ոլորտային միջոցառումների իրականացում՝ ուղղված հասարակության իրազեկմանը, հայկական ՏՏ-ի արտադրանքի պարբերական ներկայացմանն ու առաջմղմանը, ոլորտի ապագա զարգացումների և հաջորդ սերնդի անելիքների քննարկմանը,<br>• ՏՏ-ի ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում,<br>• Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ-ի տարածաշրջանային կենտրոն, այդ թվում՝ նպաստելով Հայաստանում մի շարք միջազգային նշանակության միջոցառումների պարբերական անցկացմանը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարությունը, կարևորելով ՏՏ-ի արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրել է Հայաստանում ՏՏ-ի ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծում: |
| 98. | **«Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է հետևյալ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ՝<br>• ազգային ինովացիոն համակարգի ձևավորում և համապատասխան սկզբունքների մշակում,<br>• ինովացիոն հիմնադրամների և վենչուրային կապիտալի գործունեության ձևավորում,<br>• մարզային բնակչության մասնագիտական և ձեռնարկատիրական ունակությունների ձևավորում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներն են՝<br>• ՀՀ Շիրակի մարզի և հանրապետության գիտաարտադրական ներուժի զարգացում՝ արտադրական և գիտական սուբյեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների ինտեգրման և ակտիվացման միջոցով,<br>• ներդրումային միջոցների ներգրավում (այդ թվում՝ օտարերկրյա)՝ առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերմանն աջակցելու նպատակով,<br>• հացեական աջակցության տրամադրում գիտատար արտադրանք նախաձեռնողներին և արտադրողներին,<br>• գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում,<br>• գիտակրթական, գործարար և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության զարգացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում են Հայաստանի մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացումն ու ներդրումային ակտիվության խրախուսումը, մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճը, համայնքային ենթակառուցվածքների գնահատումը, դրանց կարգաբերումն ու զարգացումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է Գյումրիում տեխնոպարկի հիմնումը: |
| 99. | **«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» 2012 թվականի ծրագիրն ուղղված է զբոսաշրջության կայուն զարգացման ապահովմանը, ինչը նպաստում է կայուն տնտեսական |

| 1 | 2 |
| --- | --- |
| | զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը և այլն: Միջազգային համագործակցությունն էապես նպաստում է նաև ոլորտի մասնագետների վերապատրաստման գործընթացին, իսկ մարդկային ռեսուրսների զարգացումը թե «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, և թե զբոսաշրջության զարգացման հայեցակարգով սահմանված է որպես պետական քաղաքականության հիմնական խնդիր:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով հանրապետության առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած զբոսաշրջության զարգացման հայեցակարգով: Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումն ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված զբոսաշրջային այցելությունների թվի աճով, զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ, աշխատատեղերի ստեղծմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի զբոսաշրջային արդյունքը համաշխարհային շուկայում ներկայացնելու հիմնական ձևերից է միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցությունը: 2012 թվականին նախատեսվում է ապահովել Հայաստանի զբոսաշրջային արդյունաբերության ներկայացուցիչների մասնակցությունը 3 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների՝ ավելացնելով պետական մասնակցությունը պետություն-մասնավոր հատված համագործակցության մեջ: Նախատեսվում է աջակցել նաև Հայաստանում կազմակերպվող «Խոսող քարերի երկիր» 12-րդ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի կազմակերպմանը:<br>2012 թվականի ընթացքում կապահովվեն գովազդատեղեկատվական նյութերի նոր որակ և տարածման աշխարհագրության ընդլայնում: Գովազդատեղեկատվական նյութերի առկայությունը հնարավորություն է տալիս Հայաստանի զբոսաշրջային արդյունքն ազգային մակարդակով ներկայացնելու և գովազդելու միջազգային ցուցահանդեսներում, տոնավաճառներում, համաժողովներում և ոլորտի մի շարք այլ միջոցառումների ժամանակ:<br>2012 թվականին նախատեսվում է ճանաչողական այցերի կազմակերպում նպատակային շուկա համարվող մի շարք երկրներից: Այցերի հիմնական նպատակը հայկական մշակույթի, սովորույթների, պատմական ժառանգության և զբոսաշրջիկներին հետաքրքրող այն ամենը ներկայացնելն է, որը հետագայում օտարերկրյա լրագրողը ներկայացնում է իր երկրում հրատարակվող թերթերում և լուսաբանում ամսագրերում:<br>Զբոսաշրջության տարածքային և ներքին զբոսաշրջության զարգացման, ինչպես նաև նոր զբոսաշրջային գրավչությունների բացահայտման, ձևավորման և պատմամշակութային հիմքի վրա զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացման, պետություն-մասնավոր հատված համագործակցության զարգացման նպատակով 2012 թվականին նախատեսվում է պետական մասնակցության ապահովում մի շարք կարևորագույն ավանդական տոնակատարությունների կազմակերպմանը և անցկացմանը:<br>«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետով զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը սահմանված է որպես պետական քաղաքականության հիմնական սկզբունք, իսկ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով միջազգային կապերի զարգացմանը և միջազգային ինտեգրմանը նպաստող համակարգի ստեղծումը՝ որպես պետական քաղաքականության հիմնական նպատակ: 2012 թվականին կիրականացվեն միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Զբոսաշրջության բնագավառի մարքեթինգային քաղաքականության իրականացման, Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորման, միջազգային շուկայում պատշաճ ներկայացման և Հայաստանի միջազգային ինտեգրմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը կնպաստի 2012 թվականին 800 000 զբոսաշրջային այցելությունների ապահովման նպատակի իրականացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը, ինչպես նաև դրա շրջանակներում ոլորտի մասնագետների վերապատրաստման գործընթացին: |
| 100. | **«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կարևորելով ՓՄՁ-ին դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ: ՓՄՁ-ին պետական աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես, նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանն ու անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է: Կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում ՓՄՁ-ի զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:<br>«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՓՄՁ-ին ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող հետևողական տնտեսական քաղաքականության արդյունքում ակնկալվում է ՓՄՁ-ն բնութագրող հիմնական ցուցանիշների հետևյալ պատկերը՝<br>• կնշանավորվի ՓՄՁ-ի դերը երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում: Ըստ նախնական գնահատականների ՓՄՁ-ի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կկազմի ավելի քան 43.0 տոկոս,<br>• ՓՄՁ-ի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում, ըստ նախնական գնահատականների, կկազմի ավելի քան 18.0 տոկոս, իսկ ներմուծման ծավալում՝ շուրջ 27.0 տոկոս,<br>• Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման ինդեքսը, որպես ընդհանրական (ագրեգացված) տնտեսական ցուցանիշ, որը հաշվարկվել է ՄԱԿ-ի կողմից սահմանված մեթոդաբանությամբ, ըստ նախնական գնահատականների, 2002 թվականի համեմատությամբ կավելանա շուրջ 8.0 անգամ:<br>ՓՄՁ-ի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի ուսումնասիրությունների և վարչական մոնիթորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ-ի սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես՝<br>• ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես՝ սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիություն՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարվանից ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) |

| 1 | 2 |
|---|---|
| | ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար.<br>• սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակաս.<br>• գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններ.<br>• ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղման հետ կապված խնդիրներ, որոնք հիմնականում առնչվում են թողարկվող արտադրանքի որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, ինչին էականորեն խոչընդոտում է ժամանակակից լաբորատորիաների բացակայությունը, որոնց փորձաքննության արդյունքները կընդունվեն արտահանող երկրներում.<br>• միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՓՄՁ-ի զարգացման համատեքստում առկա խնդիրների հաղթահարման (լուծման) նպատակով հարկ է, որ շարունակվի ՀՀ կառավարության կողմից հետևողական տնտեսական քաղաքականության իրականացումը՝ միտված երկրում գործարար միջավայրի բարելավմանը, ինչպես նաև ՓՄՁ-ին պետական աջակցության ծրագրերի իրականացման համար տրամադրվող ֆինանսական միջոցների ծավալների ավելացմանը:<br>ՓՄՁ-ի պետական աջակցության 2013 թվականի ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը (շուրջ 90 տոկոսը) կնպատակաուղղվի ՀՀ մարզերում՝ առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում սկսնակ ու գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և, ընդհանուր առմամբ, ՀՀ մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կարգավորման առարկան՝ այն է. Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2013 թվականի ծրագրի ռազմավարական նպատակներն են՝<br>• ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը, մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտների «ազրեսիվ» նորարարական նախաձեռնությունների խթանումը.<br>• ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, մասնավորապես, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերումը, ինչպես նաև ՓՄՁ-ին աջակցության գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրումը.<br>• գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես, կանանց, երիտասարդների, ինչպես նաև աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, հատկապես սահմանափակ կարողություններով անձանց համար՝ նախապատվությունը տալով ՀՀ մարզերում, հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին.<br>• աջակցության նոր մեխանիզմների (նոր մոտեցումների) կիրառմամբ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության գործող համակարգից աջակցության նոր համակարգին անցումը, ինչը կնպաստի ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցության արդյունավետության բարձրացմանը:<br>Ռազմավարական նպատակներով պայմանավորված Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2013 թվականի ծրագրի գերակայությունն է՝ նորարարություններ և ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնող ու կիրառող («ազրեսիվ» նորարարական նախաձեռնություններ ունեցող), ինչպես նաև հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերումը՝ նպաստելով նոր աշխատա- |

| 1 | 2 |
|---|---|
| | տեղերի ստեղծման և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով երկրում գործազրկության մակարդակի կրճատմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման կիրարկման արդյունքում ակնկալվում է երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացում, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում, նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) տեսականու ընդլայնում և դրանց բազմազանեցում, նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման քանակական ու որակական աճ և դրանց արտահանման ծավալների ավելացում, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ցուցաբերում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվի ավելացում և նրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծում, այդ թվում՝ ՀՀ մարզերում, գործարար ակտիվության բարձրացում ՀՀ մարզերում և այդ նպատակով ցուցաբերվող պետական աջակցության շուրջ 90 տոկոսի ուղղորդում այդտեղ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին: |
| 101. | **«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական դաշտի կատարելագործման կարևորագույն նախապայմաններից է կարգավորման ազդեցության գնահատման արդյունավետ համակարգի առկայությունը: Այս նպատակով կարևորվում է իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման գործընթացում միջազգային լավագույն փորձին համապատասխան անհրաժեշտ և պարտադիր քայլերի ամրագրում, որի արդյունքում կնվազեն իրավական ակտերի կիրարկումից առաջացող ծախսերը և ներդրողների համար ռիսկերը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում կարգավորման ազդեցության գնահատման իրավական հիմքը դրվել է 2008 թվականին «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելով՝ իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման աշխատանքների իրականացման պարտադիր պահանջի սահմանմամբ: Գործող համակարգով ՀՀ-ում կարգավորման ազդեցության գնահատում իրականացվում է 7 ոլորտներում՝ 6 նախարարությունների կողմից, ընդ որում, որպես գործընթացի հիմնարար քայլ իրավական ակտերի նախագիծը մշակողը չի իրականացնում կարգավորման ենթակա խնդրի լուծման համար այլընտրանքային լուծումների բացահայտում և դրանց գնահատում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ներկայիս գործող համակարգի բարեփոխումներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման ազդեցության գնահատման նոր համակարգով առաջարկվում է որպես հիմնարար և առաջնային քայլ ամրագրել խնդրի լուծման այլընտրանքների բացահայտումը, որն էլ հիմք կհանդիսանա խնդրի լուծման հիմնավոր և լավագույն տարբերակի ընտրության համար: Միաժամանակ առաջարկվում է ազդեցության գնահատումն իրականացնել նախագծի հեղինակի կողմից:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համակարգի կատարելագործման արդյունքում կներդրվի իրավական ակտերի նախագծման, քննարկման և ընդունման սկզբունքային նոր ձևաչափ, ինչը կբացառի անհարկի և չհիմնավորված կարգավորումների ներդրումը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| 102. | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտությամբ: Հարկ է նշել, որ տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական դաշտը լիարժեք չէ, որի հետևանքով էլ առկա է անարդյունավետ ինստիտուցիոնալ համակարգ: Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման և պետական հաշվառման բնագավառում առաջացող հարաբերությունների լիարժեք և համապարփակ իրավական կարգավորումն առաջնահերթ հիմնախնդիր է: Հետևաբար՝ նշված օրենսդրական փոփոխություններն ուղղված են գործող օրենսդրությունում համապատասխան փոփոխություններ կատարելուն՝ նպատակ ունենալով ներդնել համապատասխան ընթացակարգեր և ապահովել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործառույթների անխափան իրագործումը, այդ թվում՝ նաև «մեկ պատուհան» սկզբունքի հետ զուգահեռ էլեկտրոնային ռեգիստրի համակարգի վերջնական կիրառումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում կատարվել են փոփոխություններ, որոնց նպատակն է եղել իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման համար «մեկ պատուհան» սկզբունքի ներդրումը: Մինչև այժմ գործել են թղթային ռեգիստրներ (որոշակի տվյալներ նաև թվայնացվել են), հետո նշված ռեգիստրները (գրանցամատյանները) կոնսոլիդացվել են վերջնական ռեգիստրում (գրանցամատյանում): Համապատասխան ծրագրային ապահովման և բարեփոխումների իրականացման արդյունքում փաստացի սկսվել է էլեկտրոնային գրանցման կիրարկումը: Էլեկտրոնային գրանցման ներդրման որոշ առանձնահատկություններ նախատեսված չեն եղել օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելիս: Ռեգիստրում գրառման ենթակա տվյալները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, որոնք միանշանակ չէ, որ ներառում են բոլոր անհրաժեշտ տվյալները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքն ընդունել նոր խմբագրությամբ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված օրենքի նախագծի ընդունումը հնարավորություն կտա, կանոնակարգելով իրավական դաշտը՝ հստակեցնել պետական գրանցման և պետական հաշվառման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանել պետական գրանցման և պետական հաշվառման վարչական վարույթների առանձնահատկությունները, պետական գրանցումը և պետական հաշվառումն իրականացնող մարմնի իրավասությունը, սահմանել պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկատվության ծավալը և տեղեկատվության տրամադրման պայմաններն ու կարգը, որոնց արդյունքում էլ համապատասխան պայմաններ կստեղծվեն այդ ոլորտում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և չեզոքացնելու, բնակչությանը հարմարավետ և արդյունավետ հնարավորություններով ապահովելու համար: |

| 1 | 2 |
|---|---|
| 103. | **«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը պայմանավորված է դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս նոտարական կարգով վավերացված գործարքներից բխող վեճերը հիմնականում լուծվում են դատական կարգով, ինչն էլ իր հերթին մի կողմից ծանրաբեռնում է դատական համակարգը, մյուս կողմից՝ բավականին մեծացնում է վեճերի լուծման ժամկետը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված նախագծերի փաթեթով առաջարկվում է նոտարին հնարավորություն տալ իր կողմից վավերացված գործարքների կապակցությամբ կատարողական մակագրությունների կատարումը, որի ուժով պահանջատերը կարող է դիմել դատարան՝ կատարողական թերթ վերցնելու համար:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կնվազեցվի դատարանների ծանրաբեռնվածությունը: Կկրճատվեն նոտարական կարգով վավերացված գործարքներից բխող վեճերի լուծման ժամկետները: |
| 104. | **«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Սահմանել բոլոր իրավական ակտերը պետական փորձաքննության ներկայացնելու պահանջ, ինչի արդյունքում էապես կբարելավվի իրավական ակտերի որակը, կապահովվի բոլոր նորմատիվ իրավական ակտերի հրապարակման գործընթացը, կսահմանվեն հրատապ համարվող իրավական ակետերի տեսակներն ու դրանց ներկայացվող պահանջները և հրապարակման կարգը, կսահմանվեն օրենսդրական տեխնիկային վերաբերող նոր պահանջներ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝<br>«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է դեռևս 2002 թվականի ապրիլի 3-ին և նշված օրենքի կիրառման ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ ու տեխնիկական թերություններ, մասնավորապես՝<br>«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «օրենքով նախատեսված դեպքերում կարգով նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կամ նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանեցնելու, ինչպես նաև այդ ակտերի մշակման ժամանակ սույն օրենքի պահանջների և օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանում ապահովելու նպատակով պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում: |

| 1 | 2 |
|---|---|
| | 2. Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեն բազմաթիվ պետական մարմիններ, սակայն ոչ բոլոր մարմինների իրավական ակտերն են հրապարակվում առանձին (անվանական) Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում: <br> 3. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն բոլոր նորմատիվ իրավական ակտերը պետք է հրապարակվեն, իսկ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը պետք է պետական գրանցում ստանան ու հրապարակվեն, որից հետո նոր ուժի մեջ մտնեն և ստանան իրավաբանական ուժ: <br> Սակայն կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ իրավական ակտը պետք է ուժի մեջ մտնի հրատապ: Այս առումով նախագծով սահմանվել է այն իրավական ակտերի ցանկը, որոնք կարող են ճանաչվել հրատապ, և դրանց ուժի մեջ մտնելու կարգը: <br> **2. Կարգավորման առարկան** <br> 1. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, գտնում ենք, որ ցանկացած նորմատիվ իրավական ակտը պետք է պարտադիր պետական փորձաքննություն անցնի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում, իսկ ցանկացած գերատեսչական նորմատիվ իրավական ակտ պետք է փորձաքննություն անցնի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում և ստանա պետական գրանցում. <br> Այդ առումով նախագծով նախատեսվում են համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական փորձաքննություն պետք է անցնեն և գրանցվեն նաև դատական մարմինների նորմատիվ իրավական ակտերը: <br> Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական իշխանությունը պետական իշխանության առանձին ճյուղ է, վճռաբեկ դատարանի նախագահի որոշումներն ընդգրկվել են ՀՀ իրավական ակտերի համակարգում և նախատեսվել են որպես գերատեսչական նորմատիվ ակտեր: <br> 2. Նախագծով նախատեսվում է սահմանել, որ՝ <br> ա. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և դատական ակտերը՝ դրանք ստանալու օրվան հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում հրապարակվում են Հայաստանի Հանրապետության դատական ակտերի պաշտոնական տեղեկագրում, <br> բ. դատական մարմինների ակտերը՝ դրանց պետական գրանցման օրվան հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում պաշտոնապես հրապարակվում են Հայաստանի Հանրապետության դատական ակտերի պաշտոնական տեղեկագրում: <br> 3. Նախագծով առաջարկվում է սահմանել, որ «բանկային տոկոսի հաշվարկային դրույքի, պարտադիր պահուստավորման նորմատիվի կամ հատուկ տնտեսական նորմատիվների սահմանմանն ուղղված, ընտրությունների կամ հանրաքվեների հարցերի մասին, զանգվածային հիվանդությունների, թունավորումների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների կամ դրանց առաջացման վտանգի դեպքում կարանտին կամ այլ կանխարգելող միջոցառումներ իրականացնելու կամ դրանք դադարեցնելու մասին, արտակարգ իրավիճակների կամ դրանց առաջացման անմիջական վտանգի դեպքում արտակարգ իրավիճակների կանխմանը, կանխարգելմանն ու դրանց հետևանքների վերացմանն ուղղված և հրատապ ճանաչված գերատեսչական նորմատիվ իրավական ակտերն ընդունող մարմիններն իրավունք ունեն այդ իրավական ակտերը հրապարակելու առանց պետական պարտադիր իրավական փորձաքննության ու պետական գրանցման՝ նախատեսելով դրանց ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ: Ընդ որում, սույն մասում նշված մարմինները պարտավոր են այդ իրավական ակտերով սահմանել դրանց կիրարկումն ապահովող այնպիսի ժամկետներ, որոնք հնարավորություն կտան դրանց պահանջների կատարողներին իրենց գործունեությունը համապատասխանեցնելու սահմանված նորմերի պահանջներին:»: <br> Սահմանել նաև, որ «հրատապ ճանաչված նորմատիվ իրավական ակտ ընդունած մարմինները պարտավոր են ոչ ուշ, քան նորմատիվ իրավական ակտն ընդունելուն հաջորդող երրորդ օրը տվյալ նորմատիվ իրավական ակտն ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն սույն օրենքով սահմանված կարգով իրավական ակտի պետական պարտադիր |

| 1 | 2 |
|---|---|
| | փորձաքննության և գրանցման՝ կից նշելով տվյալ իրավական ակտի հրապարակման ձևը (ձևերը), հրապարակման պահը և ուժի մեջ մտնելու ժամկետը:»: <br> 4. Նախագծով նախատեսվում է կատարել նաև օրենսդրական տեխնիկային վերաբերող մի շարք փոփոխություններ: <br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Սահմանել բոլոր իրավական ակտերը պետական փորձաքննության ներկայացնելու պահանջ, ինչի արդյունքում էապես կբարելավվի իրավական ակտերի որակը, կապահովվի բոլոր նորմատիվ իրավական ակտերի հրապարակման գործընթացը, կսահմանվեն հրատապ համարվող իրավական ակետերի տեսակներն ու դրանց ներկայացվող պահանջները և հրապարակման կարգը, կսահմանվեն օրենսդրական տեխնիկային վերաբերող նոր պահանջներ: |
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | |
| 105. | **«Կրթության մասին» ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման** <br><br> **1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)** <br> «Կրթության մասին» ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ռազմակրթական համակարգի բարեփոխումների շրջանակներում ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի հստակեցման, ռազմական կրթական չափորոշիչների սահմանման ու ռազմական կրթության որակի բարելավման նկատառումներով: <br> **1.1. Ոլորտի ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> «Կրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում նախատեսվում է, որ ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները հիմնադրվում են ՀՀ կառավարության կողմից: Միաժամանակ օրենքն այլ կարգավորումներ չի տալիս ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի, գործունեության առանձնահատկությունների, կրթական չափորոշիչների հստակեցման ուղղությամբ, ինչի բացակայությունը հնարավորություն չի տալիս լիարժեք ապահովել նշված հաստատությունների բնականոն գործունեությունը, ինչպես նաև ռազմական կրթության պատշաճ որակը: <br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Առաջարկվում է ներկայացված օրենքներում դրույթներ նախատեսել ռազմաուսումնական հաստատությունների կողմից իրականացվող կրթական գործունեության, նրանց իրավական կարգավիճակի, ռազմական կրթական չափորոշիչների ներդրման վերաբերյալ: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Սահմանել ռազմաուսումնական հաստատությունների իրավական կարգավիճակը պետական պաշտպանական հիմնարկի կամ ՊՈԱԿ-ի տեսքով, նրանց կողմից իրականացվող կրթական գործունեության ձևերն ու առանձնահատկությունները, ռազմական կրթական չափորոշիչները: <br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Հստակեցնել ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակը, բարելավել ռազմական կրթության որակը, ապահովել ռազմական կրթության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների օպտիմալացումը: |

| 1 | 2 |
|---|---|
| 106. | **«Հայաստանի Հանրապետության ռազմական-արդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին»**<br>**ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի ընդունման**<br><br>**1. 1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության ռազմական-արդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետի պահանջների կատարմամբ, ինչպես նաև նպատակ ունի ստեղծելու ռազմական արդյունաբերության ոլորտում իրավական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև գիտական ու տեխնիկական կադրային քաղաքականության հիմքեր՝ ի նպաստ երկրի ռազմական անվտանգության: Ծրագրի հաստատումը կնպաստի Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգային բարեփոխումների իրականացմանը:<br><br>**1.1. Ոլորտի ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանն իր անկախ պետականության կայացման տարիներին տնտեսության վերակազմավորումն իրականացրել է առանց ռազմաարդյունաբերության պետական համակարգված քաղաքականության և հստակ զարգացման ծրագրերի: Ռազմական պատվերներ կատարող ընկերությունները հիմնականում կախյալ են եղել ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներից և մինչև այժմ էլ գոյատևում են դրանց շնորհիվ: Սպառազինության ու ռազմական տեխնիկայի նոր նմուշների մշակման և ձեռքբերման ժամանակ չի իրականացվել արտադրատեսակի կյանքի ցիկլի գնահաշվարկ, հաշվարկվել են միայն սկզբնական ձեռքբերման ծախսերը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախորոշել ռազմական արդյունաբերության խնդիրների լուծման ուղղությունները, ՀՀ ռազմաարդյունաբերական հայեցակարգի դրույթներից բխող ռազմաարդյունաբերության զարգացման միջոցառումները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Սահմանել ռազմական արդյունաբերության խնդիրների լուծման ուղղությունները, ՀՀ ռազմաարդյունաբերական հայեցակարգի դրույթներից բխող ոլորտի զարգացման հիմնական միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը և կատարողները, ոլորտում գործունեություն իրականացնող կամ հեռանկարային ընկերությունների տեխնոլոգիական զարգացման ու տեխնիկական վերազինման մեխանիզմները:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետության տնտեսական և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում բավարար թվով, ժամանակակից անհրաժեշտ մարտունակությամբ, ներհանրապետական արտադրության սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով հագեցած զինված ուժերի և այլ զորքերի անխափան ապահովումը, ռազմական պատվերներ կատարող ընկերությունների կայուն գործունեության անընդհատության ապահովումը, նյութական, աշխատանքային և այլ միջոցների արդյունավետ օգտագործումն ու կառավարումը, արդյունաբերության մյուս ճյուղերի զարգացման համար հնարավորությունների ստեղծումը, պետության վարկանիշի բարձրացումը: |

| 1 | 2 |
|---|---|
| **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** | |
| 107. | **ՀՀ բարձրաստիճան պատվիրակության մասնակցություն 2012 թվականի հունիսի 4-6-ը «Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք «Ռիո+20» կայուն զարգացման հարցերին նվիրված համաշխարհային գագաթաժողովին և գագաթաժողովի շրջանակներում ազգային գնահատման զեկույցի մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>ՀՀ բարձրաստիճան պատվիրակության մասնակցություն 2012 թ. հունիսի 4-6-ը Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք «Ռիո+20» կայուն զարգացման հարցերին նվիրված համաշխարհային գագաթաժողովին և գագաթաժողովի շրջանակներում ազգային գնահատման զեկույցի ներկայացում:<br>2012 թ. Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովին Հայաստանի Հանրապետության մասնակցության հետ կապված նախապատրաստական աշխատանքների համակարգումը և նշված գագաթաժողովին ՀՀ պատշաճ մասնակցության ապահովումը հաստատված է ՀՀ վարչապետի 2011 թ. հուլիսի 19-ի N 685-Ա որոշմամբ:<br>ՀՀ կառավարության 2007 թ. նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանապետության միջազգային պարտավորություններին համապատասխան Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշմամբ նախատեսվում է իրավասու գերատեսչության կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ազգային զեկույցներ պատրաստելը՝ շահագրգիռ գերատեսչությունների ներգրավմամբ, և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը: |
| 108. | **«ՄԱԿ-ի թմրանյութերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի իրականացման ինքնագնահատման զեկույցի մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>ՄԱԿ-ի թմրանյութերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի զրասենյակ կոնվենցիայի իրականացման ինքնագնահատման զեկույցը 2012 թ. ներկայացնելը:<br>Հայաստանի Հանրապետությունը, որպես ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան վավերացրած երկիր (վավերացրել է 2007 թ.), ստանձնել է պարտավորություններ կոնվենցիայի դրույթները պատշաճ մակարդակով իրականացնելու համար և 2009 թ. ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի համաժողովի ընթացքում ընդունել է Կոնվենցիայի վերահսկման մեխանիզմների մասին բանաձևը, իրականացման մանդատը, ուղենիշները, որի համաձայն անդամ պետություններում պետք է կատարվի կոնվենցիայի արդյունավետ իրականացման վերահսկման գործընթաց:<br>ՀՀ կառավարության 2007 թ. նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանապետության միջազգային պարտավորություններին համապատասխան Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշմամբ նախատեսվում է իրավասու գերատեսչության կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ազգային զեկույցներ պատրաստելը՝ շահագրգիռ գերատեսչությունների ներգրավմամբ, և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** |
| 109. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիների) հողերի 2012 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի հողերի կադաստրային գները՝ ըստ նպատակային նշանակության, յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել 2012 թվականի համար, ուստի, որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվի 2012 թվականի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2012 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>2012 թվականի հողերի կադաստրային գների (արժեքների) և կադաստրային զուտ եկամտի չափերի հաստատումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն 2012 թվականի հողերի կադաստրային գների և կադաստրային զուտ եկամտի չափերը, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում: |
| 110. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2012 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հողամասերը և դրանց վրա ամրակայված գույքը (շենքեր, շինություններ), անկախ սեփականության ձևից, ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի որակի ու քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների մասին ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշման պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին հաստատել է Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հողային հաշվեկշիռը: 2010 թվականի հուլիսի 1-ից մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում կատարվել են նպատակային և գործառնական նշանակությունների, հողատեսքերի ու սեփականության սուբյեկտների, ինչպես նաև ոռոգվող հողերի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններ: Անհրաժեշտ է նշված փոփոխություններն արտացոլել Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հողային հաշվեկշռում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նպատակն է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռի՝ ըստ նպատակային նշանակության ու սեփականության սուբյեկտների, իսկ գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերը՝ ըստ հողատեսքերի, տվյալները համեմատել նախորդ տարիների հետ, վերլուծության հիման վրա ներկայացնել առաջարկություններ՝ հողային պաշարների արդյունավետ օգտագործման և կառավարման, համայնքների սեփականաշնորհված հողերի միավորման ու խոշորացման ծրագրերին օժանդակելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխությունները կարտացոլվեն 2011 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռում: «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2011 թ. հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո կհրապարակվի, որի նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, ոչ պետական կազմակերպություններն ու անձինք:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2011 թ. հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման արդյունքում կկազմվի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը): |
| | **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** |
| 111. | **«Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակը մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների նախապատրաստման աշխատանքների կանոնակարգման արդյունքում պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման ապահովումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս մասնավորեցման ծրագրում ընդգրկված են մոտավորապես 74 ընկերություններ և գույք, որոնցից մի մասը գտնվում է լուծարման գործընթացում, մի քանի ընկերություններ վերակազմակերպվել են, կան նաև դատարանի որոշմամբ սնանկ ճանաչված, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպաիրավական ձևեր չունեցող ընկերություններ: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.2. Առաջարկվող լուծումները**<br>«Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է ճշտել մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների ներկայիս կարգավիճակը և անհատական մոտեցումներ ցուցաբերել դրանց նկատմամբ: Նախատեսվում է նաև մասնավորեցման ծրագրի կատարման մասին տարեկան հաշվետվությամբ լուծարման գործընթացում գտնվող, ինչպես նաև սնանկ ճանաչված, վերակազմակերպված ընկերությունները հանել մասնավորեցման ծրագրից: Մնացած ընկերությունների համար սահմանել մասնավորեցման նախապատրաստման անհրաժեշտ աշխատանքները՝ վերակազմակերպում, գնահատում, պարտքերի վերակառուցում, աուդիտի անցկացում, գործունեության ծրագրի մշակում և այլն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման գործընթացի կանոնակարգման արդյունքում մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման կայացում՝ այսինքն պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարում: |
| 112. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակը պետական անշարժ գույքին ամրացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման և վարձավճարների հաշվարկման գործընթացը կանոնակարգելն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1279-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731 որոշման մեջ կատարվել է լրացումներ, որով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը վերապահվել են նաև պետական շենք, շինություններին հատկացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման լիազորությունները: Պետական գույքի վարձակալության տրամադրման կարգը և վարձավճարների հաշվարկման մեխանիզմները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ:<br>**1.2. Առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է կանոնակարգել պետական շենք, շինություններին հատկացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման ու վարձավճարների հաշվարկման գործընթացը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական շենք, շինություններին հատկացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման ոլորտում առկա խնդիրների կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 |

| 1 | 2 |
|---|---|
| | որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կկանոնակարգվի պետական շենք, շինություններին հատկացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման գործընթացը: |
| 113. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակն է սահմանել պետական սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես պետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար, հիմնադրամների տնօրինությանը թողնելու դեպքում հիմնադրամների կողմից համապատասխան ձևակերպումների նկատմամբ վերահսկման, ինչպես նաև նշված գույքային վճարների հաշվառման կարգը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 797-Ն որոշմամբ հիմնադրամների համար սահմանվել են չափորոշիչներ պետական սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես պետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար, հիմնադրամների տնօրինությանը թողնելու համար, սակայն նշված որոշմամբ չի սահմանվել հիմնադրամներին պետության կողմից կատարվող գույքային վճարի ձևակերպման նկատմամբ վերահսկման, ինչպես նաև դրանց հաշվառման կարգը:<br>**1.2. Առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է սահմանել պետական սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես պետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար, հիմնադրամների տնօրինությանը թողնելու դեպքում հիմնադրամների կողմից կատարվող գույքային վճարի ձևակերպման նկատմամբ վերահսկման և դրանց հաշվառման կարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես պետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար, հիմնադրամների տնօրինությանը թողնելու դեպքում հիմնադրամների նկատմամբ վերահսկման իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռնի պետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճարները հիմնադրամների տնօրինությանը թողնելու դեպքում՝ հաշվառել և վերահսկել հիմնադրամներում դրանք որպես պետության կողմից կատարվող գույքային ներդրում ձևակերպման գործընթացը: |

| 1 | 2 |
|---|---|
| 114. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակն է պարզեցնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունքների դիտարկման ցուցանիշները, ինչպես նաև սահմանել մոնիթորինգի արդյունքում համապատասխան առաջարկություններ ներկայացնելու մասին դրույթներ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման համաձայն իրականացվում է 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումներ (մոնիթորինգ), դիտարկումների համար սահմանված է 23 ցուցանիշ, որոնց համադրումը երբեմն չի տալիս ընկերության ֆինանսական վիճակի իրական պատկերը: Միևնույն ժամանակ որոշմամբ սահմանված չեն մոնիթորինգի արդյունքների վերլուծության հիման վրա ընկերությունների կառավարման վերաբերյալ համապատասխան առաջակություններ ներկայացնելու մասին դրույթներ:<br>**1.2. Առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է պարզեցնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունքների դիտարկման ցուցանիշները, ինչպես նաև սահմանել մոնիթորինգի արդյունքում համապատասխան առաջարկություններ ներկայացնելու մասին դրույթներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պարզեցնել 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումների (մոնիթորինգ) իրականացումը, և սահմանել դրանց հիման վրա ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավմանն վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կպարզեցվեն պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունքների դիտարկման ցուցանիշները, ինչպես նաև կսահմանվեն մոնիթորինգի արդյունքում ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավման վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելու մասին դրույթներ: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 115. | **«Զենքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Զենքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշմամբ հաստատված Ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի 29.1-ին կետից և նպատակ ունի գործող օրենքում առկա դրույթները համապատասխանեցնելու արդի հասարակական հարաբերություններին: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքն ամբողջությամբ չի կարգավորում զենքի շրջանառության ընթացքում ծագող իրավահարաբերությունները, բացի դրանից, գործող օրենքում առկա են դրույթներ, որոնք չեն համապատասխանում արդի հասարակական հարաբերություններին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել «Զենքի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ, որով կվերացվեն գործող օրենքում առակա հակասություններն ու բացթողումները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագիծը ենթադրում է գործող օրենսդրությունը համապատասխանեցնել արդի հասարակական հարաբերություններին և վերացնել գործող օրենքում առկա հակասությունները, որոնք ուղղված են մարդու կյանքի, առողջության և սեփականության պաշտպանությանը, հասարակական անվտանգության ապահովմանը:<br>**3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Զենքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում կհստակեցվեն զենքի շրջանառության անվտանգության պայմանները, կբարձրացվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների որակը: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե** |
| 116. | **«Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում տեսչական ստուգումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին»<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված որոշման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», ինչպես նաև «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքների պահանջից, որոնց համաձայն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անցկացվում են տեսչական ստուգումներ<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները**<br>Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեսչական ստուգումներն իրականացվում են «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ, 17.1-ին հոդվածների համաձայն:<br>Առաջարկվող նախագիծը մշակված է ԱԷՄԳ-ի նոր ստանդարտների, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի նոր փոփոխությունների և լրացումների հիման վրա (23.06.2011, ՀՕ-243-Ն)<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում ստուգումների կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները, ստուգող և ստուգվող սուբյեկտների փոխհարաբերությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշմամբ կսահմանվեն ստուգումների անցկացման պլանավորման հետ կապված կազմակերպական հարցերը, պարբերականությունն ըստ օբյեկտների ռիսկի աստիճանի, ստուգումների տեսակները, ստուգման արդյունքների արձանագրումը, ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները ու դրանց վերացմանն ուղղված՝ ստուգվող սուբյեկտին տրվող հանձնարարականները, ստուգման արդյունքների տվյալների բազայի վարումը<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված որոշման ընդունմամբ կկարգավորվի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անցկացվող տեսչական ստուգումների կազմակերպման և անցկացման գործընթացը՝ բնակչության և անձնակազմի անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության ու ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակով: |

| 1 | 2 |
|---|---|
| 117. | **«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից իրականացվող ռիսկի հիման վրա ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված որոշման ընդունումը հնարավորություն կտա օպտիմալացնելու ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեսչական ստուգումների անցկացումը և կապահովի ստուգվող օբյեկտների ռիսկայնությունը որոշող չափանիշների ներդնումը, ինչպես նաև ռիսկի հիման վրա անցկացվելիք ստուգումների հաճախականությունն ու ծավալների որոշումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ռիսկայնության վրա հիմնված տեսչական ստուգումներն անցկացվել են ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների հիման վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված որոշման մեջ կամրագրվեն ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը, չափանիշների նկարագիրը՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և լրացումների և ԱԷՄԳ-ի անվտանգության նոր ստանդարտների:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում կներդրվի ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ռիսկի որոշման ԱԷՄԳ-ի մեթոդաբանությունը և կտրվի ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կապահովվի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում ռիսկի գնահատման վրա հիմնված՝ անցկացվող տեսչական ստուգումների տարբերակված մոտեցումը՝ ըստ ատոմային էներգիայի օգտագործման անվտանգության տեսանկյունից կարևոր օբյեկտների և այլ օբյեկտների: |
| 118. | **«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված որոշման ընդունումը բխում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (23.06. 2011 թ.ՀՕ-243) պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում ստուգողական թերթիկները մշակվել և կիրառվում են ԱԷՄԳ-ի անվտանգության GS-G-1.3._Regulatory inspection of nuclear facilities and enforcement by the regulatory body (Միջուկային տեղակայանքների կարգավորող տեսչական ստուգումների անցկացումը և կարգավորող մարմնի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումը), GS-G-1.5._ Regulatory control of radiation sources (Իոնացնող ճառագայթման աղբյուրների կարգավորող վերահսկողությունը), 1526_Inspection of radiation sources and regulatory enforcement (Իոնացնող ճառագայթման աղբյուրների տեսչական ստուգումների անցկացումը և պատասխանատվության միջոցների կիրառումը) ստանդարտների հիման վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից իրականացվող տեսչական ստուգումների ստուգաթերթերը, որոնք կորոշակիացնեն ստուգման առարկան: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեսչական ստուգումների ստուգողական թերթիկների նկատմամբ պահանջները, որը հնարավորություն կտա հստակեցնել ստուգող և ստուգվող սուբյեկտների փոխհարաբերությունները ստուգման առարկայի նկատմամբ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կապահովվի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեսչական ստուգումների անցկացման որակը: |
| 119. | **«Միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) նախագծային անվտանգության պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ-ում նոր միջուկային տեղակայանքի կառուցմամբ, որը հրամայական է դարձնում միջուկային տեղակայանքների նախագծային անվտանգության նկատմամբ կարգավորող պահանջների սահմանումը<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները**<br>Նոր ատոմակայանի կառուցումը հրամայական է դարձնում կառուցվող տեղակայանքի նկատմամբ անվտանգության պահանջների սահմանումը, որը հիմք կհանդիսանա նաև նախագծման համար տեխնիկական պահանջների ձևակերպման, փորձաքննության անցկացման կառուցման լիցենզիայի հայտի քննարկման ժամանակ անվտանգության գնահատում իրականացնելու համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված որոշման ընդունմամբ միջուկային տեղակայանք նախագծի նկատմամբ կսահմանվեն անվտանգության պահանջներ, որոնք համահունչ են միջազգայնորեն ընդունված անվտանգության ապահովման նորագույն մոտեցումներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող փոփոխություններն ու լրացումները միջուկային տեղակայանքների նախագծման և կառուցման լիցենզավորման գործընթացում անվտանգության նոր մոտեցումներ կնախատեսեն:<br>**3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման կիրառման դեպքում կապահովվի նոր միջուկային տեղակայանքի նախագծման և կառուցման համապատասխանեցումն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության պահանջներին: |
| 120. | **«Միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ-ում միջուկային նոր էներգաբլոկի կառուցմամբ, որը հրատապ է դարձնում միջուկային էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման գործընթացի կարգավորումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր էներգաբլոկի հրապարակը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի, սեյսմիկ վտանգի տեսակետից տվյալ հրապարակը բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով, որի նկատմամբ ստանդարտ մոտեցումները կիրառելի չեն, ուստին համաձայն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտների, նախագծման նպատակով պետք է մշակվեն և կիրառվեն սեյսմիկ ազդեցությունից սպասվող գրունտի շարժման առանձնահատուկ բնութագրեր:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված որոշումը սահմանում է այն մեթոդները, որոնցով կատարվելու են միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմոլոգիական և երկրա- |

| 1 | 2 |
|---|---|
| | տեխնիկական հետազոտությունները, բնութագրվելու են սեյսմիկ օջախներն ու գոտիները, իրականացվելու է սեյսմիկ վտանգի հավանականային վերլուծություն, և որոշվելու է գրունտի նախագծային տատանումը։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներկայացված նախագծի ընդունմամբ կկարգավորվեն միջուկային նոր էներգաբլոկի նախագծմանն ուղղված՝ հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման իրավահարաբերությունները։ |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | |
| 121. | **«ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 944-Ն որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 944-Ն որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի նոր, 13-րդ խմբագրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանեցմամբ։<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 944-Ն որոշման հավելվածում վերջին լրացումներն ու փոփոխությունները կատարվել են 2011 թվականին ապրիլի 28-ի ՀՀ կառավարության N 534 –Ն որոշմամբ և այն ամբողջովին համապատասխանում էր 2008 թ. ԻԿԱՕ-ի կողմից «Անվտանգության» N 17 հավելվածում կատարված լրացումներին, փոփոխություններին և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի պահանջներին։<br>2011 թվականի ընթացքում (հունիսին) ԵԿԱԿ-ի կողմից նոր, 13-րդ խմբագրությամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել Եվրամիության կողմից «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթում, սահմանվել են նոր չափորոշիչներ ուղևորների, նրանց ձեռքի իրերի ուղեբեռների, բեռների զննման ընթացակարգերի, ավիացիոն անվտանգության հսկողության (զննման) գործառույթներ իրականացնող անձանց ուսուցման և վերապատրաստման մասով։<br>Նշված լրացումների և փոփոխությունների կիրառման ուշացումը կարող է ազդել ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման վրա և այսօր ավիացիոն անվտանգության առումով նշված փոփոխությունների և լրացումների կիրառումն անհրաժեշտ է։<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով սահմանվում են ընթացակարգեր՝ կապված ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքներում Եվրամիության կողմից սահմանված նոր չափորոշիչների կիրառման, ուղևորների, նրանց ձեռքի իրերի ուղեբեռների, բեռների զննման ընթացակարգերի, ավիացիոն անվտանգության հսկողության (զննման) գործառույթներ իրականացնող անձնաց ուսուցման և վերապատրաստման հետ։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված լրացումների և փոփոխությունների ընդունումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ուղևորների, նրանց ձեռքի իրերի ուղեբեռ- |

| 1 | 2 |
| --- | --- |
| | ների, բեռների զննման ընթացակարգերը, ինչպես նաև ավիացիոն անվտանգության հսկողության (զննման) գործառույթներ իրականացնող անձանց ուսուցման և վերապատրաստման գործընթացները կանոնակարգել Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթով սահմանված չափորոշիչներին համապասխան։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում կհստակեցվեն օդանավակայաններում ուղևորների, նրանց ձեռքի իրերի ուղեբեռների, բեռների զննման ընթացակարգերը և հնարավորություն կընձեռնվի ավելի բարձր մակարդակի հասցնելու օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական պատրաստականությունը։<br>Հիմք ընդունելով նշվածը, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում մշակվել է ներկայացված նախագիծը։ |
| 122. | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի նոր, 13-րդ խմբագրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանեցմամբ։<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստավել է ՀՀ կառավարությանն առընթեր ՔԱԳՎ-ի պետի հրամանով 2003 թ. մարտի 7-ի N 27 հրամանով և համապատասխանում էր ԻԿԱՕ-ի կողմից «Անվտանգության» N 17 հավելվածի և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի պահանջներին։<br>2011 թ. ընթացքում (հունիսին) ԵԿԱԿ-ի կողմից նոր, 13-րդ խմբագրությամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել Եվրամիության կողմից «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթում, որով սահմանվել են նոր չափորոշիչներ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության մասով։<br>ՀՀ կառավարության նշված որոշման ուշացումը կարող է ազդել ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման վրա, և ավիացիոն անվտանգության առումով նշված փոփոխությունների և լրացումների կիրառումն անհրաժեշտ է։<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով սահմանվում են ընթացակարգեր՝ կապված ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքների որակի նկատմամբ քաղաքացիական ավիացիայի բնագավառի լիազոր մարմնի կողմից իրականացվող հսկողության տեսակների և միջոցառումների, հսկողություն իրականացնող աշխատողների իրավունքների և պարտականությունների, հսկողության միջոցառումների իրականացման կարգի, ժամկետների, հսկողության ընթացքում բացահայտված անհամապատասխանությունները ներկայացնելու և դրանց հետ կապված թերությունների վերացման հետ։<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագրի ընդունումով կկանոնակարգվեն Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության միջոցառումները և դրանք կհամապատասխանեցվեն Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթով սահմանված չափորոշիչներին։ |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում կիստակեցվեն օդանավակայաններում ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի նկատամամբ քաղաքացիական ավիացիայի բնագավառի լիազոր մարմնի կողմից իրականացվող հսկողության միջացառումներ և հնարավորություն կընձեռվի ավելի բարձր մակարդակի հասցնելու օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքները:<br>Հիմք ընդունելով նշվածը, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում մշակվել է ներկայացված նախագիծը: |
| 123. | **«Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և խնդիրները՝<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշմամբ հաստատված՝ քաղաքացիական օդանավով ռազմական նշանակության արտադրանքի օդային փոխադրումներ իրականացնելու կարգով սահմանված են քաղաքացիական ավիացիայի օդանավերով ռազմական նշանակության արտադրանքի օդային փոխադրման պայմանները, համաձայն որոնց ներկայումս ռազմական նշանակության արտադրանք առաքող կազմակերպությունները համապատասխան հայտ պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն (այսուհետ՝ գլխավոր վարչություն)՝ նշելով հետևյալ տեղեկությունները՝<br>ա. ռազմամթերքը (ռազմական բեռը) առաքող կազմակերպության անվանումը, գրանցումը հավաստող փաստաթուղթը, գտնվելու վայրը,<br>բ. փոխադրվող ռազմամթերքի (ռազմական բեռի) անվանումը, տեսակը (դասը, կարգը, խումբը), բեռնային տեղերի քանակը, եթե ռադիոակտիվ նյութ է, ապա դրա քիմիական և ֆիզիկական ձևերի նկարագրությունը, բեռին շնորհված՝ Միավորված ազգերի կազմակերպության համարանիշը, փաթեթավորման խմբի տեսակը,<br>գ. ռազմամթերքը (ռազմական բեռը) ստացող կազմակերպության անվանումը, գրանցումը հավաստող փաստաթուղթը, գտնվելու վայրը,<br>դ. ռազմամթերքի (ռազմական բեռի) առաքման հիմքը (պայմանագիր, համաձայնագիր և այլն),<br>ե. ռազմամթերքի (ռազմական բեռի) փոխադրման միջոցը՝ օդանավի տեսակը,<br>զ. ռազմամթերքի (ռազմական բեռի) փոխադրման ժամկետները,<br>է. ռազմամթերքի (ռազմական բեռի) փոխադրման երթուղին,<br>ը. ռազմամթերքի (ռազմական բեռի) կապակցությամբ լիցենզիաները, սերտիֆիկատները, թույլտվությունները, եթե նման լիցենզիաներ, սերտիֆիկատներ, թույլտվություններ պահանջվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով,<br>թ. լիազորված մարմին ներկայացված հայտին կցվում է նաև երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրմանը վերաբերող փաստաթղթերի (պոլիսների) պատճենները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գլխավոր վարչությունը ռազմական նշանակության արտադրանք առաքող կազմակերպության հետ չունի որևէ առնչություն, այլ ընդամենը ռազմական նշանակության արտադրանքն առաքելու պատվերը կատարող օդանավ շահագործող կազմակերպությանը տալիս է օդային ուղու շահագործման (հայկական օդանավ շահագործողների դեպքում) և օդային |

| 1 | 2 |
|---|---|
| | հաղորդակցության իրականացման (օտարերկրյա օդանավ շահագործողների դեպքում) թույլտվություն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված թույլտվությունները տալու պայմանները և պահանջները մանրամասն կանոնակարգված են գլխավոր վարչության 21.07.2009 թ. N 98- Ն և N 99-Ն հրամաններով: Անհրաժեշտ է տարանջատել ռազմական նշանակության արտադրանք առաքող կազմակերպությունը և օդանավ շահագործող կազմակերպությունը, քանի որ առաջինը կատարում է բեռի առաքում, իսկ երկրորդը բեռի փոխադրում: Այսինքն, ռազմական նշանակության արտադրանքի առաքումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության խնդիր, իսկ այդ բեռի փոխադրումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի թռիչքային անտանգության պահանջների առավելագույն ապահովման խնդիր:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում համապատասխան գերատեսչությունները, համաձայնության գալով, կտան համաձայնություն ռազմական նշանակության արտադրանք առաքելու վերաբերյալ, իսկ գլխավոր վարչությունը կտա օդային ուղու շահագործման և (կամ) օդային հաղորդակցությանն իրականացման թույլտվություն: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** |
| 124. | **«ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով: Այդ փոփոխություններով դրամարկղային գործառնությունների կարգը կիրառվում է ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ: Միաժամանակ, օրենքով սահմանվել են թույլատրելի չափեր ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքների դիմաց կանխիկ դրամով վճարումների ընդունման համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի N 1408-Ն որոշմամբ սահմանվել են դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը: «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, որոնք ուժի մեջ են 2012 թ. հունվարի 1-ից, օրենքի դրույթները կիրառվում են նաև ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքի դրույթներին համապատասխանեցնելու համար առաջարկվում է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ: Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է որոշմամբ սահմանված կարգի պահանջները կիրառել նաև ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշումների պահանջների հստակեցում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գործող ՀՀ կառավարության որոշման պահանջների համապատասխանեցում «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներին (2012 թ. հունվարի 1-ից գործող խմբագրությամբ): |

| 1 | 2 |
|---|---|
| 125. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների վերադարձման կարգը հաստատելու մասին» N 1929-Ն որոշման, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների միջև անհամապատասխանության վերացում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N N 1929-Ն որոշումը պահանջում է մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածին համապատասխան վերադարձնելու համար հարկային մարմնում այդ ապրանքների ներմուծման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին առաջացած դեբետային մնացորդի մասին տեղեկանք ներկայացնելը: Մինչդեռ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն վերաարտահանման հետ կապված գործարքները հարկման օբյեկտ չեն, իսկ նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարներն օրենքի 26-րդ հոդվածով հաշվանցման ենթակա չեն: Օրենքի պահանջների պահպանման դեպքում նախկինում առաջացած՝ համապատասխան գումարով դեբետային մնացորդը զրոյացվում է, ինչի հետևանքով նման տեղեկանք ներկայացվել չի կարող:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է հանել տեղեկանքը ներկայացնելու պահանջը և որոշման դրույթները համապատասխանեցնել ՀՀ մաքսային օրենսգրքի և ավելացած արժեքի հարկի դրույթներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձի ընթացքում օրենքին համապատասխան ծագող հարաբերությունների կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշման դրույթների համապատասխանեցում ՀՀ մաքսային օրենսգրքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին: |
| 126. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 3-ի N 674 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը կայանում է պետական տուրքի հաշվառման նպատակով լիցենզավորող մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ոչ միայն լիցենզիաների, այլ նաև այն ներդիրների մասով տեղեկությունների տրամադրման անհրաժեշտությամբ, որոնց համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համապատասխան սահմանված են տարեկան պետական տուրքեր:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-ին հոդվածին համապատասխան՝ պետական տուրքի պարտավորությունների (տուրք, տույժ) հաշվառման համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Նույն օրենքի 19-րդ հոդվածով տարեկան պետական |

| 1 | 2 |
|---|---|
| | տուրքի առանձին տեսակներ սահմանված են ոչ թե լիցենզիաների, այլ լիցենզիաների ներդիրների համար: ՀՀ կառավարության 03.06.02 թ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 674 որոշմամբ սահմանված է լիցենզավորող մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միայն լիցենզիաների մասով տեղեկությունների տրամադրումը, սակայն տարեկան պետական տուրքի առանձին տեսակների հաշվառման և հսկողության արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է, որ լիցենզավորող մարմինները ներկայացնեն նաև այն ներդիրների վերաբերյալ տեղեկություններ, որոնց համար օրենքով սահմանված է տարեկան պետական տուրք:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 03.06.02 թ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 674 որոշման մեջ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տարեկան պետական տուրքի հաշվառման հարաբերություններն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներդիրների համար սահմանված տարեկան պետական տուրքի հաշվառման նպատակով լիցենզավորող մարմիններից ստացվում են ներդիրների մասին տեղեկություններ: |
| 127. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 27-ի N 239 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտ է բացառել ապրանքների ներմուծումը և արտահանումը ՀՀ մաքսային օրենսգրքով չնախատեսված կարգով հայտարարագրման հնարավորությունը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառման հարցում հիմնախնդիրների առաջացումը բացառելու համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2001 թ. մարտի 27-ի N 239 որոշումը թույլ է տալիս վերամշակման համար ներմուծվող ալմաստի մաքսային ձևակերպումն իրականացնել «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, իսկ «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» արտահանված ապրանքների արտահանումը ձևակերպել «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով: Արդյունքում՝ հիմնախնդիրներ են առաջանում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառման, ինչպես նաև վերաներմուծվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառության որոշման հարցերում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2001 թ. մարտի 27-ի N 239 որոշման այն դրույթը, որը թույլ է տալիս օրենքով նախատեսված մաքսային ռեժիմի կիրառման փոխարեն կիրառել մաքսային մեկ այլ ռեժիմ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության 2001 թ. մարտի 27-ի N 239 որոշման դրույթների համապատասխանեցում ՀՀ մաքսային օրենսգրքի դրույթներին, ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառման և ԱԱՀ-ով հարկվող շրջանառության որոշման հարցում օրենքով նախատեսված պայմանների ապահովում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հիմնախնդիրներ չեն առաջանա ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների «վերաներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության որոշման ժամանակ: |

| 1 | 2 |
|---|---|
| 128. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Նախագահի 18.05.2011 թվականի ՆԿ 92-Ն կարգադրությամբ հաստատված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային համակարգի բարեփոխումների 2011-2013 թթ. ծրագրով՝ նպատակ ունենալով սահմանելու հարկային մարմնի կատարելագործված, օպտիմալ կառուցվածք:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1005-Ն որոշմամբ: Հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրման, աշխատանքների կազմակերպման օպտիմալացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերանայելու հարկային (տարածքային) տեսչությունների թիվը՝ ելնելով հարկային մարմինների կառուցվածքի, գործունեության կազմակերպման խնդիրների ուսումնասիրության արդյունքներից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի օպտիմալացման շրջանակներում նախատեսվում է կրճատել տարածքային հարկային տեսչությունների թիվը:<br>**2, Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրումն է:<br>**3, Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է սահմանել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի օպտիմալ կառուցվածք՝ ապահովելով ռեսուրսների արդյունավետ բաշխում և աշխատանքի արդյունավետության բարձրացում: |
| 129. | **«Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 1420-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ 2013 թ. հունվարի 1-ից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը չի գործելու (27.12.1997թ. ՀՕ-183), և ուժի մեջ է մտնելու «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը (22.10.2010 թ. ՀՕ-246-Ն), որի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտները համախառն եկամտում հաշվի են առնվում ազատ (շուկայական) գներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցման հետ միաժամանակ համապատասխանաբար ուժը կորցրած են ճանաչվում նաև այդ իրավական ակտից բխող նորմատիվ իրավական ակտերը: Ընդ որում, իրավական ակտի գործողությունը դադարած ճանաչելու հիմքերն իրավասուեղծ մարմնին չեն ազատում համապատասխան իրավական ակտերի գործողությունը դադարեցված ճանաչելու պարտականությունից: |

| 1 | 2 |
|---|---|
| | «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել նաև այդ օրենքից բխող ՀՀ կառավարության որոշումը, իսկ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներն ապահովել ՀՀ կառավարության առանձին որոշմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու կարգը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 1420-Ն որոշումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու կարգի սահմանում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու հնարավորությունը: |
| 130. | **Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի N 4 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, ինչպես նաև գրանցման գրքերի էլեկտրոնային եղանակով վարման ու ծախսվող ժամանակի կրճատման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) հարցերը ներկայումս կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի N 4 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) կարգով: Կարգավորման հարաբերությունների՝ ներկա վիճակում հարկային հաշվառման և փաստաթղթաշրջանառության կանոնակարգման շրջանակներում առկա խնդիրներ են առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքերի էլեկտրոնային եղանակով վարման ներդրման հարցերը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) առումով գրանցման գրքերի էլեկտրոնային եղանակով վարման հետ կապված հարաբերություններն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակի ներդրում, գրանցումների համար ծախսվող ժամանակի կրճատում: |

| 1 | 2 |
|---|---|
| 131. | **«Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2009» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու և այդ դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն կիրառվող նմուշի ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Այդ դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրելու ժամկետը չի կարող պակաս լինել երկու տարվանից՝ սկսած դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու պահից կամ 6 ամսվանից՝ դրան հաջորդող նմուշի դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու պահից: ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է օրենքի նշված պահանջներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կիրառության մեջ են ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ենթաակցիզային ապրանքների դրոշմավորման համար նախատեսված «2009», «2010», «2011» և «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը, իսկ «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ են դրվել 2011 թվականի դեկտեմբերից:<br>«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի և ենթաակցիզային ապրանքների դրոշմավորման կարգի պահանջների կիրառումն ապահովելու համար ՀՀ կառավարության որոշմամբ պետք է կարգավորվեն ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու հետ կապված հարցերը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության որոշմամբ առաջարկվում է 2013 թվականի հունվարի 1-ից կիրառությունից հանել «2009» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը:<br>ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվում է նաև, որ ՀՀ ներմուծված և ՀՀ-ում արտադրված՝ «2009» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքները կարող են իրացվել մինչև 2013 թվականի ապրիլի 1-ը՝ հարկ վճարողներին հնարավորություն տալով մինչև նշված ժամկետն իրացնելու իրենց մոտ առկա «2009» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների մնացորդները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծով կարգավորվում են ակցիզային դրոշմանիշերի կիրառման և դրոշմավորված ապրանքների իրացման նկատմամբ հսկողության հետ կապված հարցերը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ենթաակցիզային ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման պահանջների նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացում: |
| 132. | **«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2013» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն նոր նմուշի ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ են դրվում և կիրառությունից հանվում են ՀՀ կառավարության որոշմամբ: «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2013» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է օրենքի նշված պահանջներով: |

| 1 | 2 |
| --- | --- |
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս կիրառության մեջ են «2009», «2010», «2011» և «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշեր: ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ենթաակցիզային ապրանքներ արտադրողներին և ներմուծողներին համապատասխան քանակությամբ ակցիզային դրոշմանիշեր տրամադրելու, ինչպես նաև դրոշմավորման ենթակա ապրանքների նկատմամբ հսկողական աշխատանքների իրականացման նպատակով առաջարկվում է կիրառության մեջ դնել «2013» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը:<br>Յուրաքանչյուր տարվա համար սահմանված կարգով կիրառության մեջ են դրվում համապատասխան թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է կիրառության մեջ դնել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2013» թվագրմամբ «Ծխախոտ» և «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«2013» թվագրմամբ «Ծխախոտ» և «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու հետ կապված հարաբերությունների կարգավորում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է «2013» թվագրմամբ «Ծխախոտ» և «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելով՝ ապահովել ներքին արտադրողների և արտաքին տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ տարվա դրոշմանիշերի պահանջարկը: |
| | **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** |
| 133. | **«Սևանա լճից ոռոգման նպատակով ջրառի իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Սևանա լճից ոռոգման նպատակով ջրառի իրականացման մասին» ՀՀ կառավարութան որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 655-Ա որոշմամբ ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի առավելագույն չափաքանակ է սահմանվել 170.0 մլն խոր. մետր ջրաքանակ:<br>2011 թվականի սեպտեմբերի 28-ի դրությամբ Սևանա լճից բաց է թողնվել 168.33 մլն խոր. մետր ջուր: Սևան-Հրազդան էներգետիկ-իրիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողերը ոռոգելու համար անհրաժեշտ է Սևանա լճից բաց թողնել համապատասխան ջրաքանակ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ջրային օբյեկտներից հնարավոր ջրառի տարբերության չափով պահանջարկի բավարարում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սևան-Հրազդան իրիգացիոն-էներգետիկ համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքների վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրի ապահովման գործընթացի իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրօգտագործողներին անհրաժեշտ քանակի ոռոգման ջրով ապահովում: |

| 1 | 2 |
| --- | --- |
| | **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն** |
| 134. | **«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>1. Վերջին տարիներին հաճախակի են դարձել օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը ներկայացվող՝ ՀՀ-ում ապաստան ստանալու մասին ակնհայտ անհիմն կամ ակնհայտ հիմնավոր դիմումները:<br>Ապաստանի դիմումների քննարկումը, որպես կանոն, տևում է մինչև 3 ամիս (հարցումներ իրավասու պետական մարմիններին, անհրաժեշտության դեպքում, միջազգային կառույցներին, ապաստան հայցողների հետ հարցազրույցի անցկացում, ծագման երկրների մասին տեղեկատվության հայթայթում ինտերնետով և այլն): «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն յուրաքանչյուր դիմում ենթակա է քննարկման ապաստանի տրամադրման ընդհանուր ընթացակարգով: Մինչդեռ ակնհայտ անհիմն կամ ակնհայտ հիմնավոր դիմումների պարագայում ողջամիտ է արագացված ընթացակարգով համապատասխան որոշման ընդունումը: Խնդիրը կայանում է նրանում, որ օրենքով ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ նախատեսված չէ:<br>Ուստի, անհրաժեշտ է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու ճանապարհով նախատեսել ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ:<br>2. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն ապաստանի տրամադրման վերաբերյալ վերջնական բացասական որոշում կայացվելուց հետո ապաստան հայցողն իրավունք ունի ներկայացնելու ապաստանի տրամադրման նոր դիմում, որի կապակցությամբ, յուրաքանչյուր դեպքում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում պետք է հարուցվի նոր վարչական վարույթ և ընդհանուր հիմունքներով իրականացվի ապաստանի նոր դիմումի քննարկումը: Ըստ օրենքի՝ ապաստանի մերժում ստացած անձինք իրավունք ունեն բնակվելու «Հատուկ կացարանում» և օգտվել կենսաապահովման պայմաններից՝ մինչև ապաստանի դիմումի վերաբերյալ վերջնական որոշումն ընդունելը (ներառյալ դատական կարգով մերժման որոշման բողոքարկման գործընթացի ավարտը):<br>Բազմաթիվ ապաստան հայցողներ, որոնց ապաստանի դիմումը դատական բոլոր ատյաններում քննարկման արդյունքում վերջնական մերժվել է, օգտվելով օրենքի այս դրույթից, չարաշահում են ապաստանի կրկնական դիմում ներկայացնելու իրենց իրավունքը՝ նպատակ ունենալով այդ ճանապարհով՝<br>ա. ձգձգել իրենց՝ ՀՀ-ից արտաքսման գործընթացը,<br>բ. շարունակել իրենց բնակությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության ենթակայությամբ գործող «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում և օգտվել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող կենսաապահովման պայմաններից (սնունդ, սանիտարահիգիենիկ պարագաներ):<br>Երկրորդ անգամ մերժում ստացած ապաստան հայցողները կրկին դիմում են դատական ատյաններին, և, այսպիսով, կոնկրետ գործով քննությունն առանձին դեպքերում տևում է մինչև 2 տարի, որի արդյունքում անհարկի ձգձգվում է Հայաստանից նրանց արտաքսման գործընթացը: Բացի դրանից՝ անհարկի ծախսվում են ՀՀ պետական բյուջեի միջոցները:<br>Առաջարկվող օրենքի ընդունման նպատակն է կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնցով կսահմանվեն ապաստանի տրամադրման մասին նոր դիմումների քննարկման արագացված ընթացակարգ՝ նշելով այն պայմանները, որոնց առկայության դեպքում ապաստանի տրամադրման նոր դիմումը քննության չի կարող առնվել:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում չկա դրույթ ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգի կիրառման վերաբերյալ: |

| 1 | 2 |
|---|---|
| | Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված ապաստանի դիմում կրկնական ներկայացնելու վերաբերյալ դրույթները կարիք ունեն փոփոխման, քանի որ այդ դրույթներով ապաստանի տրամադրման վերջնական մերժում ստացած անձանց հնարավորություն է ընձեռվում առանց բավարար հիմքերի, ձևականորեն ներկայացնել ապաստանի տրամադրման կրկնական դիմում՝ կացարանով ապահովվելու և ՀՀ պետական բյուջեի հաշվին տրամադրվող կենսաապահովման պայմաններից օգտվելու համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում չկա դրույթ ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգի կիրառման վերաբերյալ:<br>Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված ապաստանի դիմումը կրկնական ներկայացնելու վերաբերյալ դրույթները կարիք ունեն փոփոխման, քանի որ այդ դրույթներով ապաստանի տրամադրման վերջնական մերժում ստացած անձանց հնարավորություն է ընձեռվում առանց բավարար հիմքերի, ձևականորեն ներկայացնել ապաստանի տրամադրման կրկնական դիմում՝ կացարանով ապահովվելու և ՀՀ պետական բյուջեի հաշվին տրամադրվող կենսաապահովման պայմաններից օգտվելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման ճանապարհով օրենսդրական բացերի լրացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բավարար հիմքերի առկայության դեպքում կիրառել ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ, սահմանել ապաստանի տրամադրման նոր դիմումի քննարկման ընթացակարգ՝ նախատեսելով այն պայմանները, որոնց առկայության դեպքում ապաստանի տրամադրման նոր դիմումը քննության չի կարող առնվել: |
| **Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով** | |
| 135. | **«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տնտեսական մրցակցության անհրաժեշտ միջավայր ապահովելու նպատակով ԵՄ-ի օրենսդրությունը խիստ վերահսկողություն է նախատեսում պետական օժանդակության նկատմամբ:<br>Ներկայումս գործող «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պետական օժանդակությանը վերաբերող դրույթները չեն պարունակում այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտային բացառելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտներին տրվող այնպիսի օժանդակությունը, որն անհավասար պայմաններ է ստեղծում ապրանքային շուկաներում՝ դրանով իսկ սահմանափակելով մրցակցությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումը**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է հանձնաժողովի գործունեությունն արգելված պետական օժանդակության վերահսկողության հարցերում արդյունավետ դարձնելով՝ ՀՀ օրենսդրությամբ տրամադրելով նրան անհրաժեշտ լիազորություններ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական փոփոխությունների առարկան հստակեցվելու է Հայաստան-ԵՄ եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում TWINNING գործիքի շրջանակներում ոլորտի փորձագետների հետ իրականացվող աշխատանքների արդյունքում:<br>**3. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ կսահմանվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան |

| 1 | 2 |
|---|---|
| | հանձնաժողովին վերահսկելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող պետական օժանդակության ամբողջ ծավալը, հայտնաբերելու արգելված պետական օժանդակության դեպքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնելու դրանք: |
| 136. | **«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ օրենսդրությամբ հանձնաժողովին տրված ստուգման լիազորությունները հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահման հայտնաբերման վարույթների ընթացքում սահմանափակ են և քիչ արդյունավետ, քանի որ տնտեսավարող սուբյեկտները միշտ չէ, որ փաստաթղթային ձևակերպումներ են տալիս իրենց հակամրցակցային գործողություններին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումը**<br>Ստուգումներն իրականացնելիս հանձնաժողովի լիազորությունները դարձնել հասցեագրված և նպատակային:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական փոփոխությունների առարկան հստակեցվելու է Հայաստան-ԵՄ եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում TWINNING գործիքի շրջանակներում ոլորտի փորձագետների հետ իրականացվող աշխատանքների արդյունքում:<br>**3. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ստուգումների իրավասությունների վերանայման արդյունքում հանձնաժողովը հնարավորություն կունենա օպերատիվորեն ձեռք բերելու խախտումը հավաստող անհրաժեշտ ապացույցներ, որոնք կհանդիսանան լիարժեք ապացուցողական բազա թե որոշումները կայացնելիս և թե հետագայում հանձնաժողովի որոշումները բողոքարկելու դեպքում՝ չծանրաբեռնելով տնտեսավարող սուբյեկտներին երկարատև փաստաթղթային ստուգումներով: |
| | **Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն** |
| 137. | **«Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սույն օրենքի մշակումը բխում է «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթներից և սահմանում է 2013-2015 թվականների պետական վիճակագրական գործունեության ուղղություններն ըստ վիճակագրության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական բնագավառների:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից ի վեր, ընդունվել և գործել են «Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» 2001-2003 թթ., 2004-2006 թթ. և 2007-2009 թթ. ՀՀ օրենքները: Ներկայումս ուժի մեջ է «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (ընդունված՝ 17.11.2009 թ., ՀՕ-211-Ն): |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրով կսահմանվեն պետական վիճակագրական գործունեության ուղղությունները, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար, համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների, 2013, 2014 և 2015 թվականներին կմշակվեն տարեկան ծրագրեր (տարեկան ծրագիրը հաստատվում է խորհրդի կողմից՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի ներկայացմամբ և հրապարակվում է): |
| | **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ** |
| 138. | **«Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային հավաստագրերի ներդրման և գրանցման գործընթացի էլեկտրոնայնացման միջոցով հիփոթեքային վարկերի փոխանցման գործընթացի բարեփոխման մասին հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հիփոթեքային վարկերի փոխանցման ժամանակ իրավունքների գրանցման գործընթացի բարեփոխումը պայմանավորված է ներկա պայմաններում երկրորդային հիփոթեքային շուկայի ստեղծման, մասնավորապես, հիփոթեքային վարկերի արժեթղթավորման անհրաժեշտությամբ: Հիփոթեքային արժեթղթավորման ժամանակ ենթադրվում է մեծ թվով վարկերի պորտֆելի անընդհատ փոխանցում, ինչը հնարավոր է միայն գործընթացի դյուրին լինելու դեպքում:<br>Ներկայումս հիփոթեքային վարկերի փոխանցման և գրանցման գործընթացն իրականացվում է բացառապես թղթային տարբերակով: Մասնավորապես, համաձայն ՀՀ օրենսդրության՝ պահանջի իրավունքի զիջման արդյունքում՝ որպես դրա հետևանք, նոր պարտատիրոջը (վարկատուին) են փոխանցվում հիփոթեքային վարկի ապահովման միջոց հանդիսացող իրավունքները, այսինքն՝ անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքը՝ առանց հավելյալ գրավի իրավունքի փոխանցման պայմանագիր կնքելու: Այդ իրավունքը, ինչպես անշարժ գույքի հետ կապված ցանկացած իրավունք, պետք է գրանցվի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տվյալ իրավունքը գրանցելու համար նոր պարտատերը (վարկատուն) պետք է թղթային տարբերակով ներկայացնի պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը, գրավի վկայականի համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և այլ թղթային փաստաթղթեր, որի արդյունքում 3 աշխատանքային օրվա ժամկետում նոր պարտատերը կստանա գրավի նոր վկայական:<br>Արժեթղթավորման ժամանակ ենթադրվում է մեծ թվով վարկերի պորտֆելի փոխանցում, որը ներկայումս գործող համակարգի դեպքում ժամանակատար և ծախսատար գործընթաց է, որն էլ  անհնարին է դարձնում այդ վարկերի արագ և արդյունավետ փոխանցումը:<br>Հետևաբար անհրաժեշտ է հնարավորինս ստանդարտացնել հիփոթեքային վարկերի գծով պահանջի զիջման գործընթացում օգտագործվող փաստաթղթերը և ընթացակարգերը, որը հիմքեր կստեղծի գործընթացի էլեկտրոնայնացման համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն իրավական ակտով ներկայացվելու են հիփոթեքային հավաստագրերի ներդրման և գրանցման գործընթացի էլեկտրոնայնացման համակարգի ներդրման անհրաժեշտությունը, |

| 1 | 2 |
|---|---|
| | ՀՀ-ում հիփոթեքային վարկերի փոխանցման ժամանակ պահանջի իրավունքի զիջման հետ կապված խոչընդոտները, ոլորտի վերաբերյալ միջազգային լավագույն փորձը և ՀՀ-ում առաջարկվող մոդելի նկարագրությունը, ակնկալվող արդյունքները, միջոցառումների ծրագիրը՝ իրականացման հստակ ժամանակացույցով, միջոցառման կատարման պատասխանատու մարմինները և ֆինանսավորման աղբյուրները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ներկայացնել հիփոթեքային վարկերի վաճառքի ժամանակ ծագող իրավունքների գրանցման նոր արդյունավետ գործընթաց, մասնավորապես՝<br>• Հիփոթեքային վարկի պայմանագրից բխող պահանջի զիջման ձևի ստանդարտացում՝ հիփոթեքային գրանցման գործընթացում նոր ինստիտուտի՝ հիփոթեքային հավաստագրերի ներդրման միջոցով, որը մեկ փաստաթղթով կնույնականացնի հիփոթեքային վարկային և գրավի պայմանագրերը,<br>• Հիփոթեքի գրանցման էլեկտրոնային համակարգի ներդրում (հիփոթեքների մասին տեղեկությունների և փաստաթղթերի էլեկտրոնացում):<br>Նշված համակարգի ներդրումը խթան է հանդիսանալու ՀՀ հիփոթեքային երկրորդային շուկայի ձևավորման և կայացման համար: |
| 139. | **«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», ինչպես նաև այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) ընդունումը պայմանավորված է բանկերի կողմից հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանման և այդ կանոնների միջոցով սպառողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման, ֆինանսական միջնորդության ավելացման, հիփոթեքային շուկայի զարգացման միջոցով հիփոթեքային վարկերը հասարակության առավել լայն զանգվածներին հասանելի դարձնելու անհրաժեշտությամբ: Օրենքի նախագիծը սահմանում է այն վարկերը, որոնք հանդիսանում են բնակարանային հիփոթեքային կրեդիտներ և այն անձանց (կրեդիտառուների) շրջանակը, ովքեր օգտվում են օրենքի նախագծով նախատեսված իրավունքներից: Օրենքի նախագծով կարգավորվում են նաև կրեդիտավորման պայմանագրերից բխող հարաբերությունները, պարտադիր պայմանները, կրեդիտառուներին տեղեկատվության տրամադրումը, օժանդակ ծառայությունները և կրեդիտառուների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանող այլ իրավահարաբերություններ:<br>Այլ օրենքների ընդունումը պայմանավորված է իրավունքների պետական գրանցման, հիփոթեքի առարկայի իրացման և պատշաճ ծանուցման, նոտարական վավերացման հետ կապված օրենսդրական և պրակտիկ խնդիրների վերացման անհրաժեշտությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն սահմանված չեն հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոններ, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն պաշտպանելու սպառողների իրավունքներն ու օրինական շահերը: Բացի դրանից՝ առկա են նաև մի շարք օրենսդրական և պրակտիկ խնդիրներ, որոնք խոչընդոտում են նախ նոտարական վավերացման, հիփոթեքի առարկայի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, ապա նաև կրեդիտառուի կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում դրա իրացման, իրացման հետ կապված պատշաճ ծանուցման սահուն ընթացակարգերի ապահովմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հիփոթեքային վարկերի տրամադրման միասնական կանոնների սահմանում և սպառողների իրավունքների պաշտպանություն: |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված նախագծերի ընդունումը հնարավորություն կտա հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանման միջոցով առավել լիարժեք դարձնելու սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև անխոչընդոտ իրականացնելու հիփոթեքային վարկի տրամադրման և հետագա սպասարկման հետ կապված տարբեր ընթացակարգերը: Նշվածն իր հերթին կնպաստի հասարակության առավել լայն զանգվածների համար բնակարան ձեռք բերելու սոցիալական խնդրի լուծմանը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունվարի 12-ի N 77 - Ն որոշման

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| NN ը/կ | Հիմնավորումներ |
|---|---|
| 1 | 2 |
| | **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն** |
| 1. | **Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձևավորում**<br><br>• **Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի օբյեկտիվ կարիքների ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, ծախսային կառուցվածքների տիպաբանության մշակում**<br>Նախատեսվում է գնահատել սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները, պարտադիր լիազորությունների իրակա-նացման կարգերի, չափորոշիչների ու նորմատիվների ներմուծմամբ պայմանավորված դրանց դինամիկան ու մշակել տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ, ուսումնասիրել համայնքների կողմից կատարվող ծախսերի կառուցվածքը և մշակել առաջարկություններ՝ այդ ծախսերի արդյունավետությունը բարձ-րացնելու ու ավելի նպատակային դարձնելու ուղղությամբ:<br>Նախատեսվում է նաև մշակել առաջարկությունների փաթեթ, որի հիման վրա կմշակվի ծախսային կառուցվածքների տիպաբանությունը:<br>• **ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաների սահմանված չափորոշիչների վերանայում նվազագույն չափի մասով**<br>Նախատեսվում է վերանայել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով համայնքների բյուջեներին հատկացվող դոտացիաների սահմանված չափորոշիչները նվա-զագույն չափի մասով, որի արդյունքում ինչպես 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնք-ները, այնպես էլ այն համայնքները, որոնք, գործող օրենսդրությանը համապատասխան, 300-ից քիչ ավելի բնակչություն ունենալու պատճառով ստանում են առաջիններից պակաս գումար, կստանան հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա: |
| 2. | **Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունների պարզեցում, հստակեցում և գործող ընթացակարգերի բարելավում**<br><br>• **Վերհանել օրենսդրության այն դրույթները, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունները և շփումները**<br>Նախատեսվում է մշակել առաջարկությունների մի փաթեթ, որոնց իրականացման արդյունքում հնարավորինս կպարզեցվեն տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունները և շփումները:<br>• **Ներկայացնել առաջարկություններ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարկային վարչարարության ոլորտի բարելավման վերաբերյալ (տեղական հարկերի մասով)**<br>Տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարկային վարչարարության |

| 1 | 2 |
|---|---|
| | առկա խոչընդոտների վերհանում, դրանց կրճատմանն ուղղված առաջարկությունների մշակում: **• Ներկայացնել առաջարկություններ տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնն էականորեն նվազեցնելու կամ պարզեցնելու ուղղությամբ (տարատեսակ թույլտվություններ և համաձայնեցումներ)** Քայլի իրականացումը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայություններ մատուցող կազմակերպությունների փոխհարաբերությունների կանոնակարգման, ինչպես նաև վերջիններիս գործառույթների իրականացման համար տրվող անհրաժեշտ հողահատկացումների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման ժամկետների կրճատման անհրաժեշտությամբ: |
| 3. | **Տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորում** <br><br> **• Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում տեղեկատվական բազայի համալրման մասով** Կհաշվարկվի յուրաքանչյուր հիմնախնդրի լուծման ազդեցությունը համայնքի, մարզի և երկրի տնտեսական զարգացման և աղքատության նվազեցման վրա, որի հիման վրա կսահմանվեն աջակցության չափանիշները և պահանջները: **• Տարածքներում ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում** Կմշակվի և կներդրվի համակարգ, որը կապահովի տարածքային համաչափ զարգացումը, այսինքն՝ ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ցանկացած ներդրում իրականացնելիս հստակ հնարավոր կլինի տեսնել դրա արդյունավետությունը տվյալ տարածքի համար, ինչպիսի զարգացում կապահովի այդ ներդրումը տվյալ տարածքի համար և երկրի տարածքային զարգացման պատկերն ինչպիսի փոփոխություն կկրի: **• Մարզային զարգացման ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում** Տնտեսական զարգացման և մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվի ցուցանիշների հիման վրա կվերանայվեն մարզային զարգացման ծրագրերը: **• Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը** Մինչ օրս գործող Փոքր և Միջին ձեռնարկատիրության հիմնադրամի, Գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օրինակների վրա կուսումնասիրվեն «Տարածքային զարգացման հիմնադրամ» ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման նպատակահարմարությունը, իրավական հիմքերը և հնարավորությունները: Տարածքային զարգացման հիմնադրամի նպատակը կլինի տարածքներում ենթակառուցվածքների ձևավորումը և պահպանումը, մասնավորապես, բնակարանային ֆոնդ, ճանապարհներ, և տարածքային զարգացման կենտրոններում ձեռնարկատիրության խթանման նպատակով երաշխիքներ և շուկայականից ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում: |
| **ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** | |
| 4. | **Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի անվտանգության ապահովում** <br><br> - ***Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի «սթրես-թեստի» անցկացում*** Հայաստանի Հանրապետությունը համաձայնել է ԵՄ-ի առաջարկին՝ անցկացնել Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի «սթրես-թեստ»: Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի «սթերս-թեստ»-ի բարձր մակարդակով անցկացումը հնարավորություն կտա շարունակել |

| 1 | 2 |
|---|---|
| | թիվ 2 էներգաբլոկի հետագա շահագործումը և ԵՄ-ից ստանալու համապատասխան տեխնիկական աջակցություն անվտանգության բարձրացման հարցում: Ներկայումս Հայկական ԱէԿ-ի անձնակազմը պատրաստում է ԵՄ-ի կողմից առաջարկված «սթրես-թեստ»-ի հարցերի պատասխան-վերլուծությունը: ԵՄ-ը համաձայնել է տրամադրել հայկական կողմին համապատասխան օգնություն «սթրես-թեստ»-ի հարցերի պատասխան-վերլուծություն փաստաթղթի պատրաստման հարցում և ՀՀ մասնագետները կարող են մասնակցել ԵՄ-ի միջուկային էներգաբլոկների «սթրես-թեստ»-ի քննարկումներին: «Սթրես-թեստ»-ի հարցերի պատասխան-վերլուծության վերջնական փաստաթուղթը կներկայացվի ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի քննարկմանը, և այնուհետև 2012 թ. 2-րդ եռամսյակում այն պետք է ներկայացվի ԵՄ-ի մասնագետների քննարկմանը: Համաձայն ԵՄ-ի կողմից «սթրես-թեստ»-ի հարցերի պատասխան-վերլուծության փաստաթղթի վերաբերյալ արված դիտողությունների և առաջարկությունների՝ Հայկական ԱէԿ-ի կողմից կմշակվի միջոցառումների իրականացման պլան և ժամանակացույց, որը կհաստատվի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից: |
| 5. | **«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հին հզորությունների վերազինում**<br><br>**- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի էներգաբլոկների վերազինման մեկնարկ՝ ջրածխային վառելիքի հենքի վրա էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով**<br>Ժամանակակից տեխնոլոգիաներով ջրածխային վառելիքի օգտագործմամբ էլեկտրաէներգիայի արտադրություն, ինչի արդյունավետությունը շատ անգամ ավելի բարձր է ածխի այրման ավանդական տեխնոլոգիաներից: «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հին հզորությունները ներկայումս չեն օգտագործվում՝ ցածր արդյունավետության և էլեկտրաէներգիայի արտադրության մեծ ծախսատարության պատճառով: Ջրածխային վառելիքով աշխատելու նոր տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն կտա շարունակելու օգտագործել արտադրական հզորությունները բարձր արդյունավետությամբ և միաժամանակ օգտագործել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ածխի հումքի բազան: |
| 6. | **Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակում**<br><br>**- Օրենսգրքից բխող նոր իրավական ակտերի նախագծերի մշակում**<br>Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել նոր՝ շուրջ 17 իրավական ակտերի նախագծեր, որոնցով հնարավորություն կստեղծվի իրականացնել ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման խնդիրների, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունների կարգավորման գործընթացը:<br>**- Օրենսգրքից բխող գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում**<br>Ներկայումս ընդերքի ոլորտում իրավահարաբերությունները կարգավորվում են 2002 թ. ընդունված ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով, որոնք 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ ուժը կորցրած կճանաչվեն՝ ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի պահանջներից ելնելով: Նոր օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում լիազորված մարմնի և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների կարգավորման գործընթացն ապահովելու համար նախկին օրենսդրությանը համապատասխան ընդունված՝ շուրջ 22 իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարել՝ դրանք համապատասխանեցնելով նոր օրենսգրքի պահանջներին: |

| 1 | 2 |
|---|---|
| | - Գործող իրավական ակտեր, որոնք պետք է ուժը կորցրած ճանաչվեն, քանի որ չեն բխում օրենսգրքի պահանջներից<br>Պետք է ուժը կորցրած ճանաչվեն շուրջ 15 իրավական ակտեր, որոնք չեն բխում ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի պահանջներից: |
| 7. | **Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների երևակումների երկրաբանական ուսումնասիրություններին ներկայացվող՝ միջազգային չափորոշիչներին համահունչ համապատասխան պահանջներով տեխնիկական կանոնակարգերի մշակման անհրաժեշտության և օրենսդրական առկա անհամապատասխանությունների բացահայտման ու վերացման, ինչպես նաև ընդերքի պետական տեսչության կողմից ստուգումների իրականացման առավել արդիական մեթոդների և ձևերի վերաբերյալ առաջարկությունների մշակում**<br><br>Կկատարվի միջազգային չափորոշիչների և Ընդերքի պետական տեսչության կողմից ստուգումների իրականացման համար արդիական մեթոդների և ձևերի միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում կբացահայտվեն տեսչական ստուգումների համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածությունը և անհրաժեշտ ժամանակակից տեխնիկական միջոցները: Կուսումնասիրվեն նաև միասնական կոորդինատային համակարգի կիրառման հնարավորությունները՝ միջազգային ընդունված համակարգին համապատասխան: Կուսումնասիրվեն ստուգումների իրականացման համար միջազգային փորձին համահունչ չափորոշիչների կիրառման և տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ վերջիններիս կիրառման հնարավորությունները: Այնուհետև նշված ուսումնասիրությունները կամփոփվեն, և կներկայացվեն համապատասխան առաջարկություններ: |
| 8. | **Ընդերքի ոլորտում հողօգտագործման գործընթացի կարգավորում**<br><br>**Հանքարդյունաբերության նպատակով նախկինում տրված հողերի կատեգորիաների համապատասխանեցում օրենսդրությամբ սահմանված պահանջներին**<br>Ներկայումս շահագործվող հանքերի գերակշռող մասի մոտ հողատարածքների կատեգորիան պահպանվել է նույնը, ինչը որ կրում էինք դրանց ուսումնասիրության ժամանակ, այսինքն, գյուղատնտեսական նշանակության հողեր: Դա չի համապատասխանում «Ընդերքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և միաժամանակ արհեստականորեն նվազեցնում է այդ հողատարածքների համար գանձվող կադաստրային արժեքի մեծությունը: Այդ բոլոր հողատարածքների հաշվառումը, դրանց կատեգորիաների փոփոխումը և կադաստրային արժեքների ճշգրտումը կծառայի ինչպես համայնքային, այնպես էլ հանրապետական բյուջեների մուտքերի ավելացմանը: |
| 9. | **Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռի մշակման մեթոդիկայի ներդնում**<br><br>**Էներգետիկ միջազգային գործակալության ստանդարտներին համապատասխան ազգային էներգետիկ հաշվեկշռի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքման և հաշվետվությունները ներկայացնելու համակարգերի, կանոնների և ընթացակարգերի սահմանում**<br>Հայաստանի Հանրապետությունում Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայումս չի կազմվում միջազգային չափանիշներին համապատասխանող տարեկան էներգետիկ հաշվեկշիռ, որը պետք է ծառայի էներգախնայողության չափելի միջոցառումների ծրագրավորման և ջերմոցային գազերի կադաստրի կազմման համար անհրաժեշտ բազա: Գերակա խնդրի իրականացման արդյունքում կստեղծվի ընթացակարգ, որը սահմանում է՝<br>• Հայաստանի էներգետիկ հաշվեկշռի մշակման և ջերմոցային գազերի գույքագրման համար անհրաժեշտ վարչարարական տվյալների և ձեռնարկությունների մակարդակով հիմնական էներգետիկ ցուցանիշները ներկայացնելու և հավաքելու պարտադիր պահանջ,<br>• Կարգավորող և ինստիտուցիոնալ շրջանակների նախագիծ, որը սահմանում է |

| 1 | 2 |
|---|---|
| | Հայաստանի էներգետիկ հաշվեկշռի մշակման և ջերմոցային գազերի գույքագրման համար անհրաժեշտ վարչարարական տվյալների և ձեռնարկությունների մակարդակով հիմնական ցուցանիշները ներկայացնելու և հավաքելու պարտավորությունները,<br>• Տվյալների հավաքման, վերլուծության և ներկայացնելու գործիք, որը նախատեսված է համապատասխան պետական մարմինների և ձեռնարկությունների համար,<br>• Արդիականացված էներգետիկ հաշվեկշիռ և ջերմոցային գազերի գույքագրում (կադաստր):<br>• |
| | **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն** |
| 10. | **Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում՝ 300.0 հազար մանրաձկան բացթողում Սևանա լիճ**<br><br>«Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում՝ 300.0 հազար մանրաձկան բացթողում Սևանա լիճ» գերակա խնդրի իրականացումը բխում է «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009 թվականի աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 876-Ն որոշման հավելվածի 3-րդ կետից, ինչպես նաև «Սևանա լճի արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1755-Ն որոշումով:<br>Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների վերարտադրությունը բնական պայմաններում վտանգված է դրանց ձվադրավայրերը կորցնելու, ջրի օգտագործման սխալ քաղաքականության, ջրի որակի վատթարացման կամ ուղղակի ֆիզիկական ոչնչացման պատճառով: Սևանա լճում իշխանի համալրման աճի անհրաժեշտ տեմպերի պահպանման և բնական պայմաններում նրա գոյատևման ապահովման նպատակով ծրագրով նախատեսվում է 300.0 հազար գեղարքունու և ամառային իշխանի կենսունակ մանրաձկների աճեցում և բացթողում Սևանա լիճ: |
| 11. | **Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով 200 հեկտար ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացում**<br><br>Ըստ կանխատեսումների 2012 թվականին Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման դեպքում ջրի տակ կմնա 200 հեկտար անտառածածկ տարածք, որի մաքրման աշխատանքների կատարման նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը նախատեսվել է 125400,0 հազ. դրամ գումարի չափով:<br>Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացումը 2012 թ. համար հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծմանն ուղղված քայլերը պետք է լինեն լճի ջրի մակարդակի բարձրացման դինամիկայի ուսումնասիրումը, ջրածածկվող տարածքների կանխատեսումը և ջրի տակ մնացող անտառածածկ տարածքների ծառաթփային բույսերի հեռացումը: Նշված միջոցառումը բխում է «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքներից և նախատեսվել է նաև Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2012 թվականի տարեկան ծրագրի նախագծում: |

| 1 | 2 |
|---|---|
| 12. | **«Արփի լիճ» ազգային պարկի կարողությունների զարգացում**<br><br>«Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) շրջանում պահպանվող տարածքների ստեղծում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) միջոցով, մեկնարկել է 2007թ. նոյեմբերին և նախատեսվում էր ավարտել 2011 թ. դեկտեմբերի 31-ին: Սակայն բնակլիմայական պայմանների հետ պայմանավորված՝ «Արփի լիճ» ազգային պարկի հիմնադրման ծրագրի ավարտը տեղափոխվել է 2012 թվական:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1151-Ն որոշմամբ հաստատվել է «Արփի լիճ» ազգային պարկի սահմանների նկարագիրը և հատակագիծը:<br>Հաստատման գործընթացում է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկի 2011-2015 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:<br>Ծրագրի ավարտման տարում ապահովվելու է «Արփի լիճ» ազգային պարկի հիմնադրման համար անհրաժեշտ հիմնական կարողությունների զարգացման գծով միջոցառումների իրականացում, այդ թվում՝<br>• ավարտված շինարարության շահագործման փաստագրում, դրանց կահավորում և տեխզինում, տեղեկատվական նյութերի, ցուցատախտակների և պաստառների պատրաստում և տեղադրում.<br>• ազգային պարկի քարտեզի և սեփականության իրավունքների գրանցում պետական կադաստրում.<br>• ազգային պարկի անձնակազմի համար դասընթացների անցկացում.<br>• պահպանության գոտու զարգացմանն ուղղված ներդրումների ծրագրով նախատեսված միջոցառումների (տնտեսությունների ստեղծում՝ մեղվաբուծական և այլն) իրականացում.<br>• ազգային պարկի պաշտոնական բացման արարողության անցկացում:<br>• |
| 13. | **Արարատյան դաշտավայրում ստորերկրյա ջրերի արդյունավետ օգտագործման ապահովում**<br><br>«Արարատյան դաշտավայրում ստորերկրյա ջրերի արդյունավետ օգտագործման ապահովում» գերակա խնդրի իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքից, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի ապրիլի 30-ի «Արարատյան դաշտավայրում (Արարատի և Արմավիրի մարզեր) ստորերկրյա խորքային (այդ թվում՝ ինքնաշատրվանող) հորերի օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 352-Ա որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 28.12.2009 թ. N 13.5/[14582]-09 և 26.04.2011 թ. N 02/24.2/6404-11 հանձնարարականներից:<br>Արարատյան դաշտավայրում ստորերկրյա ջրային ռեսուրսների պաշարները չվտանգելու համար անհրաժեշտ է իրականացնել շարունակական վերահսկողություն ստորերկրյա ջրային ռեսուրսների անտնտեսվար օգտագործման, ոչ նպատակային օգտագործման, ապօրինի խորքային հորերի հորատման և ստորերկրյա ջրերի ապօրինի արդյունահանման, ստորերկրյա ջրերի չափաքանակներից ավելի արդյունահանման, ինչպես նաև ձկնաբուծական տնտեսություններին ներկայացված պահանջների կատարման նկատմամբ: |

| 1 | 2 |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | |
| 14. | **«Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում, այդ թվում՝ մեթոդական ցուցումներին համապատասխան, փորձարարական 10 գերատեսչությունների կողմից ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾԾ հայտի հետ մեկտեղ յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ներկայացում» գերակա խնդիր հանդիսանալու վերաբերյալ** |

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Բյուջետային գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով վերջինիս որակապես նոր ուղղվածություն տալու համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերջին տարիներին նախաձեռնվել է միջոցառումների իրականացում՝ ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման գծով: Տարիներ շարունակ հանրապետությունում ձևավորված պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման հիմքում դրված էին ծրագրի իրականացման համար պահանջվող, հատկացված և օգտագործված ռեսուրսների ցուցանիշները: Նման ցուցանիշները և դրանց համադրումներն ի վիճակի չեն եղել տալու լիարժեք տեղեկատվություն ինչպես վերլուծողներին, այնպես էլ՝ որոշումներ ընդունողներին ծրագրի նպատակների, դրանց հասնելու համար առաջարկվող ուղիների, սպասվելիք արդյունքների և ընդհանրապես ծրագրի արդյունավետության մասին: Ուստի և պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման և դրա հիման վրա ռազմավարական որոշումների որակը բարելավելու տեսանկյունից անչափ կարևորվում է պետական գործառույթների իրականացման համար տրամադրվող բյուջետային ռեսուրսների ծախսման ցուցանիշների դիտարկումից անցում կատարելը ծրագրի շրջանակներում իրականացվող գործունեության և ստացվող արդյունքների դիտարկմանը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 2005 թվականից նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բյուջետավորման մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսների) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված եղանակին աստիճանական անցման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծման համար: Արդյունքում, նշված անցումային գործընթացում ընդգրկված պետական կառավարման մարմինների թիվը 2007 թվականի վերջին կազմել է 14, իսկ ՀՀ 2010 թվականի բյուջետային գործընթացում այդ աշխատանքներում արդեն փորձնական կարգով ընդգրկվել են բոլոր պետական կառավարման մարմինները՝ ներառյալ ուժային կառույցները: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալում ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ընդգրկված մարմինների գծով նախատեսված ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը գերազանցել է 50 տոկոսը, իսկ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով այն գերազանցում է 75 %-ը:

Փորձնական կարգով իրականացված աշխատանքների արդյունքների հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի N 48/18 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգը, որի համատեքստում էլ շարունակվել են բարեփոխումների հետագա խորացման աշխատանքները: Ըստ այդմ, ՀՀ պետական բյուջեների նախագծերը, ավանդական ձևաչափին զուգահեռ, մշակվել են նաև ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով և ներառվել են համապատասխան տարիների բյուջետային փաստաթղթերում: Մասնավորապես, ՀՀ 2010 և 2011 թվականների պետական բյուջեների նախագծերի բաղկացուցիչ մաս հանդիսացող՝ ՀՀ կառավարության բյուջետային ուղերձների կազմում ներառվել են նաև պետական կառավարման մարմինների գերատեսչական մակարդակով իրականացվող ծրագրերի կատարողական չափորոշիչները (արդյունքները), որոնք նաև հաստատվել են ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին»

| 1 | 2 |
|---|---|
| | N1522-Ն և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշումներով:<br>Բոլոր պետական կառավարման մարմինների համապատասխան մասնագետների մասնակցությամբ 2010 թվականի փետրվարին կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ՝ նվիրված բյուջետային ծախսային ծրագրերի արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշների մոնիթորինգի համակարգի ներդրման և դրա մասին հաշվետվությունների կազմմանն առնչվող հարցերին: 14 պետական կառավարման մարմինների 2009 և 2010 թվականների տարեկան հաշվետվություններով ներկայացված արդյունքային ցուցանիշների գծով իրականացվել է փորձնական մոնիթորինգ:<br>ՀՀ 2012 թվականի բյուջետային գործընթացում փորձնական կարգով ներդրվել են ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող նոր տարրեր՝ ա. ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգ՝ համաձայն որի էլ կազմվել է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագիծը, բ. ծրագրով նախատեսված փորձարարական երեք գերատեսչություններ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն) կազմել և իրենց 2012-2014 թթ. ՄԺԾԾ հայտերի կազմում ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացրել բյուջետային ծրագրի նկարագրերը (անձնագրերը):<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրային ֆինանսների արդյունավետ պլանավորման (արդյունքի հիման վրա ծրագրավորման) համար կարևոր խնդիր է յուրաքանչյուր բյուջետային ծրագրով անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերի և թիրախների սահմանումը: Այդպիսի հնարավորություն ընձեռում է բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր) փաստաթղթի ստեղծումը և նրա ներդրման շրջանակի ընդլայնումը: Այս ուղղությամբ արդեն իսկ 2012 թվականի բյուջետային գործընթացում ձեռք բերված փորձը ենթադրում է նշված փաստաթղթի կազմման մեթոդաբանության լրամշակում, նրա ներդրման շրջանակի ընդլայնում, ինչպես նաև այդ բյուջետային ծրագրերն իրականացնող պետական կառավարման մարմիններին խորհրդատվության տրամադրման անհրաժեշտություն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրային ֆինանսների պլանավորման համար յուրաքանչյուր բյուջետային ծրագրով անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերի և թիրախների սահմանումն է:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>2012 թվականին նախատեսվում է բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման մեթոդական ցուցումների լրամշակում և տրամադրում գերատեսչություններին: Այդ ցուցումներին համապատասխան փորձարարական 10 գերատեսչություններ ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾԾ հայտի հետ մեկտեղ կներկայացնեն յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր): |
| 15. | **«Պետական կառավարման մարմինների կողմից բյուջետային ֆինանսավորման հայտերի նաև տարածքային (ըստ մարզերի) ծախսերի բացվածքով կազմման մշակույթի ներդրում» գերակա խնդիր հանդիսանալու վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն բոլոր մարզերի համար ընդունվել են սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրեր, ինչպես նաև ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը: Սակայն դեռևս մշակված չէ այն գործիքակազմը, որը հնարավորություն կտա գնահատելու նշված ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումը: Դրանցից մեկն էլ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից մշակվող բյուջետային ֆինանսավորման հայտերն են, որոնք ներկայումս չեն պարունակում տեղեկատվություն առաջարկվող բյուջետային ծախսերի տարածքային (ըստ մարզերի) բացվածքի վերաբերյալ: Միջոցառումը նպատակ ունի կարգավորելու այդ բացը: |

| 1 | 2 |
| --- | --- |
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվող և ՀՀ պետական կառավարման մարմիններին տրամադրվելիք 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և ներկայացնելու մեթոդական ցուցումներում ներառել խորհրդատվություն բյուջետային ֆինանսավորման հայտի՝ տարածքային բաշխվածքով կազմման վերաբերյալ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բյուջետային քննարկումների ժամանակ նաև տարածքային զարգացման հարցերի առավել խորացված դիտարկման գործընթաց:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով առաջարկվող ծախսային ծրագրերի գծով բյուջետային հատկացումների տարածքային (ըստ մարզերի) բացվածքի և իրականացվելիք ծրագրերի վերլուծության առկայություն:<br>Բյուջետային քննարկումների արդյունավետության բարձրացում: |
| 16. | **«Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հաստատում» գերակա խնդիր հանդիսանալու վերաբերյալ**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հարկային և մաքսային օրենսդրության վերանայման գործընթացն իրականացվում է որևէ իրավական ակտով չամրագրված սկզբունքների հիման վրա, ինչը շատ դեպքերում հնարավորություն չի ընձեռում համապատասխան օրենսդրական փոփոխություններն իրականացնել նախապես սահմանված ռազմավարական ուղղություններին համահունչ: Միաժամանակ, խնդիրը կայանում է նրանում, որ այս պարագայում կատարվող օրենսդրական փոփոխությունները հաճախ բավարար չափով չեն կանոնակարգվում, և որպես հետևանք դրանցից ստացվող արդյունքները չեն համապատասխանում նախապես ակնկալվող արդյունքներին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գերակա խնդրի լուծման նպատակով առաջարկվում է համապատասխան իրավական ակտով ամրագրել առաջիկա տարիներին հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան առաջիկա տարիների համար կիրառելի հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքներն են:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է, որ առաջիկա տարիներին հարկային և մաքսային օրենսդրության վերանայման գործընթացը կլինի առավել կանոնակարգված և կիրականացվի տնտեսապես առավել հիմնավորված, արդարացի ու նոր ստեղծվող իրողություններին առավել համահունչ սկզբունքների հիման վրա: |
| 17. | **ՀՀ հանրային հատվածի պետական կառավարչական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ու 50 տոկոս և ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների՝ գերակա խնդիր հանդիսանալու վերաբերյալ**<br><br>1. Գերակա խնդրի նպատակը<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի ներդրումն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը վերջին տարիներին նախաձեռնել է ՀՀ հանրային հատվածի պետական կառավարչական մարմիններում, տեղական ինքնակառավար- |

| 1 | 2 |
|---|---|

ման մարմիններում պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ու 50 տոկոս և ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման գործընթացը: Մինչև «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի ներդրումը ներքին աուդիտի համակարգն իրականացնում էր միայն ֆինանսատնտեսական գործունեության ստուգում և եզրակացությունների ներկայացում, ինչը չի համապատասխանում ներքին աուդիտի միջազգային սահմանմանը և ներքին աուդիտի միջազգային ստանդարտներին: Պետական ներքին ֆինանսական հսկողությունն այն կարևորագույն տարրերից է, որը պետք է ապազայում ապահովի պետական ֆինանսների արդյունավետ և ճշգրիտ հսկողության սահմանումը: Ներքին աուդիտը հնարավորություն է տալիս անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական միջոցով հիմնարկների գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին՝ կազմակերպության ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 2010 թ. սկսած իրականացնում է ներքին աուդիտի վերափոխման, միջազգային ստանդարտներին համապատասխանեցման և ներդրման աշխատանքները: Միջազգային նորմերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունը մշակել և ներկայացրել է մի շարք նորմատիվ ակտեր: Արդյունքում 2011 թ. փետրվարի 5-ին ուժի մեջ է մտել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը, իսկ ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ հաստատվել են «Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության» ստանդարտները և ներքին աուդիտորների վարքագծի կանոնները:

2011թ. մշակվել են ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների և ներքին աուդիտի ձեռնարկի և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցի նախագծերը: 2011 թ. ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել էր նշված նախագծերի փորձնական կիրառումը: 2011 թ. նոյեմբերին ավարտվել են փորձնական 6 մարմիններում ներքին աուդիտի մեթոդաբանության պիլոտավորման գործընթացները:

Պիլոտավորման արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, պետք է իրականացվեն ներքին աուդիտի մեթոդաբանության լրամշակումները, ինչին զուգահեռ պետք է մշակվեն նաև ներքին ու արտաքին աուդիտորների համագործակցության և ներքին աուդիտորների աշխատանքների արտաքին գնահատման կառուցակարգերը: Նշված միջոցառումները պետք է զուգորդվեն նաև հանրային կազմակերպություններում՝ ներքին աուդիտի համակարգի փաստացի ներդրման գործարկմամբ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գերակա խնդրի լուծման նպատակով առաջարկվում է լրամշակել ու ամբողջականացնել ներքին աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրությունը և համապատասխան իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի հրաման և այլն) հստակեցնել այն մարմինները, որտեղ 2012 թ-ից ստեղծվելու են ներքին աուդիտի ստորաբաժանումները՝ սահմանելով այդ ստորաբաժանումներին ներկայացվող չափորոշիչները: Միաժամանակ, հարկավոր է միջոցներ ձեռնարկել ներքին աուդիտի ստորաբաժանումների ղեկավարների համար համապատասխան վերապատրաստման դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

**2. Կարգավորման առարկան**

Սույն նախաձեռնության առարկան է Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի համակարգի ներդրման գործարկումն ու հետագա զարգացումը:

**3. Ակնկալվող արդյունքը**

Ներքին աուդիտի ներդրման գործարկումը հնարավորություն կընձեռի հանրային հատվածի կազմակերպությունների ընթացիկ և տարեկան գնահատականների՝ հավաստիացման ու խորհրդատվական ծառայությունների միջոցով բարելավելու ու մեծացնելու հանրային կազմակերպությունների գործունեության արդյունքները: Ակնկալվում է, որ ներքին աուդիտի ներդրման գործընթացի սկիզբը կտրվի պետական կառավարման կենտրոնական կառավարման ապարատի բոլոր մարմիններում, ինչպես նաև հանրային հատվածի մյուս կազմա-

| 1 | 2 |
|---|---|
| | կերպություններում: 2012 թ-ի արդյունքներով վերջնական ամբողջականացված կլինի ներքին աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրությունը և կենտրոնական կառավարման ապարատի առնվազն 10 մարմիններում կլինեն ներդրված ու փաստացի գործող ներքին աուդիտի ստորաբաժանումներ: Միաժամանակ, կենտրոնական կառավարման ապարատի ներքին աուդիտի ստորաբաժանումների առնվազն 25 ղեկավարներ և (կամ) աշխատողներ կանցնեն համապատասխան վերապատրաստման դասընթացներ: |
| 18. | **«Պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակումը կանոնակարգելու նպատակով իրավական ակտերի նախագծերի ներկայացում» գերակա խնդիր հանդիսանալու վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի նպատակը**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ այն կազմակերպությունները, որոնց հաշվետու տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը, կամ որոնց ակտիվների հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջին դրությամբ գերազանցում է մեկ միլիարդ դրամը, համարվում են խոշոր և պարտավոր են իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը: Միաժամանակ նույն հոդվածով սահմանված այն դրույթը, որ ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել մամուլում, ինտերնետով կամ տարածվել գրքույկների ձևով, էական բարդություն է առաջացնում հրապարակման վերաբերյալ օրենքի պահանջի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում:<br>**1,2, Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գերակա խնդրի լուծման նպատակով առաջարկվում է լրամշակել ու ամբողջականացնել պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակումը կանոնակարգող իրավական ակտերը (օրենք, ՀՀ կառավարության որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի հրաման և այլն)՝ հստակեցնելով այն մարմինները, որոնք կիրականացնեն վերահսկողությունն օրենքի պահանջի նկատմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն նախաձեռնության առարկան է Հայաստանի Հանրապետությունում պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակման կանոնակարգումը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարությունը մշակել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Նախագծով հստակեցվել է, որ ֆինանսական հաշվետվությունները պետք է հրապարակվեն http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հիմք ընդունելով «Ինտերնետով հրապարակային ծանուցումների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի «Ինտերնետով հրապարակային ծանուցման ենթակա հայտարարության ընդունման, կայքը վարող անձին փոխանցման, կայքում հայտարարությունների տեղադրման և արխիվացման ժամկետների սահմանման կարգը և հայտարարության տեքստը ներկայացնելու էլեկտրոնային ձևաչափը հաստատելու մասին» N 174-Ն որոշումը: Նշված մոտեցումն օգտագործողներին հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում օգտվել տեղեկատվական միասնական բազայից, իսկ պետական մարմիններին՝ առավել արդյունավետ կերպով իրականացնելու վերահսկողության, վերլուծության և մոնիթորինգի հետ կապված խնդիրները: Արդյունքում, կլուծվեն նաև պարտադիր հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման նկատմամբ պետական մարմինների կողմից ներկայումս վերահսկողություն իրականացնելու հետ կապված օրենսդրական կարգավորում պահանջող խնդիրները: |

| 1 | 2 |
|---|---|
| | Միաժամանակ գերակա խնդրի լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրելու նաև այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը: |
| **Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն** | |
| 19. | **Մթնոլորտային երևույթների կառավարման և ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացման նպատակով մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծրագրի մշակում և հաստատում**<br><br>Մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծրագրի մշակումը և հաստատումը պայմանավորված է գյուղացիական տնտեսությունները կարկտահարությունից պաշտպանելու, հնարավոր վնասները նվազեցնելու անհրաժեշտությամբ:<br>Ներկայումս օգտագործվում է պրոպան-բութան գազախառնուրդով գազագեներատորային մեթոդը: Դրա կիրառումը հանրապետությունում նպատակահարմար է, քանի որ հնարավոր չէ սահմանամերձ գոտիները գոյություն ունեցող այլ մեթոդներով պաշտպանել:<br>2011 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության («ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ) համակարգում գործում են 119 գազագեներատորային, ռադիոմոդեմային հեռակառավարվող հակակարկտային կայաններ, որոնցից՝<br>– Արագածոտնի մարզում՝ 15 կայան,<br>– Արարատի մարզում՝ 48 կայան,<br>– Արմավիրի մարզում՝ 55 կայան,<br>– Լոռու մարզում՝ 1 շարժական կայան:<br>118 կայանները կարկտահարությունից պաշտպանության տակ են վերցրել երեք մարզերի 42 գյուղական համայնքների ընդհանուր 33500 հեկտար տարածքից 9440 հեկտար ինտենսիվ մշակության գյուղատնտեսական մշակաբույսեր:<br>Աշխարհում հակակարկտային աշխատանքներ տարվում են հետևյալ մեթոդներով՝ հրթիռահրետանային, ավիացիոն, գազագեներատորային, ռեագենտով գործող գեներատորային և այլն: Հանրապետությունում գազագեներատորային մեթոդով պաշտպանվող տարածքներում կարկտի դեմ պայքարի աշխատանքներն իրականացվում են հաջողությամբ և մեծ արդյունավետությամբ:<br>«ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կողմից պարբերաբար կատարվում են նաև փորձարարական աշխատանքներ՝ հորդառատ ու երկարատև անձրևների դեմ պայքարի և բարենպաստ եղանակի ապահովման համար: Կայանների կողմից պաշտպանվող տարածքներում հորդառատ անձրևների դեպքում կատարվում են փորձարարական կրակոցներ՝ ճշտելու համար ներգործության ազդեցությունը մթնոլորտային երևույթի վրա: Փորձարկումները ցույց են տալիս, որ ներգործության հետևանքով, որոշ դեպքերում (թույլ և միջին հզորության ամպեր) ազդեցությունը նկատելի է:<br>Հանրապետությունում կարկտի դեմ պայքարի աշխատանքներն իրականացվում են ՀՀ Արագածոտնի և Լոռու մարզերում տեղակայված ռադիոլոկացիոն կայանների միջոցով, որոնցով կատարվում են մթնոլորտային վտանգավոր երևույթների (կարկուտ, հորդառատ անձրևներ, ամպրոպներ) շուրջօրյա դիտարկումներ: Շուրջ 25 տարի գործող այդ ռադիոլոկացիոն կայանները ֆիզիկապես մաշված են, պահանջ ունեն հաճախակի նորոգման: Դրանց խափանման դեպքում հակակարկտային կայանների նույնիսկ նորմալ աշխատանքի պարագայում հնարավոր չէ առանց ռադիոլոկացիոն կայանի կատարել կարկտավտանգավոր պրոցեսների վրա ակտիվ ներգործության աշխատանքներ: Նշված ռադիոլոկացիոն կայանները կարիք ունեն նորերով փոխարինման:<br>Ծրագիրը հնարավորություն կտա ավելացնելու հակակարկտային կայանների քանակը, որի արդյունքում կավելանան կարկտից պաշտպանվող տարածքները: Ռադիոլոկացիոն կայանների, սարքերի, սարքավորումների ձեռքբերմամբ կբարձրանա կարկտի դեմ պայքարի արդյունավետությունը: |

| 1 | 2 |
|---|---|
| 20. | **Ճգնաժամային կառավարման կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության գործարկում**<br><br>Վերջին տարիներին գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի և պատահարների վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում տեղի է ունենում դրանց թվի զգալի և կայուն աճ: Արտակարգ իրավիճակների թվի շարունակական աճը բարդացնում է դրանց սպասարկման գործընթացը:<br>Առկա են որոշ խնդիրներ՝ կապված մի շարք գործառույթների իրականացման հետ, հատկապես, կապի միջոցներով և տեխնիկական հնարավորություններով պայմանավորված խնդիրները: Մասնավորապես, բջջային հեռախոսով ահազանգման դեպքում ուղղությունների անհամապատասխանություն արտակարգ իրավիճակի առաջացման և սպասարկման տարածքի հետ (հանրապետության տարածքում օպերատիվ հեռախոսահամարները բջջային կապի ցանցում բաժանված չեն ըստ սպասարկման տարածքների, ինչը հաճախ դառնում է արձագանքման ուշացման պատճառ), ինչպես նաև առկա սարքավորումների սահմանափակ հնարավորությունը միաժամանակ բազմաթիվ ահազանգեր ընդունելու և համապատասխան ուղղություններով արձագանքում կազմակերպելու գործում (ԽՍՀՄ ժամանակաշրջանից ժառանգած սարքավորումները թույլ են տալիս ընդունել միաժամանակ 5-10 ահազանգ, ինչը մայրաքաղաքի միլիոնից ավելի բնակչության պարագայում բավարար չէ):<br>Այլ ծառայությունների հերթապահ մասերում գրանցված ահազանգերի հետևանքով (արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվությունը հաճախ գրանցվում է «1-02», «1-03» և այլ ծառայությունների կողմից) հաճախ արձագանքման գործընթացին արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ծառայությունները ժամանակին չեն ներգրավվում կամ ներգրավվում են ուշացումով և ոչ համարժեք ծավալով:<br>Ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել արտակարգ իրավիճակների հարցերով միասնական տեղեկատվական դաշտ (տեղեկատվական բազաներ), իրականացնել մոնիթորինգային տվյալների ընդունում հնարավոր հետևանքների կանխատեսման և մոդելավորման նպատակով:<br>Այսպիսով, մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության շահագործումը կնպաստի ահազանգերի արդյունավետ սպասարկմանը, կբարձրացնի այդ գործընթացում ներգրավված շահագրգիռ ծառայությունների փոխհամագործակցության մակարդակը, կապահովի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկումը և բնակչության պաշտպանվածության աստիճանը՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում: |
| | **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** |
| 21. | **2012 թվականին Լոնդոնի 30-րդ օլիմպիական խաղերին և 14-րդ պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցություն**<br><br>**1. Գերակա խնդրի նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության տարբեր մարզաձևերի հավաքական թիմերի մարզիկների՝ աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, օլիմպիական և պարալիմպիկ խաղերին լավագույն ձևով նախապատրաստվելը և հաջող մասնակցելը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետության կողմից աջակցություն, հովանավորների մասնակցություն, զանգվածային լրատվամիջոցներով լուսաբանում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներին աջակցության ցուցաբերում, մեթոդական և գործնական օգնության տրամադրում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համար ուսումնամարզական |

| 1 | 2 |
|---|---|
| | հավաքների և մրցաշարերի կազմակերպում, օլիմպիական և պարալիմպիկ խաղերին լավագույն ձևով նախապատրաստվելու համար պայմանների ստեղծում:<br>**3. Գերակա խնդրի առաջարկվող լուծումների կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բարձր արդյունքների ձեռքբերում, մրցանակային տեղերի զրավում, մրցակցական փորձի ձեռքբերում, օլիմպիական և պարալիմպիկ շարժման գաղափարների տարածում: |
| 22. | **Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կայացում**<br><br>**1. Գերակա խնդրի նպատակը**<br>Համապարփակ ուսումնասիրությունների իրականացման միջոցով երիտասարդության շրջանում առաջնային լուծում պահանջող հիմնախնդիրների բացահայտում, ծրագրային առաջարկների մշակում և դրանց լուծում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Երիտասարդական ուսումնասիրություններն իրականացվել են 2006 թվականին մշակված Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի շրջանակներում: Այդ տեղեկատվությունը կորցրել է իր արդիականությունը, և առաջացել է երիտասարդության հիմնախնդիրների վերաբերյալ նոր ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երիտասարդության ոլորտում հիմնավորված և հետևողական պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով երիտասարդության շրջանում պարբերաբար ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացում՝ դրամաշնորհային ծրագրերի և աութսորսինգի հնարավոր բոլոր ձևերի ու գործիքակազմի կիրառմամբ, հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:<br>Ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է «Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանն ուղղված ծրագրեր» տողով նախատեսված միջոցների առնվազն 50%-ի հաշվին հայտարարել դրամաշնորհային մրցույթ՝ երիտասարդական ուսումնասիրությունների իրականացման և համապատասխան ուղեցույց-գրքույկների հրատարակման նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Համալիր ուսումնասիրությունների հիման վրա երիտասարդության հիմնախնդիրներն արծարծող առաջարկությունների փաթեթները ներկայացնելը՝ Հայաստանի Հանրապետությունում 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության մշակման համար:<br>**3. Գերակա խնդրի առաջարկվող լուծումների կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդության հիմնախնդիրների վերաբերյալ առավել լիարժեք տեղեկատվության ձեռքբերում և դրա հիման վրա լուծման ուղիների առաջարկում: |
| | **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** |
| 23. | **«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի անցկացում**<br><br>«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի նպատակն է սփյուռքում հայ մշակույթի և մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը նպաստելը, Հայաստան-Արցախ-սփյուռք մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, համագործակցության նոր ձևաչափերի ձևավորմանն աջակցելը, Հայաստանի և սփյուռքի երիտասարդ ստեղծագործողների միջև մշակութային կապերի խորացմանը, համատեղ ծրագրերի մշակմանը և իրականացմանը սատարելը, ժամանակակից հայ արվեստի զարգացմանը և գովազդմանն օժանդակելը, մշակույթի ոլորտում համահայկական մասնագիտական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը նպաստելը, սփյուռքի ուծացման և լեզվամշակութային ինքնության |

| 1 | 2 |
|---|---|
| | կորստի դեմ պայքարելը, ազգային մշակույթի պահպանության գործին սփյուռքի ստեղծագործող երիտասարդությանը ներգրավելը, համահայկական մշակութային ծրագրերի համատեղ մշակման և իրականացման մեխանիզմներ ստեղծելը, սփյուռքի ստեղծագործական խմբերի և մշակութային կազմակերպությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական տվյալների շտեմարան ստեղծելը՝ նպաստելով նրանց գործունեության վերաբերյալ Հայաստանում տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: |
| 24. | **«Սփյուռք» ամառային դպրոցի հիմնում**<br><br>Աշխարհասփյուռ հայության առջև այսօր ծառացած է հայապահպանության գերխնդիրը: Հեռու լինելով հայրենիքից՝ գոյատևման պայքարում հայը հաճախ կորցնում է իր ազգային նկարագիրը, իր լեզուն, հեռանում է ազգային արմատներից, ավանդույթներից, սովորություններից, դադարում է կրել դարերով ստեղծված հայկական մշակութային արժեքները: Դրա համար անհրաժեշտ է պայքար ծավալել լեզվամշակութային ուծացման դեմ, նպաստել հայ ազգային ինքնության միասնական բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու արմատավորմանը, հայապահպան գործունեությանը, մշակութային ժառանգության պահպանմանը, պաշտպանմանը, զարգացմանը և տարածմանն ուղղված միջոցառումներ իրականացնել, նպաստել նաև Հայաստանի հետ սփյուռքահայության, հայկական կառույցների կապերի ամրապնդմանը և զարգացմանը, սփյուռքահայությանը նոր լիցքեր հաղորդելուն՝ ընդլայնելով Հայաստան-սփյուռք գործակցության զարգացմանը, սփյուռքի համար և համահայկական ծրագրերի մշակման ու իրականացման գործում անհատների, հայկական կազմակերպությունների մասնակցության շրջանակի ընդլայնմանը, սփյուռքի համար մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործմանը: |
| **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** | |
| 25. | **Մարզային առողջապահական համակարգերի զարգացման ծրագրի իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ մարզային առողջապահության համակարգերի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումն է:<br>**1,1, Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Ներկայում ՀՀ մարզերի առողջապահական համակարգը շարժվում է զարգացման ուղով. վերանորոգվել են ՀՀ մարզային բազմաթիվ բժշկական կենտրոններ (Իջևանում, Հրազդանում, Ապարանում, Արարատում, Արմավիրում, Գորիսում, Գավառում): Շուրջ 145 առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր նույնպես վերանորոգվել կամ կառուցվել են: Բժշկական հաստատությունները հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, դեռ շատ են անմխիթար պայմաններում աշխատող բժշկական հաստատությունները, որոնց թե շենքային վիճակը և թե տեխնիկական հագեցվածությունը չի բավարարում միջազգային ոչ մի նորմի: Նշվածը, անկասկած, անդրադառնում է նաև մատուցվող բժշկական ծառայությունների որակի վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոլորտի հետագա զարգացման և արդիականացման նպատակով 2012 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել իրականացնել մարզային բժշկական հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքներ: Մասնավորապես, շահագործման կհանձնվի Գյումրու նորակառույց բժշկական կենտրոնը, կնախագծվի և կկառուցվի Մեղրու բժշկական կենտրոնը, կհիմնանորոգվեն Կապանի, Աբովյանի և Բերդի բժշկական կենտրոնները: Կմեկնարկեն Վանաձորի բժշկական համալիրի կառուցման շինարարական աշխատանքները: Բոլոր բժշկական կենտրոնները կհագեցվեն բժշկական և ախտորոշիչ սարքավորումներով և նոր կահույքով: Առողջապահական համակարգի առաջ- |

| 1 | 2 |
|---|---|
| | նային օղակը զարգացնելու նպատակով նախատեսվում է նոր ամբուլատորիաների կառուցում 13 գյուղական համայնքներում, ինչպես նաև չորս ամբուլատորիաների վերանորոգում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գերակա խնդրի կարգավորման առարկան է ՀՀ մարզերում որակյալ, մատչելի, արդի, միջազգային չափանիշներին համապատասխանող առողջապահական համակարգի ստեղծման միջոցով ՀՀ մարզերի համաչափ զարգացումը:<br>**3.Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի կատարման արդյունքում կբարձրանա մատուցվող բժշկական ծառայությունների որակը, մատչելիությունը, ինչպես նաև դիմելիությունը բժշկական հաստատություններ:<br>Նշվածի արդյունքում ակնկալվում է, որ կբարելավվեն մարզերում հանրային առողջության հիմնական ցուցանիշները: |
| 26. | **Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների կիրառման ընդլայնում, նոր ծրագրերի ընտրություն և ներդրում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Բժշկական ծառայությունների փոխհատուցման գների մոտեցումն իրական ծախսերին, լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում, բնազավառում առկա ստվերային, ոչ պաշտոնական վճարների լեգալացում, բնակչության կողմից կատարվող ծախսերի կանխատեսելիության ավելացում, բուժանձնակազմի վարձատրման կանոնակարգում և բարձրացում:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը<br>Բնակչության բուժօգնության իրականացման ընթացքում պետության կողմից փոխհատուցվող ծառայությունների գների ցածր լինելը հանգեցնում է ստվերային, ոչ պաշտոնական վճարների պահանջի բուժհաստատությունների կողմից, հատկապես, երբ այդ ծառայությունները շատ ծախսատար են և բազմաէտապային, պահանջում են զգալի ներդրումներ: Պետական ֆինանսավորումը նշված ծրագրերում չի բավարարում իրական ծախսերը փոխհատուցելու համար, և ծախսերի մեծ մասն իրականացվում են ոչ պաշտոնական վճարների տեսքով:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է քննարկել ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների կիրառման ընդլայնումը և ներդրումն այնպիսի ծրագրերում, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, ուռուցքաբանական և արյունաբանական ծառայությունները, հեմոդիալիզը, ոչ ծախսատար, բայց համավճարների կիրառման ենթակա սեռական ճանապարհով փոխանցվող և մաշկային հիվանդությունները և այլ ծրագրերում: Քննարկման արդյունքում կհստակեցվեն և առնվազն երկու ծրագրերում կնախատեսվի համավճարային մեխանիզմների ներդրում: Սահմանված կարգով կհստակեցվեն այդ ծրագրերում ամբողջությամբ անվճար, համավճարի վճարմամբ և վճարովի բուժօգնության տեսակները և հիվանդությունների ցանկերը: Համավճարի ներդրման նպատակով սահմանված կարգով կսահմանվեն այդ ծառայությունների իրական գները, իրական գների և պետական ֆինանսավորման տարբերության ընդունելի սահմաններում կսահմանվեն ըստ մարզերի և Երևան քաղաքի, ըստ հիվանդության տեսակների համավճարի դիֆերենցված գները: Ընտրված ծրագրերում կսահմանվի նաև բուժօգնության այդ տեսակներում ընդգրկված բուժաշխատողների վարձատրման կարգը: Նախատեսվում է համավճար չկիրառել բնակչության սոցիալապես անապահով խմբերի, վերակենդանացման ծառայությունների, ինչպես նաև կյանքի համար վտանգ սպառնացող առանձին հիվանդությունների դեպքերում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բնակչության բուժօգնության իրականացման ընթացքում փոխհատուցման համավճարային եղանակի ներդրման նպատակով պետության կողմից փոխհատուցվող առնվազն երկու ծրագրերի ընտրություն: Ընտրված ծրագրերում ծառայությունների իրական գների, իրական գների և պետական ֆինանսավորման տարբերության շրջանակներում ընդունելի սահմաններում ըստ մարզերի և Երևան քաղաքի, ըստ հիվանդության տեսակների համավճարի դիֆերենցված գների սահմանում: |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Ընտրված ծրագրերի շրջանակներում ակնկալվում է բուժօգնության կազմակերպման բարելավում, մատուցվող ծառայությունների մատչելիության բարձրացում, իրականացվող ծախսերի կանխատեսելիության ավելացում, բուժանձնակազմի վարձատրման կանոնակարգում, աշխատավարձի բարձրացում, ինչպես նաև ոչ պաշտոնական վճարումների նվազեցում: Նշված ծրագրերում համավճարի մեխանիզմների ներդրումը կբերի ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավման, գները կմոտեցվեն տվյալ հիվանդությունների բուժման իրական ծախսերին: |
| 27. | **Մանկական վերակենդանացման մարզային ծառայությունների հզորացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մարզային մակարդակում մանկական վերակենդանացման ծառայությունների հզորացման խնդրի գերակայությունը և միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մարզերի հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում մանկական և նորածնային վերակենդանացման ծառայությունների առկա ենթակառուցվածքների ոչ բավարար ծավալներով և հագեցվածությամբ, առանձին մարզերում դրանց իսպառ բացակայությամբ, և հետևաբար այդ ոլորտում բուժօգնության մատչելիության և որակի բարելավման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունննների ներկա վիճակը**<br>Ներկայումս մանկական և նորածնային վերակենդանացման ծառայությունները գործնականում առկա են Երևան քաղաքում և միայն Շիրակի մարզում: Բոլոր մնացած մարզերից վերակենդանացման և ինտենսիվ բուժօգնության կարիք ունեցող նորածինները և մինչև 18 տարեկան երեխաները տեղափոխվում են մայրաքաղաքի համապատասխան կլինիկաներ՝ «արագ արձագանքման» արտագնա ծառայությունների միջոցով, որոնց հզորությունները հաճախ չեն բավարարում առկա կարիքները: Մտահոգում է հատկապես մանկական հիվանդանոցային օգնության մատչելիության ու որակի անկման միտումը, ինչպես նաև երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի աճը, հատկապես, մարզային մակարդակում, այդ մակարդակում մանկական վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ծառայությունների ժամանակակից սարքավորումներով անբավարար հագեցվածությունը, լաբորատոր-գործիքային հետազոտությունների սահմանափակ հնարավորությունները, նեոնատոլոգների և մանկաբուժական մասնագիտությունների գծով մարդկային ռեսուրսների անբավարար մակարդակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մարզային մակարդակում մանկական վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ծառայությունների կարողությունների հզորացում, մանկաբուժական կադրերով և սարքավորումներով պատշաճ հագեցում, միջմարզային նշանակության մանկական և նորածնային վերակենդանացման առանձին ծառայությունների ստեղծում, մասնավորապես՝<br>- մարզային նշանակության մանկական/նորածնային վերակենդանացման ծառայությունների ստեղծում Կապանում և Վանաձորում.<br>- մանկական/նորածնային առկա ծառայության հզորացում Գյումրու ավստրիական մանկական հիվանդանոցում.<br>- Երևան քաղաքի մանկական/նորածնային հիվանդանոցային բուժօգնություն մատուցող բժշկական կազմակերպությունների «արագ արձագանքման» արտագնա ծառայությունների բարելավում.<br>- մանկական վերակենդանացման մարզային ծառայությունների հետ ֆունկցիոնալ կապի և մասնագիտական խորհրդատվական ու կազմակերպամեթոդական աշխատանքների ուժեղացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երեխաների հիվանդանոցային բուժման մատչելիության և որակի բարելավում, մանկական վերակենդանացման մարզային ծառայությունների հզորացում: |

| 1 | 2 |
| --- | --- |
| | **3. Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել երեխաների հիվանդանոցային անհետաձգելի ծառայությունների որակը և մատչելիությունը (այդ թվում՝ աշխարհագրական), նվազեցնել մանկական անհետաձգելի արտագնա ծառայության աճի միտում ունեցող կանչերի և մարզ-Երևան ուղեգրումների քանակը, նվազեցնել երեխաների հիվանդանոցային մահաբերությունը և վերջնական արդյունքում կրճատել հանրապետությունում մանկական մահացության ցուցանիշը: |
| 28. | **Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժհաստատությունների ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայացվող գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի նիստի 29.7/87916-11 N 35 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի 21-րդ դրույթի պահանջներից և նպատակ է հետապնդում նախ և առաջ ոլորտում առկա որոշ բացասական երևույթների վերացման կամ կանխարգելման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և որպես հետևանք ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացումը:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունննների ներկա վիճակը**<br>Ներկայումս առողջապահության ոլորտի բուժհաստատություններն իրենց կազմակերպաիրավական կարգավիճակով շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություններ են և ՀՀ առողջապահության նախարարությունը նրանց հետ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման գծով պայմանագրային հարաբերությունների շրջանակներում կարգավորման մեխանիզմներ է կիրառում, ինչի արդյունքում 2011 թ. վերջում կանխատեսվում է, որ ստվերայնության նվազեցման հաշվին առողջապահության ոլորտի հարկային բազան կավելանա 3,6 մլրդ դրամով, իսկ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացումը կկազմի շուրջ 1,5 մլրդ դրամ, այդ թվում՝ աշխատավարձից եկամտահարկ՝ շուրջ 720,0 մլն դրամ, սոցիալական վճարներ՝ շուրջ 520,0 մլն դրամ շահույթով և պետական մասնակցությամբ ընկերությունների շահաբաժիններ՝ շուրջ 260,0 մլն դրամ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որպես խնդրի լուծում առաջարկվում է մշակել պետական պատվեր իրականացնող և վճարովի ծառայություններ մատուցող կազմակերպություններում իրականացվող բուժօգնության և սպասարկման վճարովի ծառայությունների նվազագույն գների սանդղակ, ինչը հնարավորություն կտա վերահսկելի և թափանցիկ դարձնելու բուժհաստատությունների եկամտային մասի կամ հարկային բազայի ավելացումները:<br>Միաժամանակ առաջարկվում է իրականացնել պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների կողմից կատարվող ծախսերի արդյունավետության բարձրացում առողջապահության ոլորտին հատուկ ծախսային ուղղությունների նորմատիվների սահմանման, աշխատանքի վարձատրության կարգերի կատարելագործման միջոցով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում պետական պատվեր իրականացնող և վճարովի ծառայություններ մատուցող բուժհաստատությունների եկամուտների ավելացումը, իրականացվող ծախսերի արդյունավետության բարձրացումը, բուժաշխատողների աշխատավարձերի բարձրացումը և որպես հետևանք՝ ստվերային երևույթների կրճատումը, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի եկամտային մասի ավելացումը:<br>**3. Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը:**<br>Խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է պետական պատվեր իրականացնող և վճարովի ծառայություններ մատուցող բուժհաստատությունների եկամուտների ավելացում՝ 10-20%-ով: |

| 1 | 2 |
|---|---|
| 29. | **Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումների ծրագրի իրականացում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Բարեփոխումների իրականացման նպատակն է ՀՀ-ում դեղերի արտադրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, ինչպես նաև այդ չափանիշներով վերապատրաստել դեղարտադրության ոլորտում աշխատող մասնագետներին:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը<br>ՀՀ-ում դեղերի արտադրության ոլորտը կանոնակարգելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 734-Ն որոշմամբ հաստատվել է «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու մասին» ժամանակացույցը: Հայաստանի Հանրապետությունում դեղերի և դեղանյութերի պատշաճ բաշխման գործունեության կանոնները հաստատելու վերաբերյալ կառավարության ներկայումս մշակվող որոշման նախագիծը ելնելու է այդ ժամանակացույցի 5-րդ, 6-րդ և 10-րդ կետերի պահանջից:<br>Դեղերի փորձագիտական կենտրոնում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում տեղական դեղարտադրողների համար «Դեղերի գրանցման պահանջների ժամանակակից մոտեցումները» թեմայով սեմինար կազմակերպելու ուղղությամբ: Բանակցություններ են ընթանում միջազգային համապատասխան կառույցներից փորձագետների խումբ հրավիրելու, համատեղ ուսումնասիրություններ կատարելու և դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կադրային ներուժի հզորացում, կարողությունների զարգացում, փորձագետների շարունակական վերապատրաստում.<br>- Պատշաճ արտադրական գործունեության կանոնների համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում.<br>- «Պատշաճ բաշխման գործունեության (ՊԲԳ) հավաստագրի տրամադրման և վերանայման կարգը և հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակելը և ներկայացնելը ՀՀ կառավարություն.<br>- Պատշաճ արտադրական գործունեության կանոնների և Պատշաճ բաշխման գործունեություն կանոնների ներդրման նպատակով Դեղագործական տեսչությունների համագործակցության (PIC/S) միջազգային կառույցին անդամակցության հայտը ներկայացնելու նախապատրաստական աշխատանքների իրականացում:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ-ում դեղերի արտադրությունը, ինչպես նաև դեղերի շրջանառության կարգավորումն ամբողջությամբ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելը:<br>3. Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը<br>Նշված իրավական ակտերի ընդունման և դրանց պահանջների կատարման արդյունքում ՀՀ-ում դեղերի արտադրությունը կհամապատասխանի միջազգային ստանդարտներին, տեղական արտադրության դեղերի արտահանման ծավալները կմեծանան, արտադրության տեխնիկական հագեցվածությունը կհամապատասխանի ժամանակակից միջազգային չափանիշներին, դեղերի որակի, արդյունավետության, անվտանգության վերահսկողության մակարդակը կբարձրանա, դեղարտադրության ոլորտում աշխատող համապատասխան մասնագետները կվերապատրաստվեն: |

| 1 | 2 |
|---|---|
| 30. | **ՀՀ-ում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ճշգրիտ ախտորոշման և արդյունավետ բուժման ծրագրի իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերջին տարիներին ՀՀ բնակչության շրջանում քաղցկեղով և արյունաբանական հիվանդություններով հիվանդացությունը նկատելիորեն աճել է:2010 թ-ին 2004 թ-ի համեմատ արձանագրվել է քաղցկեղով հիվանդացության շուրջ 23% աճ (192.1-ից մինչև 233.2-ը՝ 100.000 բնակչի հաշվով): Օնկոհեմատոլոգիական հիվանդություններով հիվանդացությունը ևս զգալիորեն աճել է: Մասնավորապես, 2003 թ. գրանցվել է 10.8 հիվանդ՝ 100.000 բնակչի հաշվով, 2007 թ.՝ 15.3, 2009 թ.՝ 16.6, իսկ 2010 թ.՝ 16.4 հիվանդ:<br>Զգալի վատթարացում է նկատվում նաև այլ վիճակագրական տվյալների առումով՝ քաղցկեղի տարածվածությունը վերջին տարիներին աճել է՝ 0.83%-ից 2004 թ. հասնելով 0.93%-ի 2009 թ., իսկ մահացությունը 4.497 դեպքից (139.9՝ 100.000 բնակչի հաշվով) 2004թ. աճել է մինչև 5.501 դեպքի (168.9՝ 100.000 բնակչի հաշվով)՝ 2010 թ. մահացության պատճառների մեջ զրավելով երկրորդ տեղը սիրտ-անոթային հիվանդություններից հետո:<br>Ներկայումս ՀՀ-ում ոչ վարակիչ հիվանդությունների պատճառով մահացության տոկոսն ամենաբարձրն է ընդհանուր մահացության կառուցվածում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Օնկոլոգիական և հեմատոլոգիական հիվանդությունների բուժման արդյունավետության առումով կարևոր նշանակություն ունեն համապատասխան ենթակառուցվածքների և ժամանակակից սարքավորումների առկայությունը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող բուժման մեթոդների կիրառումը: Ներկայումս գործող բուժհաստատությունների ֆիզիկական վիճակը, առկա ենթակառուցվածքները չեն համապատասխանում արդի պահանջներին, բժշկական սարքավորումները հնամաշ են և կարիք ունեն արդիականացման: Հայաստանում ուռուցքաբանության և հեմատոլոգիական ոլորտներում առայժմ ներդրված չեն բուժման միօրինականացված պրոտոկոլներ և ստանդարտներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոչ վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ սիրտ-անոթային համակարգի և ուռուցքաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և արդյունավետ բուժմանը կարող է նպաստել նախատեսվող մասսայական սկրինինգային ծրագրի իրականացումը:<br>Հաշվի առնելով ՀՀ-ում վերջին տարիներին օնկոլոգիական և հեմատոլոգիական հիվանդություններից հիվանդացության, տարածվածության և մահացության ցուցանիշների զգալի աճը, ինչպես նաև վերոնշյալ 2 բնագավառներում մատուցվող ծառայությունների արդիականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է ուռուցքաբանական և հեմատոլոգիական ծառայությունների բարելավման ծրագրի, ինչպես նաև հիվանդությունների վաղ հայտնաբերման և արդյունավետ բուժման նպատակով սկրինինգների իրականացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ-ում առողջապահական ոլորտի արդիականացման և ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով մահացության մակարդակի նվազեցման նպատակով Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող նոր վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ուռուցքաբանության, հեմատոլոգիական ոլորտի արդիականացման ծրագիր, ինչպես նաև անցկացնել մասսայական սկրինինգ:<br>Ուռուցքաբանության ոլորտի արդիականացման ծրագիրը կիրականացվի Երևան քաղաքում նոր Ուռուցքաբանության կենտրոնի կառուցման նպատակահարմարության ուսումնասիրություն անցկացնելուց հետո: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերով՝<br>• գնահատել Հայաստանում օնկոլոգիական ծառայությունների վիճակը՝ ներառյալ առկա շինությունների վիճակը, բժշկական սարքավորումների պիտանելիությունը և մաշվածությունը, մարդկային ռեսուրսները, Հայաստանում կիրառվող օնկոլոգիական հիվանդու- |

| 1 | 2 |
|---|---|
| | թյունների բուժման մեթոդները և վերջիններիս արդյունավետությունը, կիրառվող բժշկական ուղեցույցների և արձանագրությունների արդյունավետությունը, Հայաստանում օնկոլոգիական բուժման կարիք ունեցող հիվանդների թիվը և այլն.<br>• մշակել ժամանակակից չափանիշներին համապատասխանող Ուռուցքաբանության նոր կենտրոնի կառուցման տեխնիկական առաջադրանքի և ճարտարապետական նախագիծը.<br>• իրականացնել նախագծող կազմակերպության ընտրություն և կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքների ճարտարապետանախագծային աշխատանքներ.<br>• անցկացնել շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ՝ հիմնվելով մշակված ճարտարապետական նախագծի վրա.<br>• Ուռուցքաբանության նոր կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ<br><br>Հեմատոլոգիական ոլորտի արդիականացման և ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման ծրագիրը ևս կիրականացվի Երևան քաղաքում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերով՝<br>• մշակել Հեմատոլոգիական կենտրոնի տեխնիկական առաջադրանքը և ճարտարապետական նախագիծը.<br>• իրականացնել նախագծող կազմակերպության ընտրություն և կենտրոնի արդիականացման համար շինարարական աշխատանքների ճարտարապետանախագծային աշխատանքներ.<br>• անցկացնել շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ՝ հիմնվելով մշակված ճարտարապետական նախագծի վրա.<br>• իրականացնել Հեմատոլոգիական կենտրոնի արդիականացման և ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման աշխատանքներ.<br>• կենտրոնը հագեցնել անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, բժշկական պարագաներով և կահույքով.<br>• իրականացնել բուժանձնակազմի մասնագիտական վերապատրաստում:<br>Մասսայական սկրինինգային ծրագիրը հիմնականում ուղղված կլինի սիրտ-անոթային հիվանդությունների և կանանց շրջանում առավել տարածված օնկոլոգիական հիվանդությունների (արգանդի վզիկի քաղցկեղի և կրծքագեղձի քաղցկեղի) վաղ հայտնաբերմանը: Նախատեսվում է իրականացնել նաև ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների մասսայական իրազեկման ծրագիր:<br>**3. Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունում կկառուցվի նոր Ուռուցքաբանության կենտրոն, կարդիականացվի Հեմատոլոգիական կենտրոնը և վերջինիս կազմում կհիմնվի ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունք: Նշված 2 բժշկական հաստատությունները կհագեցվեն արդի բժշկական սարքավորումներով և կահույքով՝ ինչը կնպաստի ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերման, ճշգրիտ և ժամանակին ախտորոշման, արդյունավետ և ժամանակակից բուժման մեթոդների կիրառմանը: Կիրականացվի նաև համապատասխան բժշկական անձնակազմի կրթում:<br>Կենտրոնները կապահովեն որակյալ և մատչելի բժշկական ծառայությունների մատուցում ՀՀ բնակչությանը:<br>Մասսայական սկրինինգները կհանգեցնեն սիրտ-անոթային և օնկոլոգիական հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, ինչը կնպաստի քննարկվող հիվանդությունների աճի կրճատմանը և հիվանդների ժամանակին ու արդյունավետ բուժմանը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն** |
| 31. | **Վանաձոր–Ֆիոլետովո երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների իրականացմանն ուղղված իրավական դաշտի ձևավորման վերաբերյալ**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>2012 թվականի գերակա խնդիր հանդիսացող՝ Վանաձոր–Ֆիոլետովո երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների իրականացմանն ուղղված իրավական ակտերի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի շինարարության ծրագրի իրականացման հետ կապված հարցերի կարգավորման և հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից: Նոր երկաթգիծը կոչված է ապահովելու ինչպես միջմարզային, այնպես էլ միջհանրապետական փոխադրումների հեռավորությունների և արժեքի զգալի կրճատում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման կարիք ունեն նոր երկաթգծի շինարարության՝ Հայաստանի Հանրապետության կողմից ֆինանսավորման մասնակցության, ընտրված ծրագծի վրա հնարավոր հիմնախնդիրների լուծման և այլ հարցեր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման խնդիրն առաջարկվում է լուծել շահավետ պայմաններով՝ վարկային միջոցների հաշվին, իսկ ընտրված ծրագծի հետ կապված հիմնախնդիրները պետք է լուծվեն գործող օրենսդրության շրջանակներում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Վանաձոր–Ֆիոլետովո երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների իրականացման հարցերը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող Վանաձոր–Ֆիոլետովո երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների անխափան իրականացում: |
| 32. | **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման վերաբերյալ**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման և անվտանգության բարձրացման, ինչպես նաև ծրագրի հարցերի կարգավորման և հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է, որ Հայաստանը կունենա կրկնապատկված արտահանում և մոտ 1.8 անգամ ավելի ներմուծում՝ մինչև 2017 թ-ը, նվազելու է միջանցքով ճանապարհորդելու ժամանակը 4-ից մինչև 2 օր, կրկնապատկվելու է օրական միջին երթևեկության ցուցանիշը 3000-ից մինչև 6000, միջանցքի երկայնքով ստեղծվելու է ենթակառուցվածք, այսինքն՝ նոր աշխատատեղեր, եկամուտներ, նվազելու են ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը և ճանապարհի ու տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>• 2011 թ-ի հոկտեմբերի 10-ին ծրագրի առաջին և երկրորդ տրանշերի, որոնք միավորված են մեկ շինարարական ծրագրում, շինարարի ընտրության մրցույթի շրջանակներում ներկայացվել են մասնակից կապալառուների հայտերը: Ներկայումս իրականացվում է |

| 1 | 2 |
|---|---|
| | հայտերի գնահատման գործընթացը: 2011 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսվում է Տրանշ 1-ի և Տրանշ 2-ի շինարարական աշխատանքների միասնական պայմանագրի շնորհումը:<br>• Ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության գործընթացի շրջանակներում 2011 թ-ի հոկտեմբերի 7-ին ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատվեց մրցույթին մասնակցող ընկերությունների կարճ ցուցակը, որից հետո հոկտեմբերի 11-ին հրապարակվեց առաջարկները ներկայացնելու հրավերը: Առաջարկները ներկայացնելու վերջնաժամկետն է 2011 թ-ի նոյեմբերի 24-ը:<br>• Աշտարակ-Թալին ճանապարհի օտարվող հողի և գույքի ճշգրտման ու գնահատման խորհրդատուն ավարտել է պայմանագրով նախատեսված ազդեցության ենթարկված ակտիվների գնահատման, տեղազննման և չափագրման աշխատանքները:<br>• Առաջին փուլի շինարարական աշխատանքների վերահսկողության և երկրորդ ու երրորդ փուլերի ծրագրերի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող խորհրդատուն ավարտել է ծրագրի երկրորդ տրանշի նախագիծը, որը ներառվել է կապալառուի մրցույթում: Ներկայումս խորհրդատուն ավարտին է հասցնում ծրագրի երրորդ տրանշի նախագիծը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրները կարգավորելու նպատակով 2012 թ-ին նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝<br>• սկսել 1-ին և 2-րդ տրանշերի շինարարական աշխատանքների իրականացումը.<br>• ավարտել երկրորդ տրանշի շրջանակներում հողերի օտարման և տարաբնակեցման գործընթացը.<br>• ծրագրի երրորդ տրանշի վարկային համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների իրականացումը և վարկային համաձայնագրի կնքման ապահովումը.<br>• ծրագրի երրորդ տրանշի կապալառուի ընտրության իրականացումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության իրականացում, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման, շինարարական աշխատանքների և հողերի օտարման ու տարաբնակեցման գործընթացների իրականացում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի 2012 թվականին ծրագրավորված խնդիրների լուծումների արդյունքում կունենանք Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի առաջին երեք տրանշերի շինարարական աշխատանքների կատարման ընթացքը: |
| 33. | **«Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացի իրականացում**<br><br>«Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության գործընթացի իրականացմանն ուղղված միջոցառումների մշակում և կազմակերպում:<br>«Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության գործունեության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի նոյեմբերի 3-ի N 938-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը պետք է Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնի առաջարկություններ «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու գործընթացի ապահովմանն ուղղված հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից մշակված առաջարկությունների հիման վրա կընտրվի ընկերության կառավարման արդյունավետ տարբերակ և կիրականացվեն միջոցառումներ ընկերությունը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացն իրականացնելու ուղղությամբ:<br>Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացը: |

| 1 | 2 |
|---|---|
| | Գերակա խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում է «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության գործունեության կառավարման էական բարելավում, Հայաստանի Հանրապետության կանոնավոր ուղևորափոխադրումների որակի բարձրացում: |
| 34. | **«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը վարձակալության հանձնելու գործընթացի իրականացման մասին**<br><br>«Հայաստանի հեռուստառադիոհեռարձակման ցանց» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքի վարձակալության տրամադրման գործընթացի իրականացումն առաջարկվում է սահմանել որպես գերակա խնդիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 30.06.2011 թ. N 948-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ տարածքում ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցնելու միջոցառումների ծրագիրն արդյունավետ իրականացնելու համար:<br>Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները վարձակալության հանձնելու գործընթացը:<br>Գերակա խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության կողմից ՀՀ տարածքում հեռուստատեսային և ռադիոհեռարձակման թվային համակարգի շահագործման արդիականացում՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի թվային հեռարձակման ապահովում ՀՀ ամբողջ տարածքում՝ համապատասխանեցնելով ազգային ստանդարտներին: |
| **ՀՀ քաղաքաշինության նախարարություն** | |
| 35. | **Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) վարկանիշային դասակարգման սանդղակում առնվազն հինգ քայլով Հայաստանի դիրքի բարձրացում**<br><br>Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը: Առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քայլերի, ինչպես նաև տեսչական բարեփոխումների շարունակական իրականացումը:<br>Անչափ կարևոր է նաև օրենսդրական բարեփոխումների գործընթացում ազդեցության գնահատման գործիքի կատարելագործումը: Այդ ուղղությամբ կառուցապատման ընթացակարգերը սահմանող իրավական ակտերում կատարվել են անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ՝ կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված կառուցապատման ընթացակարգերի տարանջատումը՝ ըստ քաղաքաշինական օբյեկտի ռիսկայնության աստիճանի: Նշված սկզբունքի կիրառման միջոցը թույլ է տվել հասնել կառուցապատման ընթացակարգերի կրճատմանը՝ միևնույն ժամանակ ապահովելով կառուցվող օբյեկտի անվտանգությունը՝ մարդկանց և շրջակա միջավայրի վրա վերջինիս ազդեցության տեսանկյունից:<br>Շարունակվելու են աշխատանքներ «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բոլոր բաղադրիչների բարելավման, մասնավորապես, քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:<br>Շինարարության ոլորտի հետագա բարեփոխումների գործում կուսումնասիրվեն ոլորտի միջազգային դրական փորձը, այլ երկրներում առկա գործընթացները, կիրառվող մոդելները, ինստիտուցիոնալ առանձնահատկությունները: Քաղաքաշինության ոլորտում գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրա- |

| 1 | 2 |
|---|---|
| | կանացմամբ կապահովվի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավումը:<br>Արդյունքում ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել տարածաշրջանում գործարար և ներդրումային լավագույն միջավայր ունեցող երկիր՝ մասնավորապես բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ: |
| 36. | **Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովում**<br><br>Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագիրն որպես 2012 թվականի գերակա խնդիր դիտարկելու առաջարկությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի դրույթների ապահովման անհրաժեշտությամբ:<br>Ծրագիրն ուղղված է ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ մինչև 2013 թվականը ձևավորված պետական պարտավորությունների կատարմանը:<br>Ծրագիրն սկիզբ է առել 2008 թվականին՝ համաձայն նշված հայեցակարգով նախատեսված բնակարանային ապահովման ուղղությունների: Ընդ որում, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով ՀՀ 2009-2011 թթ. պետական բյուջեներով միջոցները հատկացվել են բնակարանային շինարարության ծրագրի իրականացման համար:<br>2008-2010 թվականներին աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի շրջանակներում լուծվել են ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Տավուշի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան 1711 ընտանիքների բնակարանային խնդիրները:<br>2011 թվականին ընթացք է ստացել ՀՀ 2011 թվականին պետական բյուջեի՝ աղետի գոտու բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով ՌԴ վարկային միջոցների հաշվին անշարժ գույքի ձեռքբերում ծրագրով նախատեսված 25,972,081.1 հազ. դրամ միջոցների սահմաններում 3223 բնակարանների (բնակելի տների) շինարարությունը:<br>Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, դեռ խնդրի լուծման կարիք ունեցող մոտ 1800 ընտանիքների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով 2012 թվականին պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում կանխատեսվում է բարելավել մոտ 1500 ընտանիքների բնակարանային պայմանները: |
| 37. | **Շենքերի և շինությունների անվտանգությանը, սեյսմակայունությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումների իրականացում**<br><br>«Շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրանքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 17 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգի պահանջների ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև շենքերի, շինությունների, շինանյութերի արտադրության իրականացմամբ՝ միջազգային և եվրոպական ստանդարտներին համապատասխան:<br>Նախագծի մշակումը նպատակաուղղված է բնակչության առողջության և բարեկեցու- |

| 1 | 2 |
|---|---|
| | թյան բարելավմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, շենքերի, շինությունների և շինանյութերի անվտանգությանը, շենքերի սեյսմակայունության և էներգաարդյունավե-տության բարձրացմանը, ինչպես նաև շենքերի նշանակության վերաբերյալ սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործողությունների կանխարգելմանը:<br>ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ մեկ բազմաբնակարան շենքի շինարարության փորձնական ծրագրի իրականա-ցումը պայմանավորված է նոր կառուցվող շենքերի, մասնավորապես, բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման, շինարարության ոլորտում կիրառվող էներգաարդյունավետ տեխնոլոգիաների առաջադեմ փորձի ներդրման անհրա-ժեշտությամբ:<br>Նշված շենքի շինարարարությունն իրականացվելու է Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարու-թյան ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Գլոբալ էկոլոգիական ֆոնդի (ԳԷՖ) կողմից հանրապետությունում իրականացվող «Շենքերի էներգետիկ արդյու-նավետության բարձրացում» ծրագրի աջակցությամբ:<br>Փորձնական ծրագրի իրականացմամբ կցուցադրվեն շենքերի նախագծման, կառուցման և շահագործման ժամանակ ջերմային պաշտպանության և էներգասպառման նվազեցման ժամանակակից պահանջների կատարմանն ուղղված նոր մոտեցումների և ճարտարա-գիտական լուծումների կիրառկման հնարավորություններն ու տնտեսական նպատակահար-մարությունը, ինչպես նաև նախադրյալներ կստեղծվեն շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների ներդրման համար: |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարություն** | |
| 38. | **Համայնքներում նախադպրոցական կրթության ինստիտուցիոնալ հիմքերի ներդրում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում, մինչդեռ հանրապետության շատ համայնքներում դեռևս չկան նախադպրոցական կրթական ծառայություններ: Նախադպրոցական ծառայությունների մատչելիությունը խիստ անհավասար է Հայաստանի տարբեր տարածքներում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ծրագիրը նպատակաուղղված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականաց-վող՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակ-ներում նախատեսվող նախադպրոցական կրթության ոլորտի բարելավման հիմնախնդիր-ների իրականացմանը, նախադպրոցական և տարրական կրթության շարունակականության ապահովմանը: Այն բխում է ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հետագա ընթացքի մասին» N 29 արձանագրային որոշման 15-րդ կետի պահանջներից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության 4 մարզերում՝ Շիրակում, Լոռիում, Տավուշում և Կոտայքում տարբեր մոդելներով իրականացնել առնվազն 80 միկրոծրագիր՝ երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպման, երեխաների դպրոցի նախա-պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովմանն ուղղված ենթածրագրերի միջոցով:<br>Ծրագրի շրջանակներում նախադպրոցական հաստատություններ չունեցող և թերկոմպ-լեկտավորված համայնքային նախադպրոցական հաստատություններում՝ գյուղական և քաղաքային համայնքներում կկազմակերպվեն ոչ ծախսատար նախադպրոցական կրթական ծառայություններ: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Հաստատություններին մրցութային կարգով կտրամադրվեն դրամաշնորհներ՝ նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման համար, ինչպես նաև կիրականացվեն նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացներ: Կրթական ծրագրերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման աշխատանքներին և կադրերի վերապատրաստման դասընթացների գործին կաջակցեն միջազգային, հասարակական կազմակերպությունները:<br>Միկրոծրագրերի արժեքները կձևավորվեն վարկային միջոցներից տրամադրվող դրամաշնորհից, համայնքի և ծնողական ներդրումներից:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ռազմավարական ծրագրով նախատեսված թիրախային ցուցանիշի՝ ավագ տարիքային խմբի երեխաների ընդգրկվածության ավելացում՝ շուրջ 1500-ով: |
| 39. | **Հանրակրթության համակարգում նոր գործառույթների և ժամանակակից տեղեկատվական ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 2010-2012 թթ. գերակա ուղղությունններն են 12-ամյա կրթության դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության ստեղծման և ներդրման աշխատանքները, ինչպես նաև հանրապետության մանկավարժական և ղեկավար կադրերի վերապատրաստումը: Հանրակրթության որակի բարելավման տեսանկյունից կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային ուսումնական նյութերի ներդրման, առանձին գործող ավագ դպրոցների համար որակյալ ինտերնետի հասանելիության խնդիրները: Հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորման տեսանկյունից կարևորվում է դպրոցի ներքին և արտաքին գնահատման գործիքակազմի և վարկանիշավորման համակարգի մշակման ու ներդրման խնդիրները: Սովորողների տրամաբանական մտածողությունը զարգացնելու տեսանկյունից շեշտադրվում է «Շախմատ» առարկայի ներդրումը տարրական դպրոցում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ոլորտի զարգացման կարևոր խնդիրներից է 12-ամյա կրթության առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը:<br>Կրթության զարգացման նոր առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի ներդրման հետ կապված աճել են մանկավարժական կադրերի վերապատրաստման ծավալները, որոնք, պայմանավորված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, պետք է լինեն շարունակական:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Իրականացվելու է մանկավարժական կադրերի վերապատրաստում և ատեստավորում՝ համաձայն նոր առարկայական ծրագրերի և ՏՀՏ-ի կիրառության բնագավառների, ինչպես նաև ուսուցիչներին տարակարգի շնորհում: Գործընթացի իրականացման արդյունքներն էականորեն կանդրադառնան մանկավարժների մասնագիտական առաջխաղացման վրա: Ավագ դպրոցների համար որակյալ ինտերնետի հասանելիությունն ապահովելու նպատակով բոլոր ավագ դպրոցների տարածքներում գործելու է անլար (Wi-Fi) կապ: Տեղեկատվական տեխնոլոգիաներն ուսումնական գործընթացում արդյունավետ կիրառելու նպատակով ստեղծվելու են դպրոցական դասագրքերի էլեկտրոնային շտեմարաններ: Իրականացվելու է տարրական դասարանների աշակերտներին բոլոր դասագրքերով ապահովում՝ դասագրքերի մատչելիությունն ապահովելու նպատակով: Հանրակրթական դպրոցում ապահովվելու է «Շախմատ» առարկայի դասավանդման շարունականությունը:<br>Ավարտական և միասնական քննությունների գործընթացի վերանայման նպատակով իրականացվելու է միասնական քննությունների թեստային առաջադրանքներ պարունակող շտեմարանների, առարկայական ուղեցույցների մշակում, հրատարակում: Հանրակրթական |

| 1 | 2 |
|---|---|
| | ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորման նպատակով մշակվելու և ներդրվելու է հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգը:<br>2. Կարգավորման առարկան<br>Հանրակրթական բարեփոխումների համատեքստում ուսուցման բովանդակության համապատասխանեցում «Հանրակրթության պետական չափորոշչի» պահանջներին, «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման» կարգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծում:<br>3. Ակնկալվող արդյունքը<br>Շուրջ 8000 ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում, շուրջ 2050 ուսուցիչների տարակարգերի շնորհում, շուրջ 400 տնօրենների հավաստագրում:<br>Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի ընդլայնում՝ փոխկապակցված դպրոցների թիվը հասցնելով 1403-ի (ՀՀ դպրոցների 96.3 տոկոսը):<br>Դպրոցների ադմինիստրատիվ գործառույթների իրականացման ավտոմատացման նպատակով անհրաժեշտ համակարգչային սարքավորումների և դպրոցի ադմինիստրատիվ գործառույթների իրականացման համար մշակված համակարգչային ծրագրային փաթեթների տրամադրում 1360 պետական հանրակրթական դպրոցներին:<br>Միաժամանակ, 2012 թվականին, նախատեսվում է «Ուսում-2» համակարգը ներդնել ՀՀ 1400 հանրակրթական դպրոցներում, հանրապետության 107 ավագ դպրոցների տարածքում անլար (Wi-Fi) կապի ապահովում, հանրակրթական դպրոցներում գործածվող դասագրքերի էլեկտրոնային շտեմարանների ստեղծում, տարրական դասարանների աշակերտներին բոլոր անհրաժեշտ դասագրքերով ապահովում, հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանում «Շախմատ» առարկայի ներդրում:<br>2012-2013 ուսումնական տարվա միասնական քննությունների գործընթացի բարելավման նպատակով նախատեսվում է գրավոր քննությունների 5000 և բանավոր քննությունների 1000 հարցից բաղկացած շտեմարանների մշակում և հրատարակում:<br>Հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորման նպատակով նախատեսվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրում: |
| 40. | **Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում նոր բովանդակային հենքի ներդրում և կադրերի մասնագիտական զարգացում**<br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական որակյալ կրթությունն ու ուսուցումը, որի ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացումներն ապահովելու և ոլորտը կարգավորելու նպատակով մշակվել և հաստատվել են մի շարք նորմատիվ փաստաթղթեր: Սակայն բարեփոխումները հիմնականում իրականացվել են օրենսդրական դաշտի, անձնակազմի վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման ուղղությամբ, իսկ նյութատեխնիկական բազայի հարստացման և վերազինման, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ իրականացված բարեփոխումները դեռևս շատ հեռու են արդիական լինելուց, ինչը հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման կարևորագույն գործոններից մեկը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>- կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավում.<br>- կրթական ծրագրերի համապատասխանեցում տնտեսական զարգացման պահանջներին.<br>- ուսուցման կարճաժամկետ ծրագրերի մշակում և ներդրում.<br>- դասավանդող կադրերի կարողությունների հզորացում.<br>- համակարգի մասնագետների տեղեկացվածության բարձրացում օտարերկրյա պետությունների փորձի և լավագույն ձեռքբերումների վերաբերյալ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>2012 թվականի ընթացքում նախատեսվում է՝<br>- նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական մասնագիտական 17 կրթական չափորոշիչների և 17 ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում.<br>- նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստում (շուրջ 800 դասախոս և արտադրական ուսուցման վարպետ, շուրջ 40 տնօրեն և տնօրենի տեղակալ): |
| 41. | **Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2005 թ. Հայաստանը պաշտոնապես միացել է Բոլոնիայի գործընթացին՝ ստանձնելով պատասխանատվություն իրականացնելու Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողությունների առանձին ուղղությունների և մասը դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ):<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող համակարգը չի ապահովում բյուջետային միջոցների օգտագործման բարձր արդյունավետություն, այն հիմնականում պայմանավորված է պետության կողմից բուհերին ըստ մասնագիտությունների տրվող չափաքանակների սահմանման և բաշխման գործընթացով, ինչպես նաև պետական կրթաթոշակների և ուսանողական նպաստների ձևավորման ու հատկացման սկզբունքների անկատարությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ բարձրագույն կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը ֆինանսավորման համակարգն է, որի նպատակն է ձևավորել և ներդնել բարձրագույն կրթության արդյունավետ և կայուն ֆինանսավորման համակարգ՝ դրանով իսկ մեծացնելով բարձրագույն կրթության մատչելիությունն ու որակը:<br>Մինչև 2013 թ. Որակավորումների ազգային համակարգը պետք է դառնա Հայաստանում կրթության և ուսուցման համընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ շնորհված որակավորումների որակը պետք է ապահովված լինի պետական չափորոշիչներով, որոնք անցել են եվրոպական վերլուծության քննությունը, և պետք է նպաստի աշխատուժի շարժունակությանը՝ տեղական և միջազգային մակարդակում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>- ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրման գործարկումն ապահովող միջոցառումների իրականացում.<br>- ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունից բխող միջոցառումների իարականացում. |

| 1 | 2 |
|---|---|
| | - բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում.<br>- «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի կազմակերպում և անցկացում.<br>- բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակում և ներդնում.<br>- բարձրագույն մասնագիտական կրթության 3 մասնագիտությունների կրկնակի դիպլոմների համակարգի ներդնում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>- կրթության որակավորումների շնորհման կարգի մշակում և հաստատում.<br>- նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգի մշակում և հաստատում.<br>- ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկի հաստատում.<br>- ուսանողի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշների և կարգի մշակում ու հաստատում.<br>- ուսման վարձերի ձևավորման մեթոդաբանության մշակում և հաստատում.<br>- ըստ մասնագիտությունների (կամ մասնագիտությունների խմբերի) և կրթական աստիճանների կրթության որակավորումների բնութագրերի հաստատում.<br>- բուհերի մրցակցային դաշտի ձևավորում.<br>- բարձրագույն կրթության ոլորտի տվյալների հավաքագրման, վերլուծման, օգտագործման և տարածման գործընթացների բարելավում.<br>- ՀՀ ԿԳՆ-ի կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի և բուհերի կարողությունների հզորացում՝ տվյալների վերլուծման, օգտագործման և տարածման հարցերում:<br>Հայաստանի որակավորումների ազգային համակարգը նշանակալի ներդրում է ունենալու մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում և դրանով իսկ նպաստելու է տեղական և միջազգային ճանաչում ունեցող որակավորումների մակարդակների շրջանակում մատչելիությանը, փոխադրմանն ու առաջխաղացմանը: Առանձնահատուկ կկարևորվի բարձրագույն կրթության համակարգի գրավչության բարձրացմանը միտված տեղեկատվական նյութերի ստեղծումն ու տարածումն արտերկրում:<br>Տարբեր երկրներում կիրառվող վարկանիշային (ռեյթինգավորման) համակարգերի սկզբունքներին համապատասխան ՀՀ բուհերի ազգային վարկանիշային, չափանիշների և մեթոդաբանության մշակում՝ ուղղված մրցակցային դաշտի ձևավորմանը:<br>ՀՀ բուհերի համագործակցության զարգացում՝ համատեղ կրթական ծրագրերի ստեղծման արդյունքում երկու դիպլոմների շնորհմամբ և այդ ծրագրերում եվրոպական չափայնության ներմուծման ուղղությամբ: Համատեղ կրթական ծրագրերի և որակավորումների ստեղծումը տեղական և եվրոպական բուհերի միջև նպատակ ունի ստեղծելու նպաստավոր պայմաններ այդ ծրագրերում ընդգրկված ուսանողների ու դասախոսների շարժունակության համար:<br>«Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպումը նպատակ ունի խթանել ուսանողների ուսումնառության և գիտելիքների հարստացման գործընթացը: |
| **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն** | |
| 42. | **Եվրամիության պահանջներին համապատասխան սննդամթերքի անվտանգության օրենսդրական փոփոխությունների իրականացում և ընթացակարգերի սահմանում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Անվտանգ սննդամթերքով սպառողների ապահովվածության մակարդակի բարձրացումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սննդի անվտանգության համակարգի զարգացումը և կիրառվող չափանիշները միջազգային ընդունված նորմերին համապատասխանեցնելու գործընթացը հանդիսանում է ագրարային ոլորտում տարվող քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Սննդամթերքի անվտանգության համակարգի կատարելագործման խնդիրներից է բնագա- |

| 1 | 2 |
|---|---|
| | վառը կարգավորող իրավաօրենսդրական հիմքերի համալրումը և կատարելագործումը, ոլորտի նյութատեխնիկական բազայի համալրումը և կադրային ապահովումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծմանն ուղղվող քայլերն են՝<br>• «Հայաստանի Հանրապետությունում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացում» Թվինինգ ծրագրի իրականացում.<br>- Հայաստանի Հանրապետությունում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության մոտարկման մեթոդաբանության ուսուցում.<br>- կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման կարողությունների, գործող ընթացակարգերի արդիականացում.<br>- հանրության շրջանում և մասնավոր հատվածում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում.<br>• Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենայի առանձնակի պահանջներ սահմանող» N 853/2004 կանոնակարգի մոտարկում ՀՀ օրենսդրությանը, բացերի հայտնաբերում և դրանց հիման վրա կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ներդրումն ապահովող իրավաօրենսդրական ակտերի մշակման և ընդունման, համակարգերի ներդրման գործընթացի կազմակերպումն է:<br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետությունում առաջին անգամ արտադրվող կամ շուկայահանվող նորահայտ և հատուկ նշանակության սննդամթերքի ու սննդային հավելումների շուկայահանման, ինչպես նաև սննդի շղթայում ընդգրկված տնտեսավարողների գործունեության իրականացման վայրի մասին լիազոր մարմնին տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի սահմանում:<br>Եվրամիության պահանջներին համապատասխան մարդու սպառման համար նախատեսված կենդանական ծագման մթերքի պաշտոնական վերահսկողության ընթացակարգերի ու պահանջների սահմանում:<br>Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի բնագավառներում մատուցվող ծառայությունների որակի բարելավում: Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում մինչև 72 հազ. հա տարածության վրա, հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացում՝ 8 հիվանդության դեմ: |
| 43. | **Գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հետսեփականաշնորհման ժամանակահատվածում ձևավորված գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն ու մասնատված հողաբաժինները սահմանափակում են գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացումը և լուրջ խոչընդոտ հանդիսանում ոլորտի արդյունավետության բարձրացման համար:<br>Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման, մրցունակության բարձրացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, մասնավորապես, կոոպերատիվների, ընկերությունների, ընկերակցությունների, ասոցիացիաների և կամավորության սկզբունքի վրա ստեղծված այլ միավորումների ձևավորման միջոցով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում անբավարար է օգտագործվում գյուղատնտեսության ռեսուրսային ներուժը: Վերջինս պայմանավորված է նաև տնտեսությունների փոքր չափերով և համատեղ գործելու խթանների բացակայությամբ: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է հստակեցնել գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը և իրականացնել կոոպերատիվների ձևա- |

| 1 | 2 |
|---|---|
| | վորման և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղված ծրագրեր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծմանը կնպաստի հետևյալ քայլերի իրականացումը՝<br>• հանրապետության 10 մարզերի գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների անհրաժեշտության և տվյալ տնտեսավարման ձևի առավելությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում.<br>• հանրապետության գյուղական համայնքներում տարբեր ուղղվածության առնվազն 10 կոոպերատիվների ստեղծմանն աջակցություն.<br>• գյուղատնտեսական կոոպերացիայի միջազգային լավագույն փորձի տեղայնացման նպատակով Եվրամիության աջակցության Թայեքս ծրագրի իրականացման համար հայտի ներկայացում.<br>• գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում (սերմերի, անասնազլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի առաջնահերթ տրամադրում և այլն):<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման կանոնակարգումը և գործունեության համար պայմանների ստեղծումը:<br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակը, գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը, կկրճատվի գյուղական աղքատությունը: |
| 44. | **Հայաստանի Հանրապետության համայնքներին գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մեխանիզմների կատարելագործում**<br><br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի 95 տոկոսի շահագործման ժամկետները գերազանցել են սահմանված նորմաները: Գյուղատնտեսական տրակտորների 48 տոկոսի շահագործման ժամկետը գերազանցում է 26 տարին: Ստեղծված իրավիճակը հանգեցնում է գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ծախսերի և կորուստների ավելացմանը, արտադրողականության նվազեցմանը և ծառայությունների սակագների աճին: Գյուղատնտեսությունում տնտեսավարողների ներկայիս վճարունակության պայմաններում հրատապ է դարձել գյուղական համայնքներին գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների մշակումը և կիրառումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի համալրումը հիմնականում իրականացվել է մի շարք դրամաշնորհային ծրագրերով: 1997 թվականից սկսած տարբեր դրամաշնորհների միջոցով հանրապետություն է ներմուծվել 885 տրակտոր և 116 կոմբայն: Որոշակի քանակության տեխնիկա է ներմուծվել նաև Համաշխարհային բանկի վարկային ծրագրի բաղադրիչներով և որոշ քանակություն բերվել է մասնավոր ներդրողների կողմից: Ներմուծված քանակությունը չափազանց փոքր է տեխնիկայի համալրման իրական պահանջարկի նկատմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գերակա խնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում է հետևյալ քայլերի իրականացումը՝<br>- մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածության փաստացի մակարդակի և դրանց վիճակի գնահատում (ըստ գյուղատնտեսական հողատեսքերի տեխնիկայով ապահովվածության, տեխնիկայի պատրաստակամության մակարդակի, ըստ տեսակների շահագործման ժամկետների և այլն).<br>- մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի գնահատում.<br>- գյուղատնտեսական տեխնիկա մատակարարող լիզինգային ընկերությունների, արտ- |

| 1 | 2 |
|---|---|
| | երկրի արտադրողների հետ հանրապետություն մատչելի պայմաններով տեխնիկայի մատակարարման ուղղությամբ բանակցությունների վարում, դրամաշնորհային կարգով գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հայտերի ներկայացում.<br>- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 43 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում.<br>- գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքներ իրականացնող համատեղ գործունեության պայմանագրով և կոոպերացման սկզբունքով գործող կառույցներին աջակցություն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գերակա խնդրի կարգավորման առարկան է հանրապետության մարզերի և տարածաշրջանների կտրվածքով գյուղատնտեսաական տեխնիկայի վիճակի և պահանջարկի գնահատումը, մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մեխանիզմների մշակումն ու կիրառումը:<br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումից ակնկալվում է՝<br>- գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և վիճակի գնահատումը.<br>- ըստ հանրապետության մարզերի, տարածաշրջանների գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի գնահատումը.<br>- գյուղատնտեսությունը տեխնիկական միջոցներով համալրման մատչելի մեխանիզմների մշակումը և ներդրումը.<br>- գյուղատնտեսության տեխնիկական կազմի նորացումը և կառուցվածքի բարելավումը.<br>- գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի և արտադրողականության բարձրացումը: |
| **Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն** | |
| 45. | **Հայ գրավոր ժառանգության, գրքի, գրքարվեստի և տառարվեստի հանրահռչակում Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում հայ գրավոր ժառանգության հանրահռչակում, հայ գրավոր մշակույթի դիրքավորում, տեղեկատվական հասարակության հոգևոր-մշակութային ինքնության և բարոյական արժեհամակարգի ձևավորում:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայկական տպագրության 500-ամյակին նվիրված համապետական և համաժողովրդական հոբելյանական միջոցառումների ծրագիրը Հայաստանի մշակութային կյանքի 2012 թ. խոշորագույն իրադարձություններից մեկն է: Հոբելյանի նշման պետական նշանակությունն ու կարևորությունն ամրագրվել է ՀՀ Նախագահի 2008 թ. օգոստոսի 22-ի ՆԿ-138-Ա կարգադրությամբ՝ համաձայն որի ստեղծվել է միջոցառումները նախապատրաստող պետական հանձնաժողով՝ ՀՀ Նախագահի ղեկավարությամբ: Միևնույն ժամանակ, 2012 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը հռչակվեց գրքի համաշխարհային մայրաքաղաք: Զուգահեռաբար արձանագրվում է, որ խիստ նվազել է գրավոր ժառանգության և գրքի դերն անհատի բարոյական արժեհամակարգի ձևավորման գործընթացում, ինչը հակասում է հայ ժողովրդի կենսաձևին և համահունչ չէ կրթված քաղաքացիական հասարակության ձևավորման նպատակի հետ:<br>Հիմնական խնդիրն է միջազգային ասպարեզում հայ մշակույթի «դիրքավորումը»՝ ավանդական գրատպության կենտրոններում գրավոր ժառանգության հանրահռչակման միջոցով, և արդի տեղեկատվական դաշտում հայ հասարակության հոգևոր-մշակութային ինքնության և բարոյական արժեհամակարգի ձևավորումը՝ ՀՀ-ում գրքարվեստի, տառարվեստի և ընթերցանության տարածման միջոցով: |

| 1 | 2 |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>✓ Արտերկրում հայ գրատպության պատմական կենտրոններում հայ գրավոր մշակութային ժառանգության ցուցահանդեսների կազմակերպում, գրքի միջազգային տոնավաճառներին մասնակցության, Հայաստանում գրավոր ժառանգությանը, հայ գրատպությանն ուղղված համաժողովների, գրական հավաքների, փառատոների, ցուցահանդեսների և ընթերցանության հանրահռչակմանն ուղղված միջոցառումների, մանկական ծրագրերի իրականացում, գրական և հրատարակչական մրցույթների, արտերկրի հետ գրական-թարգմանական համատեղ ծրագրերի իրականացում:<br>✓ Գրահրատարակչական որակյալ արտադրանքի միջոցով հասարակությանն ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիության ապահովում, տպագիր մշակութային ավանդույթների պահպանում, զարգացում և հանրահռչակում:<br>✓ Գրադարանային համակարգի զարգացում և դրա դիտարկում որպես բնակչության տեղեկատվական սպասարկման կարևորագույն օղակ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայ գրավոր ժառանգության, գրքարվեստի, տառարվեստի, ընթերցանության տարածում, արտերկրում հայկական գրքի և գրքարվեստի միջազգայնացում և հանրահռչակում:<br>**3. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հարուստ պատմական գրավոր ժառանգության ամբողջական ներկայացման արդյունքում կընդլայնվեն հասարակության թիրախային խմբերի շրջանակները, միջազգային համագործակցության ծրագրերը, հայ մշակույթը կընդգրկվի միջազգային այնպիսի գործընթացներում, որոնցում նրա պատմական վարկանիշի մեջ կձևավորվի հզոր ավանդական մշակույթ ունեցող Հայաստանի կերպարը: Կվերհանվեն, կվերլուծվեն և կկանխարգելվեն հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանը և բարոյական արժեքներին սպառնացող երևույթները: |
| 46. | **Մշակութային ծառայությունների ոլորտում էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ներդրում և գործարկում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Էլեկտրոնային ժամանակակից հասարակության պահանջարկի ապահովում:<br>**2. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանում թանգարանները ցուցադրական տարածքների սղության պատճառով հանրությանը ներկայացնում են իրենց հավաքածուների մոտավորապես 2.57 տոկոսը:<br>Հիմնական խնդիր է՝ պահոցներում, ֆոնդերում պահվող և չցուցադրվող մշակութային արժեքների, թանգարանային առարկաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը հասարակության լայն շերտերին:<br>Խնդիր է համարվում նաև հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի գործարկումը և թանգարաններում ու գրադարաններում մասնագետների վերապատրաստումը, քանի որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ենթադրում է որակյալ մասնագետներ:<br>Ներկայում համերգային դահլիճներում տոմսերի ձեռքբերումն իրականացվում է ավանդական եղանակով, ինչն արդյունավետ չէ անհատի կողմից տոմսի ֆիզիկապես ձեռքբերման պայմաններում՝ թե՛ հասանելիության, թե՛ հաշվառման, թե՛ տեղեկատվության առումներով:<br>Խնդիր է դրվում տոմսերի մասին տեղեկատվությունը, դրանց վաճառքն առավել թափանցիկ և մատչելի դարձնելը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Թանգարաններում վիրտուալ թեմատիկ ցուցադրությունների կազմակերպում, էլեկտրոնային կրպակների գործարկում, մշակութային ծառայություններ մատուցող մասնագետների վերապատրաստում: Թատերահամերգային կազմակերպություններում էլեկտրոնային տոմսերի ձեռքբերման միասնական համակարգի գործարկում:<br>Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացի՝ մշակութային ժառանգության թվանշանացում, էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների և |

| 1 | 2 |
|---|---|
| | միացյալ ավտոմատացված ցանցի շարունակական զարգացում, Հայաստանում գրադարանների տեխնիկական վերազինման և արդիականացման ծրագրի իրականացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Թանգարանային առարկաների հանրահռչակման ընդլայնում, գրադարանային ոլորտում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրմամբ մատուցվող մշակութային ծառայությունների որակի բարելավում:<br>Թատերահամերգային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններում սպասարկման գործառույթների արդիականացում:<br>**3. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է թանգարանային ֆոնդերում և գրադարաններում գտնվող մշակութային արժեքների և գրքերի մատչելիության հասանելիության, մշակութային կազմակերպությունների տոմսերի վաճառքի թափանցիկություն և մշակութային ծառայությունների ու որակի ապահովում: |
| 47. | **Մշակութային ենթակառուցվածքների արդիականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, միջազգային ժամանակակից տեղեկատվական պահանջների ապահովում<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>**Գրադարանների ոլորտում** 2008 թ. մեկնարկել է «Գրադարանների վերանորոգում» ծրագիրը: 2011 թ. նախատեսվում է ավարտել Հայաստանի ազգային գրադարանի և **6** մարզային գրադարանների (Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց ձորի, Տավուշի) հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի I-ին փուլը կավարտվի 2012 թ.՝ բոլոր վերանորոգված գրադարանների տեխնիկական վերազինման գործընթացը<br>**Թանգարանների ոլորտում** 2011 թ. ավարտվելու են **3** թանգարանի՝ Ա. Բակունցի տուն-թանգարանի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի հիմնանորոգման աշխատանքները, որոնց 2012 թ. կհաջորդի նոր թարմացված մշտական ցուցադրությունների բացումը:<br>**Թատերական շենքեր (ներառյալ մարզային) և համերգային դահլիճներ**<br>Հայաստանում այսօր, որպես պետական համերգային դահլիճներ լիարժեք գործում են 2 մեծ (Ա. Սպենդիրայանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ա. Խաչատրյանի անվան համերգասրահ) և 2 փոքր (Երևանի կամերային երաժշտության տուն, Ա. Բաբաջանյանի անվան համերգասրահ) դահլիճները:<br>Վերջին տարիներին կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում (տանիքի նորոգում): Սակայն շարունակվում է խնդիր մնալ թատրոնի ներկա տեխնիկական վիճակը, որոնք ֆիզիկապես ու բարոյապես մաշված են, դրանց ակուստիկ, ձայնալուսային սարքերը, բեմական մեխանիզմները, օդափոխության և այլ համակարգերը ոչ միայն չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, այլ նաև բացասաբար են անդրադառնում ներկայացումների որակի վրա: Դեռևս առկա է անվտանգության պայմանների ապահովման գերխնդիրը, քանի որ դահլիճի սարքավորումները, դրանց կառավարման համակարգը գերմաշված են, իսկ դրանց հետագա շահագործումը կարող է առաջացնել անկանխատեսելի արտակարգ իրավիճակներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>12 գրադարաններում վերազինման աշխատանքների իրականացում.<br>Վերանորոգված 4 թանգարաններում նոր մշտական ցուցադրությունների ձևավորում.<br>Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի նյութատեխնիկական և մասնագիտական բազայի արդիականացում, մասնավորապես, համերգային սրահների լուսաձայնային սարքավորումների և բեմական մեխանիզմների վերազինում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական գրադարանների, 4 թանգարանների, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և |

| 1 | 2 |
|---|---|
| | բալետի ազգային ակադեմիական թատրոնի լիարժեք գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման մեկնարկ:<br>**3. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է պետական գրադարանների միասնական արդիական համակարգի ստեղծում, թանգարանները կունենան նոր մշտական ցուցադրություններ, որի հետևանքով կավելանա թանգարանային առարկաների շրջանառությունը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում (Հայաստանում միակ դահլիճն է, որը կապահովի լիարժեք պայմաններ ստեղծագործական միջոցառումների և համերգների կազմակերպման համար) ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ պայմանների և մշակութային ծառայությունների որակի ապահովում: |
| 48. | **Պետության և մասնավոր հատվածի համագործակցության նոր ձևաչափի ներդրում պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման ոլորտում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որպես գերակա ուղղություն ճանաչումը պայմանավորված է վթարային և վտանգված վիճակում գտնվող պատմամշակութային հուշարձանների վերականգնման նպատակով այլընտրանքային ֆինանսական միջոցներով ներգրավելու, հուշարձանների հետագա ոչնչացումը կամ կորուստը կանխելու, դրանք իրենց սկզբնական գործառնական նշանակությամբ կամ զբոսաշրջության նպատակներով օգտագործելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում հուշարձանների վերականգնումը կատարվում է հիմնականում պետական բյուջեից հատկացվող միջոցներով: Անբավարար է անհատ բարերարների՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասնակցությամբ հուշարձանների վերականգնման գործը: Դրա պատճառը համագործակցության ձևաչափերի, դրանց ՀՀ օրենսդրությամբ ամրագրվածության բացակայությունն է կամ ոչ կանոնակարգված լինելը, ինչը թույլ չի տալիս հստակեցնել համագործակցող կողմերի իրավասություններն ու պարտականությունները, ձեռնարկվող միջոցառումների օրենսդրության համապատասխանեցումը, սպասվելիք արդյունքի լիարժեք տիրապետման հնարավորությունները և տնօրինումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցության նոր ձևաչափերի մշակում և 2012 թ. 3 ծրագրի մեկնարկ (Օձունի սբ. Հովհաննես եկեղեցի, Մխիթար Գոշի դամբարան, 1827 թ. Ռուս-պարսկական պատերազմում զոհված ռուս մարտիկներին նվիրված Օշականի հուշարձան):<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պատմամշակութային հուշարձանների վերականգնման գործընթացներում պետական և մասնավոր հատվածի համագործակցության ապահովում, խնդրին առնչվող գործընթացների կանոնակարգում:<br>**3. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համագործակցության նոր ձևաչափի մշակումը հնարավորություն կընձեռի ապահովելու «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջների կատարումը՝ համաձայն որի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառը պետական հատկացումներից զատ ֆինանսավորվում է նաև հուշարձանների սեփականատերերի և օգտագործողների, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներով և օրենքով չարգելվող այլ միջոցների հաշվին:<br>Նոր ձևաչափի ներդրումն անկասկած հնարավորություն կընձեռի նաև նորովի վերաիմաստավորել հայոց պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանմանը նպատակաուղղված վերականգնողական գործընթացները, ընդլայնել այդ նպատակով իրականացվող ծրագրերի շահառուների շրջանակը, բարձրացնել հասարակական, միջազգային կազմակերպությունների, անհատ բարերարների, համայնքի բնակչության ներգրավվածության, մասնակցության աստիճանը: Այն կարևոր խթան կարող է հանդիսանա պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, վերականգնմանը, նպատակային օգտագործ- |

| 1 | 2 |
|---|---|
| | մանը, հանրահռչակմանը, զբոսաշրջությանը նվիրված հեռանկարային ծրագրերի մշակմանն ու դրանց իրականցման աշխատանքներին: |
| **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | |
| 49. | **Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշմամբ հաստատվել են կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը, որոնց իրականացումը կրում է շարունակական բնույթ:<br>**2. Առկա վիճակը**<br>ՀՀ Ազգային ժողովը 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների փաթեթը:<br>Համաձայն ընդունված օրենքների՝ եկամտային հարկի ներդրումը նախատեսվում է իրականացնել 2013 թվականի հունվարի 1-ից, իսկ կուտակային բաղադրիչի ներդրումը՝ 2014 թվականի հունվարի 1-ից:<br>2011 թվականին աշխատանքներ են տարվել բաշխողական բաղադրիչի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը մշակելու ուղղությամբ (հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի նիստում): Միաժամանակ մշակվել և ընդունվել են կամավոր կենսաթոշակային ապահովագրության իրականացումն ապահովող մի շարք ենթաօրենսդրական և գերատեսչական իրավական ակտեր, ինչպես նաև՝ աշխատանքներ են տարվել եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման ուղղությամբ:<br>**3. Նախատեսվող միջոցառումները**<br>2012 թվականին շարունակական բնույթ կկրեն կենսաթոշակային բարեփոխումների ուղղությամբ իրականացվող աշխատանքները:<br>Մասնավորապես, ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ա որոշման՝ կմշակվեն և կհաստատվեն բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող՝ ՀՀ կառավարության 21 որոշման նախագծեր և գերատեսչական 2 իրավական ակտեր:<br>Ի կատարումն ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության, eCSD Expert AS-ի և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի միջև 2011 թվականի ապրիլի 14-ին կնքված պայմանագրի՝ աշխատանքներ կիրականացվեն կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգի հիմնական բաղադրիչների մշակման և ներդրման ուղղությամբ, որի շրջանակներում համակարգը կփորձարկվի արդեն 2013 թվականին:<br>2012 թվականին, ի կատարումն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և «ԱՅՑՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի միջև 2011 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրի՝ կմշակվի, կփորձարկվի և կներդրվի եկամտային հարկի ու կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 30-ի N 25 արձանագրային որոշումը:<br>Միաժամանակ ավարտին կհասցվի պետական կենսաթոշակային համակարգի տվյալների կենտրոնացված շտեմարանի ներդրումը, ինչպես նաև կմշակվեն և ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվեն՝<br>1) պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ձևավորելու և վարելու կարգը.<br>2) պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կարգը.<br>3) անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազա և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի շտեմարան ներառելու կարգը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **Իրականացված աշխատանքների արդյունքում՝**<br>1) կմշակվեն և կհաստատվեն բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող ենթաօրենսդրական և գերատեսչական իրավական ակտերը.<br>2) կներդրվի և 2013 թվականի սկզբին կփորձարկվի կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգը.<br>3) կներդրվի եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգը, որի շրջանակներում կապահովվի «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառումը և բոլոր գործատուների կողմից էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնելը.<br>4) կներդրվի և կկիրարկվի պետական կենսաթոշակային համակարգի տվյալների կենտրոնացված շտեմարանը: |
| 50. | **Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման իրավական, տեխնիկատնտեսական հիմքերի ստեղծում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված, ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած, ՀՀ կառավարության ծրագրի 4.4.2. «Սոցիալական պաշտպանությունը» բաժնում ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը նախատեսվել է սոցիալական ծառայությունների համալիր (լրակազմով) տրամադրումը՝ գործընթացին մասնակից դարձնելով մասնավոր հատվածին:<br>**2. Առկա վիճակը**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրությամբ հավանության է արժանացել «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը», 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի N 50 արձանագրային որոշմամբ՝ «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական կառուցվածքագործառութային մոդելի հայեցակարգային մոտեցումները», իսկ 2011 թվականի մարտի 24-ի նիստի N 11 արձանագրային որոշմամբ՝ «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը»:<br>Ինտեգրված սոցիալական ծառայությունների (սոցիալական դեպքի վարման) փորձնական ծրագիր է իրականացվում Երևանի Էրեբունու վարչական շրջանում, Վանաձորում, Իջևանում, Մասիսում, Չարենցավանում:<br>Հանրապետությունում ներդրվում են պետական նպաստների համար տեղեկատվության առցանց ստացման մեխանիզմներ՝ բնակչության պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումներից:<br>2011 թվականի տարեվերջին ՀՀ կառավարությանն է ներկայացվելու ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի կառուցվածքագործառութային առաջարկվող մոդելը:<br>**3. Նախատեսվող միջոցառումները**<br>1) ՀՀ տարածքային կառավարման նախարարի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով համայնքի սոցիալական կարիքների գնահատման, դրա հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույցի հաստատում.<br>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը սահմանում է համայնքի ղեկավարի լիազորություններն աշխատանքի և սոցիալական ծառայությունների բնագավառում, որոնք են՝ կամավոր և պատվիրակված.<br>Մշակված մեթոդական ուղեցույցը համայնքի ղեկավարին տրամադրելու է տեղական սոցիալական ծրագրերի մշակման և դրանց իրականացման գործիք՝ կամավոր լիազորությունների շրջանակներում.<br>Նպատակային, հասցեական և գրագետ սոցիալական ծրարգրեր մշակելու և իրականացնելու համար ՏԻՄ-ի ղեկավարը պետք է կարողանա ճիշտ գնահատել համայնքի սոցիա- |

| 1 | 2 |
|---|---|
| | լական կարիքները և դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրմամբ հնարավորինս լուծի դրանք.<br>Մեթոդական ուղեցույցը մշակվելու է ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ, դրա հաստատումից հետո այն ՀՀ մարզպետների (Երևանի քաղաքապետի) կողմից կտրամադրվի ՏԻՄ-ի ղեկավարներին (վարչական շրջանների ղեկավարներին), ինչպես նաև նրանց կողմից կիրականացվի վարչական վերահսկողություն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների համաձայն<br>2) Ինտեգրված սոցիալական ծառայությունների տեխնիկական և գույքային վերազինման, վերանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում (մեկ պատուհանի սկզբունքի կիրառում), 2011 թվականից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Համաշխարհային բանկի աջակցությամբ, սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի շրջանակներում սկսել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տեխնիկական և գույքային վերազինման, վերանորոգման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2013 թվականին: 2012 թ. նախատեսվում է գործարկել ինտեգրված սոցիալական ծառայությունների առնվազն 10 կենտրոն<br>3) Տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության միասնական համակարգի ներդրում՝ նախատեսվում է ներդնել կենտրոնացված տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն կտա սոցիալական ծառայությունների համալիր (լրակազմով) տրամադրումն իրականացնել հիմնականում առցանց և ինքնաշխատ եղանակով կիրառվող տեղեկատվության (պետական նպաստների, կենսաթոշակային ապահովության, զբաղվածության, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, սոցիալական ապահովության քարտերի, բնակչության պետական ռեգիստրի, անշարժ գույքի կադաստրի և այլ (ըստ պատրաստվածության մակարդակի) տեղեկատվական բազաների միջև փոխանակության հիման վրա՝ հնարավորինս բացառելով քաղաքացիների կողմից տարբեր բնույթի տեղեկանքների ներկայացումը տարբեր պետական կառավարման մարմիններից՝ դրանով բացառելով ավելորդ քաշքշուկները, նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը, կիրառելով «մեկ պատուհանի» սկզբունքը: |
| 51. | **Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի մշակում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի մշակումը պայմանավորված է երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության մեջ նոր մոտեցումների ներդրման և երեխաների պաշտպանության համակարգի հզորացման անհրաժեշտությամբ: Նպատակն է՝ մշակել առաջիկա տարիների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունները և ունենալ դրա իրականացման մոնիթորինգի կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2003 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. Ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1745-Ն որոշումը, որն ուղղված է տարբեր բնագավառներում երեխաների հանդեպ իրականացվող քաղաքականությանը:<br>Հաշվի առնելով երկրի սոցիալ տնտեսական իրավիճակը, վերջին տարիներին տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումները և նոր ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող առաջադեմ մոտեցումները, անհրաժեշտ է վերանայել 2004-2015 թթ. Ազգային ծրագիրը և մշակել առաջիկա տարիների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունները: Բացի այդ՝ նշված ծրագրով նախատեսված չեն դրա իրականացման համակարգման և մոնիթորինգի իրականացման մեխանիզմները:<br>**1,2, Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծել հանձնաժողով, որտեղ ներկայացված կլինեն շահագրգիռ բոլոր գերատեսչությունները (ինչպես նաև ոլորտում գործող հասարակական և միջազգային կազմակերպու- |

| 1 | 2 |
|---|---|
| | թյունները): Հանձնաժողովը կվերանայի 2004-2015 թթ. Ազգային ծրագիրը և հաշվի առնելով ՀՀ-ի կողմից վերջին տարիներին ստանձնած նոր միջազգային պարտավորությունները կմշակի և ՀՀ կառավարություն կներկայացնի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Նախատեսվում է նոր մշակվող ծրագրի մոնիթորինգի գործառույթը վերապահել Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին: Այդ կապակցությամբ՝ անհրաժեշտ է վերանայել նաև երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրական խնդիրները և գործառույթները, սահմանել լրացուցիչ լիազորություններ և ՀՀ կառավարություն ներկայացնել «Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի մշակումն ուղղված է տարբեր բնագավառներում երեխաների հանդեպ իրականացվող քաղաքականության համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին և երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի գործունեության հզորացմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերի իրականացման արդյունքում ակնկալվում է մշակել առաջիկա տարիների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունները և ընդլայնել Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի լիազորությունները: |
| **Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն** | |
| 52. | **Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության իրականացում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունից քաղված դասերը տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) միջոցով կայուն զարգացման ապահովումը պետք է դառնա հիմնական գերակայություն: Տնտեսության վերականգնման միտումն ամրապնդելու և հետագա զարգացումն ապահովելու համար գերխնդիրը տնտեսության դիվերսիֆիկացիայի մակարդակի բարձրացումն է և տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնումը:<br>**1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաղթահարելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները՝ հանրապետության արդյունաբերական ոլորտը ցուցաբերում է կայուն աճի միտումներ, սակայն արտահանման մասնաբաժինն արտադրվածի մեջ ներկայումս կազմում է 42 տոկոս, որի մեջ գերակշիռ մաս են հանքահումքային և սննդարդյունաբերության (մասնավորապես՝ կոնյակի) արտադրատեսակները: Այն դեպքում, երբ հանրապետության մշակող արդյունաբերությունը մեծ ներուժ ունի արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացման հարցում:<br>**1.2 . Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է իրագործել միջոցառումներ, որոնք ներառված են Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունում: Ընդ որում՝ արդյունաբերական քաղաքականությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝<br>– ընդհանրական միջոցառումների իրականացում՝ ուղղված բարենպաստ միջավայրի ստեղծմանը և արտադրողականության բարձրացմանը.<br>– հատուկ գործիքակազմի կիրառում՝ ոլորտային ռազմավարությունների հիման վրա:<br>Մասնավորապես, մեկնարկային փուլի ռազմավարության շրջանակներում նախատեսվում է ապահովել կոնյակագործության, դեղագործության և բիոտեխնոլոգիաների, ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային ռազմավարությունների իրականացումը: Այս նպատակով |

| 1 | 2 |
|---|---|
| | կձևավորվի հստակ միջոցառումների ցանկը և դրա իրականացումն ապահովող համապատասխան ենթակառուցվածքը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրապետության արդյունաբերության արտահանելի հատվածի մասնաբաժնի ավելացում՝ համաշխարհային շուկայում մրցունակ հայրենական ապրանքների ներկայացման միջոցով:<br>**3. Ակնկալվող արդյունք**<br>Քաղաքականության իրականացման արդյունքում ակնկալվում է տնտեսության արտահանելի հատվածի մեծացում, տնտեսության արտահանելի հատվածի դիվերսիֆիկացիա, հայկական ապրանքների մրցունակության բարձրացում, և արդյունքում, արտահանվող ապրանքների ծավալի աճ՝ մինչև 10 տոկոսի չափով: |
| 53. | **Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարձրացման ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է: Հայաստանը տարածաշրջանում բիզնեսի վարման տեսանկյունից առավել բարենպաստ երկիր դարձնելու նպատակով պետք է առանձնահատուկ շեշտ դնել գործարար միջավայրի լայնամասշտաբ բարեփոխումները շարունակելու վրա:<br>**1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Համաշխարհային բանկի կողմից հոկտեմբերի 20-ին հրապարակված «Գործարարությամբ զբաղվելը 2012. գործարարությունն ավելի թափանցիկ աշխարհում» զեկույցի տվյալներով 2010 թվականի հունիսից մինչև 2011 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանն իրականացրել է կանոնակարգման և ինստիտուցիոնալ դաշտի հինգ բարեփոխում՝ ամենաշատը տարածաշրջանում և աշխարհում: Արդյունքում երկրի վարկանիշը բարելավվել է 6 կետով՝ զբաղեցնելով վարկանշային սանդղակի 55-րդ տեղը:<br>Այդուհանդերձ, գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս բարելավման տեղ ունեն, հատկապես կապված հարկային, մաքսային և արդարադատության բնագավառներին առնչվող առանձին կարգավորումների հետ:<br>**1.2 . Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է շարունակել Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի իրականացումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բոլոր 10 բաղադրիչների բարելավման, մասնավորապես, ընկերության հիմնադրման համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսերի կրճատման, հարկային և մաքսային գործընթացների պարզեցման ու թափանցիկության բարձրացման, փոքր ներդրողների պաշտպանության, քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կատարելագործման և այլնի ուղղությամբ:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ միջավայրի առկայություն, մասնավորապես, Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ Հայաստանի դիրքի բարելավում: |

| 1 | 2 |
|---|---|
| 54. | **ՀՀ-ԵՄ-ի Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունների մեկնարկ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2009 թ. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության կողմից նախաձեռնվել է Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման բանակցություններին ուղղված աշխատանքներ: 2009 թ. հունիսին Եվրոպական հանձնաժողովը, 2009 թ. փետրվարի փաստահավաք առաքելության արդյունքների հիման վրա, հրապարակել է Գնահատման զեկույց, որտեղ նախանշվել են ԽՀԱԱԳ-ի (DCFTA) բանակցային գործընթացի ապահովման համար գլխավոր առաջնային ոլորտները, որտեղ Հայաստանը պետք է էական առաջընթաց ապահովի ԽՀԱԱԳ-ի բանակցությունների մեկնարկի համար: Գլխավոր առաջնային ոլորտներն են՝<br>1. առևտրի տեխնիկական խոչընդոտներ (TBT).<br>2. սանիտարական և բուսասանիտարական միջոցներ (SPS).<br>3. մտավոր սեփականության իրավունքներ (IPR).<br>4. ընդհանուր խնդիրներ/ընդհանուր համակարգում:<br>**1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Եվրոպական հանձնաժողովի հետ տարված համապատասխան բանակցությունների արդյունքում մշակվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ԽՀԱԱԳ-ի ստեղծման շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումների ժամանակացույցը (ՀՀ վարչապետի 2011 թ. օգոստոսի 10-ի N 763–Ա որոշում)՝ հստակ սահմանված միջոցառումների կատարման վերջնաժամկետներով և պատասխանատու մարմիններով: Ներկայումս ընթացքի մեջ են ժամանակացույցի միջոցառումների իրականացմանն ուղղված աշխատանքները՝ ոլորտներում գլխավոր առաջնայնությունների իրականացումն ապահովելու համար:<br>**1.2 . Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ավարտին հասցնել ՀՀ վարչապետի 2011 թ. օգոստոսի 10-ի N 763–Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցում ներառված միջոցառումները, որոնք հիմք կնախապատրաստեն ՀՀ-ԵՄ-ի Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունների մեկնարկի համար: Մասնավորապես, անհրաժեշտ է խթանել առևտրի տեխնիկական խոչընդոտների, սանիտարական և բուսասանիտարական միջոցների, մտավոր սեփականության իրավունքների, ընդհանուր խնդիրներ/ընդհանուր համակարգման ոլորտներում նախաձեռնված, իրականացվող միջոցառումների և (կամ) բարեփոխումների աշխատանքների ընթացքն ու արդյունավետությունը՝ եվրոպական չափանիշներին և պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու բանակցությունների մեկնարկի ապահովում:<br>**3. Ակնկալվող արդյունք**<br>Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու բանակցությունների մեկնարկ: |
| | **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն** |
| 55. | **Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության ու իրականացման նպատակով՝ դատական իշխանության, քրեակատարողական ծառայության գործունեության և նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում**<br><br>Օրենսդրության վերլուծություն<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում ներկայումս որոշակի խնդիրներ են առաջանում իրավունքների դատական պաշտպանության մատչելիության, դատական իշխանության թա- |

<table>
<tr><th>1</th><th>2</th></tr>
<tr><td></td><td>
փանցիկության ապահովման և ներկա օրենսդրությամբ համապատասխան հարաբերությունների ոչ համապարփակ կարգավորման տեսանկյունից: Մասնավորապես, խնդիրներ են առաջանում հասարակության կողմից դատարանների նկատմամբ վստահության ցածր մակարդակի, դատարանների կողմից գործերի առավել արագ քննության ընթացակարգերի բացակայության, դատական ակտերի անկանխատեսելիության պատճառով:<br>
Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>
Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության և իրականացման նպատակով դատական իշխանության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ քայլերն են՝<br>
1. դատարանների նկատմամբ վստահության աճը.<br>
2. դատարանների կողմից առավել արագ քննության մեխանիզմների ներդրումը.<br>
3. իրավունքների դատական պաշտպանության մատչելիության բարձրացման արդյունավետ լուծումների սահմանումը.<br>
4. դատական ակտերի կանխատեսելիության բարձրացումը.<br>
5. դատական իշխանության թափանցիկության բարձրացումը:<br>
Բացի նշված լուծումները մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության ու իրականացման նպատակով դատական իշխանության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ քայլ կհանդիսանա նաև դատավորների և դատախազների վերապատրաստումը, ինչպես նաև թեկնածուների պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացումը:<br>
Ակնկալվող արդյունքը<br>
Անհրաժեշտ միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու իրականացումը:<br>
Քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացում<br>
Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>
Ներկայումս որոշակի խնդիրներ են առաջանում ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց զբաղվածության, քրեակատարողական հիմնարկում հանցագործությունների առկա թվաքանակի, քրեակատարողական հիմնարկներում մահացության դեպքերի առկա քանակի, վարակիչ հիվանդություն ունեցող անձանց թվաքանակի, ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց՝ ուսումնական և մասնագիտական ծրագրերում ներգրավվածության, դատապարտված անձանց՝ հանրային աշխատանքներում ընդգրկվածության և պատժից ազատելու ինստիտուտների արդյունավետության ու կանխատեսելիության աստիճանի ներկա մակարդակի առումով: Այս խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ են օրենսդրական մի շարք կարգավորումներ:<br>
Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>
Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության ու իրականացման նպատակով քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ քայլերն են՝<br>
1. ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց զբաղվածության աճին նպաստող միջոցառումներ ձեռնարկելը.<br>
2. քրեակատարողական հիմնարկում հանցագործությունների թվաքանակի նվազեցումը.<br>
3. քրեակատարողական հիմնարկներում մահացության դեպքերի նվազեցումը.<br>
4. վարակիչ հիվանդություն ունեցող անձանց թվաքանակի կրճատումը.<br>
5. ազատազրկման ձևով պատիժը կրող անձաց՝ ուսումնական և մասնագիտական ծրագրերում ներգրավվածության աճին նպաստող միջոցառումների իրականացումը.<br>
6. դատապարտված անձանց՝ հանրային աշխատանքներում ընդգրկվածության ավելացմանը.<br>
7. պատժից ազատելու ինստիտուտների արդյունավետության և կանխատեսելիության աստիճանի բարձրացմանը:<br>
Ակնկալվող արդյունքը<br>
Անհրաժեշտ միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու
</td></tr>
</table>

| 1 | 2 |
|---|---|
| | իրականացումը քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման լույսի ներքո:<br>**Նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում**<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել միջոցառումներ ձեռնարկել տակավին վերջերս ներդրված նոտարի կողմից մեկ պատուհանի սկզբունքի հետ կապված հարաբերությունների առավել արդյունավետ կարգավորման, նոտարական գործարքների բողոքարկման և նոտարների շրջանում էլեկտրոնային միջոցների ու ինտերնետի կիրառման հետ կապված հարաբերությունների կարգավորման առումով: Այս ոլորտում առաջացող խնդիրները հիմնականում կապված են նոտարական գործարքների բողոքարկման թվի, նոտարների շրջանում էլեկտրոնային միջոցների և ինտերնետի կիրառման ցածր մակարդակի հետ, որը բավականին բարդեցնում է նոտարների կողմից ժամանակի արդյունավետ կառավարումը:<br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և գործնական միջոցառումների իրականացմանն ուղղված անհրաժեշտ քայլերն են՝<br>1. նոտարի կողմից մեկ պատուհանի սկզբունքով մատուցվող ծառայությունների թվաքանակի մասնաբաժնի աճին նպաստող միջոացռումների ձեռնարկումը.<br>2. նոտարական գործարքների բողոքարկման /վիճարկման տոկոսի նվազեցումը.<br>3. նոտարների շրջանում էլեկտրոնային միջոցների և ինտերնետի կիրառման ավելացում<br>**Ակնկալվող արդյունքը**<br>Անհրաժեշտ միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու իրականացումը նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման լույսի ներքո: |
| | **Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն** |
| 56. | **Ռազմական կրթության չափանիշների ներդրում**<br><br>Գերակա խնդրի կատարումը պայմանավորված է պաշտպանության ոլորտի բարեփոխումների շրջանակներում ռազմական կրթության որակապես նոր համակարգի ներդրման անհրաժեշտությամբ, որի նպատակն է ունենալ արդի միջազգային չափորոշիչներին համապատասխան ռազմական կրթության համակարգ, վերանայել ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակը և ռազմական կրթության ուսուցման գերակայությունները: Գերակա խնդրի կատարումն սկսվել է 2011 թվականից, 2012 թվականի համար նախատեսվում է ռազմական կրության հայեցակարգից բխող միջոցառումների, դրանցից բխող մարտավարական, օպերատիվ-մարտավարական գիտելիքների և կարողությունների ձևավորմանն ուղղված կրթության կազմակերպման, սպայական ու պայմանագրային սերժանտական դասընթացների իրականացում, ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի հստակեցման նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում: |
| 57. | **Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ**<br><br>Գերակա խնդրի կատարումը բխում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնական առաջնահերթություններից մեկը համարվող պետության ռազմական անվտանգության ապահովման նկատառումներից, որի իրականացման գործում վճռորոշ դեր ու նշանակություն ունի պետության ռազմական արդյունաբերության համակարգը: Ռազմարդյունաբերության զարգացվածության աստիճանով է նաև մեծապես պայմանավորված Հայաստանի Հանրապետության պաշտպանական ներուժն ու տարածաշրջանային և միջազգային զարգացումներում նրա կողմից իրականացվող քաղաքականության ազդեցիկությունն ու կշիռը: Ռազմարդյունաբերության վերածումը տնտեսության կարևորագույն և առաջատար ոլորտներից մեկի, լայն հնարավորություններ կընձեռի գիտելիքահենք և ժա- |

| 1 | 2 |
|---|---|
| | մանակակից արտադրությունների ստեղծման, ինչպես նաև՝ տարածաշրջանային և միջազգային տնտեսական գործընթացներին ինտեգրման համար: Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերն են լինելու սպառազինության և ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական ունեցվածքի արտադրության, արդիականացման և նորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և գիտատեխնիկական ոլորտի կազմակերպությունների և մարդկային ներուժի առավելագույն օգտագործումը, ռազմական դրության ժամանակաշրջանում արդյունաբերության ոլորտի զորահավաքային ծավալման առաջադրանքների նախատեսման իրական հնարավորությունների ուսումնասիրումը, նյութատեխնիկական և մտավոր կարողությունների կենտրոնացումն ու դրանց արդյունավետ կառավարումը ռազմական անվտանգության ապահովման առանցքային խնդիրների լուծման գործընթացում: |
| | **Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն** |
| 58. | **ՀՀ Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշների և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթների իրականացմանն ուղղված աշխատանքներ**<br><br>Մեր տարածաշրջանում դեռևս առկա են չկարգավորված հակամարտություններ, տարաձայնություններ, պահպանվում է բաժանարար գծերի խորացման միտումը, ձևավորված չեն կայունության, անվտանգության, հաղորդակցության ուղիների ու տնտեսական համագործակցության համընդհանուր և միասնական համակարգեր: Հայաստանի և ընդհանրապես տարածաշրջանի անվտանգությունն ու կայուն զարգացումը գլխավորապես պայմանավորված են հարևան երկրների հետ և նրանց միջև հարաբերություններով, ինչպես նաև մեր տարածաշրջանի վրա անմիջական և ոչ անմիջական միջազգային ազդեցություններով ու զարգացումներով:<br>ՀՀ Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշների և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության արտաքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված քայլերի հիմնական նպատակներն են՝ երկրի արտաքին անվտանգության ապահովումը, տարածաշրջանում կայունության հաստատումը, լարվածության օջախների հնարավոր բռնկումների կանխարգելումը, ԼՂ-ի խնդրի խաղաղ կարգավորումը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը:<br>Տարածաշրջանում համագործակցության միջավայրի և անվտանգության համակարգի ձևավորման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների և փոխվստահության հաստատման, տարածաշրջանում ազդեցություն ունեցող ուժերի հետ փոխշահավետ հարաբերությունների կառուցման արդյունքում կապահովվեն Հայաստանի հետագա զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմաններ ու երաշխիքներ: |
| 59. | **Եվրոպական ուղղության խորացում**<br><br>ՀՀ Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշներով և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությամբ հաստատված՝ Եվրոպական կառույցների, առաջին հերթին ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված արտաքին քաղաքական առաջնային ուղղություններով 2012 թ. աշխատանքները տարվելու են համաձայն՝<br>1. ՀՀ Նախագահի 2010 թ. հուլիսի 15-ի ՆԿ-115-Ա կարգադրության՝ ՀՀ և ԵՄ-ի միջև Ասոցման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար պատասխանատու թիմ և ոլորտային աշխատանքային խմբեր ստեղծելու մասին.<br>2. ՀՀ Նախագահի կողմից 2011 թ. հունիսին Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժ. Բառոզուին ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում Արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող բարեփոխումների խթանման ռազմավարության» դրույթների<br>Նշված ուղղություններով արդյունավետ գործունեությունը նպաստավոր պայմաններ կապահովի ՀՀ կառավարության հիմնական գերակայության՝ կայուն զարգացման ապահովման կարևոր խնդիրների կատարման համար: |

| 1 | 2 |
|---|---|
| 60. | **Աջակցություն արտաքին տնտեսական ոլորտին**<br><br>Նշված գործողությունների անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության վարած քաղաքականության, որոշումների ու ծրագրերի իրականացման խնդիրներից: ՀՀ տնտեսության հզորացման և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման, ազգային անվտանգության և միջազգային հեղինակության պահպանման նպատակով անհրաժեշտ են համալիր քայլեր՝ տնտեսության կառուցվածքի այժմեականացման, ներուժի բազմապատկման և կայուն զարգացման համար:<br>Այս ուղղությամբ կարևոր է շարունակել հաստատել ՀՀ արտաքին գործերի նախարարության մասնակցության նոր ձևեր և պատասխանատվության նոր մեխանիզմներ: Քաղաքական օրակարգի հետ միասին ՀՀ արտաքին գործերի նախարարության կառույցի բոլոր ստորաբաժանումների գործունեությունը պետք է ուղղված լինի ՀՀ տնտեսության համապարփակ զարգացման խնդիրների լուծմանը:<br>ՀՀ դիվանագիտական համակարգի առավել ակտիվ ընդգրկումը ՀՀ տնտեսական զարգացման գործում կնպաստի մեր տնտեսական շահերի ապահովմանը, ֆինանսական և մարդկային ռեսուրսների արդյունավետ կիրառմանը, փորձի, ժամանակակից տեխնոլոգիաների և հմտությունների ձեռքբերմանը: |
| 61. | **Մարդու իրավունքների ոլորտ. ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և մոնիթորինգային մարմինների կողմից տրված հանձնարարականների իրականացման ապահովում**<br>*(ՄԱԿ-ի ՄԻԽ-ի համընդհանուր վերանայման գործընթացի շրջանակներում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացման ապահովում)*<br>Մարդու իրավունքների ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և մոնիթորինգային մարմինների կողմից տրված հանձնարարականների իրականացման խնդիրների գերակայությունները թելադրված են միջազգային գործընթացների հետ համահունչ քայլելու, միջազգային ակտիվ ներգրավվման միջոցով երկրի ազգային շահերը պաշտպանելու ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթով:<br>Այս գերակա խնդրի լուծմանն ուղղված 2012 թ. համար նախանշված քայլերի լիարժեք իրականացումը կապահովի Հայաստանի միջազգային բարձր հեղինակությունը, կկանխարգելի միջազգային կառույցների կողմից ՀՀ-ի վերաբերյալ անցանկալի որոշումների կայացումը, կնպաստի երկրի շահերին առնչվող խնդիրների շուրջ միջազգային կազմակերպությունների կողմից առավել շահեկան դիրքորոշումների ձևավորմանը: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** |
| 62. | **Բազային երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանում**<br><br>Բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշմամբ հաստատված հայեցակարգի պահանջներին համապատասխան: 2012 թվականին նախատեսվող աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքի մասին: Այն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության՝ տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (քարտեզագրական և տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման ու հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար: |

| 1 | 2 |
|---|---|
| 63. | **WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները**<br><br>WGS-84 (Վի Ջի Էս-84) գեոդեզիական կորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծումն անհրաժեշտ է տնտեսության տարբեր բնագավառների (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտևորման սխեմաների կազմման, վարչատարածքային միավորների (համայնքների) սահմանների ամրացման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառատնտեսության և այլն) խնդիրների լուծման, օգտագործողների լայն շրջանակների համար բաց հրատարակման տեղագրական և կադաստրային քարտեզների հասանելիության ապահովման, ինչպես նաև մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծման համար: Այդ նպատակով 2009 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որպես գերակա խնդիր էր սահմանվել Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական և կադաստրային քարտեզների տեղափոխումը WGS-84 (Վի Ջի Էս-84) համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ: 2009-2011 թվականներին իրականացվել են Հայաստանի Հանրապետության 4 մարզերի տեղագրական և կադաստրային քարտեզների տեղափոխումը WGS-84 (Վի Ջի Էս-84) համակարգ: 2012 թվականին նախատեսվում է տեղափոխել 2 մարզերը: |
| 64. | **Հայաստանի Հանրապետության մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացում, տիեզերալուսանկարահանման աշխատանքների միջոցով**<br><br>Տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների հիմնական նպատակը երկրի պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսության տարբեր ճյուղերին, ինչպես նաև գիտության, կրթության, պաշտպանության և այլ բնագավառներին արդիական ու ժամանակակից պահանջներին համապատասխանող տիեզերալուսանկարահանման թարմ տվյալների հիման վրա հայերենով ստեղծված քարտեզագրական նյութերով ապահովումն է, ինչպես նաև տեղագրական քարտեզների և դրանց մասին տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն է:<br>Տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման անհրաժեշտությունն ու առաջնահերթությունը բխում է նաև նրանից, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը կծածկվի տիեզերալուսանկարների և օդալուսանկարների հիման վրա ստեղծված տեղագրական թվային քարտեզներով, որը հիմք կարող է հանդիսանալ պետական և համայնքային խնդիրների համար մեկ քարտեզագրական հիմքի ստեղծման ու ներդրման համար:<br>Այս աշխատանքները շարունակական են և պետք է իրականացվեն յուրաքանչյուր տարի: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** |
| 65. | **Պետական կառավարման մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող տարածքների օպտիմալացում**<br><br>ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքը հանձնվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Համաձայն նույն որոշման ՀՀ կառավարությանն առընթեր |

| 1 | 2 |
|---|---|
| | պետական գույքի կառավարման վարչությունը նշված կազմակերպությունների հետ կնքում է անշարժ գույքի անհատույց անժամկետ օգտագործման պայմանագիր: Սակայն օգտագործման հանձնվող անշարժ գույքն ամբողջությամբ չի օգտագործվում նշված կազմակերպությունների կողմից, մինչդեռ պետական կառավարման մարմինները և պետական ոչ առևտրային այլ կազմակերպություններն ունեն բնականոն գործունեության համար անհրաժեշտ անշարժ գույքի պահանջարկ: Նախատեսվում է իրականացնել պետական կառավարման մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող տարածքների ուսումնասիրություն, պետական կառավարման մարմիններին անհրաժեշտ անշարժ գույքի պահանջարկի հստակեցում և ելնելով ուսումնասիրության արդյունքներից ներկայացնել դրանց օպտիմալացման, ինչպես նաև օգտագործման վերաբերյալ առաջարկություններ: |
| 66. | **Պետական գույքի օտարման գործարքների թափանցիկության և հրապարակայնության ապահովում**<br><br>Պետական գույքի օտարման գործարքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով նախատեսվում է օտարման ենթակա պետական գույքի վաճառքի համար կազմակերպվող աճուրդներն իրականացնել էլեկտրոնային եղանակով:<br>Պետական գույքի օտարման նպատակով կազմակերպվող աճուրդներն էլետրոնային եղանակով իրականացնելու արդյունքում աճուրդը կլինի առավել թափանցիկ, հրապարակային, հնարավորություն կընձեռնի հասարակության ավելի լայն զանգվածին մասնակցել աճուրդների, ինչը կնպաստի պետական գույքի աճուրդների կայացման աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների խթանմանը: Աճուրդին մասնակցելու ավելի դյուրին պայմանների առկայությունը կբարձրացնի գնորդների կողմից աճուրդների մասնակցության թիվը, ինչը կնպաստի օտարվող պետական գույքի մեկնարկային գնի բարձրացմանը, ՀՀ պետական բյուջե լրացուցիչ գումարների մուտքագրմանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:<br>Էլեկտրոնային աճուրդների կազմակերպումը պետական գույքի օտարման գործընթացում կտրուկ բարեփոխում է, որը կնպաստի նաև օտարման գործընթացի մասին հասարակության դրական կարծիքի ձևավորմանը: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** |
| 67. | **Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում» գերակա խնդրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, հասարակական վայրերում հանցագործությունների, վարչական իրավախախտումների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման նպատակով օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայությունը հագեցած չէ ժամանակակից տեխնիկական միջոցներով, մասնավորապես, տեսադիտման սարքավորումներով, որոնցով ավելի դյուրին կդառնա հասարակական վայրերում հանցագործությունների, վարչական իրավախախտումների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման գործը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրը լուծելու համար 2012 թվականին անհրաժեշտ է ձեռք բերել տեսադիտման սարքավորումներ՝ Երևան քաղաքի հասարակական վայրերում տեղադրելու համար: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>«Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում» գերակա խնդիրը ենթադրում է՝<br>2.1. համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, մասնավորապես՝<br>(IP, պտտվող, մեծացնող տեսախցիկներ - 22 հատ<br>օպտիկական վերափոխիչներ - 44 հատ<br>օպտիկական վերափոխիչի պահարան - 22 հատ<br>տեսասերվեր - 2 լրակազմ<br>օպտիկա-մանրաթելային կապուղի - 22 հասցեների համար)<br><br>2.2. Տեսախցիկների տեղադրում Երևան քաղաքի 21 հասցեներում՝<br>1) ՀՀ կառավարության շենք (Կառավարական տուն).<br>2) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության շենք.<br>3) «Արմենիա Մարիոթ» հյուրանոց.<br>4) ՀՀ արտաքին գործերի նախարարության շենք.<br>5) Հայաստանի ազգային պատկերասրահ.<br>6) Ա. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն (2).<br>7) Հյուսիսային պողոտայի 4-րդ բարձրահարկ էլիտար շենք.<br>8) Մատենադարան.<br>9) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ, Կորյունի 14.<br>10) «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ-ի շենք, Մաշտոց 54.<br>11) ՀՀ Նախագահի նստավայր.<br>12) ՀՀ Ազգային ժողովի շենք.<br>13) Բաղրամյան-Պռոշյան խաչմերուկ, Բաղրամյան-25.<br>14) «Մոսկվա» կինոթատրոն ՍՊԸ-ի շենք.<br>15) Սախարովի հրապարակ- հրշեջ մաս.<br>16) Գարեգին Նժդեհի հրապարակ- «ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ», Բագրատունյաց 16/2.<br>17) Մաշտոցի պողոտայի փակ շուկա.<br>18) Գրիգոր Լուսավորչի- 17 շենք.<br>19) Երևանի քաղաքապետարան.<br>20) «Մոսկվայի տուն» մոսկովյան մշակութագործարարական կենտրոն Երևանում.<br>21) Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն<br><br>**2.3. Համակարգի շահագործում**<br><br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երևան քաղաքի հասարակական վայրերի համար տեսադիտման սարքավորումների ձեռքբերման և համակարգը ներդնելու արդյունքում իրավախախտումների հայտնաբերումը, նախականխումը և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների ձեռնարկումը կլինի առավել օպերատիվ և արդյունավետ: |
| 68. | **Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումը 2012 թվականին ևս ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից իրականացվելիք գերակա խնդիր է հանդիսանում, քանի որ հենց այդ ժամանակահատվածում է նախատեսվում ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ԱՎ-ի վարչությունում տեղադրել էլեկտրոնային անձնագրերում և նույնականացման քարտերում անհատական տվյալների |

| 1 | 2 |
|---|---|
| | մուտքագրման (պերսոնալացման) համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, ինչպես նաև անձնագրային ծառայությունների անձնակազմի ուսուցման իրականացումն ու հասարակության լայն հատվածին նոր անձնագրային համակարգի վերաբերյալ իրավական բավարար տեղեկատվության տրամադրումը: <br> **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրմանն ուղված միջացառումներն ավարտված չեն. համակարգի գործարկումը հնարավոր կլինի 2012 թվականին՝ անհրաժեշտ նախապայմանների ապահովման պարագայում: <br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումը 2012 թվականի գերակա խնդիր ճանաչվելու դեպքում կապահովվի համակարգի արդյունավետ գործարկումը: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումը ենթադրում է էլեկտրոնային անձնագրերում և նույնականացման քարտերում անհատական տվյալների մուտքագրման (պերսոնալացման) անհրաժեշտ տեխնիկական միջոցների տեղադրում ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում, անձնագրային ծառայությունների անձնակազմի ուսուցման ծրագրերի հաստատում և ուսուցման կազմակերպում, ինչպես նաև անձնագրային նոր համակարգի օրենսդրության կիրառման վերաբերյալ իրավական իրազեկում զանգվածային լրատվամիջոցներով: <br> **3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումը 2012 թվականի գերակա խնդիր ճանաչվելու դեպքում կապահովվի համակարգի արդյունավետ գործարկումը: |
| 69. | **Երևան քաղաքի ճանապարհներին, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապարհահատվածներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդնում** <br><br> **1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Երևան քաղաքում, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապարհահատվածներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդնումը պայմանավորված է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներն առավել օպերատիվ հայտնաբերելու, նախականխելու և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությամբ: <br> **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ներկայումս առավել ծանրաբեռնված երթևեկություն ունեցող վայրերում, մասնավորապես, Երևան քաղաքում, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապարհահատվածներում տեղադրված չեն արագության վերահսկման ավտոմատ համակարգեր, ինչը զգալիորեն նվազեցնում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները հայտնաբերելու արդյունավետությունը: <br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Երևան քաղաքում, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապարհահատվածներում առաջարկվում է ներդնել արագության վերահսկման ավտոմատ համակարգ: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Երևան քաղաքում, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապարհահատվածներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդնումը ենթադրում է համապատասխան տեխնիկական միջոցների ձեռքբերում և տեղադրում: |

| 1 | 2 |
|---|---|
| | **3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երևան քաղաքում, ինչպես նաև Երևան-Սևան և Երևան-Արտաշատ ճանապարհահատվածներում արագության վերահսկման ավտոմատ համակարգ ներդնելու արդյունքում ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հայտնաբերումը, նախականխումը և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների ձեռնարկումը կլինի առավել օպերատիվ և արդյունավետ: |
| 70. | **Երևան քաղաքում տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողության իրականացման ժամկետի կրճատում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի իրականացումը պայմանավորված է քաղաքացիներին որակյալ և պարզեցված ընթացակարգով ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, անբավարար շենքային պայմանների և անհրաժեշտ տեխնիկական միջոցների և համակարգչային ծրագրերի բացակայության պատճառով Երևան քաղաքում տրանսպորտային միջոցի գրանցման ու հաշվառման գործողությունն իրականացվում է 60-90 րոպեի ընթացքում, ինչի արդյունքում գոյանում են հերթեր, որոնք էլ առաջ են բերում քաղաքացիների արդարացի դժգոհությունը մատուցվող ծառայությունների հանդեպ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երևան քաղաքում շահագործման հանձնելով տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման ստորաբաժանման նոր վարչական շենք՝ կահավորված անհրաժեշտ գույքով ու տեխնիկական միջոցներով և ապահովված համապատասխան համակարգչային ծրագրերով, հնարավորություն կստեղծվի տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողությունն իրականացնել «հոսքագծի» եղանակով՝ 30-35 րոպեի ընթացքում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երևան քաղաքում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման ստորաբաժանման նոր վարչական շենքի շահագործման հանձնելը ենթադրում է ավարտել շինարարական և վերանորոգման աշխատանքները, տեղադրել անհրաժեշտ կահույքը, գույքն ու տեխնիկական միջոցները, ապահովել համապատասխան համակարգչային ծրագրերով, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողությունն իրականացնել «հոսքագծի» եղանակով՝ 30-35 րոպեի ընթացքում:<br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երևան քաղաքում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման ստորաբաժանման նոր վարչական շենքի շահագործման հանձնելու արդյունքում ակնկալվում է կրճատել տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման համար պահանջվող ժամանակը՝ մեկ տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողությունն իրականացնելով 30-35 րոպեի ընթացքում, ինչպես նաև բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը: |
| 71. | **Երևան քաղաքում վարորդական վկայականի հատկացման գործընթացի պարզեցում, ժամկետների կրճատում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի իրականացումը պայմանավորված է քաղաքացիներին որակյալ և պարզեցված ընթացակարգով ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, անբավարար շենքային պայմանների և անհրաժեշտ տեխնիկական միջոցների և համակարգչային ծրագրերի բացակայության պատճառով Երևան քաղաքում վարորդական վկայականը հատկացվում է 3-5 աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ ժամանակահատվածի համար հատկացնելով ժամանակավոր վարորդական վկայական: Այսինքն, քաղաքացին ստիպված է լինում կրկին այցելել ճանապարհային ոստիկանության ստորաբաժանում և ստանալ վարորդական վկայականը: Բացի այդ, ճանապարհային ոստիկանությունը չունի |

| 1 | 2 |
|---|---|
| | քննական ավտոդրոմ, ինչի պատճառով վարորդական վկայական ստանալու գործնական քննությունն անցկացվում է երթևեկության իրական պայմաններում, ինչը հղի է բազմաթիվ վտանգներով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երևան քաղաքում շահագործման հանձնել վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունող և վարորդական վկայական հատկացնող ստորաբաժանման նոր վարչական շենքն ու քննական ավտոդրոմը՝ կահավորված անհրաժեշտ գույքով ու տեխնիկական միջոցներով և ապահոված քննական տրանսպորտային միջոցներով ու համապատասխան համակարգչային ծրագրերով: Արդյունքում որակավորման քննությունները հանձնելուց և (կամ) սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում կհատկացվեն վարորդական վկայականները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երևան քաղաքում վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունող և վարորդական վկայական հատկացնող ստորաբաժանման նոր վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործման հանձնելը ենթադրում է ավարտել շինարարական և վերանորոգման աշխատանքները, տեղադրել անհրաժեշտ կահույքը, գույքն ու տեխնիկական միջոցները, ինչպես նաև ապահովել քննական տրանսպորտային միջոցներով ու համապատասխան համակարգչային ծրագրերով:<br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երևան քաղաքում վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունող և վարորդական վկայական հատկացնող ստորաբաժանման նոր վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործման հանձնելու արդյունքում ակնկալվում է կրճատել վարորդական վկայականներ հատկացնելու համար պահանջվող ժամանակը՝ վարորդական վկայականը հատկացնելով մեկ աշխատանքային օրում՝ որակավորման քննությունները հանձնելուց և (կամ) սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո: |
| 72. | **Ոստիկանության հետ քաղաքացիական հասարակության փոխգործակցության ամրապնդում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոստիկանության հետ քաղաքացիական հասարակության փոխգործակցության ամրապնդում» նախատեսվել է ոստիկանության համար 2012 թվականի գերակա խնդիր, որի նպատակն է բարձրացնել ոստիկանության հանդեպ հասարակության վստահությունը, ինչպես նաև ներգրավել քաղաքացիական հասարակությանն իրավախախտումների հայտնաբերման և բացահայտման աշխատանքներում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս անհրաժեշտություն կա ներդնել հանցագործությունների և այլ իրավախախտումների հայտնաբերման ու բացահայտման աշխատանքներում նոր մեթոդներ, մասնավորապես, այդ աշխատանքներում ներգրավելով նաև քաղաքացիական հասարակության այլ անդամների:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է վերլուծել ոստիկանություն-հասարակություն փոխգործակցության այլ պետություններում առկա փորձը, մշակել կատարվող իրավախախտումները (հանցագործությունները) քաղաքացիների կողմից տարբեր եղանակներով (տեսագրում, ձայնագրում) ամրագրելու և ոստիկանություն ներկայացնելու արդյունավետ մեխանիզմներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ոստիկանության հետ քաղաքացիական հասարակության փոխգործակցության ամրապնդումը ենթադրում է ոստիկանություն-հասարակություն փոխգործակցության մեթոդների ուսումնասիրություն, կատարվող իրավախախտումները (հանցագործությունները) քաղաքացիների կողմից տարբեր եղանակներով (տեսագրում, ձայնագրում) ամրագրելու, ոստիկանություն ներկայացնելու, ինչպես նաև նման անձնաց խրախուսելու արդյունավետ մեխանիզմների մշակում: |

| 1 | 2 |
|---|---|
| | 3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Ոստիկանություն-հասարակություն փոխգործակցության ամրապնդում, կատարվող իրավախախտումները (հանցագործությունները) քաղաքացիների կողմից տարբեր եղանակներով (տեսագրում, ձայնագրում) ամրագրելու և ոստիկանություն ներկայացնելու արդյունավետ մեխանիզմների մշակման արդյունքում հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման ու բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացում: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե** |
| 73. | **Կոմիտեի մասնագիտական կազմի համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով, նոր կադրերի պատրաստում, վերապատրաստում**<br><br>Նշված գերակա խնդիրը պայմանավորված է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորման հիմնախնդիրների՝ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման, գործող ատոմակայանի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման հետ, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի և ռադիոակտիվ թափոնների ու աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման գործառույթների հետ:<br>Կոմիտեն մինչև 2016 թվականը պետք համալրվի ևս 25 նոր մասնագետներով, տարեկան 3-5 հոգի՝ կախված նոր բլոկի կառուցման տեմպերից:<br>Էական նշանակություն ունի նաև կոմիտեի մասնագիտական կազմի որակավորման բարձրացման գործընթացի կատարելագործումը,<br>կոմիտեի մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը՝ համաձայն ԱԷՄԳ-ի (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն) և ԵՄ-ի ուղեցույցների պահանջների:<br>Ըստ անհրաժեշտության կոմիտեի կառուցվածքային փոփոխությունների իրականացում: |
| 74. | **Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի պահանջներին**<br><br>Կատարելագործել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրությունը («Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը և այլ համապատասխան օրենքներ, ինչպես նաև անվտանգության նորմեր, կանոններ, պահանջներ, կարգեր, ուղեցույցներ և այլն)՝ համաձայն ԱԷՄԳ-ի, ԵՄ-ի ստանդարտների և չափանիշների պահանջների և զարգացած երկրների փորձի ու մոտեցումների: |
| 75. | **Տեսչական ստուգման արդյունավետության բարձրացում**<br><br>Գերակա խնդրի նպատակն է կատարելագործել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անցկացվող տեսչական ստուգումների պրակտիկան, ներդնել ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, որը հնարավորություն կտա տարբերակված մոտեցում կիրառել ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների և այլ օբյեկտների ստուգումների նկատմամբ:<br>Գերակա խնդրի լուծմամբ ակնկալվում է բնագավառում ունենալ ստուգումների ժամանակակից համակարգ, նպատակային գործառույթների հստակ ամրագրմամբ ստուգումների մեխանիզմ՝ ապահովելու անվտանգության պետական կարգավորումը՝ ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան: |

| 1 | 2 |
|---|---|
| | **ՀՀ կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** |
| 76. | **Քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության երկկողմանի միջազգային հարաբերությունների ընդլայնում**<br><br>1. Նպատակն է իրավական հիմքի ապահովումը Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ, Հայաստան-Իսլանդիա և Հայաստան-Թուրքմենստան կանոնավոր օդային հաղորդակցությունների ձևավորման և (կամ) շահագործման համար: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ներկայումս օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրերի դրույթների նկատմամբ կիրառվող միջազգային պահանջներով:<br>1.1. Դեռևս 2002 թվականին նախաստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին իրենց համապատասխան տարածքների և տարածքներից դուրս» համաձայնագիրն ավարտին հասցնելու (ստորագրելու) նպատակով:<br>2010 թվականին Մոնտեգո Բեյ քաղաքում նախաստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսլանդիայի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի ստորագրումն ապահովելու նպատակով:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1456-Ա որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նոր նախագծի ստորագրմանն ուղղված անհրաժեշտ քայլերի ապահովման նպատակով:<br>1.2. Հաջորդ քայլերը նպատակաուղղված կլինեն համաձայնագրերի ստորագրման ապահովմանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ուժի մեջ մտնելուց հետո՝ գործնականում կիրառմանը:<br>2. Կարգավորման առարկան է օդային հաղորդակցությունների մասին երկկողմանի միջկառավարական համաձայնագրերի կնքումը:<br>3. Նշված համաձայնագրերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքներն են՝<br>- կողմերի նշանակված ավիափոխադրողների համար իրավական հիմքի ապահովումը կանոնավոր հիմունքով Հայաստանի և Արաբական Միացյալ Էմիրությունների, Հայաստանի և Իսլանդիայի, Հայաստանի և Թուրքմենստանի միջև թռիչքների իրականացման համար.<br>- երկու պետությունների միջև առևտրատնտեսական և մշակութային կապերի հետագա զարգացումը.<br>- օգտագործելով Հայաստանի Հանրապետության յուրահատուկ աշխարհագրական դիրքը՝ ուղևորների համար չվերթների հարմար համակցումների ստեղծումը, զբոսաշրջության խթանումը, Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայանների առավել արդյունավետ շահագործումը՝ ի հաշիվ նաև տարանցիկ ուղևորահոսքի աճի: |
| 77. | **ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրումը «Զվարթնոց» աերոդրոմում և «Էրեբունի» աերոդրոմի օդային տարածքի վերաձևավորում**<br><br>1. Հիմք ընդունելով 2010 թվականին կայացած ԻԿԱՕ-ի 37-րդ ասամբլեայի A37-11 բանաձևով ընդունված պահանջը՝ բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման վերաբերյալ, ինչպես նաև աերոդրոմի շրջանում իրականացվող թռիչքների նավիգացիոն շեղումները նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել «Զվարթնոց» աերոդրոմում ներդնել բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան: 2010 թվականին «Եվրոկոնտրոլ» կազմակերպության կողմից անցկացված աուդիտի հաշվետվությունում արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել փոխելու «Էրեբունի» աերոդրոմի կարգավիճակը, մասնավորապես, այն սահմանելով որպես չկառավարվող աերոդրոմ քաղաքացիական ոչ կանոնավոր միջազգային թռիչքների համար: |

| 1 | 2 |
|---|---|
| | 1.1. Կոնցեպցիայի ներդրումը նպատակաուղղված է թռիչքների անվտանգության մակարդակի բարձրացմանը: Իսկ «Էրեբունի» աերոդրոմի կարգավիճակի փոփոխությունը նախատեսում է աերոդրոմի օդային տարածքի վերաձևավորում:<br>1.2 . Կոնցեպցիայի ներդրումն ապահովելու համար անհրաժեշտ է՝<br>- բնութագրի վրա հիմնված նավիգացիայի (PBN) վայրէջքային սխեմաների հաշվարկում.<br>- անվտանգության մակարդակի գնահատում և անվտանգության փաթեթի մշակում:<br>«Էրեբունի» աերոդրոմի օդային տարածքի վերակազմակերպման համար անհրաժեշտ է՝<br>- «Էրեբունի» աերոդրոմի շրջակայքի օդային տարածքի նոր կառուցվածքային նախագծի մշակում.<br>- նախագծի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և հաստատում.<br>- վայրէջքային սխեմաների և «Էրեբունի» աերոդրոմի շրջակայքի նոր փոփոխված օդային տարածքի ներդրում և դրանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակում:<br>2. «Զվարթնոց» աերոդրոմում բնութագրերի հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման նպատակը թռիչքների անվտանգության մակարդակի և աերոդրոմի որակական տվյալների բարձրացումն է: Իսկ «Էրեբունի» աերոդրոմի օդային տարածքի վերակազմակերպման նպատակ՝ միջազգային կառույցների պահանջների համապատասխան կարգավիճակի ամրագրումն է:<br>3. Կարգավորման առարկա է հանդիսանում ՀՀ և օտարերկրյա ավիաընկերությունների օդանավերի սպասարկումը ժամանակակից պահանջներին համապատասխան և «Եվրոկոնտրոլ» կազմակերպության դիտողությունների կատարումը: |
| 78. | *Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացում*<br><br>1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի նիստի N 1 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ փոքր ավիացիայի զարգացման հայեցակարգը, ներքին տրանսպորտային համակարգի զարգացման (սիրողական, մարզական, զբոսաշրջային, գործնական, անձնական) պահանջը, ինչպես նաև տնտեսության զարգացման պահանջների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ներդրմանը և զարգացմանը:<br>Գլխավոր վարչության կողմից փոքր ավիացիայի զարգացման նպատակով կատարվեցին աշխատանքներ՝ կապված թռիչքային և ավիացիոն անվտանգության, թռիչք-վայրէջքների սխեմաների առումով և պարբերաբար հանրությանը տեղեկացվում էր հետաքրքրություն ստեղծելու և ցանկություն ունեցողներին ներգրավելու նպատակով:<br>1.1 . Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է միայն միջազգային թռիչքներ: Գլխավոր վարչության խնդիրն է ապահովել ներքին օդային տրանսպորտի զարգացման գործընթաց:<br>1.2 . Ներքին օդային տրանսպորտի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝<br>- ուսումնասիրել տարբեր պետությունների փորձը.<br>- ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտում ստեղծել ավիացիոն ակումբ.<br>- ՀՀ քաղաքացիական ավիացիայում գրանցել փոքր օդանավեր:<br>2. Հայաստանի Հանրապետությունում ներքին օդային տրանսպորտի զարգացում՝ ակումբների ստեղծում:<br>3. Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ներդրումն ունի ռազմավարական նշանակություն և հնարավորություն կտա արդյունավետ և ժամանակի մեծ խնայողությամբ կազմակերպել անհրաժեշտ բազմաբնույթ օդային փոխադրումներ (զբոսաշրջային, գործնական, անձնական, սիրողական, մարզական) և այլ աշխատանքներ: |

| 1 | 2 |
|---|---|
| 79. | **«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի հատուկ և հարակից կառույցների շինարարություն և արդիականացում, «Զվարթնոց» միջազգայի օդանավակայանի տարածքում բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու նպատակով աշխատանքների իրականացում**<br><br>1. 2011 թվականին շահագործման է հանձնվել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրը, ինչը հնարավորություն է տալիս բարձրացնել ուղևորափոխադրումների սպասարկման որակը, պարզեցնել ընթացակարգերը և կիրառել նորագույն տեխնոլոգիաներ:<br>Քաղաքացիական ավիացիայի համար գերակա խնդիր է, որ նորագույն տեխնոլոգիաներով արդիականացված «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրն ունենա նաև նախագահական և ուղևորների բարձրակարգ սպասարկման նոր սրահներ, ինչպես նաև օդանավակայանում ծառայություններ իրականացնող կազմակերպությունների համար ստեղծվի համապատասխան աշխատանքային տարածքներ:<br>Պետք է նաև իրականացնել միջոցառումներ ուղղված օդանավակայանին հարակից տարածքում գտնվող բնակելի շենքերի բնակարանների  սեփականատերերի և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակելի շենքերի կառուցման աշխատանքներին:<br>1.1. Ներկայիս ուղևորահոսքի պայմաններում, այժմ գործող նախագահական և ուղևորների բարձրակարգ սպասարկման սրահները համահունչ չեն «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրին և կառուցված են եղել հին ուղևորափոխադրումների համալիրին համապատասխան: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ծառայություններ իրականացնող կազմակերպությունները տեղակայված են եղել հին ուղևորափոխադրումների համալիրում: Իսկ ինչ վերաբերում է բնակելի շենքերին, ապա նշենք, որ ներկայումս «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում առկա բնակեցված շենքերը հարմար չեն տեղակայված թռիչքային անվտանգության նկատառումներից ելնելով և կարող են խանգառել հետագայում այդ տարածքում ազատ տնտեսական գոտու ենթակառուցվածքները կառուցելու ժամանակ:<br>1.2. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ամբողջական և արդիական շահագործման ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝<br>- ավարտել նախագահական, պաշտոնական պատվիրակությունների և բարձրակարգ ուղևորների սպասարկման համար նախատեսված սրահների կառուցման աշխատանքները.<br>- հին բարձրակարգ ուղևորների սպասարկման սրահի շենքում վերանորոգել և օդանավակայանի տարածքում ծառայություններ իրականացնող կազմակերպություններին հանձնել նոր աշխատասենյակներ (ոստիկանություն, մաքսային, սահմանապահ, սննդի անվտանգություն, անձնագրերի և վիզաների տրամադրման).<br>-  նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատում և բնակելի շենքերի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ<br>2. Որպեսզի օտարերկրյա, այդ թվում՝ պետությունների առաջին դեմքերի գլխավորած պատվիրակությունների և ուղևորների բարձրակարգ սպասարկումը համահունչ լինի նոր շահագործման հանձնված ուղևորահամալիրին, իսկ օդանավակայանում ապահովվի ծառայություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքների օպերատիվությունը և արդյունավետությունը, անհրաժեշտություն է առաջացել նոր սրահների կառուցման և ծառայություններ իրականացնող կազմակերպությունների աշխատավայրի տեղափոխման:<br>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում բնակվող քաղաքացիներին ապահովել նոր հարմարավետ բնակարաններով:<br>3. Կարգավորման առարկա է հանդիսանում ուղևորների սպասարկման և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացումն ու համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Բնակիչների բնակարանային պայմանների բարելավում<br>4. Նորագույն տեխնոլոգիաներով արդիականացված, ուղևորափոխադրումների սպասարկման որակի պատշաճ ապահովման և ընթացակարգերի պարզեցման նպատակով կշա- |

| 1 | 2 |
|---|---|
| | հագործվի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի նախագահական և ուղևորների բարձրակարգ սպասարկման սրահները, իսկ օդանավակայանի ուղևորների բարձրակարգ սպասարկման հին սրահը կվերանորոգվի և որպես աշխատանքային տարածք կտրամադրվի ծառայություններ իրականացնող կազմակերպություններին: Արդյունքում կլուծվի նաև 176 ընտանիքների սոցիալական խնդիր՝ բնակարանների տրամադրման միջոցով: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | |
| 80. | **Հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողություն**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հարկային վարչարարության բարելավման թիրախային ուղղություն է համարվում հարկային հսկողությունը: Հարկային հսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարության մոտեցումն այն է, որ հարկային մարմնում ստուգումների ընտրությունը կառուցվի ռիսկային չափանիշների հիման վրա, ինչը հնարավորություն կտա ապահովել թափանցիկ հարկային հսկողություն, ապահովել ստուգումների արդյունավետ ընտրություն և պլանավորում, նվազեցնել ստուգումների ընտրության ժամանակ մարդկային գործոնի ազդեցությունը, նպաստել հարկային կարգապահության բարձրացմանը՝ նպաստելով հարկային եկամուտների ապահովմանը:<br>Գործնականում հարկային մարմնի կողմից հարկային պարտավորություններից ավել վճարված գումարների հետ վերադարձի և հաշվանցման գործընթացի ընթացակարգի բարդություններով պայմանավորված՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համար առաջնային է նաև ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրումը:<br>1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական աշխատանքները, որոնք ըստ էության ուղղված են հարկային օրենսդրության խախտման դեպքերի բացահայտմանը, բավարար կերպով հիմնված չեն հարկային օրենսդրության խախտման, հարկ վճարողների կողմից հարկերի վճարումից խուսափման, ռիսկերի բացահայտման ընդհանրացման և կանխարգելման մեխանիզմների վրա: Հատկապես դա վերաբերում է հարկային մարմնի կողմից ստուգումների իրականացման և ստուգման ընթացքում սուբյեկտների ընտրության մոտեցումներին: Նշված հարցերի լուծմանն ուղղված ռիսկերի վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրման համար ապահովված են անհրաժեշտ հիմքերը, սակայն համակարգը դեռևս ամբողջապես չի գործում:<br>Հարկային եկամուտներում շարունակում են զգալի կշիռ ունենալ հարկային գերավճարները: Գերավճարների վերադարձի գործող համակարգն իր բարդությամբ ամբողջությամբ և ժամանակին չի բավարարում իր առջև դրված խնդիրների ապահովումը:<br>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է՝<br>• ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ամբողջական գործարկում.<br>• ներդնել հարկային գերավճարների վերադարձման դյուրացված (ավտոմատացված) համակարգ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում:<br>Ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է արդիականացնել հարկային հսկողության մեխանիզմները, որի արդյունքում՝ |

| 1 | 2 |
|---|---|
| | • կգործարկվի ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը՝ ապահովելով տնտեսավարող սուբյեկտների համար կապահովվի հարկային հսկողության թափանցիկությունը և կբարձրացնի հարկերը կամավոր վճարելու վարքագիծը.<br>• կգործարկվի ռիսկերի կառավարման հիման վրա հարկային գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգը, ինչը կբացառի սուբյեկտիվ մոտեցումը հայտերի ուսումնասիրության ժամանակ:<br>• |
| 81. | **Հարկ վճարողներին մատուցվող ծառայություններ**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնման շրջանակներում հատկապես կարևորվում է էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգի բարելավմամբ հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ նպաստելով հարկային մարմնի և հարկ վճարողի միջև անմիջական շփման հնարավորինս կրճատմանն ու ժամանակին համահունչ որակյալ ծառայությունների մատուցմանը:<br>Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների շարքում առաջնայիններից մեկը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումն է, որն ուղղված է հարկային մարմնում իրականացվող գործընթացների ավտոմատացմանը, ինչպես նաև հարկ վճարողներին որակյալ ծառայությունների մատուցմանը, այդ թվում՝ հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացմանը և հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի համատարած կիրառմանը:<br>Խնդրի կարգավորման մաս կազմող հաջորդ կարևոր բաղադրիչը հարկ վճարողների սպասարկման սրահների գործարկումն է՝ սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ընդլայնման և դրանց որակի բարելավման գործընթացի ամբողջովին ավարտված չլինելով պայմանավորված՝ հարկային մարմինը դեռևս չի կարողանում ապահովել սպասարկման բարձր մակարդակ: Բացի այդ, հարկ վճարողների ծանուցագրերի պատրաստումն ու տրամադրումը և այլ գործընթացների ոչ ամբողջական ավտոմատացումն իր բացասական ազդեցությունն է թողնում հարկային մարմնի գործառույթների իրականացման վրա՝ հանգեցնելով լրացուցիչ մարդկային ռեսուրսների ներգրավմանը և ժամանակի կորստին:<br>Հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացման, հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի ներդրման նպատակով նախատեսվում է ստեղծել նոր սպասարկման սրահ՝ ապահովելով հարկ վճարողներին որակյալ ծառայությունների մատուցման առավել լայն շրջանակ:<br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների կարգավորման նպատակով անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի՝<br>- բարելավել հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացման ամբողջ շղթան՝ շտկելով հաշվետվություններն էլեկտրոնային ներկայացման առկա խնդիրները՝ ավելացնելով էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակը.<br>- ընդլայնել հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը՝ մասնավորապես ապահովելով հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի համատարած կիրառումը<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված խնդրի կարգավորման շրջանակներում նախատեսվում է՝<br>• ավելացնել հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայություն- |

| 1 | 2 |
|---|---|
| | ները՝ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգի շրջանակի ընդլայնմամբ. <br>• գործարկել հարկ վճարողների նոր սպասարկման սրահներ՝ սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ. <br>• կատարելագործել հաշվետվական համակարգը, այդ թվում՝ հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ձևավորման, համակարգի ամբողջական կիրառման միջոցով <br>**3. Ակնկալվող արդյունքը** <br>Նախատեսվում է կատարելագործել էլեկտրոնային կառավարման, ինչպես նաև հաշվետվական համակարգերը՝ նպաստելով հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը, հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման առումով հարկային կարգապահության բարձրացմանը, էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակը և հարկ վճարողներին մատուցել նոր էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը: <br>Նոր սպասարկման սրահների գործարկման արդյունքում հնարավորություն կընձեռվի բարձրացնել հարկ վճարողների սպասարկման մակարդակը՝ խթանելով հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի զարգացմանը: |
| 82. | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՊԵԿ ՏՏ-ի ենթակառուցվածքներ** <br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)** <br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի կարևորագույն խնդիր է միասնական տեղեկատվական բազայից օգտվողների համար դյուրին վերլուծական և տեղեկատվական համակարգի ստեղծումը՝ էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ու կատարելագործման միջոցով: <br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br>Ներկայումս ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի միասնական տեղեկատվական բազայից օգտվողներին տրամադրվում է սահմանափակ հնարավորություններ վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար: Միաժամանակ հարկային մարմնում լիարժեք չի գործում էլեկտրոնային կառավարման համակարգը, որը հնարավորություն կտար ստեղծել և կառավարել հարկ վճարողների վերաբերյալ տվյալների ժամանակակից բազա: <br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br>Նախատեսվում է ներդնել ճկուն և ժամանակակից հարկային տեղեկատվական համակարգ: Առավելագույնի հասցնել հարկ վճարողների և հարկային ծառայության աշխատողների կողմից ՏՏ-ի համակարգերի կիրառումը: <br>**2. Կարգավորման առարկան** <br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային մարմնի կառավարման արդյունավետության բարձրացում, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում, ժամանակակից էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծում: <br>**3. Ակնկալվող արդյունքը** <br>Նշված կատարելագործված համակարգերի գործարկման արդյունքում ակնկալվում է ՊԵԿ-ի գործընթացների ավտոմատացում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին, որի արդյունքում՝ <br>ա. կբարձրանա վերլուծական և վարչարարական աշխատանքների արդյունավետությունը. <br>բ. կընդլայնվեն էլեկտրոնային կառավարման հնարավորությունները. <br>գ. կկրճատվեն օգտվողների կողմից ծախսվող աշխատաժամանակը: |

| 1 | 2 |
|---|---|
| 83. | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային և մաքսային ծառայողների պարտադիր ուսուցման համակարգի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային և մաքսային ծառայողների պարտադիր ուսուցման համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային վարչարարության հիմնախնդիրների արդյունավետ իրականացմամբ՝ հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:<br>**1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հարկային մարմնում հարկային ծառայողների վերապատրաստումն ու ուսուցումն իրականացվում է տարեկան կազմվող ծրագրի հիման վրա: Ներկայումս հարկային մարմնում լիարժեք չի գործում հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման համակարգը, առկա չէ աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման գործուն մեթոդաբանություն, միաժամանակ համակարգման կարիք ունեն հարկային ծառայողների վերապատրաստման կարիքների ուսումնասիրության, առաջնայնությունների գնահատման հարցերը:<br>**1.2 . Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների լուծման համար նախատեսվում է ամբողջությամբ գործարկել ուսումնական կենտրոնը: Ներդնել հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման համակարգ՝ մշակելով աշխատողների համար վերապատրաստման ռազմավարություն, ինչպես նաև հաստատելով հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման համար ուսուցման ծրագրերը՝ սահմանելով յուրաքանչյուր տարվա ուսուցման նախապատվությունները, մեթոդները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային և մաքսային ծառայողների պարտադիր ուսուցման համակարգի ներդրում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ նախատեսվում է կատարելագործել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը: Լիարժեք կգործարկվի ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնը, ինչը կնպաստի աշխատանքի և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը՝ խթանելով հարկ վճարողների հարկային պարտավորությունների կամավոր կատարմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: |
| 84. | **«Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում:<br>**1.1. Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է: Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս բավարար չեն: Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը:<br>**1.2 . Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, հարկային և մաքսային գործընթացների պարզեցում ու թափանցիկության բարձրացում և այլն: |

| 1 | 2 |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>«Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում:<br>**3. Ակնկալվող արդյունքները**<br>Արդյունքում ակնկալվում է բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ՝ վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմամբ: |
| **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** | |
| 85. | **Խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, ինչպես նաև խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում շուրջ 450 կմ ջրագծերի և ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացում**<br><br>1. Անհրաժեշտությունը (նպատակը)<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը կայանում է հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավմանը, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովմանը, կայուն և հուսալի ջրամատակարարմանը, ջրի կորուստների կրճատմանը, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացմանը, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև նոր վարկային ծրագրերի ներգրավման ուղղությամբ բանակցությունների վարմանը:<br>**Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում էական արդյունքներ են արձանագրվել խմելու ջրի հասանելիության, ջրամատակարարման շարունակականության և անվտանգ ջրամատակարարման առումով: Ավելացել է կենտրոնացված ջրամատակարարման սպասարկման ընդգրկվածությունը գյուղական բնակավայրերում:<br>Միաժամանակ պետք է նշել, որ դեռևս կան խնդիրներ մի շարք բնակավայրերի անխափան, հուսալի և անվտանգ ջրամատակարարման գործում: Ջրամատակարարման և ջրահեռացման սակագներն ինքնածախսածածկող չեն, որոնք խոչընդոտ են հանդիսանում համակարգի կառավարման բարեփոխումների հետագա խորացման ճանապարհին և գործնականում չեն նպաստում մասնավոր ներդրումների ներգրավումը:<br>Նշված խնդիրները մասամբ լուծվում են գործող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:<br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող լուծումները հնարավորություն կտան ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների հետագա խորացմանը, ինչպես նաև մասնավոր ներդրումների ներգրավմանը: Նախատեսվում է նաև բանակցություններ վարել համակարգի կառավարման գործընթացների շարունակման և ընդլայնման ուղղություններով:<br>2. Կարգավորման առարկան<br>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետագա բարեփոխումները նպատակ են հետապնդում բարձրացնելու այդ համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, կրճատելու ջրի կորուստները և բարելավելու ծառայությունների մատուցման որակը:<br>3. Ակնկալվող արդյունքները<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող տարածքներում հուսալի և անվտանգ խմելու ջրի մա- |

| 1 | 2 |
|---|---|
| | տակարարման հասանելության ապահովում, բնակավայրերի ջրամատակարարման ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում: Գործող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն մի շարք քաղաքային և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավման, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների շինարարական աշխատանքներ: «Արփա-Սևան» թունելների վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գետերից Սևանա լճի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխվող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային թունելի որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: |
| 86. | **Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրով Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված շուրջ 50 կմ ոռոգման ջրանցքների վերականգնում**<br><br>1.Անհրաժեշտությունը (նպատակը)<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը կայանում է ոռոգման ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանը:<br>**1.1 . Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս բանակցային փուլում է գտնվում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագիր» լրացուցիչ ֆինանսավորման ծրագիրը: Այդ ծրագրով նախատեսվում է 50 կմ մայր և միջտնտեսային ջրանցքների և 62.8 կմ ներտնտեսային ջրանցքների վերականգնում՝ ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արարատի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում: Ոռոգման համակարգերի ֆիզիկական մաշվածությունը, ոռոգման համար պիտանի հողերի ոռոգման ջրի բարձր էներգատարությունը խնդիրներ է առաջացնում համակարգի հետագա զարգացման գործում, որոնք կարիք ունեն լուծման:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գերակա խնդրի լուծումը հնարավորություն կտա ապահովել ոռոգման համակարգերի արտադրողականության, արդյունավետության և կայուն կառավարման զարգացմանը, ինչպես նաև կանոնակարգման ու աջակցող ծառայությունների տրամադրման համար կայուն նախադրյալների ստեղծմանը: Գերակա խնդրի լուծումը հնարավորություն կտա նաև նպաստել գյուղական զբաղվածության բարձրացմանը և ջրօգտագործման արդյունավետության բարձրացմանը:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Գերակա խնդրի լուծումը հնարավորություն կտա նպաստել միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքներում ջրի կորուստների կրճատմանը, ջրօգտագործման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև գյուղական զբաղվածության բարձրացմանը:<br>**3.Ակնկալվող արդյունքները**<br>Ոռոգման ջրի արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա ոռոգման գյուղատնտեսության արդյունավետության ու կայուն զարգացմանը և բնակչության համար եկամտի ապահովմանը: Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավերտության բարձրացմանն ուղղված միջոցառումներն կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը և հետագա պահպանումը: |

| 1 | 2 |
| --- | --- |
| | **Հայաստանի Հանրապետության ՏԿՆ-ի միգրացիոն պետական ծառայություն** |
| 87. | **Օտարերկրյա պետություններից Հայաստան վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված աջակցության ցուցաբերում**<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Երկար տարիներ ապրելով օտարերկրյա պետություններում, վերադարձողներն էական փոփոխություններ են տեսնում Հայաստանում՝ սկսած իրավական, վերջացրած ինստիտուցիոնալ մակարդակներում, անգամ քաղաքի տեսքը, մարդկային հարաբերությունների տեսակն է փոխվել: Եթե սրանց ավելացնենք նաև, որ վերադարձողները հիմնականում կորցրած են լինում իրենց սոցիալական կապերը, ապա կարելի է հասկանալ, թե ինչու են վերադարձողները համարում, թե իրենք հայտնվել են օտար հասարակության մեջ: Եթե նրանք հաջողությամբ չեն ինտեգրվում իրենց նախկին հասարակությանը, կրկին մեկնում են երկրից՝ իրենց միջոցների մեջ խտրականություն չդնելով՝ օրինական, թե անօրինական ճանապարհներով: Ներկայումս օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների կամավոր վերադարձի որոշմանն էապես ազդում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սեփական բնակարանի բացակայությունը, որովհետև նախքան հանրապետությունից մեկնելը ոմանք վաճառել են այն, աշխատաշուկայի լարվածության պահպանումը, ինչի հետևանքով՝ աշխատանք գտնելու ցածր հավանականությունը, վերադարձած անձանց աջակցությանն ուղղված պետական սոցիալական ծրագրերի իրականացման հնարավորության բացակայությունը, անորոշությունը:<br>Գերակա խնդրի սահմանումը նպատակ ունի գտնել լուծումներ օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների կամավոր վերադարձի խրախուսման և վերադարձողների՝ Հայաստանում կայուն վերահաստատման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Իրավական ակտով նախատեսվում է սահմանել հետևյալ միջոցառումների իրականացումը՝<br>- խնդրի առնչությամբ հետազոտության անցկացում.<br>- օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների կամավոր վերադարձի և Հայաստանում կայուն վերաինտեգրման խոչընդոտների ու բացերի վերհանում.<br>- վեր հանված խոչընդոտների և բացերի վերացման նպատակով առաջարկությունների ներկայացում:<br>Միջոցառումների իրականացումը ՀՀ պետական բյուջեից ֆինանսական միջոցներ չի պահանջում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող լուծումները թույլ կտան կարգավորել օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի և հայրենիքում կայուն վերաինտեգրման աջակցության հետ կապված հարաբերությունները:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Լուծումների կիրառման դեպքում հնարավոր կլինի որպես արդյունք ակնկալել օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի և հայրենիքում կայուն վերաինտեգրման հնարավորությունների ընդլայնումը: |

| 1 | 2 |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով** |
| 88. | Մրցակցային միջավայրի բարելավում<br><br>Տնտեսական մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներում մեծ նշանակություն ունի ապրանքային շուկաներում գործող խոշոր տնտեսավարող սուբյեկտների գործողությունների վերահսկողությունը:<br>Կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաներում առավել հաճախ են հանդիպում շուկայական տնտեսության կանոնների խախտումներ, խոշոր տնտեսավարող սուբյեկտները հաճախ ձգտում են թելադրել իրենց պայմանները մյուս տնտեսավարող սուբյեկտներին, սահմանափակել նոր տնտեսավարող սուբյեկտների մուտքը շուկա, ավելի հաճախ են կնքում օրենսդրությանը հակասող համաձայնություններ:<br>Հաշվի առնելով, որ սոցիալական նշանակություն ունեցող մի շարք ապրանքային շուկաներում առկա է կենտրոնացվածության բարձր աստիճան, առաջարկվում է հնարավոր խախտումները հայտնաբերելու, շուկայի մուտքի խոչընդոտները վերացնելու նպատակով իրականացնել կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաների ուսումնասիրություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ